



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

39

5
C - 16

511-41

39

Z-16 Zerhungrige
Temp. Reaktionen
in aufrechter

19

39
C-16

Գ. 0030942


Կ

11937

ԱՊՐ-ԱՄՓՈՁԱՅՆԱՅԻ


եւ

ՆՈՐ-ՆԱԽԻԶԵՒԱՆՑԻՔ



Արտադպուհ

Ազգագրական գանդիսից



Հ. Բ. Ֆ. Լ. Խ. Ս.

Տպարան Կ. Մարտիրոսյանի || Տիպ. Կ. Մարտիրոսյանց
1903

Дозволено Цензурою. Тифлисъ, 13 Январь 1903 г.



511

41

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒՄՆԵՐ

四

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՎԱՆՑԻՔ

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ

Պատմական ժեսութիւն *)



աղար եօթ հարիւր ութսուն եօթ թուականի 1787թ.
Մարտի 9-ին իրար յետևից հրատարա-
կուում են Եկատարինէ բ. կաչըրուհու մի
„ռեսկրիպտը“ և մի «Ռեկազը»: Առաջինը,
որ արուած է Թուսաց զօրքի այդ ժամա-
նակուայ ընդհանուր հրամանատար ժենե-
րալ-ֆելդմառշալ Պետր Ռյէքսանդրովիչ
կոմս Թումենցովի անունով, պարունա-
կում է իւր մէջ հետևեալը: „Ղրիմի վե-
րաբերութեամբ մեղ արած ձեր վերջին զեկուցումից մենք հաւաս-
տիացանք, որ դուք հրամանագրել էք ժեներալ-պորուչիկ իշխան
Պրոգրուսկուն համոզելու այնտեղ ասլրող Յոցներին և միւս քը-
րիստոնեաներին. դապթել Թուսաստան: Մենք այդ կէտի վերաց

*) Մեր այս աշխատութեան համար մենք օգտուել ենք հետեւ աղբիւրներից.

1. Ашхабадский округ, Тифлис, 1865.
 2. Указ Европейской Академии наук, 1865.
 3. Указ Европейской Академии наук, 1865.
 4. Письма из Крыма, А. С. Грибоедов, 1865.
 5. Указ Европейской Академии наук, 1865.
 6. Универсальное описание Крыма, Кондораки, Части 14, 16 и 17.
 7. Указ Европейской Академии наук, 1865.

առանձնապէս ուշադրութիւն դարձնելով, կարևոր ենք համարում շեշտել այն միջոցների վերայ, որ նա պէտք է գործ դնէ, որպէս զի կարող սնայ համոզել նոցա, որ նոքա յօժարակամ տեղափոխուեն նովուսսիոյ և Ազովի նահանգները, որսել նոքա կ'գտնեն մեր հովանաւորութեան տակ անդորր կեանք և կարելին բարօրութիւն։ Կամանաւնդ անհրաժեշտ է յորդորել այնաեղի մետրոպոլիսին, խոստանալով նորան զանազան արտօնութիւններ, իսկ խանին պէտք է հասկացնել, թէ այդ բոլորը կատարուում է քրիստոնեաներին թաթարների, գուցէ, և տաճիկների երեսից, եթէ այդ վերջինները մանելու լինին Ղրիմ, նոցա զիլին գալիք վտանգից ազատելու համար Աւստի և չղանաք յանձնարարել ժեներալ Պրոզորովսկուն, որ նա մեր բոլոր զօրագլուխները նոցա դիմող բոլոր քրիստոնեաներին ընդունեն ամենայն միրով և ձեռքից եկած ամեն միջոցներով օգնեն և ճանապարհ դնեն դէպի վերցիշեալ նահանգները, և հենց որ մէկը նոցանից դիտաւորութիւն յացսնէ այս կամ այն նահանգը տեղափոխուելու, իսկոյն և եթ առանց յապաղելու յանձնարարեն նորան այդ նահանգների նահանգապետներին։ Իսկ ինչ որ վերաբերում է ճանապարհի պաշարին, — տալ նոցա ամեն բան միջերանոց եղած տեղերում այդ միջերանոցներից, չեղած տեղերում — զնելով։ Նոցա մեր սահմաններում տեղաւորելու և առաջին նուագ հարկաւոր բաները նոցա մատակարակելու համար էլ մենք ուղարկեցինք այդ նահանգների ժեներալ նահանգապետ Պատեօմկինին առանձին հրամանագիր։

Աւկազն էլ, որ տրուած է Պատեօմկինի անունով և որի մասին խօսք է լինում ռեսլրիպտի մէջ, պարունակում է լիր մէջ հետեւալը։ «Մենք ժեներալ-ֆելդմառշալ կոմս Թումեանցովին սոյն թուով տուած մեր ռեսլրիպտով, հրամայեցինք մեր զօրագլուխներին Ղրիմում ապրող Յոյներին, Վրացիներին և հայերին, որոնք բարեյօժար կամքով կ'համաձայնեն մեր հովանաւորութեան տակ մտնելու և կ'յանանան վերաբնակուել Նովուսսիոյ և Ազովի նահանգներում, ոչ թէ միայն

8. Յալսմաւուրք, ձեռագիր.

9. Ջեռագիր Թաւթար Յովսէփ արքէպիսկոպոս Երդութեանի.

10. Մեր աշխատասիրած «Նոր-Նախլ Ճեանի հիմնարկութեան և կառավարութեան պատութիւնը», անտիպ.

11. Ըռածք, ասացուածք և գրուցք Հայոց Նոր-Նախլ Ճեանի, Գ. Տիգրանեանցի.

12. Մատերիալ ձեռ ուշադիր արքական արքական պատուածք, Կ. Ա. Պատկանա.

Եղուակ այս աղբիւրներից, մեզ շատ նպաստել են և մեր բարեկամների՝

պ. պ. Սերովի, Զաթարացանի և Շատուկ Զուբարեանի և միւսների հաղորդած տեղեկութիւններ, որի համար և յայտնում ենք նոցա այստեղ

սիրով ընդունել ու ճանապարհ դնել նոցա վերցիշեալ նահանգների նահանգապետների մօտ, կերակրելով նոցա ճանապարհին միջերանոց եղ սծ տեղերում մեր միջերանոցներից, չեղած տեղերում — զնելով, այլ և ջանք անել ձեռքից եկած բոլոր միջոցներով համոզել. որ նոքա համաձայնեն յօժարակամ գաղթել և նամանաւանդ համոզել յոյն մետրապոլտին։ Ձեզ էլ սորանով հրամայում ենք, որ գուք էլ անէք ձեզ վերաբերեալ պարտ ու պատշաճ տնօրինութիւնը, որպէս զի այս նոր գաղթականները մեր սահմանները մտնելու օրից ոչ թէ միայն կարուութիւն չունենան պաշարեղէնի, այլ և, որ, ըստ մեր բարեհայեցողութեան, արուի նոցա ինչպէս հողի բաւականացուցիչ քանակութիւն, նոյնպէս և արքունի օժանդակութիւն տուն և աեղ շինելու համար Մենք, ՚ի հարկէ, չենք զանալ շնորհել նոցա զանազան արտօնութիւններ, նացելով նոցա թուին և դրութեան, իսկ մինչև այդ — յանձնելու նոցա այնտեղի նահանգապետների խնամքին, որ նոքա պահպանեն նոցա։

Եհա այս երկու բարձրագոյն հրովարտակի հիման վրայ Թումեանցովի հրահանգներ տալով, հրամանագրում է Ղրիմի թերակղզում այդ ժամանակ եղած Թուսաց զօրի հրամանատար և լիազօր ժեներալ Պրոզորովսկուն, իսկ նորանից յետոյ նորա տեղը բունող Սուվորովին և խանի մօտ եղած Թուսաց «Ռեզիդենտ» Կոստանդինովին կատարել կայսրուհու հրամանը, իսկ Պատեօմկինն անում է պարտ ու պատշաճ տնօրինութիւնը իւր իշխանութեան տակ դանուած Եզովի և Նոյնուուսիոյ նահանգապետներին՝ Զերտկովին և Եազիկովին գաղթականներին ընդունելու մասին, և սկսուում է Ղրիմի քրիստոնեաների Թուսաստան զաղթելու գործն ընդհանրապէս և հայերի գաղթականութիւնը մասնաւորապէս։ Ղրիմի խանութիւնն այդ ժամանակուած էր մի շատ խղճակի զրութեան մէջ. առետուրը զադարած, արհեստաներն ընկած, երկրագործութիւնն ու անասնապահութիւնն երեսի վերայ թողած, ժողովուրդը պատակտուած, կուսակցութիւնների բաժանուած և բոլոր երկիրը ծալրէ ՚ի ծալր ծփում էր խոսվութեան մէջ։ Զիազին այ ևս Օրան Թիմուրի նշանաւոր յաջորդները, որոնք այնքան բարձրացրին Ղրիմի նշանակութիւնն իւրեանց ժամանակուած քաղաքական աշխատիում, ըրկազին այլու Թուսաստմիշները և միւս նշանաւոր Պիրէցները, որոնք իւրեանց ահարկուարշաւանքներով երկար ժամանակ սարսափի մէջ էին պահել Թուսաստան ու Ահաստանը։ Վերջին ժամանակներն իշխում էին Ղրիմին Գիրէցների թույ, զեղս և անընդունակ յաջորդները, որոնք խաղալիկ էին զարձել Տաճրաց սուլթանների ձեռքին, իսկ վերջինս այդ իսլ ժամանակուած լսան զահինգիրէց Թուսաստանի դրածը և նորա զէնքի

գորութեամբ պաշտպանուածն էր: Երկրի այդպիսի զրութիւնը հետևանք էր այն մրցողութեան, որ քանի ժամանակներից ՚ի վերսկսել էին դործ դնել Ղրիմի վերաբերութեամբ Թուսաստանն ու Տաճկաստանը, իւրաքանչիւրը դոցանից ձգտելով ինքը տէր դառնալ դեղցիկ թերակղղուն:

Այն օրից, երբ առաջին անգամ խաները դաշն կապելով Օսմանեան սուլթանների հետ, օգնութեան կանչեցին նոցա Քանովացւոց դէմ մղած պատերազմի ժամանակ, նոքա վասսալ և հպատակ դարձան Օսմանցիներին և իւրեանց իշխանութիւնն իւրեանց ձեռքով մատնեցին նոցա ձեռքը: 175 թուին Օսմանցիք իւրի դաշնակից իւրեանց մարտանաւերով հասնելով Ղրիմի հարաւային ափը, զօրք իջեցնելով նշանաւոր Կահայի նաւահանգիստը և յաղթելով ու կործանելով Քանովացւոց և նոցա դաշնակից հայերի զօրութիւնը, ամուր կերպով հաստատուեցին Ղրիմում: Նոքա Ղրիմի նաւահանգիստ քաղաքները բռնեցին իւրեանց զօրքերով: Նոքա մի զօրավար վաշայ կարգեցին խանի դործողութիւններին հսկելու և խանի հաստատութեան իրաւունքը սուլթանին սեփականացրին: Սուլթանի բարի կամքից կախումն ունէր այնուհետև Զինգիզի զոռող շառաւիղների գահ բարձրանալը և գահից լջնելը, սուլթանի բարեհած տնօրինութեան էր կարոտ խանի այս ինչ կամ այն ինչ զործողութեան հաստատութիւնն ու մերժումը: Եզ այնուհետև ամեն բան փոխուում է Ղրիմում—զօրքի կազմակերպութիւնը, երկրի կառավարութեան ձեն ու եղանակը, թաթարների մուաւոր և բարոյական կրթութիւնը, մինչև իսկ նոցա լեզուն ենթարկուում է Օսմանցիների ազգեցութեան: Եւ եթէ այսպէս երկար ժամանակ շարունակուէր դործը, Ղրիմն ամբողջապէս կ'կորցնէր իւր իսկական զոյնն ու հոտը, ժողովուրդը կրթուրքանար, երկիրը կ'ստանար Օսմանեան կայսերութեան երկրներին յատուկ կազմակերպութիւնն ու բնաւորութիւնը և քաղաքականապէս իսկ նորա նահանգներից ու վիկայէթներից մէկր կ'զառնար:

Սակայն կար մի ուրիշ պետութիւն, որին սահմանակից էր Ղրիմը, որ խէթ աչքով էր նաշում Օսմանցւոց դործողութիւնների վերայ և որ Օսմանցիներից պակաս ցանկութիւն չունէր Ղրիմին տիրապետու: Եզ Թուսաստանն էր, որ Պետրոս Մեծի ժամանակից ամրանալով և իւր բնական սահմանների մէջ հաստատուելով, սկսել էր իւր արևելեան արշաւանքները, որոնց ոչժն ու զօրութիւնը հենց առաջին անգամ ստիպուած էին եղել փորձել և նոցա առաջ տեղի տալ արևելեան երկու մահմեդական մեծ տէրութիւնները՝ Տաճկաստանը և Փարսկաստանը:

1774 թուին կայանում է Քիւչուկ-Կայնարջիկի նպաստաւոր

դաշնաղրութիւնը, որի հիման վերաց Թուսաստանը ձեռք է բերում ոչ միայն Բուգ և Դնեպր գետերի մէջ գտնուած տարածութիւնը, Կինբուրնն իւր շրջանով, կերը, Ենիկալէն և Ազովը, այլ և դաշնա գրութեան մէջ կարողանում է մտցնել մի յօդուած, որի զօրութեամբ Ղրիմը մի անկախ քաղաքական մարմին է ճանաչուում: Բարձր-Դուռը թէև պարտուած, թէև նեղն ընկած, այնուամենայնիւ սաստիկ ընդդիմանում է դաշնագրութեան այդ ձեռով կազմուելուն, որովհետեւ շատ լաւ է հասկանում, որ զորանով մի կողմից Տաճկաստանը յետ է մղուում Ղրիմից, միւս կողմից էլ Թուսաստանն, ընդհակառակը, մտենում է թաթարներին, միջոց է ստանում ամրանալու Ղրիմում, խառնուելու խանութեան գործերին և կամաց կամաց հասնելու իւր վերջնական նպատակին: Տաճկաստանի յամառութիւնն այնքան սաստիկ է լինում, որ քանից խաղաղութեան դաշն քանդուում է և նորից վերանորոգուում է: Նա չի կամենում հանել իւր զօրքերը Թաման թերակղղուց և ձեռքի տակից անդադար ինտրիգներ է լարում Թուսների դէմ Ղրիմում ու Ղուբանում, զրգուելով թաթարներին և աշխատելով յարուցանել նոցա մէջ ատելութիւն դէպի Թուսները: Ահա այս միջոցում Թուսաստանը վճռական քայլ է անում: Նա որպէս զի չթոց տայ այնքան գժուարութեամբ ձեռք բերած յաղթութիւնն իւր ձեռքից գնալու, կարճ միջոցում զանազան հնարներով կազմակերպում է Ղրիմում մի զօրեղ կուսակցութիւն և նորա միջոցով ժողովրդի մի մասն իւր կողմը ձգելով, իւր կողմնակից Զահինգիրէցին խանութեան զահն է բարձրացնում: Զահինգիրէցը, որ հին խաների ցեղից էր, տարուում է Ղուբանի կողմերը և Թուսաց ազգեցութեամբ այն կողմերում թափառող կդիսանեան, կդիզուլեան և Զանբոյուղեան Նողայ-թաթարների ցեղերի ձեռքով խան է ընտրուում և այնտեղից էլ Թուսաց զօրքի և Ղրիմի ռուս կուսակցութեան օգնութեամբ առաջնորդուում է գէպի Ղրիմի մագրաքաղաք Բախչիսարայը և ընդհանուր խան է հրատարակուում:

Բարձր-Դուռը սաստիկ զարցանում է և մի կողմից իւր կուսակից թաթարների ձեռքով աշխատում է ապստամբեցնել թաթարներին նորընտիր խանի դէմ, միւս կողմից էլ պաշտօնապէս չի ճանաչում Զահինգիրէցին Ղրիմի տէր, նորա ընտրութիւնն օրինական չի համարում և, վերջապէս, սկսում է նաւատորմիզ կազմել և կամաց կամաց մօտենալ Ղրիմի ափերին, որ պատեհ բոպէին պաշտպանութիւն կարողանաց ցոյց տալ իւր կուսակցութիւններին: Տաճիկների թափած միզը շուտով պատկուում է յաջողութեամբ: Շագում է ապստամբութիւնն և թաթարները խումբ-խումբ գէնքի են դիմում, իւրեանց նպատակ գնելով գէնքի զօրութեամբ գահավիժել Զահինգիրէցին և

մի ուրիշին իւրեանց յօժարակամ ընտրութեամբ հախչսարայի դահը բարձրացնել, Տաճկաց գործակալները վլստում են Ղրիմի ամեն մի անկիւնում, խրախուսում են ապստամբներին և խոստանում են իւրեանց օգնութիւնը, մատնացոյց լինելով Յսմանեան նաւատորմդի վերաց, որ խարիսխ ձգած-կանգնած սպասում էր պատեհ ժամի Ղրիմի ափերից ոչ շատ հեռու:

Բայց Թուսաստանը, որ սուր աչքերով դիտում էր ամեն բան, շուապում է իւր զօրքով բռնել Ղրիմը և ապստամբութիւնն իւր բընումը խեղդել: Երկու մեծ բանակ է ուղարկուում Ղրիմ, որոնցից մէկը ժեներալ սորուչիկ Պրոզորովսկու առաջնորդութեամբ բռնում է թերակղին և ջարդում, ցրուում է ապստամբների խճերը, միւսը ժեներալ-սորուչիկ Սուկովովի զօրավարութեամբ արշաւում է Ղուբանի կողմերն այնտեղ նողաց-թաթարներին և արիւնոուշտ լեռնորդիներին հնազանդութեան մէջ պահելու և չթողնելու նոցա միանալ թերակղու ապստամբների հետ: Էսկ որպէս զի Տաճկաց նաւատորմիզ զօրք չիջեցնէ հարաւացին ափը, կարգադրութիւն է լինում, որ ծովագնեայ մասում ապրող թաթարները քաշուին հեռանան դէպի լեռները, որ նոքա ոչ թէ միայն չկարողանան միանալ Տաճիկների հետ, այս և հնարաւորութիւն էլ չունենան յարաբերութիւն ունենալ նոցա հետ: Յսմանցիք տեսնելով Թուսաց վաթսուն հազարանոց բանակը, տեսնելով թաթարների ապստամբութեան արագ ընկճուելը և իւրեանց կուսակցութեան պարտուիլը, ինն համարձակում թշնամական գործողութիւններ ակսել և զորանով նորից պատերազմ հարաւարակելու պատճառ լինել և մնում են լոկ հանդիսատես: Նոքա միայն շատանում են բողոքելով, թէ Թուսաստանը հակառակ դաշնապութեան պայմաններին ձեռնամուխ է լինում Ղրիմի խանութեան անկախութեան և այդպիսով գրժում է այն սկզբունքը, որ կազմում էր Քլւչուկ-կայնարչիկի դաշնապրութեան դլխաւոր հիմունքը և որի գորութեամբ Ղրիմը ճանաչուած էր անկախ երկիր և ոչ մէկը՝ ոչ Թուսաստանը և ոչ էլ Տաճկաստանը չպէտք է խաւնուէին խանութեան գործերին Սակայն Թուսաստանը նուրբ դիւանադիսական բանագնացութեամբ կարողանում է ջրել և այդ բողոքի առարկութիւնները, ասելով թէ ինքը չի խանգարի դաշնապրութիւնը, իսկ եթէ մտել է Ղրիմ ու իւր զօրքով բռնել է երկիրը, այդ էլ արել է իւր իսկ խանի խնդիրքով ու ցանկութեամբ, որ իբրև իւր երկիր անկախ իշխան ու տէլ իրաւունք ունէր խնդրելու ու հրաւիրելու որին որ ցանկանար իրեն օգնելու և ապստամբութիւնը ընկճելու և վերջ ՚ի վերջոց, յաջողում է վաւերացնել տալ դաշնապրութիւնը, որ Տաճկաստանը այդ բոլոր եղելութիւնը առիթ բռնելով, չէր կամենում վաւ-

րացնել և վերջնականապէս ստորագրել, յաջողում է օրինական խան ճանաչել տալ Չահինգիրէյին, որի խան լինելու իրաւունքն այնքան յամառութեամբ մերժում էր սուլթանը:

Այժմ Թուսաստանին մնում էր մի երկրորդ քայլն անել, որ կարողանաց իսպառ տիրանալ Ղրիմին. Նորան մնում էր ջանք թափել աղքատացնելու ազնուական դասակարգը և իրան խանին, որպէս զի դորա նկւթական կարօտութիւնից հարկադրուած ստիպուած լինին իրանից նկւթական օժանդակութիւն ու նպաստ ստանալ և երկիրն իւր ձեռքը մատնել: Այդ լինում է մի շատ յաջող քաղաքականութիւն, որ շատ շուտով պասկուում է կատարեալ յաջողութեամբ, անվրէպ հասցնելով Թուսներին նոցա իւրեանց առաջ դրած վերջնական նպատակին. Թուսաստանին քաջ յայտնի էր, որ Ղրիմի խանութեան զլխաւոր աշխատաւոր դասակարգը կազմում են թերակղզում շատ ժամանակներից ՚ի վեր ապրող քրիստոնեաները, յայտնի է լինում, որ քրիստոնեաներին են հմուտ արհեստաւորները, երկրագործները, պարտիզանները, ազգեպանները, ձկնորսներն ու առետրականները, որոնք իւրեանց աշխատանքով ծաղկեցնում են երկիրը, կերակրում են մազաներին և եկամուտ են տալիս խանի գանձարանին, իսկ բուն թաթարները — հասարակ դասակարգը պարապում է միայն անասնապահութեամբ ու խաշնարածութեամբ, ազնուականները պատերազմական և երկրի կառավարութեան գործերով: Այդ պատճառով էլ հենց Եկատարինէ կայսրուէու նշանաւոր համհարգները միտք են յղանում Ղրիմի խանութեան հենց այդ մեծ և կարեոր աղբիւրը սպառեցնել, խանին և մոզաներին հենց այդ առատ եկամտի հասուցմից գրկել: Որշուում է քրիստոնեաներին ձեռքից եկած ամեն միջոցներով համոզել, որ նոքա թողնեն իւրեանց բնակութեան տեղերը և տեղափոխուեն Թուսաստան:

Ահա Թուսաց այդ քաղաքականութեան հետևանքն է լինում Ղրիմի հայոց գաղթականութիւնը, որի մասին մենք վերը լիշեցինք:

¶.

Թէ երբ էին առաջին անգամ : այերը գաղթել իւրեանց հայրենիքից և բնակութիւն հաստատել Տաւրիկեան թերակղզում, — մեզ այդ լաւ յայտնի չէ, որովհետեւ այդ մասին մեր ձեռքը ոչ օտար և ոչ ազգային աղբիւրներից ոչ մի վաւերական ցիշատակարան չի հասել: Հայ և օտար պատմաբաններից ոմանք հիմնուելով Նոր-Նախոջևանի նշանաւոր ձեռագիր Յալսմաւուրքի ցիշատակարանի վերաց, կարծում են, թէ առաջին անգամ հայերը գաղթել են Ղրիմ հայաստանից,

Անիկի կործանումից յետոց ժդ. գարում, 1330 թուին, երբ Ղրիմին տիրապետում էին թաթարները և Քանովացիք, ոմանք էլ հիմնուելով այն հանգամանքի վերաց, որ Ղրիմում գտնուում են մի քանի հայկական ցիշատակարաններ՝ եկեղեցիների ու վանքերի աւերակներ, մատուռներ ու խաչքարեր, որոնց մնացորդների վերաց պահուած արձանագրութիւնները և նոցա թուականները հասցնում են հայերի թերակղզում բնակուելու ժամանակամիջոցը մինչև ժ. ժա. դարերը, կարծում են, թէ հայկական գաղթականութեան սկիզբը Ղրիմում պէտք է համարել ժ.-երորդ դարը:

Մենք կարծում ենք, որ երկու կարծիքն էլ ճիշտ են, որովհետև առաջին կարծիքի հեղինակները խօսելով հայերի գաղթականութեան մասին, հասկանում են հայերի գէպի Ղրիմ արած խմբովին գաղթականութիւնը, որ, ինչպէս ցոց է տալիս վերոցիշեալ հաւաստի ցիշատակարանը, եղել է հենց 1330 թուին, երկրորդ կարծիքի հեղինակները, ընդհակառակը, խօսում են միայն հայերի Ղրիմում գոյութիւն ունենալու մասին մինչև մեծ գաղթականութիւնը, որ ամենայն հաւասականութեամբ ժ.-երորդ դարից առաջ չի եղել.

Յայտնի է, որ հայոց գաղթականութիւնը գլխաւորապէս սկսուեց հաղբատուննեաց տէրութեան վերջանալուց յետոց, երբ բիւզանդացիք կամենարով հայաստանը դատարկել հայերից, ստուպեցին հայոց իշխաններին թողնել իւրեանց հայրենիքը և իւրեանց ժողովրդով տեղափոխուել Եփրատացւոց գաշտավայրը, Կիլիկիան և Փոքր-Հայք: Անկասկած հայ ժողովուրդը մէկ անգամ արդէն ընտելանալով գաղթականութեան, այդ տեղերում էլ հաստատ չմնաց: Առեւրական գասակարգը այդ տեղերից էլ տարածուեց Փոքր-Ասիոյ շահաստանները և Միջերկրական, Սև և Ազովի ծովերի ափերը, ուրեմն և Ղրիմի հարաւային ափը, և հետզհետէ բազմացաւ այդտեղ, կազմելով նախկին Յունաց գաղթավայրերում փոքրիկ գաղութներ, շինելով եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, և փորագրելով խաչքարեր և յետազայ սերնդին դոցա ցիշատակ ժողնելով: Ենթադրում են, որ այդ հին գաղթականներից է մնացել Թէոդոսիոյ թանգարանի այն յասպիս քարը, որի վերաց քանդակուած փոքրիկ խաչերից մէկն իւր պագուանդանի վերաց ունի հետեւալ արձանագրութիւնն ու թուականը. «Բարեխասս է սուրբ Նշանք Թրիգորին և իւր զաւակին նհզ.»: Նոցանից մնացած են համարում այն բոլոր խաչքարերը, որոնք կրում են իւրեանց վերաց պ. ջ թուականները, և վերջապէս, նոցա ձեռքով են շինուած համարում ս. Խաչի անտառի մէջ գտնուած վանքը, որի հիմունքը և աւերակները մինչև ցալաօր գեռ երևում են. Այդ հին գաղթականութիւնը, որ պէտք է եկած լինի, ինչպէս ասացինք, ոչ մի անգա-

մից, խմբովին, այ հետզհետէ, բաղկացած է եղել անկասկած զանազան տարրերից, եկած զանազան տեղերից՝ չայսատանի զանազան նահանգներից, քաղաքներից, գիւղերից և ժամանակի ընթացքում, մեծ գաղթականութիւնից յետոց, լուծուել ու միացել է նորա հետ: Մեծ գաղթականութիւնն իւր թուի առաւելութեամբ, իւր միապաղադ տարրով, իւր անեցի վարք ու բարքով, կեանքի տարագով և խօսակցութեան բարբառով, ինչպէս երևում է, մեծ դեր է կատարել, տալով Ղրիմի հայ գաղութիւնն այն բնորոշ յատկութիւնն ու գծերն, որով մենք ճանաչում ենք Ղրիմի և Ղրիմից զանազան կողմեր գաղթամբ, տարածուած հայերին:

Նախիջևանի ցիշատակարանի ասելով, Անեցիք սկսել են գաղթել իւրեանց փառաւոր քաղաքից 1062 թուին, երբ Բագրատուննեաց ճոխ մարդաբաղաքը պաշարմամբ առնուել է Չարմաղան խանից և աւերմունքի ու կոտորածքի է ենթարկուել: Նոքա դուրս գալով Վիրակից, բաժան բաժան են եղել. նոցա մի հաստուածը գնացել է դէպի Վասպուրականի Վան քաղաքը, միւսը դէպի Կիլիկիոյ Սիսը, երրորդը դէպի Ջուղայ և չորրորդը դէպի Վօլգայի ստորին ջրաբաշխը: Այդ չորրորդ մեծ հաստուածն էլ հենց կազմել է Ղրիմի մեծ գաղթականութիւնը: Գաղթականները հասներով Վօլգայի ջրաբաշխը, նախ և առաջ բնակութիւն են հաստատել Ղազան և հաշտարիխան քաղաքների միջոցավայրում գտնուած Ախսարայում. թաթարաց հաստատած Ոսկեսարայի կամ Ղիշաղների մեծ խանութեան սահմաններում թաթարաց խանի հրամանով և թուլտութեամբ 1299 թուին (չիս.): Քառասուն և մէկ տարի մնալով այդտեղ, նոքա մտածում են տեղափոխուել Ղրիմի թերակղին, որովհետև, նախ, մշտական յարաբերութիւն ունենալով Ղրիմեցւոց հետ, լսած են լինում այդ երկրի թէ հողի բարեբերութեան, թէ կիմացի բարեխառնութեան և թէ քաղաքական յաջող հանգամանքների մասին և, երկրորդ, արդէն շատ նեղուած են լինում թաթարների բունութիւնից և ցանկանում են մի տեսակ ազատուել նոցա ձեռքից ու իշխանութիւնից: Նոքա դեսպան են ուղարկում «Թինիւիկաց», իշխանի մօտ, որ բնակուում էր Թէոդոսիոյ Թուանկ-Հեսարի «մէջ, պայման են կապում նորա հետ՝ երթալու, բնակուելու նորա կալուածներում, և նիսարայից դուրս գալով բոլորեքեան՝ իշխանները, աղնիւնները և հասարակ ժողովուրդը, դիմում են դէպի Ղրիմի հարաւային ափը, դէպի Թէոդոսիոյ նաւահանգատը» Թաթարները՝ ի հարկէ, աշխատում են ամեն տեսակ արգելք լինել և բոնութեամբ կասեցնել այդ գաղթականութիւնը, որ շատ վնասակար էր խանութեան, որովհետև հայերը իւրեանց ընդունակութեամբ և աշխատասիրութեամբ մեծ օգուտ էին տալիս թա-

թարներին, կազմելով միակ երկրագործ, վաճառական և արհեստաւոր դասակարգն անապատական թաթարների մէջ, բայց չեն յաջողում, չայերը գէնքի զօրութեամբ ճեղքում են թաթարաց ստուար զօրութիւնը և պատերազմելով ու յաղթութիւն տանելով, հասնում են թիմ 1330 թուին (Հիթ):

Ղրիմ 1330 Խուլիս (ՀՀԴ.):
Յայտնի է, որ Մոնղոլ-թաթարները ժգ. դարի սկզբներում հզօր բանալով, գրաւեցին Ասիոյ մեծ մասը. յայտնի է նոյնպէս, որ նոքա գորանով չշատանալով, շարունակեցին իւրեանց արշաւանքը Ջինդիկի շառաւելիների առաջնորդութեամբ և մտան Եւրոպա. Բատին ահազին հրոսակի զրուս անցած, անցաւ Ուրալ և Վոլգա գետերը և տակն ու վերաց անելով այդ տեղերում եղած բոլոր ազգերն ու տէրութիւնները. տիրեց ամբողջ Թուսաստանին, հիմնեց Ռոկսարայի կամ Ղիչաղաց խանութիւնը Վոլգայի ստորին ջրաբաշխում և եղաւ թաթարաց Էլ-խաններից մէկը, առերես հնագանդութիւն միայն ցոյց տալով մեծ-խանին և անուանական կապ միայն պահպանելով Ղարաղուրումի մեծ-խանութեան հետ:

Ահա հենց այդ ժամանակները Բատիկի օդնականներից չորսը իւրեանց ցեղերով «Դորդ-Զշաղը» մտան Տաւրիկեան թերակղզին և այդ գեղեցիկ երկիրն էլ դարձրին Ղփչաղաց խանութեան մի մասը Թաթարաց մեջ խանը Մանգոխանը շնորհում է այդ թերակղզին իւր եղբօրորդի Օրան Թիմուրին, որ խանի տիտղոս ընդունելով, տիեզրում է Ղրիմին, Թաթարնին և Ղուբանի շրջակացքին, իւր հերթով անուանական կապ պահպանելով Ոսկեսարացի հետ, ինչպէս այդ վերջինը Ղարաղուրումի հետ:

1261 թուին Ղրիմի խանութիւնը բաժանուած է եղանակով՝ կամ կամ Ղրիմի խանութեան Տաւրիկեան թերակղզում և Նողայի խանութեան Ղու բանի և Դանութի մէջ գտնուած երկրներում Նողայի առաջնորդութեամբ, որ ճանաչուած էր Ղրիմի խանի լշխանութիւնը. Եւ, վերդութեամբ, որ ճանաչուած էր Ղրիմի խանի լշխանութիւնը. Առաջապէս, երբ քաջքայուում է Ասկեսարայի խանութիւնը և նորաւերակների վերայ առաջ են գալիս հետզհետէ Ղազանի և Հաշտար-խանի խանութիւններն իւրեանց անկախ խաներով, Ղրիմի խանութեան երկու մասն էլ նորից միանուած են, մի անկախ խանութիւն երեան երկու մասն էլ նորից միանուած են, մի անկախ խանութիւն են կազմուած, որ գոյութիւն է ունենուած ամբողջ հինգ հարիւր տարի, են կազմուած, որ գոյութիւն է ունենուած ամբողջ հինգ հարիւր տարի, առաջին ժամանակները կառավարուելով Օրան-Թիմուրի յաջորդների ձեռքով, յետոյ Զինգիզի շառաւելով Գիրէջների հարստութեան ձեռքով:

Օրան Թիմուրը և նորա յաջորդներս իւրեաց թալի լեռնում են Դիմի անապատավին և գաշտավին ձասերը մինչև լեռները որովհետև թաթարներն ինքեանք անապատական ժողովուրդ լինելով, սպարագելով խաչնարածութեամբ և վրանաբնակ կեանք

վարելով, ընտելացած էին անապատին և պէտք չունէին Նրամի լեռ-նոտ մասին և հարաւային ամենազեղեցցիկ և պաղատէտ ափին, իսկ միւս մասը—լեռների լանջերն ու ծովափնեաց մասը տալիս են վաղուց՝ ի վեր այդ տեղերում ապրող քրիստոնեաներին, զիշաւորապէս Ցոյ-ներին, որոնք շատ առաջ դեռ եկած էին այդ երկիրը, հիմնած էին բազմաթիւ գաղութներ և պարապում էին առեւտրով:

«**Աւաշին Քանովացիները**, որոնք Բնակութիւն և Հաստատում մ Արմատական պահպան կազմում են Երկու վաճառական՝ Բալգո-Դորիա և Անտօնիո-Դորիա և Անտօնիո-Դորիա: 1281 թուին դոքա խնդրում ու մեծ փողով գնում են Օրան Թիմուրից հին Թէօդոսիոյ Տովագիք և այնտեղ շինում են իւրեանց հայար առևտրական մի փոքրիկ ֆակտորիա: Ժգ. և ժգ. դարերում չնդկաստանի առևտուրը կատարուում էր Սև ու Եզովի գարերում չնդկաստանի առևտրական ազգերը ձգտում էին Տովերի վերացով, ուստի և բոլոր առևտրական ազգերը ձգտում էին Տովերի ափերին առևտրական ֆակտորիաներ հիմնելու և գա- այդ Տովերի ափերին առևտրական ֆակտորիաներ: Խտակիոյ փոքրիկ հասարակապետութիւնները՝ Վենետիկ, Ջանովացիք և Պիզացիք այդ ասպարիցում մեծ եռան- գով մրցում էին միմեանց հետ: Վենետիկցիք հեմնել էին Եզովի, Ջանովացիք էլ, ինչպէս ասացինք, հիմնում են իւրեանց ֆակտորիան հին Թէօդոսիացիք տեղում, որ ժամանակի ընթացքում ատանում է «Կաֆա» անունը:

Խանը թէկ պայմանի համաձայն տալիս է Քանովացիներին հին Թէզոգուշայի տեղը, թող է տալիս նոցա այդտեղ Փակտորիա շինելու, աւետուր անելու և մինչև անգամ առանձին հրամանազրով արգելում է հարաւային ափում ասլրող միւս ազգերին առևտրական գործերով պարապելու, այդ մենաշնորհութիւնը տալով միայն Քանովացւոց, բայց դորա հետ միասին մի ծանր պայման էլ է դնում, որ նոքա ներմուծած և արտահանած բոլոր ապրանքներից որոշեալ մարս հատուղանեն խը զանձարանին.

սաքս հատուցածած լիր դասակարգելը
Կարճ միջոցում նորահաստատ Փակտորիան լցուում է բազմա-
թիւ խոտայցի գաղթականներով, որոնք յաջող առևտրական գործո-
ղութիւններով սուլ միջոցում հարստանում են, մեծացնում են իւ-
րեանց բնակութեան տեղը և ձեռք են բերում ընդարձակ կալուած-
ներ Կաֆալի շրջակայքում։ Սակայն մեծացնելով և ծաղկեցնելով
իւրեանց գնադութը, խոտայցիք նոյն ժամանակ համոզուում են, որ
իւրեանց քաղաքը չի կարող լիակատար բարգաւաճման հասնել և
ինքեանք ևս չեն կարող ապահով լինել, մինչև որ չամրացնեն իւ-
րեանց քաղաքը և այդպիսով միջոց չունենան ընկած տեղը պաշտ-
պանուելու թաթարներից, որոնք տեսնելով ձանոփացւոց օրըստորէ
հարստանալը, սկսել էին արդէն նախանձել և թշնամական յարաբե-

բոլթիւն ցոյց տալ: Այդ նախակով նոքա նախապէս քաղաքի չորս կողմը փորում են մի ահազին փոս, որ պէտք է ծառալէք իրեւ հիմք և առաջին ամրութիւն, որի վերայ ապագայում կամաց-կամաց ան-նկատելի կերպով պիտի աւելանալին և ուրիշ ամրութիւններ:

Կասկածոտ խանի աչքից չի խուսափում եւրոպացիների գոր-ծողութիւնը: Նա մեկնութիւն է պահանջում, բայց պատասխան է ստանում, թէ այդ փոքրիկ ամրութիւններն ինքեանք շինում են իրեանց առեւտրի մրցակից և հակառակորդ Վենետիկեցիներից պաշտ-պանուելու համար: Եւ ճշմարիտ, շուտով էլ արդարանում են նոցա-ասածները: Վենետիկեցիք նախանձելով Կաֆալի յառաջադիմութեան, 1293 թուին յարձակուում են Քանովացւոց վերաց, աւերում քան-դում են քաղաքը, այրում են առեւտրական նաւերը և ստիպում են նոցա փախչել թաթարների մօտ և նոցանից օդնութիւն խնդրել իրեանց ազահ կրօնակիցների դէմ: Վենետիկեցիք, ՚ի հարկէ, կամե-նում են մնալ Կաֆայում և բռնել Քանովացւոց տեղը, բայց թա-թարները վերաց են հասնում, հալածում նոցա և աւերուած Կաֆան նորից յանձնում նախկին տէրերին: Այդ ժամանակ արդէն Քանովա-ցիք արձակ-համարձակ, առանց դրդելու թաթարների կասկածը, սկսում են ամրացնել իրեանց քաղաքը: Նոքա ահազին քարեաց պարիսպ են քաշում քաղաքի չորս կողմը նախկին փոսի եզերքով, ամրացնում են նորան 12 աշտարակով, թողնում են եօթն դարպաս և այդպիսով գոյացնում են մի ամուր բերդ, որ յետոյ սկսում է կո-չուել «Փուան'-չիսար»: Բացի սորանից, Քանովացիք ծովախորշում շինում են մի հսկայական պարիսպ, որի յետեւը պէտք է պահուէին և պաշտպանուէին նոցա առեւտրական նաւերը, եթէ թշնամիները ծովի կողմից կամենալին յարձակուել նոցա վերաց:

Պ.

Կաֆալի և առհասարակ Քանովացւոց բոլոր կալուածների բար-գաւաճման և ծաղկելուն նախանաւանդ նպաստում են նոր Ղրիմ ե-կած չայերը: Նոքա Քանովացւոց իշխանի հետ կապած իրեանց պաշ-մանի համաձայն նախապէս բնակութիւն են հաստատում Փուանկ-չիսարում, Կաֆարաթում, Սուրխաթում և դոցա շրջակացքում, յետոյ բազմանալով, տարածուում են և լինում են այն բոլոր տարածու-թիւնը, որ գտնուում էր Ղարապաղարի, Սուրխաթի և Կաֆալի մէջ:

Թէ որքան է լինում չայերի թիւը Ղրիմի թերակղզում մեծ զաղթականութիւնից յետոյ —մենք դժուարանում ենք ճշդիւ որոշել: Յամենայն գէպս կարող ենք ասել, թէ չայերն այդ ժամանակները

մի պատկառելի թիւ են կազմել միւս բոլոր Ղրիմաբնակ ազգերի մէջ, որովհետեւ հենց այդ ժամանակներն է եղել, որ Ղրիմի ծովագնեայ մասը սկսուել է օտարներից հայաստան կամ ծովալին հայաստան կո-չուել: Յիշատակարանի ասելով, գաղթական չայերը շինում են Ղրի-մում հարիւր հազար տուն և շատ զօրանում ու բազմանում են: Եթէ միայն Յիշատակարանի հեղինակը «Հարիւր հազար» թիւը չի գործա-ծում իրեւ անորոշ մեծութիւն ցոյց տուող մի թիւ և տուն ասելով հասկանում է այնպէս, ինչպէս այժմ մենք ենք հասկանում, կարելի է ուրեմն ամենայն ճշտութեամբ այդ ժամանակուայ Ղրիմաբնակ հայերի թիւը հաշուել ծ հարիւր հազար հոգուց ոչ պակաս: 2'պէտք է մոռանալ այն հանգամանքը, որ հինգ հոգի թիւը, որ առհասարակ մի միջին թիւ է համարուում ամեն մի տան համար, շատ էլ չի յար-մարուում հայերի տան կամ ընտանիքին, որովհետեւ, ինչպէս յացտնի է, չայց տները չեն սիրում բաժանուել և այդ պատճառով էլ շատ բազմամարդ են լինում:

Հայերը մի կողմից իրեանց յատուկ աշխատասիրութեամբ, աչ-քարացութեամբ և ընդունակութեամբ, միւս կողմից էլ երկրի բարե-բերութեան և առեւտրական գործերի յարմարութեան շնորհիւ շատ շուտով մոռանում են իրեանց հայրենիքից գաղթելու և թաթարնե-րի մէջ ապրելու ժամանակամիջոցում քաշած նեղութիւնները. Նոքա կարծ միջոցում բարուքում են իրեանց կեանքը, հարստանում են, ծաղկում են, կամ, ինչպէս ասում է Յիշատակարանը, զօրանում են: Նամանաւանդ շատ առաջ է գոնում առեւտրական դասակարգը, յաջող հանգամանքներից օգտուելով և նաւահանգստների ու առեւտրական շուկաների գործերի մեծամասնութիւնն իւր ձեռքը ձգելով: Հայ վա-ճառականները յաջողութեամբ մրցում են իտալացիների հետ և իւ-րեանց ճարպիկութեամբ և հմտութեամբ պատուառը տեղ են գրա-ւում թէ Քանովացի իշխանաւորների առաջ և թէ ընդհանրապէս բոլոր ազգաբնակութեան մէջ: Նոքա վաճառում են իտալական և գերմանական գոյնզգոյն մահուգներ, անկուածներ, ապակի, զինի, մարզարիտ, կարմիր կաշի և ձեռք են բերում թաթարներից մեծ քա-նակութեամբ գոհարեղին և ոսկի, որ նոքա կողմուտել ու յափշտա-կել էին հնդկաստանում, Չինաստանում և Պարսկաստանում:

Նիւթական բարգաւաճման հետ զուղընթացքար ստաց է զր-նում և հայերի մտաւոր զարգացումը: Նոքա շինում են բազմաթիւ եկե-ղեցիներ, վանքեր ու մատուռներ, որոնցից որը կանգուն, որը կիսա-կործան, որն էլ իսպառ աւերուած մինչև յայսօր զեռ երեսում են հետաքրքիր ճանապարհորդի աչքին, եթէ նա անցնում է Թէոդո-սիալի արևելեան կողմից լեռների վերացով մինչև էսկի-Ղրիմ և Ղա-



ոասու Յիշատակարանն ասում է, թէ գաղթականների կառուցած եկեղեցիների թիւը եղել է հազար. թէ ինչու անպատճառ հազար—մենք չ'դիտենք. կարելի է Յիշատակարանի հեղինակը կամեցել է Անեցի դաղթականների շինարարութիւնը նմանեցնել Անի քաղաքին, որ ինչպէս ասում է աւանդութիւնը, ունեցել է հազար ու մի եկեղեցի: Բայց մենք կարծում ենք, թէ ճշմարիտ որ Ղրիմի Հայերը խիստ շատ եկեղեցի են շինել. միայն Կաֆան ունեցել է 45 եկեղեցի, ինչպէս ցոյց են տալիս եկեղեցիների աշխմուաց բազմաթիւ աւերակները և տեղերը և ինչպէս սլատում է յայտնի «Քէֆէ քաղաք Տոփահայեաց» երգը, որի մէջ ցիցուում են 24 եկեղեցու անուն, որոնք դեռ շին ու զարդարուած են եղել մինչև անցեալ դարի վերջերը: Այս բոլոր եկեղեցիները, վանքերը և մատուռները զարդարուած են եղել Թանկաղին ոսկէ և արծաթէ սպասներով, մետաքսեաց, բեհեղեաց, եկեղեցական գդեստներով, վարագոլցներով ու փուռածքով, ալանակուու խաչերով, սաղաւարդներով ու վակասներով: Տաճարների պատերի մէջ դրսից ու ներսից հազցրած են եղել բազմաթիւ. ործաքար և մարմարիոնեաց խաչքարեր նուրբ քանդակներով ու արձանագրութեամբ, որոնց շինելու, քանդակելու ու փորագրելու դժուար արհեստը գաղթականները բերած են եղել հացըենիքից: Եկեղեցիներից նամանաւանդ նշանաւոր է եղել Թիւոդոսիոց Ս. Աստղիսը, որ եղել է «աթոռակալ» կամ մայրեկեղեցի, իսկ վանքերից՝ Ս. Խշանը կամ Ս. Խաչը, որտեղ նստել են զրիմարնակ հայերի առաջնորդները և ամբողջ հինդ հարիւր տարի կառավարել են հայոց այդ հեռաւոր թեմը: Խորոր հին շինութիւնները՝ վանքերը, եկեղեցիները, մատուռները և աղբւրների աւազանները շինուած են եղել հայկական ոճով ու ճաշակով և զարդարուած են եղել քանդակագործ փայտեաց ամուր դրներով, որոնցից շատերը գաղթականները շատ ուրիշ եկեղեցական զարդերի ու սպասների հետ միասին բերած են եղել հայաստանից:

Ղրիմաբնակ Հայերն ունեցել են բազմաթիւ հոգեորական դաս կրուսակրօն և ամուսնացեալ, որոնք դատարկածեռն չեն անցկացրել իւրեանց օրերը: Նոքա ամուր կապ են պահպանել Մայր-Աթոռի հետ, հողացել են գաղթականների մտաւոր և բարոյական կրթութեան վերաց, իւրեանց խցերը դպրոց դարձնելով ժողովրդի մատաղ սերնդի կրթութեան համար, իսկ զիտնական արեղաները՝ «Հողէ տներ» են շինել և իւրեանց կեանքն անց են կացրել, մագաղաթ պատրաստելով և թանկաղին ձեռագրեր արտագրելով՝ «ընդ հովանեաւ» բազմաթիւ վանքերի ու եկեղեցիների, որոնք շինուած են եղել սիրելի հայրենիքի եկեղեցիների ու վանքերի անուններով:

Առաջին անգամ Ղրիմի լուսաւորչեան հօտը պառակտուել է

1438 թուին: Հուվմի պապերն օգտուելով այն հանդամանքից, որ Ղրիմի մի մասին իշխում են կաթոլիկ հանովացիք, հաստատում են 1320 թուին եսլիսկոպոսական աթոռ Կաֆայում և ապա սկսում են ուղարկել ճիզուիթեան կարգի աբեղաներ քարոզչութեան: Ճեզուիթեան ները նախապէս խրեանց նպատակ են դնում քրիստոնեաց դարձնել թաթարներին, բայց երբ այդ նոյց չի յաջողում, նոքա իւրեանց քարոզչական գործունէութիւնը փոխադրում են հայաբնակ տեղերը, վագուստուկ իւրեանց աթոռակալ եպիսկոպոսի իշխանութիւնից և վագուստելով իւրեանց ամուր կապերով կապուած էր իւր էր, ինքը ժողովուրդն էլ սիրով և ամուր կապերով կապուած էր իւր հարազատ եկեղեցու հետ: Հարկաւորում է մի երկար և յամառ մաքառումն, որի մէջ մէծ դեր է կատարում մարմնաւոր իշխանութեան ձնշումն, մինչև որ կաթոլիկները կարողանում են հասնել իւրեանց նպատակին: Ժամանակի կոնսուլ Պուալո Իմպերիալէն սկսում է զօրեղ կերպով իւր ազդեցութիւնը բանեցնել վիճակաւորի և հայ հարուստ դասակարգի ու ազնուականութեան վերաց, սպառնալով, որ եթէ հայերը յամառեն, կ'զրկուին իւրեանց ունեցած արտօնութիւններից, իրաւունքներից: Նեղն ընկնելով ու ուրիշ ճար չ'զտնելով ազատուելու հանովացւոց բոնութիւնից, նոքա առաջին նուագ համաձայնում են միայն ընդունել պապի զիխաւորութիւնը, կարծելով, թէ այդ կաթոլիկութիւն ընդունել չի նշանակում: Ճիզուիթները շատ զգուշութեամբ են վարուում. Նոքա, նախ, մուտ են զործում հայոց եկեղեցիները, յետոյ հետզհետէ սկսում են փոփոխել լուսաւորչական եկեղեցու ծէսերը և, վերջապէս, բանն այն տեղն են հասցնում, որ սկսում են լատիներէն աւետարան կարգալ և առհասարակ լատիներէն ժամասացութիւն էլ կատարել: Միով բանիւ զործն այնպիսի խոհեմութեամբ ու տակտով՝ է առաջ տարուում, որ հայ ժողովուրդը կամաց-կամաց ընտելանում է կաթոլիկութեան, այնպէս որ հայերը մէկ էլ աչք են բաց անում և տեսնում են, որ արդէն կաթոլիկ են: Ազգային եկեղեցուն հաւատարիմ է մնում միայն գաղթականների հասարակ դասը—ամբոխը:

Առհասարակ հանովացիք սիրով են վերաբերուում դէսի հայերը, նոյց ըստ ամենայնի հաւատար իրաւունքներ շնորհելով իտալացիների հետ: Նոքա նամանաւանդ սիրով են վերաբերուում դէսի հայ ազնուական ու հարուստ դասակարգը, որոնցից առաջնին տալիս են մեծամեծ պատիւներ, պաշտօններ ու իշխանական իրաւունքներ, իսկ երկրորդին լիաձեռն ազատութիւն առեւտրական ասպարիզում և ամեն տեսակ արտօնութիւնների: Եւ այդ բոլորն ՚ի զուր չէր, որովհետեւ հայերն

իսկապէս օգտաւէտ տարր էին հանդիսանում հանովացւոց կալուածներում նիւթականապէս. և բարոյապէս: Հայ երկրագործը բարձրացնում էր երկրի արդինաբերութիւնը, արհեստաւորը ծաղկեցնում էր արհեստները, վաճառականը, բացի երկրի առևտուրը զարգացնելուց, յանձն էր առնում ամեն տեսակ գոնողութիւն բերդեր շինելու և քաղաքներն ամրացնելու գործում և, վերջապէս, հայ իշխանը բաղմաթիւ մարդկանց զլուս անցած՝ իւր զէնքի զօրութեամբ պաշտպանում էր հանովացւոց կալուածները թշնամիների յարձակմունքից: Հայերն են շինում «հայոց-բերդ» կոչուած Կաֆայի նշանաւոր ամրութիւնը, հայերն են իւրեանց զէնքի զօրութեամբ երկար ժամանակ թե ու թիկունք լինում հանովացւոց՝ նոցա թաթարների դէմ մղած երկարատև ու բազմաթիւ կոխներում, վերջապէս, հայերն են լինում, որ իւրեանց իշխանների առաջնորդութեամբ կարողանում են երկար ժամանակ պաշտպանել Կաֆան Օսմանցիների յարձակմունքի ժամանակ:

1344 թուին թաթարները յարձակուում են Սուդակի վերայ և սկսում են սպառնալ Կաֆային և հանովացւոց միւս կալուածներին: Ահա այդ ժամանակ հայոց մեծամեծները հաւաքուում են կոնսուլի մօտ և խորհրդակցութ են նորա հետ Կաֆայի հին բերդի՝ «Փոանկ-Հիսարի» մօտ մի նոր բերդ շինելու և այդպիսով աւելի ևս ամրացնելու քաղաքը: Ռոքա մտածում են այդ բերդով պաշտպանել հայոց թաղը, որ բոլորովին անպաշտպան էր, որովհետեւ հայերը մեծ զաղթականութեան ժամանակ «Փոանկ-Հիսարում», բնակութեան տեղ չըդունելով. բնակուել էին հին բերդից գուրս քաղաքի արևելեան կողմը: Հանովացի կոնսուլը լաւ հասկանալով հայերի դիտաւորութեան օգտակարութիւնը, ոչ միայն թող է տալիս, այլ և խրախուսում է նոցա և յորդորում փութով ձեռնարկելու գործին, եռանդով առաջ տանելու և շուտով ի կատար ածելու: Վճռում են Փոանկ-Հիսարի պարիսպների պէս մի նոր աւելի հաստակուոց ու աւելի մեծ տարածութիւն բռնող, աշտարակագրդ և մեծամեծ դարպաններով պարիսպ քաշել, շրջապատել ամբողջ հայոց թաղը և մէջ առնել Փոանկ-Հիսարը, սկսելով ծովածոցի հարաւային կողմից և անցնելով լեռների վերացից դէպի ծովածոցի հիւսիսային կողմը, որտեղ դանուում էր Փոանկ-Հիսարի «Խոկիլ-Ղափու» կոչուած դուռը: Որոշուում է, որ մեծատուն հայերից իւրաքանչիւրը, որ պէտք է մասնակցէր շինութեան գործին, յանձն առնէր պարսպի միայն մի մասը շինելու և դորան համեմատ որոշեալ քանակութեամբ քար ու ատաղձ բերել տար ու կուտէր նշանակուած տեղը, իւրաւունք ստանալով իւր անուամբ կոչելու իւր շինած պարսպի մասը և իւր միշտակարանը զը-

բելու նորա վերայ: Ասում են, թէ սորանից է առաջ եկել Կրիմեցի գաղթականների մէջ նոցա միմեանց հարստութիւնը չափելու յայտնի տարօրինակ սովորութիւնը: Կաֆացիք, երբ որ կամենում էին ասել, թէ այս ինչ մարդը այսքան հարստութեան տէր է, սովորութիւն էին արել ասելու, թէ այս ինչ մարդը կարող է քաղաքի ամրութիւնների համար այսքան քար տալ:

Մեծ եռանդով հայերը ձեռնարկում են գործին և կարճ միջոցում պատրաստուում է ահազին պարիսպը, որ ամեն մի 20, 40 և 60 սաժէն տարածութեան վերայ ունենում է մի մի աշտարակ որմանածերպերով և ինը դարպաս իւր բոլոր երկարութեան վերայ:

Ոմանք ասում են, թէ հայոց բերդի շինութեան պատճառը եղել է ոչ թէ թաթարների Սողդացի կամ Սուղակի վերայ յարձակուելը, այլ մի ուրիշ դէպէ: Պատմում են, որ մի անգամ հանովացի կուելը, այլ մի ուրիշ դէպէ: Պատմում են, որ մի անգամ հանովացի կուելը լինում է բռնուում մի թաթար առևտրականներից մէկը վիճաբանութեան է բռնուում մի թաթար վաճառականի հետ, որ մի հարուած է տալիս իտալացու երեսին: Մագում է կուել և հանովացին սպանում է թաթարին: Զանիբէկ խանը ուխտում է վրէժինդիր լինել եւրոպացի վաճառականից: Նա մարդ է ուղարկում և պահանջում, որ մարդասպանին իւր ձեռքը տան, բայց մերժումն ստանալով, գալիս, պաշարում է քաղաքը: Ահա այդ ժամանակ, ասում են, հայերը, որոնք պաշարումից դեռ շատ առաջ տեղեկացած են լինում խանի դիտաւորութեան մասին, հաւաքուում են կոնսուլի մօտ և թոյատուութիւն են խնդրում ամրացնելու քաղաքն իւրեանց ծախսով ամենավտանգաւոր կողմից, այն է ծովափից դէպի այն կողմը, որտեղ այժմ գտնուում է գերեզմանոցը:

Պաշարումը տևում է երկու տարի, բայց խանը և ոչ մի վնաս չի կարողանում տալ քաղաքին, որովհետեւ պարիսպները շատ ամուր էին և լաւ պաշտպանուած: Ճիշտ է, խանը մտածում է մեքենաներով քանդել պարիսպները, բայց քաղաքացիք յանկարծակի դուրս են խուժում քաղաքից և այնպիսի ջարդ են տալիս նորան, որ նա ըստիպուած է լինում թողնել պաշարումը և հեռանալ քաղաքից: Նա իւր զարույթը թափում է Բալքիլուկ վերայ, որ առնում և այրում է: Հանովացիք ընկնում են նորա յետելից, աւերում են Ազովի ծովի ափերը և այնպիսի սարսափ են ձգում խանի վերայ, որ նա հարկադրուում է խաղաղութեան դաշն կապելու:

Կրիմի հայ ազնուական դասի մէջ նշանաւոր են լինում չորս իշխանական տուն կամ տոհմ՝ Պահլաւնիք, Մուղալնենք, Դարեջանենք և Աղամալենք, որոնց վերայ յետագայ ժամանակներում աւելանում է և Բաղրատունի տոհմը: Սոքա մեծ յարգանք են վայելում ժողովրդից և մեծամեծ պատիւների ու պաշտօնների են արժանա-

նում «Ճինխիլգաց» իշխաններից: Պարսպաշինութեան ժամանակ Պահաւունի Տէր-Մաղաքիա աւագ երէցն իւր պապի եղբօր թուան Գետրութիւնում էն պարսպի մի մասը «ԵՃ. կարտի» տարածութեամբ և զրում են իւրեանց ցիշատակարանը նորա վերայ. Մուզալենց Մարդար իշխանը Քանովացւոց Ջիրին իշխանի հրամանով նշանակուում է Ճինխիլգաց կալուածների պահապան և իւր գորագնդով նստում է Կաղարաթում, ուստի և թաթարները սովորութիւն են անում նորա տուճի անունով Կաղարաթի համանուն գետը կոչել «Մուզալիօվէն»: Կարիջաննենց աւագ-պարոն Մուրատի Յովսէփ որդին համարուում է Կաթացի առաջին նախարարը. Ազամալենց Մեսուու իշխանը նշանակուում է Կաթացի չորրորդ գնդապետ, և այսու հայէրին ու նոցա գանազան կողմեր ցրուելու պատճառ լինում:

Հյապիսի բարւոք վիճակի մէջ ապրում է Դիրիմի հայ զաղթականութիւնը մինչև 1475 թուականը, երբ գալիս, տիրապետում են Կաթացին Սամիկները և կոտորում, հալածանքի են ենթարկում հայէրին ու նոցա գանազան արշակունյաց կողմեր ցրուելու պատճառ:

Օսմանցւոց արշաւանքի պատճառները գանազան աղբիւրներ գանազան տեսակ են պատմում: Ոմանք, ինչպէս Նախիջևանի Յիշատակարանը, պատմում են, որ 1344 թուականի պատերազմներից յիշոյ Դիրիմի խաներն ընդհանրապէս խաղաղութեամբ են կառավարուում Քանովացւոց հետ և սիրով պահպանում իւրեանց զրած զաշինքը և ուխտը մինչև 1468 թուականը, երբ նորից անհամաձայնութիւն է ծագում երկու ազգի մէջ, որ և Կաթացի աւերմունքի պատճառ է լինում. Այդ թուին, ասում է Յիշատակարանը, խանը կնութեան է առնում իւր որդուն Քանովացւոց Ջիրին իշխանի գուստրը Խոսանցութիւն կապելուց յետոց, Ջիրինը հրաւիրում է իւր մօտ փեսացին, որից օգուտ քաղելով թշնամիները, սկսում են զրգուել խանին Քանովացւոց դէմ, ասելով, թէ Ջիրինը հրաւիրեց քո որդուն իւր մօտ խորհրդակցելու, որ նորան նատեցնէ քո տեղ խան, և Ջիրինին խանի գեղ, ասելով, թէ փեսադ եկել է քո մօտ, որ քեզ հալածէ ու սպանէ: Թշնամիները հասնում են իւրեանց նպատակին: Ջիրինը հաւատ ընծացելով բանամարկուների խօսքերին և կասկածելով փեսացի սիրոյ և հաւատամութեան վերայ, անակնկալ կեպով բռնում է նորան և բանտարկում, տալով նորան «'ի պահեստ լատին իշխանին»: Խանը, որպէսի ցոյս չի ունենում իւր ոյժերով յաղթելու Քանովացւոց և իւր որդուն ազատելու, գեսպան է ուղարկում Օսմանցւոց սուլթանի մաս և խնդրում նորա աջակցութիւնը, ասելով, թէ թնդ Կաթա քաղաքը ձերը լինի, միայն որ իմ որդուն բանտից ազատէք ու ինձ զաքը ձերը լինի, միայն որ իմ որդուն բանտից ազատէք ու ինձ յանձնէք: Սուլթանը համաձայնում է և թաթարները ցամաքից, իսկ յանձնէք: Սուլթանը համաձայնում է Կաթար ժամանակ պաշա-

րում են քաղաքը, բաց չեն կարողանում առնել, որովհետեւ ֆուանկ-չիսարը և չայոց բերդը ամուր էին և հայոց իշխաններն միացած հանովացւոց հետ ոգի ՚ի բախն ընդդիմանում ու պաշտպանում էին նորան: Սակայն շուտով պաշարը վերջանում է, հանովացւոց զօրքը թուանում, ինքը իշխանն էլ յոյսը կտրելով, թողնում, փախչում է: Հայէրը, մինակը, անօդնական ու անձար մնալով, ստիպուած են լինում ընդունել թուրքերի առաջարկութիւնը, բանալ քաղաքի զըռները և անձնատուր լինել, ազատ ու անխնաս մնալու պայմանով:

Ոմանք էլ, ինչպէս Դիրիմի պատմագիր Կոնդորակին, նայն պատմութիւնն ուրիշ տեսակ են պատմում: Նոքա ասում են, թէ Զանովացիք ստիպում են Մինզիլիկիրեց խանին պաշտօնանկ անել իւրեանց սահմանակից գաւառի իշխան Էմինեկ բէկին և նորա տեղը նստեցնել են տալիս թաթարներից առուած մէկին: Էմինեկ բէկին ապստամբում է խանից, մեծ կուսակցութիւն է կազմում և զեսպաններ ուղարկելով Օսմանցւոց Մէհմէմէտ բ. սուլթանի մօտ, որ այդ ժամանակներն արդէն առել էր Պօլիսը, խնդրում է նորա ձեռնտուութիւնը Զանովացւոց դէմ, խոստանալով մտնել նորա գերիշխանութեան տակ: Նշանաւոր սուլթանը, որ այդ ժամանակները պատրաստուած է լինում արշաւելու Խոտլիս, Սլբանիս, Կանդիս և Հուղոս և այդ նպատակի համար մի մեծ նաւատարմիդ է կազմած լինում, ըմբոնում է Էմինեկ-բէկի առաջարկութեան օգտականութիւնը Օսմաննեան կայսրութեան հսմար և պատրաստի նաւատարմիդն ուղարկում է Սև ծովը դէպի Կաթա: Նաւատարմիդի պետ Ահմադ Կեղիկ Կապուտան փաշան հասնելով Կաթացի նաւահանգիստը, հրամացում է նախապէս թնդանօթներն ուղբել դէպի քաղաքի պարիսպները և ոմբակոնել, յետոց նա զօրք է իջեցնում ցամաք և չորս տեղ մարտկոց շինելով, շարունակում է ոմբակուութիւնը ցամաքից և ծովից, ճիգ թափելով քանդել պարիսպները: Երբ որ այսպէս հինգ օր շարունակ տևում է որմբակուութիւնը և ամուր պարիսպները չ'դիմանալով, փլչելու նշաններ են յոյց տալիս, Զանովացւոց վերջին կոնսուլ Անտօնիօ-դելլա-Դաբելլան և նորա խորհրդական Ալեքրո-Սկուլարչիաֆիօն գուրս են զալիս քաղաքից և յանձնում են փաշացին քաղաքի բանալիները, նախապէս խօսք առնելով չ'վնասել քաղաքացւոց և ձեռք չ'տալ նոցա ստացուածքին: Ասում են, թէ գոքա կաշառուած են լինում և հէնց իւրեանց այդ գործողութեան համար ստանում են իւրեանց արժանաւոր պատիճը: Անտօնիօն դատապարտուում է տաժանակիր աշխատանքի, իսկ խորհրդականը տարուում է Կոստանդնուպոլիս և նահատակուում է կապանքների մէջ: Ասողներ էլ կան, թէ գաւանողներն եղել են ոչ թէ կոնսուլն ու նորա խորհրդականը, այլ

ութ ականաւոր մարդ հայ մեծամեծներից, որոնք ժողովրդին գրգռել են իշխանաւորների դէմ և ստիպել են նոցա քաղաքը յանձնել թուրքերին, որի համար զոքա էլ կրել են իւրեանց արժանաւոր պատիժը: Փաշան հրամայել է նոցա զլիսատել:

Եւ զարմանալին այն է, որ այդ անհաւասար պատերազմում, բացի հայերից, ոչ ոք չի օդնել հանովացւոց, չ'նայելով, որ նոքա պատերազմից դեռ շատ առաջ զդալով, որ թուրքերը պիտի միանան խանի հետ և արշաւեն իւրեանց վերայ, օդնութիւն էին խողը իւրեանց Դոժից և նորա միջոցով դիմել էին Անդլիացւոց և հունդարացւոց թագաւորներին:

Կոնդորակին թուրքաց աղբէւրներից առնելով, ասում է, թէ այդ ժամանակները Կաֆան ունեցել է վեց հազար քրիստոնեաց ընտանիք, որոնք իւրեանց հերթով ունեցել են 30 հազար ստրուկ:

Պ.

1475 թուի պատերազմից յետոյ Ղրիմի խանութիւնը վասալական երկիր է դառնում Օսմանեան կայսրութեան: Մինզիվիրէցը, ինչպէս որ պայմանաւորուած է լինում պատերազմից առաջ, մտնում է սուլթանի գերիշխաննութեան ներքոյ հետևեալ պայմաններով՝ ա. խանը լիակատար իշխանութիւն ունի իւր խանութեան մէջ. նա ընտրուում է Գիրէյներից, բայց հաստատուում է սուլթանից. բ. Մուլթանը Ղրիմի ծայրագոյն թագաւորն է. նա միայն իրաւունք ունի թաթարներին պատերազմ տանելու, պատերազմ հրատարակելու և խաղաղութեան դաշն կապելու. գ. Սուլթանն իբրև խալիքա համարուում է խնամակալ մահմեդական կրօնքի, ս. գերեզմանների և ուխտատեղիների, դ. Սուլթանը պահապան զօրք է պահում Գիօվիկում: Սակայն այդ դեռ սկզբնական պայմաններն են լինում: Յետազայ ժամանակներում սուլթանի իշխանութիւնը դնալով զօրանում է և խանը կամաց-կամաց բոլորովին ընկնում է նորա իշխանութեան ներքոյ: Մինզիվիրէցի Մահմեդ որդուց յետոց խանները սկսում են նշանակուել ուղղակի սուլթանից և համարուել նոցա տեղակալները Ղրիմուանութանից և անգամ ուոճիկ էլ են ստանում սուլթանից և նորա ցանկութեան համեմատ զահավիճուում ու գահ են բարձրանում:

Կապուտան-փաշան բռնելով Կաֆան, հրամայում է քաղաքացիներին նախ, ցուցակագրել իւրեանց ստացուածքը, որովհետեւ, ինչպէս ասացինք, պայմանաւորուած էր ձեռք չ'տալ նոցա ունեցած չունեցածին: Բայց յետոյ տեսնելով, որ ցուցակների մէջ մտել են և ըստ բռնկները, նա հրամայում է խլել ստրուկներին նոցա ձեռքից և ստի-

պում է քաղաքացիներին նորից նոյա յետ գնել, մեծ փրկանք վճարելով: Յետոյ օտարահպատակ վաճառականներից նա առնում է 25 հազար դուկատ տուգանք, իսկ հանովացիներից պահանջում և ստանում է մի այնպիսի գումար, որ հաւասար էր նոցա ստացուածքի արժէքի կիսին: Վերջապէս, նա հրամայում է բոլոր հանովացիներին պատրաստուել դուրս գալու և գնալու Ստամբոլ, քաղաքի ամենաբնտիր և ականաւոր երիտասարդներին ենիշար է ընտրում-առնում, սպանել է տալիս 300 քաղաքացի ամենահարուստներից և 162 վայաշցի վաճառական: առաջններին՝ որովհետեւ կամենում էր տիրանալ նոցա հարստութեան, երկրորդներին՝ իբրև վրէժխնդրութիւն, որովհետեւ Մոլդաւացւոց Պալագինը նախընթաց տարին սպանել էր տուել թուրք գերիներին:

Բայց ամենասեծ հարուածը նա տալիս է հայերին: Նա չ'շատանալով նորանով, որ կողոպտում է քաղաքի հարուստ հայերին, որ շատերին սպանել է տալիս և ընտիր երիտասարդներին ենիշը է առնուում, սպանում է և բոլոր հայ զլիսաւորներին, իշխաններին, ազնուականներին և ընդհանուր կոստրածի է ենթարկում բոլոր հայերին Սուլթանաթում, Կարապազարում և միւս հայաբնակ տեղերում: Յայսաւուրքի Յիշատակարանը շատ հետաքրքիր մանրամասնութիւններ է պատմում հայոց զլիսաւորներին սպանելու մասին: Փաշան, ասում է նա, քաղաքն առնելուց յետոյ, երեսանց սէր է կապում հայոց առաջաւորների հետ, յաճախակի նոցա իւր մօտ խնջոցքի հրաւիրելով և խօսակիրով նոցա հետ: Նա այդպէս է վարուում, որովհետեւ միտքը դրած է լինում նոցա մահմեդական կրօնքին դարձնելու: Սակայն նա կամաց կամաց համոզուում է, որ այդ անհնարին է, որովհետեւ նոքա նորա բոլոր ցորդորանքին սպատավանում են, թէ ինքեանք պատրաստ են ամեն զոհողութեան, մինչեւ անգամ զոհելու իւրեանց կեանքը. բայց հաւատափոխ և հաւատափաճառ լինելու չեն յօժարիլ. Են ժամանակ փաշան մտածում է վիժժինդիր լինել նոցանից: Նա մի օր համոզում է հայերին առանց զէնքի իւր մօտ խնջոցքի գալու, և երբ որ, խնջոցքը վերջանալուց յետոյ, նոքա գուրս են գալիս ապարանքից, որ գտնուում էր «ի վերաց չորրորդ զտիկինի պալատին», և սկսում են վայր իջնել բարձր սանդուղքից, նա հրամայում է դահճաներին մէկ մէկ սպանել նոցա և ձգել ծովը: Այլ այնուշետեւ պակասում է հայ բնակութիւնը Կաֆացում և ընդհանրապէս բոլոր Ղրիմում, որովհետեւ սպանուողը սպանուում է, գերուողը զերուում է, մնացեալ մասն և ահաբեկուած դուրս է գալիս թերակղզուց և ցրուում զանազան տեղեր՝ Լեհաստան, Մոլդավիա, Վալահիա և ուրիշ տեղեր: Ճիշդ է, հայերի Ղրիմում մնա-

ցած մասը յետագայ ժամանակներում նորից աճում է, որովհետև Թօթ. թուին չայաստանից նոր գաղթականութիւն է գալիս Ղրիմ, բայց նոքա այլես ոչ իւրեանց թուով, և ոչ իւրեանց մտաւոր և բբորոշական զարգացմամբ, ոչ էլ իւրեանց նիւթական բարօրութեամշեն կարողանում հասնել առաջուաչ դրութեան։ Եց նոր գաղթականութիւնը, որի թիւը և զաղթականութեան հանգամանքները մեզ լաւ յայտնի չեն, որովհետև Յիշատակարանը այդ մասին միայն հարեանցի է լիշում, եղել է Ջահ-Աբբասի արշաւանքների ժամանակները, Յայտնի է, որ Ջահ-Աբբասի և Օսմանցւոց պատերազմների ժամանակների, որոնք մեր պատմութեան մէջ յայտնի են «Հալալիք» ընդհանուր անունով։ Թոքա գալիս Եին, ինչպէս յայտնի է, արևմուտքից—Կիլիկիոյ և Փոքր-Ասիոյ զանազան նահանգներից և բաղկացած էին Օսմանցւոց դէմ ասպատամբած կուսականներից և Ջահ-Աբբասի դէմ պատերազմող Սինան-փաշացի զօրքի մնացորդից։ Նամանաւանդ նշանաւոր էին երկու խումբ՝ Քանաքիրլի-Մահմեդի և Թոփալ-Օսմանի, որոնք պատահելով միմեանց Ազրարատի կոտայից դաւառում, պատերազմում են միմեանց դէմ։ Թօփալ-Օսմանն այդ ճակատամարտում յաղթող հանդիսանալով, տիրապետում է Ազրարատին, հալածում է Ահմադին և ինքնի իր բնակութիւնը հաստատելով Արագածոտն գաւառի Կարբի աւանում, այտանից ուղարկում է դէպի չայսանի զանազան կողմերն իւր հրոսակները։ Ահա հէնց այդ ժամանակներն աւերուում ու քանդուում է, ՚ի միջի այլոց, և Սիւնեաց նահանգի Շղուկը գաւառը—Օրոտն և Վաղանդ նշանաւոր աւանները, որոնց քնակիչների մի մասն՝ իւր զլուխը գերուելուց, կողովառուելուց և կոտորուելուց ազատելու համար, թողնում, փախչում է հեռաւոր տեղեր և գալիս է Ղրիմ։

Դոցա հետ գալիս է Ղրիմ և Աբրահամ Պահաւունի իշխանը, որի նախնին Պետրոս իշխանը վերոցիշեալ Մաղաքիա աւագ երէցի հետ, պարսպաշինութիւնից յետոյ, վերադարձել էր Ղրիմից իւր հայրենիքը և բնակութիւն հաստատել նախիջևանում։ Յայսաւուրքի Յիշատականը պատմում է, թէ Օրտանի ընդհանուր աւերմունքի ժամանակ, երբ շատերը գերի Եին վարուում, գերուում է և այդ Աբրահամը իւր քեռորդի Պետրոս Բաղրատունու հետ։ Բայց դոքա ճանապարհին յաջողում են սպանել իւրեանց գերավար չորս պահապաններին և փախչողում գալիս են Քէֆէ, որտեղ աղնիւ Մուշալենց Մարգարը՝ ՚ի պատիւ զոցա տոհմին շատ սիրով ընդհունում է նոցա ու տալիս է բնակութիւնում ու մեծամեծ ստացուածք։ Պետրոս Բաղրատունին 1618 թուին

վախճանում է, իսկ Աբրահամ Պահաւունին ամուսնանում է Մուղալենց Գէորգ իշխանի Թագուհի գստեր հետ և ունենում է այդ ամուսնութիւնից մի արու զաւակ Տրդատ անունով և մի աղջիկ Աննա անունով։ Ահա այդ բարեցիշատակ Տրդատն ու Աննան են լինում, որ շնում են Քէֆէի Ա. Նիկողայոս եկեղեցին բարձր լերան վերաց ՚ի մաշատակ 1475 թուի հայ նահատակների և իւրեանց ծնողաց և իւրեանց անունները զրել են տալիս եկեղեցու արտաքին զրան վերաց։ Պոքա են լինում, որ զրել են տալիս Յակամաւուրքում վերոցիշեալ նշանաւոր Յիշատակարանը և զորա վերջում դնել տալիս իւրեանց աղդաբանութեան ծառը. Պոքա են լինում, վերջապէս, որ կարգադրում են, որ իւրեանց յեանորդներն ամեն տարի տօն կատարեն Ա. Նիկողայոս եկեղեցում ՚ի մաշատակ նահատակների և մշեն իւրեանց ծնողաց՝ մօրը Թագուհի գշխան, Հօրբ-Աբրահամին, ազգականներին՝ Պետրոս Բաղրատունուն, աւագ-պարոն Ֆարիջաններնց Մուգատին, Մուղալենց Սարգարին, Ակորին, Աղամալենց Թամթէին, և հետզհետէ աճեցնեն ազգահամարութեան ծառի վերաց իւրեանց արական հիւղերը։

1475 թուից մինչև 1778 թուականը, երբ լինում է զաղթականութիւնը գէպի Թուսսատան, Ղրիմում մնայած հայերը միւս քրիստոնեաց ազգաբնակութեան՝ բազմաթիւ Յոյների և սակաւաթիւ Վրացիների և Վալահացիների հետ, որոնք զերուած էին և կոչուում էին «Եսիրուեր», հպատակում են Ղրիմի խանութեան, որ իւր տէրութեան կաղմակերպութեամբ և կառավարութեան եղանակով մի աղնուապետական միապետութիւն էր։ Խանութեան զլուխը կանգնած էր խանը։ Որ կառավարում էր երկիրն աղնուականներն առաջ էին եկել Ղրիմի թերակղզին առաջին անդամ նուաճողներից և զլսաւորապէս «Դորդ-օջաղից», և կոչուում էին բէցեր։

Ժէ. զարում իւրեանց նշանակութեամբ հոչակուում են նամանաւանդ բէցական հինգ տահմ՝ Ձերինեան, Բարինեան, Սեղմեփետան, Մանսուրեան և Արգինեան, որոնք հետզհետէ մեծամեծ կալուածների տէր են դառնում և խանութեան համարեա թէ բոլոր կառավարութիւնն իւրեանց են սեպհականացնում։ Բէցերի կալուածները կոչուում էին «բէցկիներ» և զլսովին ենթարկուած էին բէցերի իշխանութեան։ Բէցերն էին իւրեանց բէցիկում ապրող ժողովրդի անձնիշխան տէրն ու պարոնը. նոքա հարի էին ժողովում նոցանից, դատում էին նոցա և մինչեւ անդամ մահուան պատիժ էին տալիս, թէ և խանութեան մէջ կար և տէրութենական ընդհանուր զատաւոր, որ կոչուում էր «կաղի-ասկիեր»։ Խաները չին խառնուում բէցերի գործերին. նոքա

Բլցիրի կրտսեր սելունդը կոչուում էր «Էմիր-զաղէ», և կազուա
էր ազնուական դասակարգի երլրորդ ճիւղը կամ ստորին ազնուակա-
նութիւնը, որի անդամները յետազայ ժամանակիներում սկսում են
կոչուել «մրգաներ», որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ աղճատուած «Էմիր
զաղէ» կոչումը: Բացի տոհմական մրգաներից կացին այլ ևս բազմա
թիւ ուրիշ մրգաներ, որոնք իւրեանց տիտղոսն իւրեանց կալուածնե
րի հետ միասին ստացել էին լսանից, նորան մի որ և է ծառացու-
թիւն մատուցած լինելու համար դեռ այն ժամանակիները, երբ լսա-
նութեան մէջ աղատ հոգեր, ջրհորներ, առվներ շատ կացին:

Խանից յետոց երկրորդ տեղը տէրութեան մէջ իւր նշանակութեամբ բռնում էր «կալգա-զիրէց», որ տէրութեան ընդհանուր գորավարը, խանի տեղակալը և ընդհանրական բարձրագոյն դատավորն էր, և խանի մահից յետոց մինչև նոր խանի ընտրուելը կառավարում էր, և խանի մահից յետոց մինչև նոր խանի ընտրուելը կառավարում էր տէրութիւնը: Երրորդ անձը տէրութեան մէջ համարուում էր «նոր տէրութիւնը», որ բռնում էր կալգա-զիրէցի տեղը նորա մահից յետոց, և, բեդինը, որ բռնում էր կալգա-զիրէցի տեղը նորա մահից յետոց, և, վերջապէս, չորրորդն «օր-բէյն», էր, Պերեկոպի նահանգապետը կամ կառավարիչը:

վերոցիշեալ փոքրաթիւ եսինսերին, ստրկութիւն չ'կար ընդհանուր մտքով, բայց որովհետև ժողովուրդն ապրում էր բէցիկներում և ամեն բանում ենթարկուած էր խանի, բէցիկի և մրգաների կամացականութեան, կարելի է ասել, որ նոցա դրութիւնը, եթէ ոչ ստրկութեան, գոնէ, խիստ ծառայութեան հաշուի էր: Հացերը շարունակում էին պարապել իւրեանց նախկին զբաղմունքներով՝ երկրագործութեամբ, պարականութեամբ, ացեղործութեամբ, արհեստներով և առևտով, բայց արդէն չէին կարողանում առաջուաց բարօրութիւնը ձեռք բերել, որովհետև ոչ մի արտօնութիւն չունէին, մեծամեծ հարկեր էին վճարում և, որ զլիսաւորն է, ենթարկուած էին մեծ կամացականութեան: Սորա վերաց պէտք է առելացնել և այն, որ հացերն օտարադաւան էին, որ և առիթ էր տալիս իշխող մահմեղականներին խստիւ վերաբերուելու, խէթիւ նայելու նոցա վերաց և ընկած տեղը կրօնական հալածանք յարուցանելու նոցա դէմ. մի խօսքով այստեղ ևս կրկնուում է այն, որ եղել է և ացժմ էլ լինում է բոլոր մահմեղական տէրութիւններում, որոնց սահմաններում քրիստոնեաններ են բնակուում: Սակայն Ղրիմում այս կողմնակի նեղութիւնները տեղի են ունենում տիրապէս առաջին ժամանակները: Ֆետագայում թաթարները բոլորովին ընտելանում են քրիստոնեաններին, ձեռք են վեր առնուում կրօնական հալածանքներից ու նեղութիւն տալուց և սկսում են մինչև անգամ նոցա պաշտպանել և կրօնական արտօնութիւններ տալ: Եւ խանը, բէցերը և մրգաներն այսպէս էին վարուում, որովհետև տեսնում էին, որ իւրեանց բէցիկներում միակ աշխատաւոր ժողովուրդը քրիստոնեաններն են, որոնք իւրեանց պարտէզներից, այզիններից և վարելահողերից հատուցած մեծաքանակ տուրքով լցնում էին թէ խանի զանձարանը և թէ իւրեանց ձեռքի աշխատանքով մշակում ու հարստացնում էին երկիրը: Քրիստոնեաններն էլ իւրեանց հերթով կամաց կամաց ընտելանում են թաթարներին, ծանօթանում են նոցա տէրութեան և կենցաղավարութեան, կարդ ու կանոնին և, վերջ ՚ի վերջոց, մշակում են մի տեսակ տօմս *vivendi*, որ բաւականութիւն է տալիս թէ իւրեանց և թէ տէրերին: Ոչդ տօմս *vivendi*-ն, այդ իւրեանց դրութիւնից ու վիճակից բաւական լինելը, ինչպէս երեւում է հանգամանքներից լինում է ոչ թէ առ հարկի, ոչ թէ որովհետև ուրիշ ճար չ'կար, այլ բոլորովին բնական կերպով, այնպէս որ երբ 1778 թուիկ Թուսները բոնում են Ղրի՞՛ը և առիթ է ներկայանում գաղթելու Թուսաստան և բարւոքելու իւրեանց դրութիւնը, նոքա դժուարանում են, չեն ուզում թողնել իւրեանց համար արդէն երկրորդ հացենիք դարձած երկիրը: Թուսաստան գաղթած հացերն իւրեանց գաղթելուց առաջ ապրում են եղել Ղրիմի հետեւեալ տեղե-

րում Քէֆէ, Բախչեսարաց, Կարասուբաղար, Գեօվիլ, Ակմեգիդ, Էսկի-
կրիմ քաղաքներում և Թոփլու, Սալա, Սուլթան-Սալա, Օրթալան,
Կամշլի, Չուրուկու, Բուրունչուկ Օթար և Թուղչակ դիւղերում:

Ե.

Ղրիմի Ռուսաց զօրքի հրամանատար Ճեներալ-պորուչիկ Պրոպո-
րվակին Ռումենյովից հրաման ստանալով Ղրիմարնակ քրիստոնեա-
ներին գաղթեցնելու մասին, առաջին նուագ մեծ դժուարութեան
մէջ է ընկնում, որովհետեւ այդ հրամանազրի մէջ չէր լիշուած, թէ
արդեօք ստացուած է այդ մասին կայսրուհու հաճութիւնը և թէ
պէտք է այդ մասին իմաց տալ խանին, թէ ոչ: Դրութիւնը շատ
փափուկ էր, որովհետեւ թաթարների ապստամբութիւնն ընկնուած էր,
թէ և Ղրիմը բանուած էր Ռուսաց զօրքերով և Զահինգիրէցն ապա-
հով բազմած իւր գահի վերաց, այնուամենայնիւ արգելքներ ու դժուա-
րութիւններ գեռ շատ կային: Հայուատակ կուսակցութիւնը Ռուսաց
այդ քայլը մի կողմից պէտք է մէկնէր նոցա ձգտուածով խառնուելու
խանութեան ներքին գործերին, միւս կողմից էլ Զահինգիրէցն պիտի
ներկայացնէր իբրև մի դաւաճան, որ Տախում է իւր երկիրն օտար-
ներին. Բարձր-Դուռն էլ պիտի օգտուէր հանգամանքներից, խլուր-
տումն ձգէր բոլոր երկրի մէջ, դահալիթէր Ռուսաց կուսակցից խանին
և իւր ագեցութիւնն առաջ տանէր: Գաղթականութեան չէր հա-
մակրիլ ոչ խանը, որովհետեւ դորանով նա կ'ձգէր իւր վարդն իւր
հապտակների առաջ, ոչ ազնուականութիւնը, որովհետեւ դորանով նա
կըզրկուէր իւր եկամտի գլխաւոր աղբէրից, ոչ էլ ինքեանք քրիստո-
նեաները, որովհետեւ նոքա չէին ցանկանալ թողնել իւրեանց տուն-
ու տեղը, իւրեանց հայրերի գերեզմանները, իւրեանց սրբառեղները:
Եթէ լինէր կայսրուհու հրովարտակը գեռ կարելի էր, թէ և այդ էլ
ոչ առանց մեծ դժուարութիւնների, համոզել խանին, որովհետեւ նա
բարերարուած լինելով նորանից, չէր անցնիլ նորա խօսքից ու ցան-
կութիւնից: ինչ որ վերաբերում էր ազնուականներին ու քրիստոնեա-
ներին, — կարելի էր առաջներին նիւթական վարձատրութիւն տալով,
իսկ երկրորդներին մէծանեծ արտօնութիւններ խոստանալով ու նոցա
զլսաւորներին զանազան պատիւներ տալով, զործը մի խեսակ զլուխ
բերել: Իսկ կայսրուհու հրովարտակը չկար, որովհետեւ Ռումենյովը
կայսրուհուն գաղթականութեան մասին ներկայացրած իւր գեկուցա-
կայարուհուն գաղթականութեան մասին ներկայացրած իւր գեկուցա-
կայարուհուն գեռ չստացած արդէն 1778 թուի Փետրուարի 25-
դիր պատասխանը գեռ չստացած արդէն 1778 թուի Փետրուարի 25-
ին մասնաւրապիս հրամանազրել էր ձեռնարկել այդ զործին: Պրոզո-
րովիլին կըուելով բոլոր հանգամանքները և զործի դժուարութիւնն

Դի նկատի առնելով, անիրագործելի և անժամանակ է համարում այդ
միջոցում այդ խնդրի յարուցանելը և այդ մտքով էլ հենց պատաս-
խան է գրում Ռումենյովին: Նա կարծում է, թէ քրիստոնեաներին
գաղթեցնելն առիթ կ'տայ Ղրիմի իշխանաւորներին մտածելու, թէ
Ռուսաստանը կամենում է տիրել թերակղուն, Օսմանեան կայսրու-
թիւնն էլ Ռուսաստանի ազգախի գործողութիւնն ազգպէս կ'հասկա-
նաց, որի հետեւանքը կ'լինի պատերազմ, իսկ խանն աւելի շուտով կը-
համաձայնի վայելուչ թոշակով թողնել խանութիւնը, քան թէ թոյն
տալ քրիստոնեաներին գաղթելու: Սակայն երբ ստացուում է կայս-
րուհու վերոլիշեալ ուկազն ու ռեսլիրիպու և դոցա հիման վերայ նո-
րանոր հրամանադրեր են հասնում Պրոզորովսկու ձեռքը Ռումենյովից
և Պատեօմինից, նա անյապաղ ձեռնարկում է զործին:

Հրամանատարը նախապէս այդ մասին խորհրդակցում է «ռեզի-
գենտ կոնստանտինովի հետ, որ երկար ժամանակ Ղրիմում ապրած
լինելով, շատ լաւ ուսումնասիրել էր թաթարների վարքն ու բարքը,
խանութեան կարգն ու կանոնը, ցետոյ նա կոչում է իւր մօտ Յունաց
մետրոպոլիտ Խգնատիոսին և յորդորում է նորան նպաստել այդ զոր-
ծին, խոստանալով մեծամեծ արտօնութիւններ ժողովրդին և մեծա-
մեծ պատիւններ իւրեն մետրոպոլիտին: Նոյն տեսակ յորդորանք և խոս-
տումներ լինում են և կուսաւորչական հայերի առաջնորդ Վարկոսեան
Պետրոս վարդապետին և կաթոլիկ հայերի առաջնորդ Վարդերեսովիչ
Յակովը վարդապետին: Քրիստոնեաների հոգեոր պետերը թէ և սկզբ-
բունքով տալիս են իւրեանց համաձայնութիւնը, բայց յաջորդութեան
մասին խօսք չեն տալիս, որովհետեւ զործը դժուար էր և ինքեանք
վախենում էին իւրեանց հօտից: Նոքա նախապէս կամենում են իմա-
նալ իւրեանց ժողովրդի միաքը, կամենում են խորհրդակցել իւրեանց
հօտի զլաւորների հետ, կըուագտել զործի կարելիութիւնը, օգտա-
ւէտութիւնն ու վնասակարութիւնը, մի խօսքով կամենում են զոր-
ծի բոլոր հանգամանքներն, բոլոր մանրամասնութիւններն ՚ի նկատի
առնել և ացնուհետեւ իւրեանց վերջնական որոշումն յացնել և մի
քանի պայման առաջարկել: Հանգամանքների նպաստում են նոցա:
Ապրիլ ամիսն էր և զատկական տօների ժամանակը, ուստի և հեշտ
էր նոցա յարաբերութիւն ունենալ ժողովրդի հետ, առանց դրդելու
թաթար իշխանաւորների կասկածները: Հրահանդ է տրուում քահա-
նաներին մտնել ժողովրդի մէջ և աշխատել հասկացնել նոցա Ռուսաց
առաջարկութեան միտքը և դորանից քրիստոնեաների համար ծագե-
լիք օգուտները, հրահանդ է ալուում քարոզիչներին զգուշութեան
քարոզել եկեղեցիներում և զաղթականութեան համար կամաց կամաց
հող պատրաստել, շեշտելով իւր եանց քարոզների մէջ այն անդորր և

խաղաղ կեանքի վերայ, որ նոքա կունենան քրիստոնեայ ժագուհու իշխանութեան ներքոց, այն շլացուցիչ արտօնութիւնների վերայ, որ նոքա կ'այսելին սերնդէ սերռւնդ Պուսաստանում։ Ինքեանք հոգե որ պետերն էլ ձեռքերը ծալած չեն նստում. նոքա էլ իւրեանց մօտ մուտք ու ելք ունեցող ժողովրդի զլիսաւորներին համոզում և հակացնում են. ինքեանք էլ ընկած տեղը քարոզում ու աշխատում են ժողովրդին բնաւելացնել զաղթ ելու մտքին։

Միւս կողմից էլ ցրուռմ, մտնում են ժողովրդի մէջ Պրօգորակու և Կոստանդինովի բազմաթիւ հայ և ցոյն էմիսարները, որնք բարերարուած լինելով պատիւներով, աստիճաններով և նիւթական վարձատրութեամբ, ոչ մի ջանք չեն խնացում յաջողեցներու գաղթականութեան գործը: Կացարուհու ռեսլիքալիստի ու ուկազի մէջ ասուած էր, թէ պէտք է գործ դնել ձեռքից եկած բոլոր միջոցները, որ քրիստոնեաները յօժարակամ համաձայնն թողնել Ղրիմը և տեղափոխուել Ազովի և Նովոռուսավոյ նահանգները: Ուուսաց զիլաւոր գաղթեցներու համար և համաձայն դորան էլ հրահանգներ էին հասկացաշտօնեաները ռեսլիքալիստի աշդ կտորի միտքն այնպէս էին հասկացել, թէ պէտք է գործ դնել անխտիր ամեն միջոց քրիստոնեաներին գաղթեցներու համար և համաձայն դորան էլ հրահանգներ էին տուել իւրեանց էմիսարներին, իւրեանց ստորադրեալ պաշտօնեաներին: Թաթարները, եթէ յաջողի նոցա նորից ապստամբել, միտք ունին հալածանք յարուցանելու քրիստոնեաների դէմ և բանութիւն գործ դնելու: Օսմանցիք, եթէ կարողանան զօրք իջեցնել Ղրիմի ափերը, անպատճառ փրէժխնդիր կ'լինեն քրիստոնեաներից, իբրև Ուուսաց դաւանակիցներից և կողմնակիցներից: Խանը բաշխել է քրիստոնեաներին Ուուսաց և հրամացել է նոցա փութով թողնել թերակղզին և տեղափոխուել Ուուսաստան, և այն և այն—ահա այն սովորական յորդորանքը, որ անում էին էմիսարները, այն սպառնալիքները, որ տալիս էին քրիստոնեաներին գաղթեցնողները, կամենալով ահ ձգել ժողովրդի սիրու և ստիպել նոցա շուտով կատարելու Ուուսաց յանկութիւնը:

Գութիւնը:
Փողովուրդը մի կողմից լսելով իւրեանց հոգեոր պետքի յորդո-
րանքը, միւս կողմից էլ ահաբեկուած սպառնալիքներից, չ'զիտէր, թէ
ինչ անէր. թողնել գեղեցիկ Արմել, ձգել տուն-տեղ, արտ ու դաշտը
պարտէզ ու ազի, եկեղեցի ու վանք և գնալ մի անձանօթ երկիր,
նա չէր ուզում, բաց մնալ ու զոհ գառնալ թաթարների ու Օսմանցի-
ների բռնութեան-դորանից էլ վախենում էր. Երկբայութիւնը, կաս-
կածը, տատանումը տիրել էր ամեն տեղ և առաջ բերել մի ընդհա-
նուր խլրտում բոլոր քրիստոնեաբնակ վայրերում, որ, յայտնի բան է,
չէր կարող աննկատելի մնալ, խուսափել տիրող թաթարների աչքից,

Ինքեանք քրիստոնեաներն էլ շատ տեղ չէին ծածկում եղելութիւնը թաթարներից, արձակ-համարձակ ձեռնարկելով ծախսելու իւրեանց անշարժ կալուածները և պատրաստուելով գաղթելու, պատճառը հարցնողներին էլ պատասխանելով, թէ խանը քրիստոնեաներին տուել է ռուսներին, չ'պատրաստուողներին էլ ցորդորելով, թէ ինչ էք հանդիսա նստել, միթէ զգիտէք, որ հրաման կայ թողնելու ու հեռանալու Ղրիմից. նոյն իսկ հայ քահանաները դնում են թաթարների մօտ և յացնում են նոցա գործի եղելութիւնը:

Սակայն չնայելով այս բոլորին, քրիստոնեաները դարձեալ դանդաղ են շարժուում և զաղթել ցանկացողների թիւը շատ չնշին է լինում, իսկ մեծամասնութիւնն ամեննեին հակումն չի ցոց տալիս զաղթելու: Եյսպէս շարունակուում է գործը, մինչև որ ժեներալ պորուչիկ Պրոգորովսկին, որի յարաբերութիւնը զանազան պատճառներով լարուած է լինում Թումեանցովի հետ, թողնում է իւր պաշտօնը և հեռանուում Նիկոլայ և նորա տեղը հրաւիրուում է բռնել նշանաւոր Ալեքսանդր Պասիլեվիչ Սուվորովը, որ նոր եռանդ ու աշխոյժ է մտցնում այդ գործի մէջ: Բայց այդ գործն այնքան դժուար է լինում, որ մինչև անգամ Սուվորովը ևս, որի վճռականութիւնը և իւր նպատակին հասնելու համար ոչ մի արգելքի առաջ կանդ չառնելը յայտնի է պատճութիւնից, առաջին նուազը տատանուում է: Նա իւր գեկուցումներից մէկի մէջ այդ մասին զրում է Թումեանցովին. «Մէկ Ալբանացի անցեալ խառնակութիւնների ժամանակ ամուսնացել էր մի թաթար կնոջ հետ, որ շուտով դորանից յետոյ մկրտուել էր: Թաթար կառավարութիւնը պահանջում էր, որ կինը թողնէ քրիստոնէութիւնը և նորից մահմեղական դառնայ, ծնողներն էլ համոզում էին նորան, բայց նա չէր ուզում և իւր հերթով խորհուրդ էր տալիս իւր ծնողներին, որ նոքա էլ քրիստոնեաց դառնան: Թեզիգեննոր թաթար պատգամաւորների ներկայութեամբ քննելով այդ գործը, եկաւ այն եզրակացութեան, որ «արակասատին» հակառակ է այդ կնոջը կառավարութեան ձեռքը յանձնենլը, որի համար և կառավարութիւնը խռովեց ինձանից և մինչև անգամ սպառնալիքներ կարդաց: Այժմ նորին պայծառաւափայութիւն իշխան Նիկոլայ Ալեքսանդրովիչը զրում է ինձ քրիստոնեանների յայտնի գաղթականութեան մասին: Առանց մեծ խըռովութեան այդ գործը գլուխ բերել չի կարելի, թէև ևս բոլոր ջանքս գործ եմ դնում դորանից ծագելիք խառնակութիւնների առաջն առնելու:

Հոգեւոր պետքը, վերջապէս, 1778 թուի Յուլիսի 17-ին ներկացացնում են իւրեանց պայմանները և խնդրում են, որ կայսրութիւն յառաջապոցն իւր բարձր հրովարտակով հաստատէ այդ պայմանները և

յետոյ արդէն ձեռնարկուի ժողովրդին տեղահան անելու գործին Արշուում է երկու տեսակ պատղամաւորութիւն ուղարկել Թուսատան.—մէկն Եզրի նահանգն՝ առաջարկուած հողերը դիտելու համար, միւսը Պետերբուրգ՝ կայսրուհուն ներկացանալու, պայմանագիրը հաստատելու և արտօնութիւնների հրովարտակը ստանալու համար. որոշուում է նոյնպէս գաղթականութեան գործին այնիսի ձեւ տալ, որ իրեւ թէ Թուսատանը չէ, որ գաղթեցնում է ժողովրդին, այլ ինքը քրիստոնեայ ժողովուրդն է, որ ժոյատուութիւն է խնդրում տեղափոխուելու Թուսատան: Միւնոյն ժամանակ Սուվորովը յորդորանքով, սպառնալիքով, աջ ու ձախ պատիւներ, աստիճաններ, ընծաներ բաժանով, սորան-նորան ազգեցիկ մարդկանցից նիւթական վարձատրութիւն տալով, կարողանում է համոզել նոյա, որ այ ևս գործը ցետ չ'ձգեն և հէից մենչեւ պատղամաւորների վերադառնալը հոգեւոր կայսերը հրովարտակներ արձակեն իւրեանց հօտերին և սկսեն տեղափոխուել: Ի միջի այսոց, Խոնատիոս մետրոպոլիտին տրուում է ընծայ փողով՝ 6,500 ռ., Պետրոս վարդապետին՝ 2,800 ռ., Յակով Վարդեփեսովիցին՝ 1,500 ռ., և երեքին միասին կառքերի, արդուգարդի և ձիերի փող՝ 2,799 ռուբլի:

Հոգեւոր պետերի Սուվորովին և նորա ձեռքսկ Թումեանցովին և կայսրուհուն ներկայացրած պայմանագիր կէտերից արժանի են ուշաղ բութեան հետեւալները. Ա. Բաւականացուցիչ վարձատրութիւն թողնելիք անշարժ կալուածների համար, Բ. Սրբունի ծախսով տեղափոխութիւն, Գ. Կայսրուհու անունով խոստացած հողը Գնեպը, Սամարա և Օրեոլ գետերի ջրաբաշխում, Դ. Էնիսառն բնակութիւն միւս բոլոր ազգաբնակութիւնից առանձին, և մի մի քակութեանց գիւղերով իւրաքանչիւր ազգի համար առանձին, Ե. Հոգաք իւրեանց գիւղերով իւրաքանչիւր ազգի համար առանձին, Զ. Տասնամեայ գերոր պետերի իւրեանց հօտերի վերաց լիազօրութիւն, Զ. Տասնամեայ պարագանութիւն բոլոր մասնաւոր ու արքունի պարտականութիւնից, Է. Եզաւութիւն զինուորագրութիւնից, Ը. Ազատ կառավարութիւն իւրեանց օրէնքներով և իւրեանց միջից ընտրուած մարդկանց ձեռքով տեղական նահանգապետի հսկողութեան ու սկաշտմարդկանց ներքոց, Թ. Սերմացու առաջին տարին մինչև նոր ցուպանութեան ներքոց, Թ. Սերմացու առաջին տարին մինչև նոր ցուպանութեան ներքոց, Դ. Սերմացու առաջին տարին մինչև նոր ցուպանութեան ներքոց, Ֆ. Վարդեփես համար համար առանձին, Փ. Վարդեփեսի համար և նվաթեր ու ատաղձ շինութիւնների համար, Ֆ. Վարդեփեսի համար միջների ազգութիւնների վերաց մնալիք պարտքերի փոխարէն:

Խանը, որ մինչև այդ ժամանակները չ'տեսնողս և չիմացողս էր լինում, թէւ նորա ձեռքը թաթար իշխանաւորներից և ազնուածէր իշխաններից հասել էին բազմաթիւ թղթեր, որոնց մէջ մանրամասն կաններից հասել էին բազմաթիւ թղթեր, որոնց միջից մանրամասն կաններից էին Թուսատանը ուղղենատի և լիազօրի գործողութիւն-

ները զաղթականութեան վերաբերմամբ, տեսնելով, որ, ճիշդ որ, քրիստոնեաները պատրաստուում են զաղթելու, և խելամուտ լինելով այն մեծամեծ վնասների մասին, որոնք կարող են առաջ զալ քրիստոնեաների հեռանալուց, իւր ստացած բոլոր թղթերն իւր նոյատուած պատասխանագրերի հետ միասին ուղարկում է Սուվորովին և Թումեանցովին, աւելացնելով իւր կողմից, թէ ինքը բոլորավին չի հաւատում այդ բանին, որովհետեւ չի հասկանում, թէ ինչ կարիք ունի Թուսատանը զրիմաբնակ քրիստոնեաներին և ինչ օգուտ կարող է ստանալ նա, զաղթեցնելով նոյա իւր սահմանները: Սուվորովը և Թումեանցովը, որոնք մինչև այդ ժամանակները զաղթականութեան մասին աւելորդ էին համարել իմաց տալու Կրիմի տիրոջը, հաւատախանալով, որ բանն արդէն բացուած է և պաշտօնապէս մեկնութիւն պէտք է տալ իւրեանց գործողութիւնների համար, պատասխանում են, թէ այդ գործում ոչ ուղղիցենալոր, ոչ էլ լիազօրը մատ ունին, այլ ինքեանք քրիստոնեաներն են, որ ձգտում են զաղթելու և կայսերուհու հովանաւորութեան տակ մտնելու: Խանը ալիսի հասկանաց, որ կայսրուհին չէր կարող մերժել իւր կրօնակիցների խնդիրքը, որովհետեւ նոքա կարող են ենթարկուել թաթարների հալածանքին, եթէ նորից ապատամբութիւն պատահի Կրիմում, կարող են ենթարկուել Սամանցիների վրէժինգրութեան, եթէ միայն նոքա գան Ղրիմ: Սակայն խանն այդ բանից ամենեին չ'այցտք է նեղանայ, կայսրուհու պահմանջը մի շատ չնչին տրիտոր է այն բոլոր բարիքների փոխարէն, որ նա առատութեամբ բաշխել է իրեն խանին և ընդհանրապէս բոլոր թաթարներին, նոյա աղատ կացուցանելով Սամանցիների իշխանութիւնից և ծառայութիւնից, նամանաւանդ որ նիւթական վնաս էլ չի լինի, որովհետեւ կայսրուհին հրամայել է վարձատրել նորան այն բոլոր կորուստների համար, որ նա կունենայ քրիստոնեաների զաղթելու պատճառով: Բաց խանը թէւ առերես ցոց է տալիս, թէ ինքը խոնարհում է կայսրուհու ցանկութեան առաջ, այնուամենակ նիւթ խովում է ուղղիցենալից և լիազօրից և ձեռքի տակից ամեն միջոց գործ է դնում կասեցնելու զաղթականութիւնը. նա մի կողմ թողնելով այն մեծ նիւթական վնասը, որ պէտք է ստանար իւր երկիրը զաղթականութիւնից, նա մանաւանդ ցաւում է այն բարոյական վնասի համար, որ պէտք է հասնէր իրեն դրանից: Հակառակ կուսակցութիւնը պէտք է ասէր, թէ ահա արդարացաւ իւր ասածը, — թէ Զահինգիրէց Թուսի մարդ է, թէ նա իւր հայրենիքը ծախել է Թուսներին, և այն և այն:

Կաղթականութեան կասեցներն էլ արդէն շատ հեշտ էր, որովհետեւ մեծամասնութիւնը, ինչպէս արդէն ասացինք, չէր ուզում

թողնել իւր տունն ու տեղը կասկածում էր, չէր հաւատում խոստումներին, նամանաւանդ որ զեռ իւրեանց առաջարկած պայմաններն էլ չէին հաստատուած, պատգամաւորները զեռ չին վերադարձած և կայսերական հրովարտակն էլ այդ մասին զեռ չէր հրատարակուած:

Հայ և յոյն հասարակութիւնների ներկայացուցիչները հաւաքուում են Բախչիսարաց և մատուցանում են խանին մի մի խնդրագիր, որոնց մէջ նոքա բողոքում են գաղթականութեան դէմ: Հայերն իւրեանց աղերսագրի մէջ ասում էին. «Մենք Ձեր ծառաներս և հպատակներս ահա այս երեք հարլւր տարի է, որ բնակում ենք Ձեր տէրութեան մէջ և ոչ մի անհանդստութիւն չենք տեսել: Այժմ մեզ կամենում են հալածել, հանել այստեղից: Մենք աղերսում ենք յանուն Աստուծոյ, Մարգարէի և Ձեր նախնեաց, որ Դուք աղատէք մեզ այս բռնութիւնից. դորա համար մենք հանասագ աղօթող կ'լինենք Բարձրեալին Ձեր կենաց համար»:

Թաթար իշխանաւորներն էլ խնդրագիր են մատուցանում Ռումանցովին և կայրուհուն, մինչև անդամ խոկ պատգամաւորներ են ուղարկում Փետերբուրգ, և լիազօրից 25 օր ժամանակ են խնդրում մինչև որ ստացուի իւրեանց գրաների պատասխանը: Բայց ոչ մի բան չի օգնում, 25 օրուայ ժամանակամիջոցն խոկ չի տրուում: Կայսերուհու հրամանն անդառնալի էր. քրիստոնեաները պիտք է դադլէին:

Այ այնուհետև անտանելի է դառնում քրիստոնեաների դրութիւնը Ղրիմում 1778 ի Յուլիսի 17-ից մինչև Սեպտեմբերի 28-ը, երբ կատարուում է գաղթականութիւնը, որովհետեւ թաթարները կատաղած մկտում են սովորական նեղութիւններ տալ նոցա և փրկիսնդիր լինել: Ճիշդ է, Թուսաց զօրքերը պաշտպանում են նոցա և թաթարներից. բայց ծածուկ, Թուսաց զօրապետների աչքից ու հսկողութիւնից հեռու տեղերում, շատ նեղութիւնների են ենթարկուում նոքա, մեծամեծ անօրէնութիւններ ու անդմութիւններ են կատարում նոցա զիլին: Վախը, նեղութիւնը, տադնապն այնքան սաստիկ են լինում, որ Եկնատիոս մետրալութար փախչում է Թուսաց բանակը և պաշտպանուում զօրքի մէջ, խոկ Փետրոս վարդապետը շտապում է Քէֆէ և պատսպարուում է Հայերի բազմութեան մէջ:

Գաղթականութիւնը կատարուում է երեք մեծ խմբերով՝ Յուլիսի 18-ին, Օգոստոսի 20-ին և Սեպտեմբերի 28-ին. Ճիշդ է, Սեպտեմբերի 28 ից յետոյ էլ զեռ մինչև Հոկտեմբերի 19 ը շարունակուում է գաղթականութիւնը, բայց դոքա արդէն յետ ընկածներն են լինում, որոնք իւրեանց մասնաւոր զորքերով մնացած են լինում Ղրիմի գանազան քաղաքներում: Միայն Հոկտեմբերի 19-ին ճանապարհ են

ընկնում դէպի Թուսաստան գաղթականների յետեկոց և Խղնատիոսն ու Պետրոս Մարկոսեանը:

Գաղթականներից հարուսաններն իւրեանց սազերով, խոկ աղքատները արքունի սազերով հասնում են Պերեկոպ կամ, ինչպէս հայերն ասում են, «Պուռն», որտեղից հետզետէ առնում են նոցա Ազովի նահանգապետ Ձերտկովի պատրաստած վեց հազար սազերը և տեղափոխում են դէպի Ալեքսանդրովսկի բերդաւանը և այնտեղից էլ դէպի Դնեպր գետի Սամարա և Օրիոլ ճիւղերը, որոնց մէջ գտնուած տարածութիւնը տէրութիւնը խոստացել էր տալ նոցա բնակութեան համար: Ղրիմաբնակ հայերից գաղթում են ընդամէնը՝ 12,598 հոգի, որոնց ինչ տեղերից լինելը և քանի հոգի արական և իգական սեռին պատկանելը կարելի է տեսնել հետեւալ աղիւսակից.

Ա Ղ Ի Ւ Ս Ա Կ

Գ Ա Դ Ա Բ Ն Ե Ր	Ի ՞Ն Զ Տ Վ Ե Ր Ի Ց	Ը Բ կ ու ս ե ռ ի ա ն ձ ա ն ց թ ի ւ ը		Ը ն դ ա մ ե ն ը
		Ը ր ա կ ա ն	Խ գ ա կ ա ն	
Գ Ա Դ Ա Բ Ն Ե Ր	1. Քէֆէյից	2,781	2,730	5,511
	2. Բախչիսարայից	702	673	1,375
	3. Կարասու-Բազարից	1,419	1,390	2,809
	4. Գեօգիւից	667	637	1,304
	5. Ակ-Մեղիդից	145	114	259
	6. Էսկի-Կրիմից	87	73	160
		5,801	5,617	11,418
Գ Ի Լ Ո Ւ Ր	1. Թոփլու	112	100	212
	2. Սալա	115	109	224
	3. Սուլթան-Սալա	34	23	57
	4. Օրթալան	214	192	406
	5. Մէլիք	39	33	72
	6. Կամըշլէ	62	59	121
	7. Զուրուկ-Սուլ	20	20	40
	8. Բուրունդուկ-Օթար	17	21	38
	9. Թոփչակ	7	3	10
		620	560	1,180

Զ.

Գաղթականների Թուսաստանի սահմաններն ոտ կոխելուն պէս, սկսուում են նոցա նեղութիւնները։ Նոքա նեղուում են ցրտաշունչ քամիներից, աշնան անձրեներից, որովհետեւ ցրտերն արդին սկսուել էին, իսկ գաղթականներն անծանօթ լինելով Թուսաստանի կլիմային, դուրս էին եկել Ղրիմից լւրեանց ամառուաչ թեթև զգեստներով։ Ճիշդ է, Ազովի նահանգապետը և գաղթականութեան զլուս կանդնած միւս գործակալները շտապում են արքունի ծախսով տաք վերնազգեստներ ու մուշտակներ բաժանել չբաւորներին, բաց հր մէջին և որբան պէտք է բաժանէին, որ կարողանալին գաղթականների այդ կարօտութիւնը լրացնել։ Հարուստների թիւը շատ քիչ էր, մեծամանութիւնը չբաւոր էր։ Բայց դորանից, գաղթականներին հարկաւոր էր հանգստութիւն, տաք անկիւն, որ նոքա, ՚ի հարկէ, չին կարող ունենալ, քանի որ պէտք է շարունակ ճանապարհ զնային, մինչի որ հասնէին նշանակուած տեղերը։

Այսպիսի հանգամանքներում նոքա ճանապարհորդում էին և անձրեկ տակ, ենթարկուում էին և ցրտին և դառնաշունչ հողմերին, ստիպուած էին լինուում քնել յանախակի բացօղեաչ կամ բարակ վրանների տակը, ուրեմն ինչ տաք զգեստ կարող էր օգնել նոցա, եթէ մինչև անգամ բոլորեքեան ևս ունենային, բոլորեքեան ևս տաք հանդերձներ ստանային տէրութիւնից։ Նամանաւանդ ցաւալի էր մանուկների, կանանց, ծերունիների, հիւանդների և անկարողների գրութիւնը։ Նոքա չկարողանալով դիմանալ անսովոր կլիմային, երկար ճանապարհի դժուարութիւններին, զրկուած լինելով տաք, սննդարար կերակուրներից, հարիւրներով մեռնուում էին և խրեանց գերեզմանների անշուք թմբիկներով գարդարում էին այն ընդարձակ, միասնասակ, ձանձրակի փոշոտ գաշտավարը, որ ձգուում է Պերեկոպի պարանոցից մինչև Դնեպր գետի Սամարա և Օրիոլ ճիւղերը և որի միջով յամբաքայ շարժ ուում էին Ղրիմի «մաջառ-արաբանները» և նահանգապետի ուղարկած ուստական սացերը, որոնց վերայ բարձուած էին գաղթականների բոլոր շարժական գոցքը, եկեղեցիների սուրբ սպասները, անօթները, զգեստները, պատկերները և մինչև անգամ խաչքարերը և եկեղեցիների հին դռները։

Ի մեծ գարմանս գաղթականների երբ նոքա հետզհետէ տեղ են հասնում, կարելի չեն համարում տալ նոցա Դնեպր, Սամարա և Օրիոլ գետերի մէջ գտնուած տարածութիւնը, որ տեսել և հաւանել էին նոցա պատգամաւորները և որ, ինչպէս ասացինք, խոստացուած էր

նոցա, որովհետեւ այդ տեղերը մասամբ արդէն վաղուց բռնուած էին, մասամբ էլ բռնուելու վերայ էին արքունի և կալուածատիրական գիւղացիների բնակութեամբ, կարելի չեն համարում տալ նոցա և Ե. կատարինասլաւն իւր գաւառով, որ խնդրում էին գաղթականները, ցանկալով մօտ լինել Դնեպրին, որ կարողանան օգտուել գետի ընձեռած առեւտրական գործողութիւնների յարմարութիւնից և ձկնորսութիւնից։

Գաղթականների բնակութեան համար շատ ընտիր տեղեր կային և Դնեպրի ափին Աղեքսանդրեան ամրոցից սկսած դէպի ցած, բացց այդ էլ նահանգապետն անյարմար էր համարում տալու գաղթականներին, որովհետեւ այդ հողերը շատ մօտ էին Ղրիմին։ Կարելի չեն համարում, վերջապէս, գաղթականներին բնակեցնել, ձմեռն անցկացնելու համար, Օրիոլ գետի վերայ գտնուած նովոսելիցա, Կամենկա, Պրոտովիչի և միւս գիւղերում, ինչպէս ինքեանք գաղթականներին էին ցանկանում և ինչպէս որ արդէն խոստացուած էր նոցա, այսինքն այդ գիւղերի բնակիչների երկու տունը մէկ անելով և այդպիսով իւրաքանչիւր գիւղում տների կէսր դատարկելով և գաղթականներին տալով, այլ առաջարկում են նոցա բնակել նոյն Օրիոլ գետի վերայ գտնուած միւս գիւղերում, ուղղակի ուուս գիւղացիների տներում, որպէս զի նոքա կարողանան առաջին նուագ օգնութիւն ստանալ ուուսներից և ընտելանան այն ժողովրդի վարք ու բարքին, լեզուին ու կենցաղավարութեան տարագին, որի հետ նոքա այնուհետև պէտք է ապրէին։

Այսպիսի հանգամանքներում գաղթականներն ընկնում են անելանելի դրութեան մէջ։ Նոքա ստիպուած էն լինում կամ իւրեանց վրաններով թափառել տեղ ձիւն ձմեռ օր, կամ միմեանցից շատ հետու ընկած դիւղերում երկու.երեք ընտանիք մի տան մէջ ապրել և կամ այստեղ ու այնտեղ ժամանակաւոր հիւղեր շինել ու բնակել անտէր, անօգնական, որից ՚ի հարկէ, շատերը հիւանդանում են, շատերն էլ մեռնուում են, չենք խօսում արդէն այն անտանելի նեղութիւնների մասին, որ նոքա քաշում են չբաւորութիւնից, աւագակների յարձակումներից ու կողոպտումներից և ուրիշ այդպիսի դէպիքերում սովորաբար տեղի ունեցող պատահարներից։ Դեռ այս բոլորը բաւական չէր, Պետրոս վարդապետն էլ, որ հայերի միակ իշնամակալն էր, միակ ներկայացուցիչն իշխանութեան առաջ, անտանելի նեղութիւններից հիւանդանում է և 1779 թուի Յունուարին մեռնում ու թաղրուում է՝ «Սամարում», իւր սկսած զործի վերջը չտեսնելով։ Նորան տիրապէս հալ ու մաշ են անում ոչ այնքան ճանապարհի դժուարութիւնը և Սամարում քաշած նեղութիւնները, որ

Քան ժողովրդի իրաւացի տրտունջը և այն միտքը, թէ ինքն է եղել պատճառ. խեղճերի այդ զրութեան, Գաղթականները մնում են բոլորին անտէր-անտիրական, խեղճ, աղքատացած և օտարների մէջ ցրուած. Դրութիւնը յուսահատական էր, հանգամանքները վհատեցուցիչ:

Եց գժուար զրութեան մէջ թշուառ ժողովրդի աչքերը դառ-
նում են դէպի Թուսաստանի աց ժամանակուայ հացոց առաջնորդ
Յօվսէփ արքեպիսկոպոս Երկայնաբազուկ Արդութեանը, որի մօտ նո-
քա դեռ Պետրոս վարդապետի կենդանութեան ժամանակ պատղա-
մաւորութիւն էին ուղարկել և խնդրել, որ նա գործ դնէ իւր ագդե-
ցութիւնը և նպաստէ հրովարտակը փութով ստանալու գործին, Ճիշդ
է, նոքա դեռ Ղրիմից հրովարտակը ստանալու համար պատղամաւոր
էին ուղարկել Պետքըսուրդ իւրեանց երեւելիներից՝ Փառակեցի Իգնա-
տիոսի որդի մահտեսի Յարութիւնին և Փառակեցի Տէր Ռուկանի որդի
Կարապետին, բայց նոքա տեղական լեզուին և կարգ ու կանոնին
անձանօթ լինելով, չէին կարողացել հասնել իւրեանց նպատակին,
նամանաւանդ որ պատղամաւորներից մէկն էլ՝ Տէր-Ռուկանի որդի
Կարապետը մեռել էր մայրաքաղաքում:

Նոյն ժամանակ 1779 թուի Յարիկի 18-ին գաղթականները
Նոյն ժամանակի 1779 թուի Յարիկի 18-ին գաղթականները
բողոքախառն խնդրազիր են ուղարկում ժեներալ Սուվորովին և իշ-
խան Պատեօմկինին, նկարագրում են նոցա իւրեանց կացութիւնը և
իւրեանց ցաւերին գեղ ու գարսան են հայում. Այդ խնդրագրերից,
որոնցից առաջինը զրուած է ամբողջ հայ հասարակութեան բերանից,
իսկ երկրորդը Կարապետ Ռոկանեան, Մարգիս Մաժվելեան և Յակովի
Օքսենտեան երկելիների բերանից, երեսում է, որ գաղթականները,
բացի նորանից, որ այդ ժամանակները չեն ստանում եղել խոսա-
ցուած պաշարեղէնը, ոռմիկը, ցանկացած հողերը, պատրաստի բնա-
կարաններ Ղրիմում թողածի փոխարէն, բացի նորանից, որ նոքա-
անդադար ենթարկուել են եղել բազմադիմի գրկանքների, որից
ուներներն անզամ այն տեղն են հասած եղել, որ ողորմութիւն են
ժողովում եղել, շատերն էլ չնչին փողերով իւրեանց զաւակներին
սորան նորան ծառացութեան տալով և թեփ ուտելով են անցկացնում
եղել իւրեանց օրերը, վերջապէս, բացի նորանից, որ նոքա ապրելու և
են եղել արձակ դաշտում, ենթարկուելով անձրեի, արեի և եղանակ-
ների զանազան փոփոխութիւնների վնասակար ազդեցութեան, որից
շատ շատերը մեռնում են եղել, այլ և տեղական իշխանութիւնը ևս
կամենում է եղել երկրագործներին բաժանել և հեռու Տերս գետի
ափին բնակեցնել և ստիպում է եղել, որ գաղթականները ստորագ-
րութիւն տան, թէ ինքեանք բաւական են իրենց տրուած անփայտ և

անջրդի հողերից և առհասարակ իւրեանց՝ դրութիւննից և մինչև իսկ արգելում են եղել բարձր իշխանութեան խնդրագիր կամ որ և իցէ թուղթ ուղարկելու:

Յովսէփի արքեպիսկոպոսի մօտ ուղարկած պատղամաւորները՝
կապիտան Յովհաննէս Նբրահամեանը, Փառակեցի Պետրոսի որդի
Մկրտիչը, Մահտեսի Գանիէլը և միւսները պատահում են առաջնոր-
դին այն ժամանակ, երբ նա հաշտարխանից դուրս գալով, ճանապարհ
էր ընկել զնալու Պետերբուրգ հայոց եկեղեցին, որի շինութիւնն այդ
ժամանակ արդէն վերջացել էր, օծելու։ Պատղամաւորները ներկայա-
նում են նորան, յաջնում են նորան իւրեանց վիշտն ու ցաւերը և
խնդրում են նորա աջակցութիւնը հրովարտակը ստանալու համար։
Առաջնորդն ընդունում է նոցա գուրզուրալով, քաջալերում, սիրտ է
տալիս և լսուտանում է նոցա համար ամել ամեն բան, ինչ որ միացն
իւր ձեռքից կ'գայ և նոցա իւր հետ առնելով, տանում է Մոսկուա,
այնտեղից էլ Պետերբուրգ։ Այդ ժամանակից է խոկապէս սկսուում
Յովսէփի Խախիչևանցւոց հոգուելու դորձը, որովհետև թէս տակա-
լին պաշտօնապէս ոչ կաթուղիկոսից, ոչ էլ տէրութիւնից է յանձ-
նուած լինում նորան գաղթականների հոգսը, բայց նոցա բոլոր կա-
րերը գործերը՝ արքունիքի հետ գաղթականների վերաբերութեամբ
բանագնացութիւններ անելը, խնդիրներ մատուցանելը և հրովարտակ
ստանալը նա է կատարում։

1779 թուի Նոյեմբերի 14-ին պատգամաւորների հետ միասին կացրուհուն աղերսազիր մատուցանելուց յետոյ վերջապէս, առաջնորդը կարողանում է յաջողեցնել գործը, և Պատեօմիկինի և Յովհաննէս աղա Եղիազարեանի միջնորդութեամբ ստանում է ցանկալի հրովարտակը։ Նա խկոյն և եթ յանձնում է հրովարտակը պատգամաւորներին և ուղարկում է նոցա Կատարինասլաւ, պատուիրելով, որ նոքա շտապով ժողովին լուսաւորչական Հայերին և տանեն հրովարտակում նոցա համար նշանակուած տեղը, իսկ ինքը մնում է Պետերբուրգում աւարտելու այն գործը, որի համար խակապէս եկել էր - օծելու նորակառուց եկեղեցին։ Պատգամաւորները շտապում են կատարել սրբազնի հրամանը։ Նոքա հասնում են գաղթականների ցրուած տեղերը, հապճեպով ժողովում են լուսաւորչական Հայերին և տանում են նոցա գէպի Թօնի ափը։ Զարչարուած, տանջուած ժողովուրդը տեսնելով պատգամաւորներին և նոցանից տեղեկանալով հրովարտակի ստացուելու մասին, կարծես մի առժամանակ մոռանում է իւր կրած նեղութիւնները, իւր աղքատութիւնը, տնանկութիւնը։ Նա խրախուսուում է և մի վերջին անգամ էլ ճիգ թափելով հաւաքում է իւր ունեցած-չունեցած և հասնում է այն տեղը, որ կոչուում էր «Թոս-

*Հայրուհի
հայր*
տով սրբոյն Դեմեղրի», 1780 թուի Յունուարի 14-ին: Խոկ կաթոլիկ չայերը, որոնց թիւը հասնում է եղել 80 տան, առանձին հրովարտակ են ստանում և բնակում «ի Սամար առ Տնիքը գետով», Կատարինասլաւ քաղաքի մօտ, որտեղ հրովարտակի գօրութեամբ տրուում է նոցա ընտիր հողեր թէ քաղաքում և թէ նորա շըակացքում:

Յովսէփ արքեպիսկոպոսը մայրաքաղաքի Եկեղեցու օծման շքեղ հանդէսը կատարելուց յետոց, պատրաստուում է ճանապարհ ընկնել գնալու գաղթականների մօտ և հոգալու նոցա քաղաքի հիմնարկութեան, շինութեան և կառավարութեան գործերը, որովհետեւ արդէն թէ մարմնաւոր և թէ հոգեւոր իշխանութիւններից նորան էր յանձնուել գաղթականների հովուելը: Այդ մասին արդէն կայսերական հրովարտակ էր հրատարակուել և Պատեօմինին ձեռքով հրաման էր արձակուել Ազովի նահանգապետ Զերտկովին, որ նորեկ հայերը ևս, լնապէս Պուտաստանի բոլոր հայերը, պէտք է ենթարկուեն Արդութեանի առաջնորդութեան իրաւասութեան: Ստացուել էր և երջանկայշատակ Սիմէօն կաթողիկոսի կոնդակը, որով նա պատուիրում և տրգորում էր իւր միքասուն աշակերտին շտապել, գնալ գաղթականների բնակութեան տեղը և ստանձնել նոցա խնամելու գործը:

1780 թուի Մայիսի 9-ին առաջնորդը Յովհաննէս աղա Լազարեանի հետ ներկայանում է կայսրուհուն և թագաժառանգին «Յարկի-Սելօ» ամարանոցում, նա շնորհակալութիւն է մատուցանում իրեն շնորհած պարզեների համար և մնաս բարեաւի հրայեշտը տալով, ճանապարհ է ընկնում դէպի «Պոստովի Փորշտատր», ուր և ժամանում է նոյն թուի նոյնեմբերի 14-ին և ձեռնարկում է հիմնարկելու Նախիշեան քաղաքը և նորա հինգ գիւղերը՝ Մեծ. Սալա, Սուլթան. Սալա, Թոփտի, Զալթիր և Նիսուիթայ:

75099n
Տէրութիւնը բ' լոր գաղթականութեան գործի վերայ ընդհանրապէս ծախսում է 75029 ռուբլի 92 կ., որի կէսը մօտաւորապէս ծախսուում է Հայերի վերայ, որովհետեւ Հայերն իւրեանց թուի քանակութեամբ կազմում էին համարեան թէ բոլոր գաղթականների կէսը:

Թէ ինչ առարկաների և գաղթականների մը պիտոցքների վերայ որքան է ծախսուել այդ գումարից, — այդ կարելի է տեսնել հետեւալ հետաքրքրական «Ճախուց-յուցակից», որ մենք քաղերով և Պուբովինի պաշտօնական վա-երաթղթերից, դնում ենք այսուղ:

ՅՈՒՅԾԱԿ ԽԱԽՈՒՅՑ ԵՂԵԼՈՅ ՅԱՐՔՈՒՆՈՒԽ ՎԱՄՆ ԳՈՂ- ԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՒԹՅՈՒՆ

Ոուբ.	Կ.
1 Իգնատիոս մետրապոլիտն պարգև	6,500
2 Հայոց վարդապետ Մարկոսեանին պարգև	2,820
3 Կաթոլիկ պատուի Յակովիլին պարգև	1,250
4 Պողա Երեքին միասին կառքերի ձերի, լուծքի և ուրիշ պարագաների փող	2,799
5 Հոգեսր և աշխարհական երեխիներին ընձաների և հիւրասիրութեան համար	3,140 10
6 Քրիստոնեաներին նոցա թողած պարտէպէնի համար 4,511 60	
7 Զքաւոր քրիստոնեաներին թաթարներին ունցած պարտքերի համար	204 45
8 Քրիստոնեաներին նոցա ճանապարհին սատկած եղ-ների համար	65
9 Բաժանուած է զգեստի, կերակրի և այլ կարիքների համար	1,287 40
10 Պետերբուրգ ուղարկած լոյն և հայ պատգամաւոր-ների ճանապարհածախսի համար	619
11 Ճանապարհապաշարի համար *)	23,345 67
12 Մինչև Ելիքսանգործով կարձաւուծ սալլերի համար	3,876
13 Ազովի նահանգապետի ուղարկած սալլերին վարդադրամ	2,780 78
14 Սալլերի հետ եկած պրիստուներին	10
15 Զօրքերին նոցանից առած սալլերի համար	8,951 40
16 Սատկած և կորած եղների համար	645
17 Անսաւնեների կերի և սալլերի կարի համար	366 46
18 Տաս հատ սալլի գին և կոտորուած սալլերի կարկա-տանի և նորոգելու համար ծախս	139 30
19 Յունաց Եկեղեցեական իրեղնների փոխադր. համար	254
20 Տրուած է կոնֆիդենտին և թարգմանին	132
21 Թաթարներից գնած եսիրների համար	240
22 Ն Դրիմի հայոց վանքի վանահայր վարդապահուց գլ-նած խոտի և փայտեղնին համար	270
23 Կաֆացի Ռախիպէ հային նորա խանի համար շինած կառքի փողը	60
24 Իգնատիոս Յոյնին Ենիկալէցի Սպերօլից նորա սատ-նելիք փողը	40
25 Գոնի ղազախներին նոցա ձիերը պահելու համար **)	58
26 Գաղթականութեան պատճառով եղած դիւանական ծախսերի համար	
27 Գաղթականութեան համար զանազան կողմէր ուղար-կուած սուրհանգակներին	124 70
28 Ղրիմի կապալառու Խոխլով վաճառականին քրիստո-նեաների տարած ապրանքի մաքսագին	2,468 56
29 Զանագան մանր ձախքեր	4,000-252
30 Կաղի-գիրիչ Առութանին նորան մի Յոյնից հասանե-լիք պարտքը	120
	75,029 92

*) Պաշարեղէն չուզեցողները փոխարէնը փող են ստացել:

**) Բախչիսարայում քրիստոնեաների դուրս գալու պատճառով կանգ-նած:

Հայադաւանները Նոր-Նախիջևան քաղաքը և Նորա գիւղերը հիմնարկելուց յետոց, մշտապէս բնակութիւն են հաստառում Ռուսաստանում, իսկ կաթոլիկները 12 տարի Կատարինասլաւում մնալուց և այդտեղ Ս. Լուսաւորիչ անունով մի փայտաշշէն եկեղեցի կառուցանելուց (1781—1782) յետոց, Յովիչի արքեպիսկոպոսի միջնորդութեամբ իրաւունք են ստանում վերադառնալու Դրիմ և վերաբնակելու Կարասու-Բազարում, որտեղից տիրապէս դուրս էին եկել նոքա: Ճիշդ է, հայադաւանները ևս յուսախաբուելով և չ'հաւաննելով իւրեանց նոր բնարութեան տեղերին, հակումն են ցոյց տալիս հետեւելու կաթոլիկների օրինակին և մինչև իսկ մի երկու ընտանիք փախչում են Կատարինասարաւ և կաթոլիկների հետ միասին վերադառնում են իւրեանց նախկին բնակութեան տեղերը, բայց չեն յաջողում. նոքա ստիպուած են լինում իշխանութեան հանած խիստ արգելքների դէմ գլուխ խոնարհեցնել, և հետզհետէ ընտելանում են իւրեանց նոր հայրենիքին:

Փողովրդի յուսախաբուելը և իւր նոր բնակութեան տեղերին չհաւանելը հետևանք էր մի կողմից նոցա տրուած տեղի անբերրիութեան և կիմայական խստութեան, համեմատելով նորան Դրիմի հետ, միւս կողմից էլ այն միջոցների, որ զործ էին դրել մարմնաւոր և հոգեսոր իշխանութիւնները նոցա գաղթեցնելու համար: Հետաքրքրական է այս դէպքում բուն ժողովրդի կարծիքն իւր գաղթականութեան մասին, որ մենք գտնում ենք մի ձեռագիր հաւաքածուի մէջ, որ գրուած է գաղթականութեան մասնակցող Քէֆէցի Տէր Մարտիրոս Դպիր Աւետիքով քահանացի ձեռքով 1794—1799 թուականներին Նոր-Նախիջեանի Խնուրիթայ զիւղում: Թփին ոմիէ ամսեանն յուլիսի, ասու՞ է Տէր-Մարտիրոսը, խօսելով գաղթականութեան մասին, մէկէն ըսկըսվեցավ Դրիմի եղեալ հայք և հոռոմ.ք գընալ ՚ի ըռուստաց երկերն վասն մեր ծովացեալ մեղացն բարկացեալ էր Աստուած ՚ի վերաց մեր խաբէութեամբ հանեցին քաղաքներէս տուները մլքերս պաղպաղճաները բոլորը ձքէցինք մեր կամավճն որդոք զըստերօք ւիրելօք և բարեկամօք խաղալ խընդարով մէկ տարի ըռուստաց զիւղ քաղաք մաշեցանք այս բանէս Կատարինէ թագուհին չը խապար. իրեն մեծամեծքն ասել են թէ Դրիմի մլ ջի եղեալ թուրքն բազում նեղութիւն կուտան տիվ զիշեր. թագաւոր ապրած կէնաս քեզմէն ողորմութիւն կուխնդրեն կու հայցեն թէ զգմեզ այս հողէս վերցնես ՚ի հոդ բերես մենք քեզ ծառացեմ.ք որդոց որդիս, որովհետև զիս սիրով խընդիւն են հրաման է թող հայոց խընդիրքն թող հայոց հացուացքն կատարվի, շատ բան ըլլաւն ետքը եկինք ըլաստովի հողըն. Թէնի Դոնի մի ճիւղին Զալթրցիները մինչև ցայսօր և ո

«ԹԵՆ» են ասում) քընարն քաղաքի տեղ չափեցին տըլին մէկ մէկ հատ միթքի (?) դո ն պարզեւք արաւ թագուհին. Ծ-ական ըռուալինոց որն բաղէ որն քէրքինէ. ոմանք ուժ ունեցողը իւր բողովին շինեց մինչև բճ. ըռուալիէն բռ. գռ. դռ. ըռուալիի շինեցին. քաղաքին անունը դրին ՚ի Նորըն Նախիջևան, առաջնորդ եղեւ մեզի Յովսէփ արքեպիսկոպոսն որոյ Տէր Աստուած տացէ երկար կեանք. Նմէն»:

Ճողովրդի նոյն յուսախաբութեան և գաղթականստեան նոյն
տխուր հանգամանքների ազդեցութեան ներքոյ է, գուցէ, զրել Տէր-
Մարտիրոսը և այն գովասանքը Կաֆա քաղաքի մասին, որ մենք
գտնում ենք նոյն ձեռագիր հաւաքածուի բազմաբովանդակ յօդուած-
ների շարքում և որի մէջ Քէֆէն ներկայանում է մեզ ինչպէս մի
ամեն բանով բարեշէն և գեղեցիկ բնակութեան տեղ, հակառակ գաղ-
թականների նոր բնակութեան տեղին, որ այն ժամանակ բոլորովին
անշէն և ամափ էր:

Աստուած թող շէն պահէ զկաֆայ,
Բոլոր պարիսպն, որ ՚ի նմա կայ.
Գերահույսակ անուն նորա,
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Դոներն ամուր, ինչ ՚ի նմա,
Եկեղեցիքն գերակայ,
Զանգակներուն ձայնն կուգայ,
Է իւր գանգերն շրջակայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Էպիխալուպոս մեծ և արքայ,
Ընտրեա մաքուր սուրբ քահանայ,
Թագ պարծանաց յերկրի վերայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Փամատեղաց նման չիկայ,
Իւր քահանացըն փիլիսոփայ,
Լուսոյ մաքուր շատ արեղայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Խոճանին գեկան կուտայ
Ռառայ դնեն և ազատեն զնա.
Կարգեն զնա, առնեն տղայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Հայոց տուն է աշխմ Կաֆայ,
Զայնն ընդհանուր յերկիր կերթայ,
Ղրիմն ՚ի հետ իւր մերծակայ.

Աստուած թող շէն պահէ Կաֆայ,
Ճօխայ ամեն մարդն և խնդայ,
Մանուկ և' մեծ և' երեխայ,
Յերեսնուն լոյս ցայթեալ ցոլայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Նաւն ի ծովին շատ բարեօք զայ,
Ջուրջ վաներօքն ուրախանայ.
Որդիք մարդկան ՚ի յուկատ կերթան.
Աստուած թող շէն պահէ Կաֆան:
Զար թշնամին թող վերանայ,
Պատիւ հայոցս մեծանայ.
Քաղընին իւր քամով շուրջ գայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Թամիկ մարդիկ իշխանք որ կայ,
Սարկաւագեր և քահանայ
Վարդապետին հնագանդ կենայ.
Ռատուած թող շէն պահէ Կաֆայ:
Տիկին կանայք պարկեշաք նոքա,
Քամեալ մարդկան պարծանք նոքա,
Յնձայ ամեն և ուրախանայ,
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:
Հիւանդ հոգով են ձեզ ծառաց.
Փառք Աստուծոյ յերակ ասա,
Քեզ Մարտիրոս Աստուած զթայ.
Աստուած թող շէն պահէ Կաֆայ:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵԿԻԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՒՆԵՐԸ

Նախիչևանն ունի եօթն եկեղեցի: Թողանից վեցը Տիսական են,
իսկ մէկը հանգստարանի, որ թէւ իւր առանձին ծուխը չունի, բաց
քաղաքին շատ մատ լինելով, համարեա թէ ծիսականի հաշուի է,
որովհետև ունի իւր միաբանութիւնը և միւս եկեղեցիների պէս կա-
նոնաւոր ամենօրեայ ժամասացութիւն ու պաշտօնակատարութիւն:
Քորա ծուխը քաղաքի ամբողջ հայ հասարակութիւնն է, երէցիովիս
Հ ի բնտրուում է բոլոր ծիսերի ց:

մար, որ պէտք է կրչուէր «Ս. Կարապետ», Բաց երբ շինուել, աւար-
տուել են վեց եկեղեցիները, ժողովուրդը համոզուել է, որ ժողովրդի
բազմութեան նաև լով, այդ վեց եկեղեցին աւելի է ու պակաս չէ,
ուստի և յետաձգուել ու ապագային է թողնուել եօթներորդի շի-
նութիւնը: Խոկ երբ բարեպաշտ տիկին Ակիւլինէ Ալաջալեանի Տախ-
սով շինուել է հանգստարանի եկեղեցին Ս. Յովհաննու Կարապետի
անունով, խսպառ թողնուել է ծրագրուած եօթներորդ եկեղե-
ցու շինութեան ծխտքը և հրապարակը պարտէզի է վերածուել:

Ա. ՀՈՒՍԱՔՈՐԴ

Քաղաքի միջավայրում կանգնած է Ս. Կոստանդի եկեղեցին, որ ամենամեծն է և համարուում է քաղաքիս մայր-եկեղեցին: Դա շինուած է այն հրապարակում, որ մինչև ցացօր ևս կոչուում է «Փամփի ազգաբար»¹⁾ և որի չորս կողմը սկզբից, քաղաքի հիմնադրութեան օրից կառուցուել են քաղաքի խանութները, իսկ մէջտեղը մնացած ազատ տեղը նույիրուել է եկեղեցուն իբրև խանութներին անպէտք տարածութիւն:

Ս. Լուսաւորիչը, ինչպէս և քաղաքիս միւս եկեղեցները, հիմնարկել է երջանկացիշատակ Յովիէփ արքեպիսկոպոս Երդութեանը բարեպաշտ ժողովրդի և օտար երկրի հայերի օժանդակութեամբ և կարգաւորել է, որ ապագայում դորա քալում շինուին և առաջնորդարան և' ուսումնարան և' Հոգեոր-Թատարան, և զա լինի առաջնորդանիստ ու մայր-եկեղեցի։ Ս Լուսաւորիչը միանգամից չի շինուել առաջ հրապարակի մի անկիւնում շինուել է նորա համար փայտեաց փոքրիկ շինութիւն, յետոյ արդէն հրապարակի մէջտեղը նորա այժմուաց քարեաց շինութիւնը։ Եկեղեցու փայտեաց շինութեան տեղը մինչեւ ցացօր ևս երեւում է; որովհետեւ նորա սեղանի տեղում հանգուցեալ Յովիչաննէս Մարկոսեան Պոպովը շինել է մի փանդակապատ մատուածե շինութիւն, որի դագաթը զարդարում է խաչը, խև արևելեան կողմի երեսը։ Ս. Լուսաւորիչի մեծադիր պատկեր։

Եկեղեցու քարի շինութիւնը, որի Տաղկաշատ և Տառաշատ բակն այժմ շրջապատուած է մեծածախ երկաթէ վանդակով, շատ երկար է տևել, որովհետեւ, Նախ, Նիւթական միջոցների պակասութիւն է եղել, երկրորդ, ջանք է եղել նորան իբրև մայր եկեղեցի աւելի ընդարձակ ու շքեղ կառուցանելու։ Սորա հիմնարկութիւնն եղել է 1783 թուին, իսկ շինութիւնն առաջ է տարուել Պարասուե-

1) Уզуар—Рашк:

ԹԵՇ ԵՐԲ է վերջացել շինութիւնը և օծուել, - մեզ անցաց է:
ՄԵՆՔ միայն գիտենք, որ 1800 թուի օգոստոսին, երբ երջանկայի-
շատակ Յովսէփն արդէն ընտրուել էր կաթուղիկոս և ճանապարհ էր
շատակ Յովսէփն արդէն ընտրուել էր կաթուղիկոս և ճանապարհ չի
ընկել զնալու Ա. Էջմիածին, դեռ դորա շինութիւնը պատրաստ չի
եղել. Մեր ձեռքին գտնուում է «Ընտրեալ կաթուղիկոսի» այդ թուին
Նախիջևանում արձակած կոնդակներից մէկը պարոն Սսուռածարի,
պլավաց պարոն Կարապետ Յովհաննիսեանի, պարոն կարապետ Սահա-
կեանի, պարոն Յարութիւն Տէր-Տէրկառեանի, պարոն Յարութիւն Ղաթ-
կեանի և պարոն Յովհաննէս Սարգսեանի անունով, որի մէջ կա-
թուղիկոսը դոցա յանձնելով կուտառչի շինութեան աւարտելու դոր-
ծը, մի քանի կարեւոր կարգադրութիւններ է անում. Նա հրամայում
է նոցա մի առանձին մատեան կազմել և շինութեան բոլոր ծախսերը
մանրամասնաբար զրել նոցա մէջ, որպէս զի յետոց հեշտ լինի իմա-
նալ, թէ որ բանով է զլուխ եկել բոլոր շինութիւնը. Նա յորդորում
է նոցա աշխատել այդ բարեպաշտութեան գործի համար և ուրիշնե-
րին ևս համոզել նույիրաբերութիւն անել. Նա խոստանում է յանձնել
նոցա իւր ձեռքում գտնուած վեց ոսկէ խաչերը և այ կոտրատուած
արձաթեղէնը, պատուիրելով հայել նոցա, ծախել և գոյացած գումարը
գործ դնել շինութեան վերաց, մինչև որ ինքը կարողանայ հաւաքել
և հասցնել նոցա եկեղեցու կառուցման և աւարտման համար հարկա-
ւոր բոլոր փողը. Նախիջևանցիք, չ'գետենք ինչ վաերաթղթի հիման
ուր բոլոր փողը. Նախիջևանցիք, չ'գետենք ինչ վաերաթղթի հիման
1807 թուին:

Հիւսիսացին զրան ձախակողմը դրսից զտնուում է մը լ-ը և ու որի վերաբ փորագրուած է. «Յիշ. սուրբ Յօվանի Ամրոն խմանային

Եւ Տռիկին եւ Ներսէսին եւ կողակցին Մարքալ խարութին եւ իւր որդուն Յովհաննէսին թվ. 970—1481) Զետայիշ Հարակորեն.

Բեմի Հակատին հաղցրած է մի նորբ քանդակուած խաչքար, որի վերաց կարդացուում է. «Այ նշանին բարեխաւս և Սիմեոն բանին եւ իր երեցինոցն իմին մելքն եւ իւրեանց ծնող(ացն) ըլ: Զգզ (913-1464) Ձեռամբ Ք. Սիմեոնին»:

Արևմտեան զբան առաջ շինուած է փոքրիկ գաւիթ «պառքէ» յատակով և խաղաներկ պատերով, որի վերաց բարձրանում է ուստա- կան ոճի յատկանից եռացարկ բարձր զանգակատունը .քաղաքացին մեծ ժամացոցով. Թէ զմբէթի և թէ զանգակատան զլուխներն ոսկեզօծ են և զարդարուած ոսկեզօծ բարձր խաչերով, խակ հարաւացին և հիւ- սիսացին գռներն իւրեանց առաջ ունին սիւնազարդ, որ մի առան- ձին զեղեցկութիւն է տալիս ամբողջ շինուածքին:

Եկեղեցուն այժմ պատկանում է ոչ բոլոր «ժամի ազգարը»,
այ միայն նորա այն մասը, որ շրջապատուած է վանդակապատով,
որովհետև քաղաքն եկեղեցու հարաւային և հիւսիսային կողմերից
փողոցներ անցկացնելով. սեփականացրել է իրեն,՝ չգիտենք ինչ իրա-
ւունքով, «ժամի ազգարի» մեծ մասը և քաղաքային «սկիերներ» է
շինել, այնպէս որ մինչև անդամ նախլին վայստեայ եկեղեցու սեղանի
տեղում շինուած վերցիշեալ մատուռը ևս ներկայումս մնացել է հիւ-
սիսային „սկիերի“ մէջ բուն եկեղեցուց բաւականին չեսու.

Եկեղեցու բակում Ներկացումս չ'կան ոչ թէ միացն Յովիսէփ արքեպիսկոպոսի Տրադրած Առաջնորդարանը, չողեոր Դատարանը և Կուսաւորչեան դպրոցը, այլ և ոչ մի շինութիւն, բացի մի փոքրիկ փայտեաց կրպակից, որ մոտ է բաշխում Քաղաքի և գիւղերի բոլոր հայեկեղեցիներին:

Գաւթի պատերի՝ մէջ եկեղեցու արեմտեան դրան աջ ու ձախ կողմը կանգնեցրած են երկու մէծ խաչքար, որոնցից մէկի-աջակողմեանի վերայ փորագրուած է. «Կանգնեցաւ սր խաչս սր Յովակիմին եւ կենակյին Մարիամին եւ զաւակացն Միհասին, Խասպերին եւ ծնօղացն Ս. Ճատրին եւ Եսպորին եւ Եղբարցն Լոյսպարոնին եւ Խաչերէսին եւ Նիկոլոսին եւ Լուսեղինին եւ այլ զարմից. Տեռամբ Մարգար գրչի թիմն ոնկը (162—1713): Խակ միւսի-ձախակողմեանի վերայ փորագրուած է. »Կանգնեցաւ սր հարեխաւսուրիւն պր. Սիմեօնին եւ հայրն (Հօրն) պր. Միհամիրին, մօրն մելիք խրին եւ կողակցին եւ զաւակացն: թիւ: պձ (880—1431). Տեռապործ է Սիմեօնի վարպետին. Յիւ. և Խարիանանի Միհերին: Յունիարի ժեւ:

վարպետիք. Եթ. և հայութի գրության մեջ առաջ կատարի մէջ
Նոյն գալթի մէջ մուտքի աջ ու ձախ կողմը պատերի մէջ
դէմուզէմ հազցրած են երկու մեծ մարմարինն քարեր, սրոնցից մէկի
վերաց փորագրուած է հետեւեալ հետաքրքրական արձանագրութիւնը.
”Գարատուն այս եւ ուսումնարանս կանգնեցաւ յանուն սրբոյ հօրու
մերոյ Գրիգորի Լուսաւորչին, արքեամբ Զուղայեցի գերապայծառ
իշխան աղա Յօհաննանին յանջնիչի իւր եւ կենալցոյն հանգուցեալ
Գիւլիսան տիկինոցն, պապուն, Կերաք աղային, հանուն բազուի տիկ-
նոցն եւ դսերացն եւ ամենայն ազգայնոցն. յամի Գրիշին 1790.
Խոկ միւսի վերաց փորագրուած է հետեւեալ զրուատը

Յօրինուած պայծառ յարկիս նորասխանց,
Արամեանց ծագեալ ջինջ արփւոյն նախանչ
Ուշիմ Յօհանչանու, իշխան բազալանջ,
Բամբին Գերամեան պարձանք իսկստանջ
Վեհափառ դպրոց զիտոնց 'ի կանոն,
Հաւատոց ամրոց, ընորհաց վաճառ
Սուլեալ Հայկազանց հրաւիրման հառ,
Դասուց որբ մանկանց դահեակ անաշառ.
Եկ յոյ, խրախոյս Ասքանազեան փունջ
Երջանիխ բաշխոյս ձօնել համատունչ
Փողեա' 'ի հոջակ հրեուանօք անձինջ,
Տենչալի վիճակ երախտեացս անջինջ:

Ս. Կուսաւորիչն ունի մեծաքանակ մեծագին զիւսաններ, եկեղեցական թանկագին սպասներ ու զարդեր և երկու մասունք՝ **Ս.** Կուսաւորիչ և կենաց փայտի, Առաջինը մի արձաթեաց ոսկեզօծ մատները խաչակնքելու ձևով շինած և մատնին եափսկոպոսական մատննի հազ-ցրած աջ է, որի մէջ ներփակած է մասունքը, իսկ երկրորդը կենաց

փայտի մասն է, արծաթի մէջ առած և խաչի ձեռվ շինած: Բացի սոցա՛ից, եկեղեցին ունի և շատ ձեռագիր մատեաններ, որոնցից ութը միան արծաթապատ աւետարան են, և բազմաթիւ հին, այժմ անդորձածելի, զրիմից բերուած խաչեր, վակասներ, բուրփառներ և ուրիշ այսպիսի եկեղեցական սպասներ:

Ս. Լուսաւորիչ եկեղեցու առաջ բարձրանում է Եկատարինէ Բ. կայսրուհիւ շքեղ արձանը, որ 1893 թուին կանգնեցրել է քաղաքի հայ հասարակութիւնն ՚ի նշան իւր երախտագիտութեան: Ծրանը ձուլածոյ է, կանգնեցրած ցիկուած ու ապակու պէս փայտեցրած որ-ձաքար գեղեցիկ պատուանդանի վերայ, որի մի կողմում ուռուցիկ ձեռվ քանդակուած է Յովսէփ Արդութեանի վեղարազարդ զլուխը, միւս կողմում քաղաքի նշանը և հիմնարկութեան թուականը, իսկ երրորդ և չորրորդ կողմերում գտնուում են ուռուերէն ոսկետառ ար-ձանադրութիւններ: Պատուանդանի եկեղեցու դէմ ու դէմ գտնուած երեսի վերայ գրուած է. «Ըղեխաներդր Փ. կայսեր բազաւորութեան ժամանակ 1893 թուին», իսկ հակառակ դէպի մեծ փողոցը գտնուած երեսի վերայ—«Եկատարինէ Բ. կայսրուհուն երախտապատ հայեր»:

Ս. ՆԻԿՈՂԱՅՅՈՒ.

Քաղաքիս հիւսիս-արևմտեան անկիւնում շինուած է **Ս. Նիկո-** լայոս եկեղեցին, որ համարուում է քաղաքի անդրանիկ տաճարը, որովհետև նորա քարէ շինութիւնն ամենից առաջ է վերջացել ու օծուել: Մենք ասում ենք «քարէ շինութիւնը», որովհետև եթէ հաշուելու լինենք փայտէ շինութիւնները, Ս. Սստուածածինը կլինի ամենահինը, քանի որ հէնց սկզբից շինուել է դորա փայտէ շինութիւնը, առաջին անգամ պատարագ է մատուցուել և հէնց դորա մէջ ել օծուել են միւս եկեղեցիների, դոյց թուում և Ս. Նիկողայոսի, հիմնաքարերը: Ս. Նիկողայոսը հիմնարկուել է «Ս. Համբարձման» հետ միասին 1781 թուի Մայիսի 2-ին և աւարտուել ու օծուել է 1783-ին: Ար սա հիմնարկուել է 1781 թուին և Ս. Համբարձման եկեղեցու հետ միասին,—այդ երեսում է Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռագիր «Քաթարից», որի մէջ այդ մասին գրուած է. «Ի սմին բուռզ (1781) եւ ՚ի Մայիսի 2: Օճախ եւ զար Համբարձում եւ որ ՚Նիկողայոս եկեղեցոյ հիմանց բարինսի եւ մեծափառ հանդիպի տառեալ ՚ի սք Ածածին յեկեղեցւոյն, եղամ ՚ի տեղիս իւրեանց. զոյին եւ բազում իշխանի ազգին ուռուաց: Խսկ որ նա աւարտուել ու օծուել է 1783-ին, այդ էլ երեսում է նորա բեմի ճակատին դրած մարմարիոն քարից, որի վերայ փորագրուած է. «Ասուցաւ տանար ածային

յանուն սբյ Նիկողայոսի հայրապետին նոգեւորական արդեամբ յօժան-դակուրեամբ եւ օժմամբ սբոյ արռոռոյն էջմիածնի ծայրագոյն նուր-աւ եւ ուռուաց երկրի ամենալի հայոց առաջնորդ եւ նոր հաղաքիս Նախիջեւանայ հիմնադիր Սանահնեցի Յովսէփի արքեպիսկոպոսին Արդութեանց ՚ի բազաւորութեան մեծին Եկատարինէի երկրորդի կայ-սերուիոյն ամենալի ուռուաց ՚ի հայրապետութեան սբոյ արռոռոյն էջ-միածնի տն Դուկաս կարուղիկոսի ամ հայոց քիին 1783: Սա աւելի փոքր է, քան թէ Ս. Լուսաւորիչը, բաց շինութեան ոճն ընդհա-նուրում համարեա թէ մի և նոյնն է: Նոյն երեք գուռը, նոյն սիւ-նազարդերը գուների առաջ, նոյն գաւիթը արեւմտեան դրան առաջ և զանդակատունը նորա վերայ: Վերջին ժամանակները միայն, երբ Սար-գիս Խոջեան երեցփոլսի օրով հիմնաւորապէս վերանորոգուել է այդ եկեղեցին, նորա գմբէթի և զանդակատան զլիսի ձեր հայկականի է փոխուել:

1883 թուին լրացած լինելով դորա հարիւրամեակը, հանդիսաւորապէս տօնուել է դորա յօբելեանը, որ և արժան է համարել ժա-մանակի երեցփոլսին իւր անուան հետ միասին յաւ երժացնել հետեւալ ճապաղ ոտանաւոր արձանագրութեամբ, որ փորագրել է տուել մար-մարիոն քարի վերայ և հաղցրել գաւթի աջակողմեան պատի մէջ:

Փ 16 Հոկտեմբերի 1883 ամի

Յիւատակ հարիւրամեակի

Կառուցման Ս. Նիկողայոսի,

Նոր-Նախիջեւան հաղաքի.

Տօնեցաւ տօն յօբելենի

Քաղաքիս նախանիմ տանարի

Յաւուրս Մակար սրբազնի

Եւ թէմակալ առաջնորդի,

Խսկ սբոյ տան երեցփոլսի,

Պատուամեծար Վարդերեսի

Մկրչեան Մրմահեւանի:

Բացի այս երկու՝ բեմի ու գաւթի արձանագրութիւն ունեցող քարերից, եկեղեցու պահարանում պահուում է և մի փոքրիկ նրբա-քանդակ մանր խաչերով մարմարիոն, որ գաղթականները բերել են իւրեանց հետ Ղրիմից: Խորա շուրթի վերայ գրուած է. «Բարեխոս և Ասվատուրի որդի Խաչերեսին. Ոճնէ (1167—1718)».

Այս եկեղեցու մէջը շատ գեղեցիկ է. պատերը ներկած ու գար-դարած են զանազան նկարներով, ունի վերնատուն, մի սեղան փոքր

ու մեծ վարագոյներով և երկու խորան, ինչպէս կուսաւորչումը: Բաց որ մի առանձին գեղեցկութիւն է տալիս նորան,—այդ այն է, որ, նախ, դորա բեմը հայկական ճաշակով աւելի բարձր է շինուած և, երկրորդ, դորա խաչկալն և պատկերները թանկագին ընկուզենուց են կերտուած միաձև, նրբաքանդակ և գեղեցիկ պարզութեամբ:

Ս. Նիկողայոսի ամենամեծ ս. բութիւնները համարուում են Ս. Նիկողայոս հայրապետի մասունքը, կենաց փայտի մի կտորը¹⁾ և Ս. Փրկիչը. Ս. Փրկիչ ասելով, համանում են ձախակողմեան դասում դասուած պահարանը, որի մէջ պահուում է մի երեք կտոր եղած մէծ լեռ քար, որի մէջտեղը բոլորածե տաշուած է և վերան մի փոքրիկ խաչ ձեւցրած: Այդ քարը, որ կոչուում է «Ս. Թաղիկոսի հար», աւանդութեամբ բերուած է համարուում հայաստանից և առնուած Թաղիկոս առաքեալի գեղմանի վերացից: Բայց Ս. Թաղիկոսի քարից պահարանում դասուում են երկու հասարակ փայտեայ խաչ, մի «թոփուզ», գերձաններ և արծաթեայ բարակ կտորներից շինուած ոտքեր, ձեռքեր, աչքեր և այլն: Փայտէ խաչերը, որոնց կոթը կամ բռնելու տեղը ծածկուած է մետաքսէ ոսկեթել և արծաթաթել նախշած կրտորով՝ գործ են ածուում այն ժամանակ, երբ երեխաններն ուշ են ոտք լինում: Խաչերը տալիս են երեխանների ձեռքը և երեք անզամ պատեցնում են նոցա եկեղեցու չորս կողմը: «Թոփուզը» մի կարճ փայտ է, ծացրն արճակ գնտով և ծածկուած՝ խաչերի նման՝ մետաքսէ կտորով: Երբոր օրհասում դասուածները շարչարուում են և երկարում է նոցա մահը, այդ քրոփուզը» տանում դնում են հիւանդի կրծքի վերաց, որ կամ այս կամ այն կողմը լինի. Դերձանները լերում, դնում են պահարանի մէջ հիւանդատէրերը: Երբոր մէկը հիւանդանում է, հիւանդի տէրը գերձանով չափում է հիւանդի հասակը և հասակաչափ դերձանը բերում, դնում է պահարանը, ուխտելով որ եթէ հիւանդն առողջանայ, նա նորա հասակով մի կերոն թափել կտայ և կ'փառէ Փրկի առաջ: Արծաթէ ոտքերը, ձեռքերը, աչքերը և այն կախում են պահարանում նոքա, որոնց կամ ոտքերը կամ ձեռքերը և կամ աչքերն են ցաւում:

«Ս. Փրկի» պահարանը, որ ապակեայ գուռ ունի և որի առաջ յատակի վերաց գրուած է մի անօթ, միշտ լցուած օրհնած ջրով հիւանդների համար, կոչուում է «Ս. Փրկիչ», որովհետեւ նորա ճակատը պարզարում է Փրկի մեծագիր պատկերը: Ֆողովուրդը մէծ ջերմեռան-

¹⁾ Կենաց փայտն իւր մէջ պարունակող արծաթեայ խաչն ունի հետեւալ լիշտակարանը. «Յիշտակ» է և բարեխաւս սբ նշանս խաչատուրին և իւր կողակցին թագուհին հոգւոյն. ՚ի դուռն սբ կուսաւորչին թվին Թմէլ-ին. Սա է խաչն կափարին վիմէն Քի.

դութեամբ ուխտ է գալիս պահարանում պահուած սրբութիւններին, խնդրում է «բանալ ս. Փրկիչը», մոմ է վառում, խմում է օրհնած ջրից և առաս խաչամբոցը է տալիս «Փրկիչ բանալու» Տէսը կատարող քահանացին: Ս. Նիկողայոսի ընդարձակ բակի մի մասը բռնուած է: Հին գերեզմանոցով, մի մասը բաց հրապարակ է եկեղեցու առաջ, մի մասի վերաց էլլ գտնուում է նախկին Սանդիստեան դպրոցի գեղեցիկ շինութիւնը: Հին գերեզմանների մէջ արժանի է ուշադրութեան ազնուալիան Յովհաննէս Աբրահամեանի գերեզմանը, որ Պետերբուրգ գնացող և արտօնութեան հրովարտակ ստացող պատգամաւորներից մէկը և Նախիջևանի հիմնարկութեան հէնց առաջին տարիներում գաղթականների մէջ առաջ եկած մեծամեծ խոռովութիւնների ժամանակ՝ «հակասրբազնական» կամ «Աբրահամեան» կուսակցութեան պարագլուխն է եղել: Աբրահամեանի գերեզմանը, որ գտնուում է բակի բարպասի աջակողմը, ունի մարմարին տապանաքար հետևեալ ոսաւաւոր արձանագրութեամբ.

Ի սոյն հանգստեան եղաւ տապանի
Այրս բազմաշխատ ազնիւ, մեծազգի,
հիման Աբրամովիչ սերուեն հայիազնի,
Շնեալ ՚ի Խրիմ Քեմե բաղակի,
Ապա ծառայեալ կայսեր իրօրի,
Մուսաց բազուի Կատարինի,
Սացաւ գաւալեր րզեանս խաչի
Եւ բօս բօխովնիկ հազարապետի:
Յօգնուրիւն հասեալ նեղ ժամանակի
Տառապեալ ազգիս, մնացեալ ՚ի դաւտի,
Սղեր մատուցեալ կայսերուենոյն մեծի,
Ճնորհեալ պոխիւեկ ընդ հրովարտակի,
Ըու հիմնարկուրիւն Նոր-Նախիջեւանի
Եւ ազատուրիւն մինչ ցտան ամի:
Յորմէ ընկայեալ զինդիր բարի,
Հիմնեաց զայս բաղակ յապահով երկրի.
Սա բերեալ հանգոյց զազգի ողորմելի,
Որ վարեալ եկն յերկեն Խրիմի:
Բազում երախսիս արա իւր ազգի,
Յիւատակ բարեաց բողեալ յաշաւահի.
Սա ինքն ծաղկեալ բարեօֆ աւուրբ ՚ի,
Հանգեաւ ՚ի Քրիստոս առ յայն ամենի:
Ով որ հանդիպի սոյն զերեզմանի,
Ողորմիս ասեք միով հայր մերի:

Ս. Նիկողայոսի գերեզմանոցում են թաղուած և Յարութիւն Խալիքեան ու Մարգար Հայրապետեան մեծատուն լաճառականները, ոռոնցից առաջինը 12 տարի շարունակ քաղաքագլուխութիւն է արել, Ներսէս կաթուղիկոսի ժամանակ Ս. Էջմիածնի աթոռակալն է եղել և Խալիքեան ազգային դպրոցի հիմնադիրը, իսկ երկրորդը «Հականալիքականների» պարագուլս և հանգուցեալ Միքայէլ Նալբանդեանցի մտերիմ բարեկամն ու ընկերն է եղել։ Այս եկեղեցին էլ ունի բաւականաչափ ձեռագիր մատեաններ և Ղրիմից բերած եկեղեցական հին սպասներ, որոնք, ինչպէս Լուսաւորչինը՝ նույրուած են «՚ի դուռն եկեղեցոյն» գանազան բարեպաշտ մարդկանցից «՚ի ցիշատակ», «՚ի բարեխօսութիւն», «՚ի քաւութիւն մեղաց» և «՚ի փրկութիւն հոգւոց»։

Ս. Թէ՛ղութուս.

Ս. Թէ՛ղութուս կամ Ս. Թողոսը գտնուում է քաղաքի հարաւարելեան անկիւնում ընդարձակ բակի մէջ, որի մի կողմը պարտէզը ու Ծխական միջաւան դպրոցի շէնքն է, իսկ միւս կողմը հին գերեզմանոցը։ Եկեղեցու շինութեան ոճը և միջի սարք ու կարգը մի և նոյնն են, ինչ որ Ս. Լուսաւորչում և Ս. Նիկողայոսում։ Դա հիմնարկուած է դարձեալ Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռքով 1783 թուի Հոգեգալստին և աւարտուած ու օծուած է 1786 թուին։ Այդ մասին արքեպիսկոպոսի ձեռագիր «Դաւթարում» գրուած է։ «՚ի սոյն թուոջս (1783.) ՚ի հոգեգալստեան արկաք զհիմն սբ Թողոսի, Թիւն 1786, նոյեմբերի 22 օծաք սբ Թողոս եկեղեցին»։

Եկեղեցու մէջ բեմի ճակատին դրուած է մի գեղեցիկ խաչքար, ըստ ամենայնի, Լուսաւորչի բեմի խաչքարի մեծութեամբ և նմանութեամբ։ Նորա վերայ ժորագրուած է հետևեալլո։ «՚ի խաչս բարեխաւա և Խչտին Սառային եւ կուսին չունիսին եւ Կարապետին»։

Մի փոքրիկ խաչքար էլ որ հազգրած է արևմտեան դրան աշակողմը ներսից, ունի հետևեալ առանց որ և է արձանագրութեան հին թուականը։ «Բլ ՊֆԲ. (812—1363)։

Պրսից գաւթի մուտքի երկու կողմը պատի մէջ հազգրած է մի մարմարիոնեայ նուրբ խաչքար։ Թէկի—աջակողմեանի վերայ մենք կարդում ենք. «Բարեխաս են Եանես Տւեխենին Ակորին կողակցին անս իսր երջն տաս իսր ծնողացն պր Լուսին Շամ իսր Յովինանին եւ Սիմեօնին»։ Իսկ միւսի՝ ձախակողմեանի վերայ՝ «Կանգնեցաւ սբ Նուան խաչաց ՚ի բարեխօսութիւն երկրպագուաց թվին ողը (1098—1649) Յովինանիսի եւ իւր ծնողաց եւ կենակցի յիւսակի իր եւ ազանց Պուրաս կուլի սխիննի Թագումի։ Յիւսակարան տունս ոհ»։ Այս

եկեղեցին ունի Ս. Թէ՛ղութուս զօրավարի մասունքը, որ պահուում է մի արծաթեայ ոսկեզօծ զեղեցիկ տփի մէջ, և մի սրբութիւն, որ կոչուում է „Այ-Թողորու” այսինքն Ս. Թէ՛ղութուս։ „Այ-Թողորու” մի լեռ քար է, որ հազգրած է արևմտեան սիւնի մէջ և գոյացնուած է Ս. Նիկողայոսի Փրկչի պահարանի պէս մի ապակազարդ պահարան, որի մէջ դրուած են Ս. Թէ՛ղութուս զօրավարի ու Տիրամօր պատկերները և օրհնած ջուր։ Այ-Թողորու մի փոքր քառակուսի քար է, որի վերայ թէկ երեւրում են զանազան կոպիտ քանդակուածներ, բաց դժուար է որոշել, թէ իսկապէս ինչ են արտայացտուած գոռքա։ Թէ ինչու է այդ քարը յունական անուն կրում և ինչու են յարգանք մատուցանում գորան—դա մեզ յացտնի չէ. մենք միայն զիտենք, որ դա բերուած է Ղրիմից, պատկանել է „Քաֆայու” Ս. Թորոս“ եկեղեցուն և հէնց իւր տեղում էլ կոչուելու է եղել „Այ-Թողորու”, որից գուցէ, եկեղեցին էլ ստացել է իւր անունը։

Ըոհասարակ Նախիւնեանի գաղթականների մէջ էլ պահպանուել են քարապաշտութեան հետքեր, որ մենք յաճախ տեսնում ենք Հայաստանի զանազան գտաւուների հայերի մէջ։ Բացի Ս. Նիկողայոսի և Ս. Թորոսի բարերուց, Ս. Լուսաւորիչն էլ ունեցել է մի քառանկիւնաձև քար, որ կոշտուած է եղել „Ս. Թաղէոսի քար“ և անդութեամբ օծուած է համարուում եղել Ս. Թաղէոսի ձեռքով և բերուած Ծնիից Ղրիմ։ Այդ քարը, որի վերայ երկու ոտքի հետք է եղել և որին ժողովուրդը նոյնպէս ջերմեռանդութեամբ ուխտ է զալիս եղել, ունեցել է և մի յունական արձանագրութիւն, որ երբ կարդացուել ու թարգմանուել է, յացտնուել է, որ դա առաջ գրուած է եղել կամ մի հրապարակական տեղ և կամ Թէ՛ղուսիոյ Ապողոնի տաճարում։ Այժմ այդ քարը գտնուում է Պէտերբուրգի կայսերական թանգարաններից մէկում։ Բացի վերովիշեալ խաչքարերից, Ս. Թէ՛ղութուս ունի այլ ևս ինը մարմարունեաց հին խաչքար, որոնք այժմ պահուում են եկեղեցու բակում պահպանի տանը։ Պոքա դուրս են եղել գաւթի գաւթեայ յատակի տակ և պահել։

Այդ խաչքարերը, որոնք բոլորը ևս „ցիշատակ“ և „բարեխօս“ են զանազան բարեպաշտ անձանց, արժանի են ուշագրութեան իւրեանց թուականների հնութեամբ։ Յաւակի է միայն, որ մի քանիսի թուականները կամ կոտրուած են և կամ այնքան եղծուած են, որ դժուարընթեռնի են։

ա. Յիշատակ է սր նշանին Թագվորքա դպրին որդի Ղազարի եւ հօրն Միլրժի եւ տոհմին եւ Եղբայր Գրիգորին թվ...

Բ. (վերը կլոր ձևով) ՚ի ծովն ընկդմեալ Մարտիրոսի հոգւոյն: (ներքե) Բարեխօս է սր նշանիս Ծծառուրի բահանալին եւ ծնողացն նորին եւ կենակցին մեռն իւրոյ Վարդան եպիսկոպոսին եւ ամ զար-միցն թի ԹաճեԱ. (1121—1672.)

Դ. Յիշատակ է սր նշան Քս մդսի Աթափալի...

Դ. Սբ Եշանիս լիւատակ է Թիֆլիրի -Պիրմիշին եւ զար սորին
թվ Ճ. (910-1461):

Ե. Յիշատակ է սր նօամբս Աննա խարունին եւ Խազարին թվ ջիպ (926 - 1477):

զ Յիշատակ է սր նշանիս կմինին եւ իւր կողակցին Զապյուխն եւ իւր ծնողացն թվ. պղբ. (892 - 1443):

Ը. Յիշատակ է սբ Աւանի Տոլլյար խր...
Ժ. Բարեխոս է սբ Աւան Տ Սարգսին կողակցին Պարիամին
եւ Երիք զաւակա հնաւոր ավեն Թիին. (1128—1679.)

ԽՆԴՐԱԿԱՏԱՐ Ս. ԱՅՏՈՒՄՅԱՆԻՔԻ

Ս. Աստուածածինը կառուցուած է Ս. Նիկողայոսի և Ս. Թողոպահի մէջտեղը, քաղաքի հարաւային կողմում; Սա հիմնարկուել է Ս. Նիկողայոսի հետ միասին 1781 թուին, իսկ աւարտուել ու օծուել է աւելի ուշ, քան թէ Ս. Նիկողայոսը։ Այս մասին Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռագիր «Կաւաթարում», ասուած է, «Ի սմին թուող (1781) երկրորդ կիւրակիէն զինի հգւցալստենն արկաք դիմուն սբ Աստուածածին եկեղեցւոյն, մեծաւ յնձութեամբ և փառօք, և ՚ի սմին տեղուոց արկաք զիրան և մատուցաք զպատարագ և ձեռնադրեցաք զՊարտիրոս ՚ի քհնէ, եկին գուբեռնաթն Վասիլ Ալէքսէիչ Զերթկով և ամենայն մեծամեծքն ուստաց։ Սորա տեղում նախապէս շինուել է մի փայտեաց փոքրիկ եկեղեցի, որ և պէտքէ իսկապէս համարել նախիջևանի անդրանիկ եկեղեցին։ Յովսէփ արքեպիսկոպոսը, որովհետեւ դեռ քաղաքը, պաշտօնապէս չ'հիմնարկուած, ժամանել են զատկական տօները, չըկամենալով ժողովուրդն այդ մեծ տօներին անմիշիթ ար թողնել, ամենից առաջ և շուտափովթ շինել է այդ փոքրիկ շի-

Դոյն նախնի փայտեայ եկեղեցում է առաջին անգամ, եթէ ըհաշուենք վերոյիշեալ վրանում մատուցուածը, պատարագ մատուցուել նախիչեանում, դորա մէջ են օծուել միւս եկեղեցիների հիմնաքարերը, դորա մեջ են օծուել, վերջապէս, և նոյն խոկ քաղաքի հիմնաքարերը: Այդ մասին նոյն ձեռագիր՝ «Թաւթարում» մենք կարդում ենք: «Ի 1781 թուին և յանսեանն յապրիլի ՚ի նախիջևան քաղաքոցն նա՛ ապէս փայտեայ եկեղեցի մի շինեցաք. և ՚ի զատկին, որ էր տօն սր յարութեան Քի և յապրիլի 14, օճաք զնա, յանուն ամենաօրհնեալ Որ Աստուածածնին և անուանեցաք զնա Խնդրակատար Սր Աստուածածնին: Զի նախկին եկեղեցին աշխարհի, որ կառուցաւ Յեղեսեայ, ալսինքն ՚ի ՅՈՒՐԿԱՅ՝ ՚ի Թաղէոսէ Առաքելոց, էր յանուն սր Աստուածածնին: ՚ի սոյն թուոջ և ՚ի յապրիլի իսա, մատուցաք ՚ի սրմին եկեղեցւոց պատարագ, և օճաք զըորեսին հիման գ քարինսն քաղաքիս, յանուն չորից սրբոց Աւետարանչացն, և ՚ի նմին օր մեռնաթափ արարաք, և մեծափառ հանդիսիւ և ամ ժողովրդովք զգեստաւորեալք ամ եկեղեցական պատրաստութեամք. շրջապատեալ զբոյորքագագաւն, եղաք զհիմունս քաղաքիս ՚ի չորս կողմունս սորին՝ չորդաբուխ արտասաւոք և բերկրալից ցնծութեամք. և թափօրիւ անդաստան արարեալ օրհնեցաք գհող և զջուր բնակութեանս մերոց, խաչիւք, Աւետարանօք և սրբոց մասամբք, որք դոյն ՚ի ձեռս բոլոր քարդապէտացն և քահանացից:»

Ա. Սատուածախնն իւր շինութեան ոճով, իւր ներքին սարքու կարգով, բատ ամենայնի, նման է միւս եկեղեցիներին. միակ, զանազանութիւնը միայն այն է, որ սա, բացի մեծ զիսաւոր սեղանից, ունի այլ ևս երկու փոքրիկ սեղան, որոնք շինուած են ոչ մեծ սեղանի երկու կողմը, ինչպէս որ լինում է առհասարակ, այլ ցածը խոսանների առաջ — Ա. Ցարութեան և Յովակիմ Աննայի սեղաններ:

Եկեղեցու պատերը ներսից, ինչպէս միւս եկեղեցիներինը, զարդարուած են գեղեցիկ խաչքարերով, որոնցից մի քանիսի արձանագրութիւնները, խւզաներիկի հաստ շերտով ծածկուած լինելու պատճառով ոժքաղղաբար լաւ չեն կարդացուում:

Հայութեալ լաւ չ- է ր ի յ
Զախակողմեան գասի պատի մէջ հագրած մեծ խաչքարի վերաց
փորագրուած է. «Բարեխաւս և սբ նւանս Մինասին հոգւոյն եւ ծր-
նողացն եւ եղբացի»:

ՄԵԾ սեղանի աջ կողմը գտնուած խաչքարի վերաց կարդացւում
է. «Յիշատակ և սբ նուան Պետրոսին կողակցին....»:

Ս. Յարութեան սեղանի կէսը կոտրուած մարմարիոնեայ խաչքարի վերաց գրուած է. «Յիշ. Քուլամին հօր Մկրտի տաճին որդոյն Ստեփանոսին եւ...»:

Հիւսիսային և հարաւային դռների ճակատին մետաղեայ տախտակների վերաց գրուած է. «Եյս Երկարեալ փայտեալ դռուն եկեղեցւոյ սր Աստուածանայ ՚ի յիշատակ Նախիջեւանցի Մկրտիչ Տէր-Առաքելեան Աջմենաց ՚ի 1857թ.»:

Ս Աստուածանի հին գերեզմանոցում, որ բունում է եկեղեցու ընդարձակ բակի մի մեծ մասը, գտնուում են բարեգործ Յովհաննէս Մարկոսեան Պոպովի և Ստեփան Գէորգեան Նախալեանի գերեզմանները¹⁾:

Յովհաննէս Մարկոսեան Պոպովի շքեղ մահարձանն ունի հետեւալ արժանի ուշադրութեան տապանադիրը.

Կեանեիդ օրերը չինայելով,
Խնչեդ սասցուածեդ ազգիդ զոհելով,
Դու աղբիւր եղար ծարաւիներուն
Ու պատսպարսն կարօտեալներուն:
Ռյո՛, փառահեղ կեանեով չկեցար,
Բայց նախանձելի մահով հեռացար:
Զեն մոռանալ ենք որբ Նախիջեւանի,
Քանի որ նաղաս կայ յակատանի:

Այս եկեղեցին էլ ունի գրչադիր մատեաններ և երկու մասունք՝ սր Գէորգաց և «անչայտ», որոնք պահուում են խաչաձեւ շինուած արձաթեայ տուփերի մէջ:

Ս. ՀԱՅՐԵԱՐՃՈՒՄՆ.

Ս. Համբարձման եկեղեցին շինուած է քաղաքի հիւսիս-արևելեան անկիւնում: Սա հիմնարկուել է, ինչպէս մենք տեսանք Ս. Նիկողայոսի հիմնարկութեան մասին ձեռագիր «Դաւթարում» գրուած յիշատակարանից, նոյն իսկ Ս. Նիկողայոսի հետ միասին 1781 թուի Մայիսի 2-ին և աւարտուել ու օծուել է 1783 թուի օգոստոսի 27-ին, այսինքն մի քանի օրով առաջ, քան թէ Ս. Նիկողայոսը: Որ սա օծուել է Ս. Նիկողայոսից մի քանի օրով առաջ—այդ երեսում է «Դաւթարից», որի մէջ եկեղեցիների հիմնադիր Յովհէփ արքեպիսկո-

¹⁾ Յովհաննէս Պոպովի և Ստեփան Նախալեանը գումարներ են կտակել Նոր-Նախանձեանի աղքատների օգտին:

պոսն իւր ձեռքով զրել է. «՚ի սոյն թուոջս (1783.) և ՚ի յօդոստոսի 27: Օծաք զսր հմբրձում եկեղեցին: Եւ ՚ի սեպտեմբերի 10, օծաք զսր Նիկողայոս եկեղեցին»:

Այս այսպէս լինելով, մենք խկապէս չենք հասկանում, թէ ինչ հիման վերաց քաղաքում ընդունուած է, ինչպէս մենք էլ իւր տեղում նշանակեցինք, Ս. Նիկողայոսը «Նախահմ տաճար» համարելու, նորա յօբելեանն իրեւ քաղաքի ամենահին եկեղեցու հանդիսաւոր կերպով 1883 թուին տօնելու և նոյն ժամանակ ամենեին ուշադրութիւն չդարձնելու Ս. Համբարձման վերայ:

Եկեղեցու շինութեան ոճն ու միջի սարքն ու կարգը միևնոցն են, ինչոր մենք նկարագրած եկեղեցիներինը: Անախորժ տպաւորութիւն ուն անում հայ աղօթողների վերաց սորա քաղաթիւ պատկերների ուկեզօն ու արձաթազօջը, որոնք էժան տեսակից լինելով, իւրեանց անձաշակ կերտուածքով ու անբնական ցորուածքով մարդու աչք են խոտղեցնում: Նամանաւանդ տղեղ են դասի առաջ երկու կողմը քաշանաների կանգնելու տեղում կանգնեցրած պատկերները, որոնք հէնց մասնաւորապէս գրուած են երեւում քահանաների թիկունքը հաջկելու հանար, կարծես, եկեղեցու պաշտօնեաները մի գաղտնի բան ունէին անելու և նոցա անպատճառ հարկաւոր էր ծածկել, բաժանել ժողովրդից և այդպիսով տղեղացնել եկեղեցին:

Զարմանալին այն է, որ այս եկեղեցին նոր միայն հիմնովին վերանորոգել են, ուրեմն և միջոց են ունեցել ուշադրութիւն դարձվերանորոգել են, ուրեմն և միջոց են ունեցել ուշադրութիւն դարձվելու նորա ներքին սարք ու կարգի վերաց, հայկական ձև տաելու նորա ներքին սարքին սարք ու կարգի վերաց, հայկական միջոց նոր ճաշանակով բաժանուած կարուած լինելն արդէն իսկ ընկիւթից երկար ժամանակով բաժանուած կարուած լինելն արդէն իսկ առաջ է բերել գաղթականների մէջ նոր ճաշակ, նոր հասկացողութիւն ու գաղափար կեանքի մի քանի երեւոյթների մասին: Նոքա թիւն ու գաղափար կեանքի մի քանի երեւոյթների մասին: Նոքա օտարացել են շատ սեպհական յատկութիւններից և հայկական սարք ու կարգից և, ընդհակառակն, ընտելացել են լրեանց բնակած տեղի ու կարգից և, ընդհակառակն, ընտելացել են լրեանց բնակած տեղի ճաշակին, ոճին ու սարք ու կարգին: Գաղթականներին տարօրինակ թուում արդէն և՛ հայկական ոճը և՛ զանգակ հնչեցնելու սովորութիւնը և՛ հայկական կեանքի շատ առանձնայատկութիւնները:

Եւ գեռ եկեղեցու երէցիշանը և շինութեան հոգաբարձուները մի շքեղ մարմարիոնեաց տախտակ էլ են պատրաստել և վերան մեծա հնչիւն բառերով արձանագրել տաճարի շինութեան յիշատակարանը, որ պէտք է, ՚ի հարկէ, հազցնեն եկեղեցու պատերից մէկի մէջ աչքի ընկիւթեան տեղում և այդպիսով յաւերժացնեն իւրեանց անունները:

Ս. Համբարձման համեմատաբար աւելի քիչ խաչքար ունի իւր պատերի մէջ, քան թէ միւսները: Սորա միակ աչքի ընկնելու խաչքարի մէջ, քան թէ միւսները: Սորա միակ աչքի ընկնելու խաչ-

քարը բեմի ճակատինն է, որի վերայ փորագրուած է. (Տալլը) «Կանգնեցաւ սր նշան Քսի բարեխաւս և Թ. թի Մուղախն: . . . (վերը) «թվ պար (888—1439): (Մէջտեղը) «Կարապետին»:

Աւազանի տակ մարմարիոնեայ քարի վերայ փորագրուած է. «Յիշատակ և սր աւազան սր համբարձման ժամին Խուսիւար օդուն Բարսեղին հօր Գրիգորին եւ մօր Մարտինին հոգուն թվ 1799 դեկտեմբերի 13-ին»:

Թրսից արևելեան պատի մէջ բարձրում հագցրած մարմարիոնի վերայ դրուած է. «Ճնորհիւ եւ ողորմութեամբ Ամենազօրին Սսուծոյ կանգնեալ կառուցաւ Սբ. Համբարձման եկեղեցւոյ Ա. Խորանն ար դեամբ եւ ծախիւք ծորպարոնեան սր Խաչառուր Մատքոսովին հանդերձ կենակցիւ եւ ծնօղիւս ՚ի փառս միոյն Ածոյն ՚ի գովես եւ ՚ի պատի նորին: Երդ որք հոնդիպիի և լնիքեռնում զայս մատեան եւ եր լիւեցիւ եւ դուք լիշիք լիւեալ Ածոյն յատեան Փրկչին ամենայնի թվ 1799 ին ՚ի Նոր-Նախիջեւան ՚ի յառաջնորդութեան տեառն Յովսիկայ ածարեալ եւ պասկազգեաց առամելաւաւիդ սրբազն արևիսկակոպոսին եւ ծայրագոյն նույրակին սրոյ արոռոյ Միածնայ իջի»:

Ս. Համբարձումն էլ ունի ընդարձակ բակ, որի մի մասը բոնում է հին գերեզմանոցը, միւսն երկասեան ծխական դպրոցի նորակառոց ընդարձակ շինութիւնը, իսկ երրորդ մասը հրապարակ է եկեղեցւու առաջ: Հին գերեզմանոցումն են թաղուած քաղաքիս «Գոգոչեան հայ օրիորդաց դպրոցի» հիմնադիր յայտնի Մկրտիչ Գոգոչեանը և նորա կինը «Հաճի մամա», Սրբուհի Գոգոչեանը:

Գոգոչեան Մկրտչի թէև գեղեցիկ, բաց այժմ արդէն հնայած ու չորս կողմից կոտրուուած շիրմի մէջ հագցրած մարմարիոնեայ տախտակի վերայ մենք կարդում ենք. «Սսանուր ամինովին ոսկերք նորոյն նախիջեւանայ առաջին կարգի պատուիի հաղաքացոյ Մկրտչի կոկոյեան, ծնելոյ ՚ի 1797 ամի եւ դարձելոյ յասուած ՚ի 68 տամաց հասակի խրում: Ռւսուննարանն ու կտակաւանդեցաւ յերջանիկ հանդուցելոյն կանգնել ՚ի սեփական ծախս իւր փառն կրուքեան չը բաւոր օրիորդացն հայոց բաղակիս բարեզործ կենոց նորին լիւատակ յաւերժական եւ փառաւոր կացցե ապագայից 27 Յուլիսի 1866 թուին»:

Այս եկեղեցին էլ ունի ձեռագիր մատեաններ, Արխմից բերած հին եկեղեցական սպասներ և մասունքներ — Պ. Մինաս Եղիպատացւոյ, Ս. Օգսենտիս Հայրապետի և կենաց փայտի: Առքա ներխակուած են արձաթեայ խաչերի մէջ և նուիրուած են եկեղեցուն առաջինը ու ճի թուին, երկրորդը 1890-ին և երրորդը ուժեւին: Այս վերջինն ականակուու է և ցիշատակ է ոմն Ոնոփրիոս վարդապետի:

Առաջին հայր բարձրուած է առևմտեան կողմը Դօնի ավին, քաղաքից դուրս, Ուստուովի ճանապարհի վերայ: Նա հիմնարկուել է 1783 թուին և աւարտուել ու օծուել է 1787 թուին: Արսաւ հիմնարկուել է 1783 թուին — այդ երեսում է ձեռագիր «Գաւթարից», որի մէջ այդ մասին գրուած է. «՚ի սոյն թուոցս (1783), ՚ի 10, կիւրակէն արկաք գիմն սր Գէորգի»: իսկ որ նա օծուել է 1787 թուին — այդ էլ երեսում է դարձեալ նոյն «Դաւթարից», որի մէջ ասուած է. «Թիւն 1787, Դեկտեմբերի 5, օծաք զսր Գէորգ եկեղեցին. Դոխուր բերեալ անօթն իւր, ետուք իւրեան»:

Այս եկեղեցին էլ, որ չնայելով, որ մէկ անգամ նորոգուել է 1853 թուին, միս անգամ էլ հիմնովին վերաշինուել է նոր միայն, 1892 թուին, դարձեալ պահպանել է շինութեան նոյն ոճն ու նոյն ներքին սարքն ու կարգը, որ յատուկ է նախիջեանի բոլոր եկեղեցիներին: Միակ զանազանութիւնը կարելի է համարել այն, որ սորա հարաւ այն դրան առաջ էլ կառուցուած է մի զաւթանման փոքրիկ շինութիւնն, մուտաքը ցրտից ու քամուց պահպանելու համար, որովհետեւ այդ դրնից է լինում զլիսաւրապէս եկեղեցու ելն ու մուտքը:


Սա ունի բազմաթիւ խաչքարեր, բաց գերազգաբար նոցա վերայ փորագրուած արձանագրութիւնները չեն կարգացուում, որովհետև նոքա իւղանների հաստ շերտով ծածկուած են: Այդ խաչքարերի մէջ իւր մէծութեամբ և քանդակների նրբութեամբ առանձին կերպով աչքի է ընկնում մէկը, որ հագցրած է հարսւալին դրան ձախ կողմը դրսից: Պորա վերայ կարգացուում է. Կանգնեցաւ սր նշան ՚ի բարեխոսութիւն միդսի Յովհաննիսին եւ կենակցին... Պիքային ուղոցն Գրիգորին, Սեւիաննուին եւ Մինուսին դաւաւայն Խասպիքային եւ Պահարին եւ Հանի մօրն եւ Զինիրին եւ ամենայն գարմիցն բուին Թձլէ (1135—1686) Զեռամբ Սարգիս վարպետի»:

Բարեբազդաբար սորա հին ոսկեզօծ և արծաթազօծ շրջանակներով պատկերները վերաշինութեան ժամանակ առնուած են և տեղերը բուուած են կարմիր ընկուզենուց կերտած շրջանակներով նոր պատկրուած են կարմիր ընկուզենուց կերտած շրջանակներով նոր պատկերներ որոնք իւրեանց պարզութեամբ մի առանձին գեղեցիութիւն են տալիս եկեղեցուն: Արժանի է ուշագրութեան նամանաւանդ Աէորդ Դաւթեան Զեսլիեանի նուիրած Պ. Գէորգալ մեծ շքեղ պատկր, որի տակը մասին պատկր է եկեղեցու զլիսաւր սրբութիւնը — Ս. Գէորգ զօրավարի մասունքը: Այդ մասունքը ներփակուած է մի ճաճանչաւոր ար-

ծաթեայ տուրի մէջ, որի վերաց գրուած է հետևեալ կարճ յիշատակարանը. «Յիշատակ միսակ Ստեփանի Գենցեցեան 1849 ի սկ Գեղարդ. Նախիջեւան»:

Բացի Ս. Գէորգաց մասունքից, Ս. Գէորգն ունի այլ ևս մի սրբութիւն—«Ս. Գէորգաց թոփուզը», որ դորձ է դրուում նոյն նպատակի համար, որի համար գործ է դրուում և Ս. Նիկողայոսինը:

Ս. Գէորգն էլ ունի ձեռագիր մատեաններ և Ղրիմից բերուած մի քանի խաչեր, որոնք շինուած ու նուիրուած են եկեղեցուն ոճաւա, ոճէ, ոչդ և ոչե չայոց թուականներին:



Ս. ԳԵՕՐԳՆԵԱՆ

Եկեղեցու պահարանում պահուում է և մի պղնձեայ տախտակ, որի վերաց արձանագրուած է եկեղեցու վերոցիշեալ 53 թուի վերանորոգութեան հետեւալ յիշատակարանը. «Վերանորոգեցաւ տանսար յանուն սրբոն Գեղարդայ զրավարին արդեամբ եւ ծախուել Նոր-Նախիջեւանայ երկրորդ կարգի հայկազուն վանառականի Մատքեսի Խաչատրեան Երեցիութեանի առն ածասիրի եւ բարեպատի յամի Տեառն 1853 եւ մերոյս ազգականի ոլք. ՚ի հայրապետութեան ամենայ չայոց տեառն Ներսիսի ածրենիր կարուղիկոսի յառաջնորդութեան ուռասաբնակ չայոց տեառն Մատքեսի արեալիկոսի:

Ս. ԿԱՐԱՊԵՏԸ.

Ս. Կարապետը կոչուում է «Հանգստարանի եկեղեցի», որովհետև շինուած է քաղաքի հիւսիսային կողմը շինութիւններից գուրս գըտնուած «Ս. Լուսաւորչի հանգստարանում»: Նախիջևանի բոլոր եկեղեցիներն էլ ունին իւրեանց առանձին հանգստարաններն անմիջապէս իւրեանց բակերում, միայն Ս. Լուսաւորիչն է, որ իւր բակում հանգստարան չունին, և Ս. Թորոսն ու Համբարձումն, որոնք, բացի իւրեանց բակերում ունեցած հանգստարաններից, ունին և մի առանձին հանգստարան դարձեալ քաղաքի հիւսիսային կողմում, շինութիւններից գուրս: Ս. Լուսաւորչի հանգստարանն այժմ համարուում է քաղաքի ընդհանուր հանգստարան, որովհետև եկեղեցիների բակերում գտնուած հին գերեզմանոցներում արգելուած է մեռեալ թաղելու, իսկ Ս. Համբարձման և Ս. Թորոսի գերեզմանոցում, նորա իւր մէջ եկեղեցի չունենալու և անբարեկարգ վիճակի մէջ գտնուելու պատճառով, թաղուում են միայն այդ եկեղեցիների չքաւոր ծխականները:

Ս. Կարապետի փոքրիկ գողտրիկ շինութիւնը, միակն է քաղաքի բոլոր եկեղեցիների մէջ, որ կառուցուած է հայկական ոճով, ինչպէս որ միակն է իւր շինութեան հայկական ոճով գիւղերի բոլոր եկեղեցիների մէջ Թոփտիկ Ս. Փրկիչը:

Փա հիմնարկուած է 1865 թուին և օծուած է 1881 թուի Յունիսի 11-ին հանգուցեալ տիկին Սկիւլինէ Պօղոսեան Ալաճաւեանի Տաղեալ Սաղոնով ճարտարապետի քաշած յատակագծով և հանգուցեալ տիկնոջ ազգական Յովհաննէս Խաթրանեանի անմիջական հըս կողութեամբ: Այդ մասին եկեղեցու բեմի ճակատին դրած մարմարիոնեայ տախտակի վերաց մենք կարդում ենք. «Եկեղեցիս սրբոց Յովհաննու-Մկրտչի հիմնեալ ՚ի 1875 եւ օծեալ ՚ի 11 Յունիսի 1881 ամի Աղքատանոցաւ եւ Հոգետամբ հանդերձ կառուցաւ կտակաւնդուրեամբ եւ ծախուել Ազնուի Ակլիլինեայ Պօղոսեան Ալաճաւեանց ՚ի հանգստանիս հայոց Նոր-Նախիջեւանայ»:

Ս. Կարապետն աղիւսակերտ է, դրսից անծեփ, իսկ ներսից ծեփած ու սպիտակացրած պատերով. նա ունի երեք դուռն՝ հարաւային, հիւսիսային և արևմտեան և մողակի յատակ: Պորա միջի սարքն ու կարգը միւս եկեղեցիների նման է. ունի դարձեալ մի սեղան մեծ և կարգը միւս եկեղեցիների նման է. ունի դարձեալ մի սեղան մեծ և փոքր վարագոցըներով, երկու կողմը մի մի խորան և վերնատուն: Այս եկեղեցին զանազանուում է քաղաքի միւս եկեղեցիներից իւր հայկական եկեղեցիներին յատուկ պարզութեամբ: Սա չունի ոչ ոսկեզօծ և կան եկեղեցիներին յատուկ պարզութեամբ: Սա չունի ոչ ոսկեզօծ և ոչ արձաթապատ պատկերներ. սորա խաչկալը և խորանների դռները՝ կեր-

տուած են մաքուր ընկուզենուց և ունին նուրբ և ճաշակով ձեաց. քանդակներ, խոկ պատկերները պարզ իւղաներկ նկարներ են, որոնք ուղղակի քաշուած են պատերի վերայ:

Եկեղեցու հիմնադիր տիկնոջ մարմինն ամփոփուած է Եկեղեցու հարաւ-արեւելեան անկիւնում դրսից: Հանգուցեալի վերայ կանդնեցրած է մարմարիոնեայ մեծագին շքեղ շիրիմ հայկական վեղարածւ կաթուզիկ ձևով և հայկական զարդերով, նկարներով ու քանդակներով: Ճիրլմի մի երեսի վերայ ոսկէտառերով փորագրուած է „Աս հանզի



Թ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ ԵՒ ՏՈՒՆԸ

մարմին ազելի տիկնոջ Ակիւլինեայ Պօղոսեան Արանալեան որ ՚ի տիմէ Խարբանեան վախճանելոյ Յ սեպ 1871 ամի ՚ի հասակի 62 ամաց”, խոկ միւս երեսի վերայ — «Ճինուածն Եկեղեցւոյ Ս. Յովհաննու Կարապետի հոգետան եւ աղքատանոցի նորին կանգնեցաւ բա կրտակի հանգուցեալ տիկնոջն Ակիւլեայ Ալանալեան աշխատութեամբ եղբօրուդոյ նորա Յովհաննու Խարբանեան 1875—81»:

Եկեղեցու բակը — Ս. Լուսաւորիչ հանգստարանը պահուում է

բարեկարգ վիճակի մէջ: Նորա ընդարձակ տարածութիւնը շրջապատուած է աղիւսակերտ պարիսպներով, միջից ամեն կողմից ծառուղիներ են անցկացրած և ննջեցեալների գերեզմանները փորուում են կարգով ծառուղիների երկարութեամբ «երամ-երամ», այսինքն իւրաքանչյւը ընտանիքի կամ տոհմի գերեզմանները մի տեղ փայտեաց կամ երկաթեաց վանդակապատների մէջ: Եյս գերեզմանոցումն են թաղուած բարեկործ Գասպար Մարկոսեան Պապովը և Նիկողայոս Աջեմեանը¹⁾, որոնց վերայ դրուած են և վայելուչ շիրիմներ: Արժանի է ուշադրութեան նամանաւանդ Աջեմեանի շիրիմը, որ իսկապէս շիրիմ էլ չէ, այլ մի շատ շքեղ կոթողաձեւ մահարձան, որի պատուանդանը ցղած ու ապակու պէս փայլեցրած որձաքար է, միջին մասը մեծագին սև մարմարիոն, վերին մասը սպիտակ մաքուր մարմարիոն, հանգուցւալի նրբաքանդակ պատկերով: Սև մարմարիոնի մէջ հազցրած է մի սպիտակ մամարիոնեայ տախտակ, որի վերայ ոսկէ տառերով փորագրուած է. «Բարեգործ Նիկողայոս Անեմեան 1±18 Ապրիլի 17 1888 Յուլիսի 10»:

Հանգստարանի արեւելեան կողմը կառուցուած են Եկեղեցու արձանագրութեան և հանգուցեալ Ակիւլինէի տապանագրի մէջ լիշուած Աղքատանոցի և Հոգետան փոքրիկ շինութիւնները և քաղաքիս «Հայոց Եկեղեցական Հոգաբարձութեան» Անկելանոցի ընդարձակ և փառաւոր շինութիւնը, որի մէջ խնամուում են վաթուունի չափ աղքատներ, տնանկներ և անկելաներ:


Ս. Կարապետը նորաշէն լինելու պատճառով չունի ոչ ձեռագիր և ոչ հին Եկեղեցտիկան սպասներ. Նա ունի միայն մի սրբութիւն Ս. Կարապետի մասունքը, որ ընծայել է նորան Ս. Լուսաւորիչ Եկեղեցին: Դա պահուում է մի եւ եսը ապակի քաշած արձաթեաց տուփի մէջ, որի շրջանակի վերայ գրուած է. «Յիշատակ է սր խաչ պարամին ծնողացն հոգուն ՚ի դուռն... մասն Ս. Կարապետին է. բին ոնիր»:

Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ.

Ս. Խաչ վանքը շինուած է քաղաքից եօթ վերստ հեռու գէպի հիւսիս մի բարձր ձորաբաշի վերայ, որի տակից, ձորի միջով, հոսուածնում են Ս. Խաչի բարեհամ աղբիւրի սառնորակ ջրերը: Եց վանքն +

1) Հանգուցեալ Նիկողայոս Անեմեանը իւր բոլոր կարողութիւնը կտակել է Նոր Նախիչեանում տեխնիքական դպրոց շինելու ու պահելու համար: Խոկ Գասպար Պօպով մի տուն է թողել Ոռոսապուամ Նոր-Նախիչեանից պատանիների Ոռոսաստանի և արտասահմանի բարձրագոյն դպրոցներում կըթութիւն ստանալու համար:


Էլ եկեղեցիների հետ միասին հիմնարկել է Յովսէփի արքեպիսկոպոսը 1783 թուին, շինութիւնն առաջ է տարել 1786 թուին և աւարտել ու օծել է 1792-ին. Որ դա հիմնարկուել է 1783 թուին—այդ երեսում է ձեռագիր «Դաւթարից», որի մէջ այդ մասին գրուած է. „Ընդ սմին, այսինքն Ս. Կոստորյի հիմնարկութեան հետ միասին (1783 թ.), օծաք զիմունս վանիցն, որ յանուն Փրկչին և Ս. Խաչին։ Խոկ որ դորա շինութիւնը սկսուել և առաջ է տարուել 1786 թուին—այդ էլ երեսում է դարձեալ նոյն ձեռագիր «Դաւթարից», որի մէջ



Ս. Խ. Ձ.

ասուած է. «1786 յունիսի 21.՝ ՚ի սր. Կուսաւորչու բարեկնարան կիւրակէին վերոյ Փրկիչ եւ կամ սր Խաչ վանից հիմն արկի, և շինութեան սկիզբն առնել ետու. Ա. Հասուսցէ ՚ի կատարումն, որ ահա դեղերիմ ՚ի կատար հասուցանել»։ Վանքի շինութիւնն աւարտելու և օծելու 1792 թուականը մենք գտնում ենք տաճարի այժմուայ շինութեան հարաւային դրան ձախ կողմը դրսից պատի մէջ հաղցրած

մարմարիտնեաց տախտակի վերաց փորագրած հետեւեալ արձանագրութեան մէջ. «Ճնորհօնն Շնոյ կառուցի զուուրբ խաչ վանիս եւ հաստատեցի անս զբարոց եւ զտպարան և Խանամնեցի Երկուրեանց Ջուօբէզի



Ո. ՊԱՇՆԱՅԵԱՆԻ ԿԱԲԵՆԵՏԻ

որդի եւ սր Կշմիածնայ նուիրակ եւ Թուսաց Երկրի Հայոցս ազգի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս ի կայսուրեան ամենայն Թուսաց Եկատարինե Ալեքսեյին Երկրու դի եւ ՚ի հայրապետուրեան ամենայն

Հայոց Տեառն Ղուկասու կարուղիկոսին աշխատութեամբ հոգեւոր որդույն իմոյ Բայազետցի Կարապէս վարդապէտին յամի Տեառն 1791 եւ ՚ի Հայոց բուին ումիս ՚ի սեպտեմբերի: Օծաւ 1792 նոյեմբերի 27: Եցս արձանագրութեան մէջ, ինչպէս կարելի է տեսնել վանքի օծման թուականն երկու տեսակ է նշանակուած՝ «Օծեալ եղաւ յամի Տեառն 1791 և ՚ի Հայոց թուին ոմիս ՚ի սեպտեմբերի» և «Օծաւ ՚ի 1791 նոյեմբերի 27: Թէև բուն արձանագրութեան մէջ յիշուած է 1791 թուականը, իսկ «Օծաւ 1792 նոյեմբերի 27» բառերը փորագրուած են մարմարինի շուրթի վերաց, բաց մենք այդ վերջինն աւելի ճիշդ ենք համարում, որովհետեւ վանքն օծուել է Գրիգորոսով քաղաքի հիմնարկութիւնից յետոց, որ, ինչպէս յայտնի է, եղել է 1792 թուին:

Մեզ յացտնի չէ, թէ ինչ ոճով է կառուցուած եղել տաճարի հին շինութիւնը, որովհետեւ դա հիմնովին վերաշնուրել է 1862 թուին Գաբրիէլ վարդապէտ Ացվագեանի առաջնորդութեան և Մկրտիչ վարդապէտ Յովակիմեանի վանահայրութեան օրերով Գէորգ Խաթրանեանի և Ալէքսան Ալաշալեանի աշխատութեամբ, բաց ներկայ շինութիւնը հայկական ճարտարապետութեան և ոչ մի նշոց չունի: Դա իւր գմբէթի լայն-բոլորշի ձեռով, հարաւային և հիւսիսային դռների սիւնազարդով աւելի հին բիւզանդական ոճն է յիշեցնում, թէև այդ ոճն էլ շինութեան մէջ լիովին պահպանուած չէ: Տաճարը թէև վերաշնութեան ժամանակ մի փոքր մեծացրած է, բաց դարձեալ մեծ չէ: Նորա երկանութիւնը՝ սեղանից մինչև արևմտեան դռուը 28 քայլ է, իսկ լայնութիւնը՝ հիւսիսային դռնից մինչև հարաւայինը 20 քայլ: Արևմտեան դրան առաջ շինուած է զանգակատունը, մի շինութիւն, որ, բացի նորանից, որ շատ անշնորհ ու տգեղ է, այլ և իւր սրածայր աշտարականման ձեռով ամենսին չի համապատասխանում եկեղեցու շինութեան ընդհանուր ոճին, որ բաւականին վայելուչ ու գողտըիլ է:

Տաճարի պատերի մէջ դրսից և ներսից զետեղած են բազմաթիւ խաչքարեր, որոնք բոլորը ևս արձանագրութիւն ունին: Արժանի են ուշագրութեան զիխաւորապէս դրսի խաչքարերը, որովհետեւ գոքա աւելի խոշոր են, աւելի նուրբ քանդակներ ու ընդարձակ արձանագրութիւններ ունին, քան թէ ներսիններն, որոնց համառօտ արձանագրութիւններն էլ ներկուած լինելու պատճառով համարեա թէ չեն կարդացուում:


Դրսի որձաքար և մարմարինեաց խաչքարերի վերաց մենք կարդում ենք.

ա. Սբ Խաչս բարեխոս է Պիտրային եւ հայրն Սարգսին եւ եղ-

բարցն Յովհաննեսին եւ Վարդերեախն թվ. զիթ (972—1523.) Սեպտեմբերի իւն:

բ. Սբ Նշանիս բարեխոս է: է Բլեին, կենակցին սովին Չամբէնն եւ ծնողացն Սահակի Ղում խրին թվ. զիթ (902—1453.):

գ. Սբ Նշանիս բարեխոս է: և ծատրին Նուրատին համակորին կողակցին Գուլասէ խրնին թվ. զիթ (926—1477.):



Մ. ՆԱԽԻՃԵԽԵԼ.

դ. Սբ Նշանիս բարեխոս է Յովին սենեսին ընտեռ խրին եւ ծնողացն Վարդերին մարին Մարքային թվ. զիթ (907—1458.):

ե. Յս Քս. թվ. ոնկա (1161—1712.): եւ ծնողին Սուսել մինի Մինաս մուրատ կանգցա Սբ Գեորգա տես վրակց մինի ալսէթեր պալի մինի Գրիգոր մինի Սողոմոն:

զ. Յեկ սբ. խաչու Տրդի մինի Փանոսին ծննդացը հունիսի թիվին ո.թիւ (1161—1712.):

է. Սբ. Նեանի բարեխոս և նահատակի պ. Գորգին թ ջձ (983—1434):

լ. Սբ. Ն. ան բարեխոս և Գրահամայ մելիքին Սարգսին մայրին լուսին ավագ պր. ին թիվ պիլը (868—1449):

թ. Յեկ սբ. Նեանի Յովհանն աբեղին և իւր եղբաւը Միմեն կրօնութիմ և ծննդաց իւրոց թիվ պղ. 80—1441):

ժ. Բարեխոս են Սբ. Նեանի Ասլի տիկին Առոլիան խրին և որդուն Ծուակելին թ. ջիր (922—1483):

Ժ. Յիշեփի Սբ. Նեանի Տրդի տիկին և գաւակացն ացն Տրդի տիկին մանուկին ձեռամբ պրնին թ. ո.թիւ (1153—1704):

Ժ. Բարեխոս և Սբ. Նեանի Նընն Երիցուն Յովհաննեսին տրապային և լուսպիհային թիվ ջր. ցր. (909—1460):

Ժ. Բարեխոս են Սբ. Նեանի Էծատին Երիցինոց գերին խր. էտիլ թիվ ջիր (929—1480):

Վանքի բակը, որ երեք կողմից շրջապատուած է պարիսպներով, խոկ մի կողմից վանդակապատով, ունի իւր մէջ, բացի եկեղեցուց, և վանահօր բնակարանը և նստակին «Ժառանգաւորաց դպրոցի» լնդարձակ շինութիւնը որի սենեակները ներկացումն փարձու են տրուում քաղաքից ամառանոց եկողներին:

Վանքի հիւսիս-արևելեան կողմն ընկնում է Ս. Խաչի աղարակը՝ «վանքի լսուարը» 30 տուն հայ ժողովրդով, որ համարում է բաղաքի մասը և որի բնակիչները ծշակում են վանքին պատկանած ՅՇՈ օրավար հողի մի մասը, ամարանոցի են տալիս իւրեանց բնակարանները և զանալսն մանր պարսկուուն բներով՝ հաղիւ-հազ հայի հաթում են իւրեանց աւուր պարէնը: Խոկ հիւսիսացին կողմն ընկնում են վանքի ձորը, բանջարանոցը և գեղեցիկ պարտէզը, որոնք միանում են վանքի հետ ձորի վերաց ձգուած փայտեաց կամրջով և բարձր բաղմաստիճան սանդղով:

Ըստնամեծ սրբութիւնը վանքի մէջ, որ և Տառացել է իւրին հիմք շինութեան և անուանակոչութեան, համարում է այն մեծ խաչքարը, որ այժմուայ շինութեան մէջ տեղաւորուած է աւագ գասի սիւնի մէջ գէպի ժողովրդի կամդնելու տեղը: Թէև այդ քարը ոչ մի արձանագրութիւն չունի, բաց ՚ի նկատի տանելով նորա յատկութիւնը և նորա վերաց քանդարուած խաչի ձեր, կարելի է ենթադրել, որ նա շատ հին է և գուցէ, հենց բերուած լինի հայատանից: Այժմ այդ խաչքարն առնուած է ոսկզօն ապակիածածկ շրջանակի մէջ և դոցայնում է մի փոքրիկ պահարան, որի մէջ դրուած է երկու ուրիշ խաչ՝ մէկը

պղնձէ մեծ՝ առանց մասունքի, խոկ միւսն արծաթէ՝ փոքր անչայտ մասունքով, որոնք մի անունով քարէ խաչի հետ կոչուում են «Ս. Խաչ»:

Վանքի պահարանում պահուում են մի քանի հին ձեռագիր, Յովհէփի արքեպիսկոպոս Արդութեանի և Յարութիւն վարդապետ Ալամդարեանի մեծաղիր հին պատկերները և մի երկաթեայ երկպլաստի հասար սկ գաւագան, որ աւանդութեամբ ասում են, թէ պատկանել է Ալամդարեանին:

Եկեղեցու պատկերների մէջ արժանի են ուշագրութեան հոգեգալատի մեծաղիր շքեղ ոսկեզօն շրջանակի մէջ առաջ պատկերը, որ նկարել է Երուսաղէմի նուիրակ Պամբրէ վարդապետ Պարիսսեանը և շրջանակի մէջ առել ու նուիրել է եկեղեցուն քաղաքի հայոց Բարեգործական



Մ. ՆԵՐԱԿԱՆԳԵՆՆԻ ՏՈՒՆԸ

ընկերութիւնը՝ իւր քսանամեակի առթիւ, և Ս. Աստուածածնի վերափոխման և Տրդատի մլրտութեան պատկերները, որոնք ինչպէս երեւում է նոյա նկարի ու գոյների նրբութիւնից, ճարտար արուեստագլուխի վրձնի արդիւնք են: Տրդատի մլրտութեան պատկերը, որի վերաց նկարուած են Ս. Կուսաւորչի, նորա շարչարանքի ու Տրդատի պատկերները, նկարուած է Խոտիկայում: Նա ունի հետեւեալ իտալերէն և հայերէն լեզուներով գրած ցիշատակարանը, «Scuola di S. Gregorio Illuminatore della Naziona Armena 1692». Ա՞վ Սբ. Կուսաւորչի Գրիգորիէ մազրեա՛ վասն ատապելեաց եւ մանաւանդ վահանաց հայոց որք ուխտեալ եւ եղբարացեալ գոլով ետուն սպել գտիալ հրաւալի շարչարանաց եց ընդ հովանեսաւ սբյ եկեղեցւոյն որ

յանուն երեւման Խաչին կայ շինեալ՝ ՚ի տեղոցն Վենետիկոյ ՚ի մեր քուղան ո. ճիսաւ։ Այս պատկերի հին օրինակը նորոգել տալով, նույիրել են վանքին Գէորգ և Յարութիւն Խաթրանեանները 1836 թ.

Վանքի բազում թաղուած են Միքայէլ Նալբանդեանցը, Թափա- յէլ Պատկանեանցը, Յարութիւն վարդապէտ Ալամդարեանցը, բարե- գործ Գէորգ Տիգրանեանը, Կիւրեղ Եպիսկոպոս Սրապեանը և միւսները։

Կիւրեղ Եպիսկոպոսի վերայ ձգուած մարմարինեայ գերեզմանա- քարի վերայ փորագրուած է վեհափառ Հայրիկի գրած հետեւալ տա- պանագիլը։

Հանգիր, ով ժիր մշակ,

Վաստակեալ ՚ի հունձս աւետարանի.

Երուսաղէմի մայր Սիօնի ծաղիկ,

Նույիրեցար Եջմիածնի լուսակերտ Սիօնի.

Այ աւաղ դու վազաժամ թառամեցար,

Եւ լոեց քարոզչիդ մշտախօս բարբառ.

Ով դու սիրելի վարդապէտ ժողովրդեան,

Եկիր ՚ի վերջոյ նորա գիրկ հանգեցար.

Նորոյ Նախիջևանի պատուական ազգայինք

Եղին զայս մահարձան ՚ի վերայ գերեզմանիդ.

Որ յօդեաց զանեղծ արձանագիրս

Առ ՚ի պահել զանուանդ վլշատակ,

Ելաց ՚ի վերայ նրժղեհ շիրիմիդ

Հայոց վշտակիր Հայրիկ։

Ծերունի Նախիջևանցիք պատմում են, թէ առաջները վանքում պահուում է եղել մի տախտակեայ դուռն, որ աւանդութեամբ բերուած է համարուում եղել Ռնիլից։ Վանքի միաբանները գորան իբրև մի անպէտք բան միշտ ձիւնի ու անձրեւի տակ պահելով և գործ ա- ծելով իբրև թէցի սեղան, աղտոտել, քերել և, վերջիվերջոյ ոչնչացրել են։


Վանքի բանջարանոցի սահմանումն է գտնուում «Սաղիս-Սու» կոչուած սուրբ աղբիւրը, որի տեղը այժմ տափարակ է, իսկ աղբիւրի վերայ շինուած է մի մատուածե շինութիւն, որի մէջ դրուած պատ- կերների առաջ ուխտաւորները մոմ են վառում ու աղօթում։

Նախիջևանի գիւղերն ունեն մի մի եկեղեցի, բացի Թոփտիից, որ ունի երկու եկեղեցի, և Եկատերինաւանից, որ եկեղեցի չունի, այ մատուու-աղօթատուն վէմ-քարով։

Մեծ-Սալայի եկեղեցին է Ս. Աստուածածինը, Փոքր կամ Սուլթան- Սալային-Ս. Գէորգը, Զալթիրինը -Ս. Համբարձումը, Նիսութայինը-

-Ս. Կարապետը, Թոփտիինը—Ս. Սարգիսը և Ս. Փրկիչը և Եկատե- րինաւանինը—Ս. Յարութիւնը։

Եյս բոլոր եկեղեցիները թէ իւրեանց շինութեան ոճով և թէ ներքին սարդ ու կարգով, ըստ ամենայնի, նման են քաղաքի եկեղե- ցիներին, բացի նորշէն Ս. Փրկչից, որ շինուած է հայկական ճարտա- րապետութեամբ ու ոճով։



Մ. ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՃԻՐԻՄԸ Ս. ԽՈՀ ՎԱՐԵՐՈՒՄ

ԺԵՍԵԲ ԵԻ ՍՈՎՈՒԹԻՄԻ ԻԻՆՆԵԲ

Հարսնախօսութիւն եւ նշանդրէք

Հարսանիքները, կամ, ինչպէս ինքեանք Նախիջևանցիք ասում են, «Հարսնիքները», ինչպէս ամեն տեղ, Նախիջևանումն էլ սկսուում են աշնանը և շարունակուում են մինչև Մեծ-պասը, երբ գիւղացիք վերջացնում են իւրեանց դաշտային աշխատանքները, իսկ քաղաքացիք վերադառնում են ամսուանոցներից և սկսում են իւրեանց կեանքի աշնան և ձմեռուան սեզոնները:

Հարսնախօսութիւնը սովորաբար լինում է կամ տղայի ու աղջկալ աղգականների ձեռքով, կամ քահանաների միջնորդութեամբ և կամ առանձին հարսնախօսների ձեռքով, որոնք կոչում են «Գիբրոնչի»: Աղջկիկ հաւանելու ու ուղելու գործում, բացի աղջկալ տեսքից ու գեղեցկութիւնից, մեծ դեր է խաղում և աղջկալ վերայ եղած փողն ու բաժինքը, կամ, ինչպէս ասում են, «Ճըհէ զը»:

Նախիջևանում կապուած պակները մեծաւ մասամբ հաշուի ու գործնական դիտումների արդիւնք են: Ամուսնութեամբ ինտելիգենտ մարդիկ կեանքի ապահովութիւն են ձեռք բերում, վաճառականներն իւրեանց մալր գաւմարներն են մեծացնում և իւրեանց առևտրական գործերն ընդարձակում, գործակատարները դուրս են գալիս իւրեանց «աղաների» ու «չորպաշխների» մօտից և իւրեանց սեփական գործը սկսում, և այն և այն: Հաշուի ամուսնութիւնները, ՚ի հարկէ, աւելի յաճախ տեղի են ունենում քաղաքացիների մէջ, քան թէ գիւղացիների, որոնք բնականապէս աւելի են պահպաննել իւրեանց նահապետականութիւնը: «Հէլալ կաթնակէր» և «Օջախի որդի»¹, խօսքերը որոնց մինչև ցախօր քիչ-շատ դեռ գին են տալիս գիւղացիք, քաղաքացւոց բերանում արդէն կորցրել են իւրեանց խորհուրդը և նշանակութիւնը: Քաղաքում ոչ մի բանի չեն նայում, մինչև իսկ տեսքն ու գեղեցկութիւնը, «բնութքն» ու «մեարիթը», գիտութիւնն ու կրթութիւնը բանի տեղ չեն դնում:

«Կարգուել» ցանկացող քաղաքացի երիտասարդը, երբ «խնամի է ուղարկում» նախապէս և տիրապէս պատուիրում է իմանալ, թէ աղջկայ տէրը որքան վաղ պէտք է տայ աղջկայ վերայ, որքան «Ճըհէ զ» միտք ունի անելու: Իւրեանց աղջիկներին „հարս անել“ ցանկացողներն էլ իւրեանց հերթով նախապէս աշխատում են իմանալ, թէ վիսացուն ինչ կարողութեան տէր է: Գիւղացիք տեսնում ու հաւանում են աղջիկներին եկեղեցիներում, հարսանիքներում ու հրաւէրներում կամ „զիաֆէթներում“ և ուխտագնացութիւնների ժամանակ, մասնաւորապէս վարդավառին ու „խըտրելլեզին“, իսկ քաղաքացիք ամեն տեղ, որովհետև քաղաքի աղջիկները բոլորովին ազատ են և ամեն տեղ լինում են, ամեն տեղ զրօնում ու շրջում են երիտասարդների հետ:

Սիրահարութեամբ, սրտի միտումներով ու զգացմունքի հակումներով եղած ամուսնութիւնների սակաւութեամբ պէտքէ մեկնել և այն հանդամանքը, որ Նախիջևանի զաղթականների մէջ համարեան թէ սիրահարական երգ չկայ և լիշողութիւն էլ չկայ, որ մի ժամանակ շատ եղած լինի: Հաշիւը, կողմնակի գիտումները և կարիքները բանաստեղծութիւն չեն սիրում: Իգեալների, դաղափարների և զգացմունքների աշխարհ չէ Նախիջևանը. պլոզան, կեանքի լուրջ ու կոշտ պլոզան է այս կողմերի հայ գաղթականների մտքում յժագաւարագը, սրտին տիրողը, իշխողը: Վեզ յաջողեց զրի անցնել „Արգու և Խամբեր“ վերնագիր կրող երգը, որ Արխմից բերուած լինելով, մինչև յախօր դեռ պահպանուել է գիւղացիների բերանում, և որ սիրահարական երգի բոլոր տարերքն է պարտնակում իւր մլ յԱյդ երգն այլ ևս կոչուում է „Ասր ճանի երգ“:

ԱՐՁՈՒ

1. Փարչս առի, ջուրի գնացի,
Տալտրմիշ արի, վերուցի,
Հողիս, հաւատս, Խամբեր,
Ապոճանս կրուցի
Հողիս, հաւատս, Խամբեր,
Ապոճանս կրուցի:

ԽԱՄԲԵՐ.
2, Ես ասօր չորվախ գնացած չիմ,
Ճեռքս, երեսը լուացած՝ չիմ.
Աղու տասնէ, կը խըմիմ,
Ես քու ապոճանդ տեսած չիմ:

ԱԲՉՈՒ.

3, Աղու ուզենասնէ, աղու կ'լամ,
Խնձի ուզենասնէ, ես կ'լամ.
Բայց իմ ապոճանս ալ
Ճերմակ ծոցիդ մէջը պէնկ է¹⁾:

ԽԱՄԲԵՐ.

4, Քաղաքը փորուած էր,
Ճերմակ օշխարը խուզիով էր
Ապոճանիդ վըրան
Ի՞նչպէս զիր գրած էր:

ԱԲՉՈՒ.

5, Քաղաքը փորուած էր,
Ճերմակ օշխարը խուզիով էր.
Ապոճանիս վըրան
Անո նս ալ գրած էր:

ԽԱՄԲԵՐ.

6, Ջուրը կերթար օլուխ, օլուխ²⁾.
Կ'քաշէին թօլուխ, թօլուխ.
Ապոճանդ գըտնողին
Ի՞նչ պիտ տաս մուշտուլուխ:

ԱԲՉՈՒ

7, Ջուրը կերթար օլուխ, օլուխ,
Կ'քաշէին թօլուխ թօլուխ.
Ապոճանս գըտնողին
Արզուն կերթայ մուշտուլուխ:

¹⁾ Պէնկ—խալ, ²⁾ Օլուխ—դարիւ դարիւ,

ԽԱՄԲԵՐ.

8, Աստեղը ինձի մեղք կանին,
Կէնձ³⁾ կլոսս խըսմալամիշ կանին⁴⁾,
Եգէր էրկուսս մէկ լանքնէ,
Մեզի զընտան կըձգին:

ԱԲՉՈՒ.

9, Տունին տիրէկը⁵⁾ մարջան⁶⁾ է,
Հողիխ սիրածը տուն իս.
Եգէր էրկուսս մէկ զնտան ձգիննէ,
Զնտանը մեզի առքայութին է:

ԽԱՄԲԵՐ.

10, Բէկը իմիս տալիս է,
Կտրած օրէնքին խայիլ իմ.
Ելէմ աշխրքին հետ չիմ փոխիլ,
Արզուն իմիս փս լըս է:

ԱԲՉՈՒ.

11, Գետինին վրայէն չորս ձիաւոր կուզան,
Չորսին մէկ հատը մուրատը է.
Ես կ'ճանճան Խամբերին,
Օրթափ դոռու⁷⁾ ձիովը Խամբերն է:

ԽԱՄԲԵՐ

12, Ինչ որ էղիլ է էղիլ է,
Ճակատս սեը զրուլ է.
Ճակատս սեը զրուած էր,
Խամբերին զուլում էղաւ.

Սիրահարական երգի տարելք է պարունակում իւր մէջ և
Հետեւեալ վեց տողը, որ նախիջևանի պառաւներն սովորաբար
ասում են, երբ որ տեսնում են մէկին նստած քունը տանելիս.

Քունն էկիլ է, աչքն առիլ է,
Եարն էկիլ է, գուռը կայնիլ է.
Ինչ գիտէ քի եարին էշթաց,

¹⁾ Կէնձ—երբուասարդ, ²⁾ Խըսմալամիշ անել—ջարդել, կոտորել, ³⁾ Տիրէկ—Սիւն, ⁴⁾ Մարջան—Բուստ, ⁵⁾ Դոռու—կարմիր:

Ինչ գիտէ քի քունին էշթայ։
Քունն էշթայնը, մէմալ կուգայ,
Եարն էշթայնը, մէմալ չի դայ ։¹⁾

Նախիջևանում հին ժամանակներն ապրելուս է եղել մի ժողովրդական երգիչ Աղապալի անունով, որ ՚ի միջի այլոց, մի քանի սիրահարական երգեր է առել և տարածել ժողովրդի մէջ, բայց ներկայումս այդ երգերը համարեա թէ ամբողջովին մոռացուել են: „Աղապալի“-ին է պատկանում յայտնի „Սամաւարի երգը“, որ քանիցս տպագրուած է. Նորան է, գուցէ, պատկանում և „Երեք օրուան լուսնի նման ունքերդ“ յայտնի երգը, որ իւր գեղեցկութեամբ հալիիջևանի ժողովրդական սիրահարական երգերը մէջ ամենալավաբար կարող է համարուել:

Երբ որ երկու կողմերից էլ համաձայնութիւնը կայսնում է, փետացուն առնում է իր հետ իւր ամենամօտ ազգականներին և դժուակ աղջկայ տունը, „խուք“ է անում, այսինքն համբուրում է „բիաթալի“ և „բիանալի“ – աներոջ և կոքանչի ձեռքերը, պաշտօնապէս վիտացու է յարտարարուում և շնորհաւորութիւն ընդունում: „Նշանտոք“ խուքը, որ Նախիջևանցիք գործ են ածում, արտայալում է ոչ թէ ընդհանրապէս ամբողջ նշանադրութեան հանդէսը, այլ միայն նշան տալու կամ մատանի փոխելու պարզ գործողութիւնը, որ կատարուած է կամ նոյն խուքի ժամանակ և կամ „բէհին“: Ընդհանուր նըշանադրութեան գործողութիւնն արտայալու համար Նախիջևանցիք սովորաբար գործ են ածում տաճկական այդ „բէհ“ բառը, որ, ինչպէս յայտնի է, նշանակում է խորապէս զրաւական, այսինքն այդ գէպքում հարսնացուն ներկայանում է ինչպէս „բարի“ կամ ապրանք, որ գնուած է, բայց տակաւին զինը ամբողջովին չի վճարուած, այլ միայն մի մասը: Փոխարեցական մտքով, ին հարկէ, „բէհ“ բառը կարող է նշանակել և նշանադրութիւն:

„Բէհը“ կտտարուռմ է „խօսքից“ մի քանի որ յետով
աղջկական տաճը և շատ հանդիսաւոր կերպով, այնպէս որ շա-

¹⁾ Այս վեց տողը հաղօրդել է մեզ Տեր-Առակ Զաքը Քեանը:

տերը, որոնք հանդիսաւոր „թէհ“ են կատարել, այլ ևս հանդիսաւոր հարսանիք չեն անում, օրովհետեւ „թէհն“ էլ հարսանիքի պէս բան է և նոյն ծախսն ու „դառաթն“ է պահանջում։ Յաճախակի մեծ ծախսերից խոյս տալու համար „թէհն“ ու „խօսքը“ միացնում են ու իսկոյն սկսում են հարսանիքի պատրաստութիւն տեսնել։

Ֆիզերում սովորաբար հաւանած աղջկայ տունը խնամք է դնում տղայի հայրը կամ մօտ աղջականը։ Հասնելով տուն և մտնելով բակը, նա անմիջապէս չէ մտնում, այլ նախագէս կանգնում է գրան առաջ և դուրս է կանցում աղջկայ հօրը և յայտնամ է նորան իր գալու պատճուր։ Եթէ խնամու առաջարկութիւնը հաճելի է լինում աղջկայ հօրը, նա խորին և եթ ներս է հրաւիրում նորան, յարզում և «ջուղար» տալիս, ալ-սինքն նորա առաջարկութիւնն ընդունում է, իսկ եթէ հաճելի չի լինում, նա նորան ճանապարհ է դնում առանց ներս հրաւիրելու և առանց „ջուղարի“։ Առաջին, այսինքն, առաջարկութիւնն ընդունելու դէպքում տղայի հայրն արտասանում է „խօսքը մէկ Առոտուած մէկ“ ասացուածքը, որով և ամրացնում է զործը, և անմիջապէս ընդհանուր համաձայնութեամբ որոշուում է „ըէկի“ օրն ու տեսակը, որովհետեւ գիւղերում ըէկը լինում է մեծ և փոքր։ Եթէ որոշուում է „փոքր ըէկ“ անել, նշանակուած օրը տղայի ծնողները և ամենամօտ մարդիկ սահմանափակ թուով գնում են աղջկայ տունը, համեստ կերպով ուտում, խմում, ուրախութիւն են անում „նշանտօք“ կատարում, այսինքն մատանի են դնում աղջկայ մատր. իսկ եթէ որոշուում է „մեծ ըէկ“ անելու, նշանակուած օրն աւելի մեծ թուով մարդիկ են զնում, հրաւէրք են անում, դաք ու զուռնայ են կանցում և աւելի մեծ հանդիսով են կատարում „նշանտօքը“։ Երկար ժամանակ քէֆ, ուրախութիւն անելուց, կուշտ ու կուռ ուտել-խմելուց և պարելուց յետով, աղջկայ տանից բռոր հրաւիրեալները նոր խնամիների հետ գնում են տղայի տունը „վեսատեսո“, որովհետեւ գեռ գիւղերում պահպանուել է վեսայի մինչև հարյանիքը աղջիկը չ'տեսնելու և աղջկայ տունը չ'գնալու սովորութիւնը։ Եղջկայ տանից փոխա-

դարձմատանին ուղարկուում է փեսային և կամ նոյն խոլ բէհի օրը խնամիների ձեռքով, և կամ նշանադրութիւնից յետոյ պատահած մեծ տօներից մէկի ժամանակ — Ֆննդեան, Ս. Սարգսին, Բարէկենդանին, Միջինքին, Տաղկաղարդին, Զատկին, և միւս տօներին, երբ աղջկայ և տղայի տներից միմեանց փոխադարձաբար „տարուբեր“ է ուղարկուում: Տարուբերը, կամ ինչպէս քաղաքացիք ասում են, „խրկուածքը“ բաղկացած է լինուում անուշեղէնից՝ խաթմուխ և իփլիկ հալուաներից և զանազան ընծաներից խնամացող ընտանիքի կարողութեան համեմատ: Ամեն մի „խրկուածք“ ունենում է իւր „տառցը“, այսինքն աղջկայ կողմիցն էլ փոխադաբար ուղարկում են անուշեղէն և ընծաներ փեսայի տունը: Ահա այդ դարձերից մէկի հետ ուղարկում են և մատանի, որ հազցնում են փեսայի մատը իբրև փեսացուի նշան և իբրև փոխ նորա հարսին ուղարկած ու մատը հազցրած մատանիին:

Հին ժամանակները „նշանութքի“ ժամանակ նշան օրհնելու և կէս պսակ կատարելու սովորութիւն է եղել, բայց նըշան յետ տալու, կամ, ինչպէս ասում են, „ետ լինելու“ դէպքերի յաճախելու պատճառով, կէս պսակ կատարելը այստեղ էլ ինչպէս ուրիշ տեղերում, արգելուել է հոգեւոր իշխանութիւնից:

Մենք ասացինք, թէ քաղաքում բէհը մեծ „դառաթով“ է կատարուում և յաճախ աւելի ծանր է լինում, քան թէ հարսանիքը, ուստի և „դառաթով“ բէհ կատարողները շատ անգամ այլ ևս հանդիսաւոր հարսանիք չեն անում: „Դառաթ“ ասելով նախիջևանցիք հասկանում են ամեն մի այնպիսի հանդիսաւոր գործողութիւն կամ արարողութիւն, որի ամեն բանը տեղն է, ամեն բան շքեղ, թանգ և սարգին է, ամեն մանրամասնութիւն, ամեն ծէսք ու սէթեեթք ճշտիւ կատարուած, ճշտիւ պահպանուած է: Եւ ճշմարիտ, բէհ կատարողը, որ սովորաբար լինում է աղջկայ տէրը, նախօրօք ուղարկում է իւր և իւր նոր խնամիների ազգականներին տպագրուած հրափրատումսակներ, վարձում է երաժշտութիւն, բռնում է հմուտ խոհարար և բազմաթիւ սպասաւորներ, պատրաստում է շքեղ խնջուք և նախընթրիք և ընթրիքի փարթամ սեղաններ թանդ-

նոց գինիներով և մասնաւրապէս շամպանով և աղդի-ազգի սեթևեթքներով, և այն և այն: Բէհի ամենահետաքրքրական և հանդիսաւոր բոպէն լինում է խնամիների գալու ժամանակը:

Խնամիներն առհասարակ ուշ են գալիս, նազով-տուղով են դալիս, որովհետեւ այդ օրը նոյսա պատիւը շատ մեծ է. այդ օրը նոքա „թոռէ պատն“ են նստում, այդ օրը նոքա անդադար յարգուում ու մեծարուում են, խնամի ջան, խնամի ջան, „խնամի-բան“, „խնամի ման“ քաղցր խօսքերն ասելով ու լսելով: Երբ որ ուշ, երեկոյեան 11 ժամին, իմացուուն է որ խնամիները գալիս են, խկոյն բէհի տանը բոլորեքեան իրար գըլխով են կպչում, խկոյն ամենքն ընդառաջ են գուրս գալիս և վառած աշտանակները ու մոմականները ձեռքերին ըռնած, շարուում են գլխաւոր մուտքի դրան երկու կողմը, նշան տալով երաժշտութեան, որ խնամիների երևարում պէս ընդառաջելու հանդիսաւոր „մարշն“ նուագեն: Պրկախառնութեան, համբոյների, „բարի սահաթի ըլլայ“, „բարի պսակ առնուն“ շնորհաւորանքի և ուրախ ըացականչութիւնների ձայները խառնուելով երաժշտութեան նուագների հետ, մի խուլ, մի անորոշ, բայց քաղցր ժխոր են կազմում, որ, ըստ ամենայնի, համապատասխանում է շքեղ հանդիսին:

Բէհի բնորոշ առանձնայատկութիւնն է „նշանի խուրարիան“, որ ուղարկուում է բէհի յաջորդ օրը տղայի տունը մեծ քանակութեամբ և տղայի տանից արդէն բաժանուում է փեսայի բոլոր ազգականներին: Նշանի խուրապիան զատուում է միւս բոլոր խուրապիանների տեսակից իւր կտորնիրի խոշորութեամբ, իւր առանձին համով ու հոտով և զարդարանքով: Կտորները լինում են շատ խոշոր, որովհետեւ խիստ շատ է պահանջուում և բնականապէս հնարաւորութիւն և ժամանակ չի լինում, փոքր, նուրբ և պէս-պէս ձևերով կտորներ պատրաստելու, ինչպէս շինուում են սովորական խուրաբիանները: Խոկ համի, հոտի և զարդարանքով առանձնայատկութիւնն այն է, որ նշանի խուրապիայի մէջ խառնում են վարդի իւղ և երեսը զարդարում են ցուլուն սեթևեթքներով:

Հարսանիքից 15 օր առաջ զիւղերում տղայի տանից ուղարկուում է հարսի տունը պսակի զգեստացուն՝ «խումաշ» շրջազգեստի համար և թանգնոց երեսացու «բուրնու»-ի համար: «Խումաշ» ասելով, զիւղացիք հասկանում են ամեն մի մետաքսէ կտոր, որից սովորաբար կարուում է հարսի պսակի հանդերձը, իսկ «բուրնուն» կարճ քաթիպայի պէս վերնազգեստ է, որի երեսացուն աթլաս կամ թաւիչ է, իսկ աստաղը մազեղէն: Քաղաքում նոյն «խրկուածքը», նախ, ուղարկում են «խինա-գեջասիի» օրը և, երկրորդ, աւելի հանդիսով են կատարում այդ պսակի զգեստացուն ուղարկելու ծէոր, քանիթէ զիւղերում: Քաղաքի զգեստեղէնի «խրկուածքը» բաղկացնէ լինում պսակի ամբողջ շօրից իւր բոլոր պարագաներով, սկրսած քօղլից, և վերջացրած կօշիկներով, որովհետև այնպիսի հասկացողութիւն կայ, որ հարսն իրիւ թազաւորի պատկանելիքը պէտք է տուն զոյ տղայի պատրաստած չզգեստներով: Մինչև իսկ պսակի կերոններն էլ փեսան է տղարկում «խրկուածքի» հետ:

Խինա-գեջասի, հարս-բաղնիք եւ հարսանիք.

Խինա-գեջասի տաճկական բառը, ինչպիս յաբտնի է, նըշանակում է «Հինալի-գիշեր», որովհետև այդ օրը, զիշերը կատարուում է հարսի զլուխը հինայ դնելու հանդէսը: Հարսի զլուխը հինա դնելը, որ այժմ քաղաքում խապառ վերացել է և պահպանուել է միայն տեղ-տեղ զիւղերում, կատարուում է մեծ հանդիսով: Պօսկից երեք օր առաջ տղայի տանը պատրաստուում է մի աման հինայ և մի մատուցարանի վերայ գըրած մի կերոնի հետ ուղարկուում է հարսի տունը, որտեղ այդ երեկոյ մեծ հրաւերք է լինում և հաւաքուած են լինում բազմաթիւ աղջիկներ հարս ու վեսայի աղգականներից, հարսի բարեկամուկիներից և ընկերուհիներից: Աթոռի վերայ բարձ են դնում, հարսնացուին նատեցնում են վերան սենեակի մէջ տեղը կամ անկիւնում, երաժիշտները նուազում են «Ալկէլին» եղանակը և հանդիսականները վառած կերոնը բռնած մէկ մէկ

պարում ու խաղացնում են հինան: Կուշտ պարելուց և հինան խաղացնելուց յետոյ, կանալք սկսում են հինան դնել հարսի զլուխը, իսկ աղջիկները հինայից մի մի մատ առնում, քսում են իւրեանց ձեռքի ափին, որ փոխը, կամ, ինչպէս ասում են, «ֆառոսը» իրենց էլ լինի: Հին ժամանակները այդ գէպքում հանդիսականները սովորութիւն են ունեցել մօտենալու հարսնացուին, մի մի մատ հինայ դնելու նորա զլուխը և երգելու «Ալկէլին» երգը, որից այժմ պահուել է հետևեալ կտորը.

1. Հինա տըրին, պաղնիք տարին,
Չիլֆիւ մազըս փէրչամ արին,
Կուլիսուս ալ փօշի կապեցին,
Պերին քօշան կայնեցուցին.
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի:
2. Փեսսա ծնողաց հէլալ օրթի,
Կուլիսուն կտակը կապուտ մորթի.
Մէքատիկ էր նա իր սօցին,
Մեռնիմ անոր սէլվի պօցին.
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի:
3. Եփոր աշքը նորան տեսաւ,
Երկու թուշէս ալ կաթեցաւ.
Հարիկ, մարիկ, մընաք բարով,
Աստուած մեզի պահէ սէրով.
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի:
4. Թաքաւորըս կուքաց թուրով,
Հալիսը շատ է, կառնու զօռով,
Պաշտիշներով, յարկինքներով,
Աստուած մեզի պահէ սէրով.
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի:
5. Կերթաս մեզմէն ճանփատ տիւզ է,
Կերածըզ չամիչ ու թուզ է,
Եչքըդ կուլաց, սիրոզդ կուզէ,
Մօրէդ պաժնըզիլ սիրոզ չուզէ,
Հարկը կասեն անպէս կուզէ.
Սիրական քուրիկներ, տառօսը ձեզի ¹⁾:

¹⁾ Այս երգը մի անգամ տպագրուել է „Խաչիչևանի Գործ“-ում:

Քաղաքում, որտեղ, ինչպէս ասացինք, հինայ դնելու սովորութիւնը զլիսովին վերացել է և պահուել է միայն «Խինա-գեջասի» անունը, այդ օրը, երեկոյեան ուղարկուում է հարսի պսակի շորերը, մոմերը և կատարուում է ալիւր-մաղեքի հանդէսը և այդ առթիւ մեծ հրաւէրք է լինում աղջկայ տանը: Հաւաքուում են առհասարակ հարսի ընկերուհիները և ազգական աղջիկները, գալիս է և փեսան իւր մօտ ընկերներով: Մէջտեղ են հանուում փոքրիկ տաշը և շրջանակն ոսկեզոյն ու արծաթագոյն թղթերով զարդարած մաղը և ալիւր են մաղում հարսանքի հայը պատրաստելու համար: Ալիւր մաղողները լինում են փեսան և երիտասարդները, որոնք մաղը մի քանի անդամ թափահարելուց յետոյ, յանձնում են հերթով միմեանց և այդ առթիւ փող են նուիրում ալիւր-մաղեքի հանդէսը կառավարող ու ղեկավարող «Քիգալին»:

Խինա-գեջասիի յաջորդ օրը կատարուում է «Հարս-պաղնիքի» հանդէսը, որ քաղաքում արդէն վերացել է և մնացել է միայն գիւղերում: «Փեսայ-պաղնիքը» վերացած է թէ քաղաքում և թէ ղիւղերում. դորանից մնացել է, այն էլ միայն գիւղերում, գէթ մի ծէս-«Փեսայ-թրաշ», որ կատարուում է շատ մասնաւոր ու սահմանափակ հանդիսով:

Հարս-բաղնիքը սովորաբար կատարուում է աղջկայ կամ կարգուած քրոջ տանը և կամ մօրատատի, կամ, ինչպէս ասում են, «մամուն» տանը, որտեղ այդ առթիւ «աղջիկ-ժողովտանք» է լինում: Բաղնիքի հանդէսը կատարելուց և ամբողջ օրն ուրախանալուց յետոյ, հարսը շրջապատուած իւր ընկերուներով և երաժշտութեամբ վերադառնում է. տուն: Համնելով իւր բնակարանին և մտնելով բակը, որախ թափօրը կանգ է առնում տան դրան առաջ, որովհետեւ առանց աղջկայ մօր հանդիսաւոր կերպով հարսին ընդառաջ դուրս գալը չի կարելի տուն մտնել: Մայրը սովորաբար դուրս է գալիս և աղջկայ գլխին շաղ է տալիս բընձախառն մանր փող: Դորանից յետոյ էլ դեռ տուն չին մտնում, այլ հարսնացուին նստեցնում են բակի մէջտեղը մի աթոռի վերայ և ընկեր-աղջիկները ձեռք ձեռքի տուած պար են բռնում նորա չողմը և կոլորպարի

պէս պարելով, յետ ու առաջ են գնում: Հարս-բաղնիքի երեկոյից արդէն հարսանիքը նստած կամ սկսուած է համարուում, որ գիւղերում շարունակուում է երեք օր, իսկ քաղաքում միայն մէկ օր:

Քաղաքում պսակի հանդէսը կատարուում է և՛ առաւօտեան և՛ երեկոյեան, իսկ գիւղերում միայն առաւօտեան: Քաղաքում առհասարակ տպագրուած հրաւիրատոմակներ են ուղարկում, որոնց մէջ յայտնելով, թէ այս ինչ եկեղեցում և այս ինչ ժամին պէտք է կատարուի այս ինչ երիտասարդի ու օրիորդի պսակագրութեան հանդէսը, խնդրում են, որ այս ինչ ոքն իւր ներկալութեամբ պատուէ այդ հանդէսը, իսկ յետոյ բարեհաճի շնորհ րելել հարսանեաց խնջուքին, որ պէտք է լինի այս ինչ տանը: Եթէ պսակը կատարուում է առաւօտեան, հրաւիրեալները նշանակուած ժամին հաւաքուում են եկեղեցին, ներկայ են գտնուում պսակի հանդիսին, շնորհաւորում են, համբուրուելով այր-մարդիկ թագաւորի հետ և կին-մարդիկ հարսի հետ, և ցրուում են լրեանց տները, որովհետեւ բուն հարսանիքը, այսինքն պարահանդէսը ու հարսանեաց խնջուքը լինում են դիշերը: Այդ գէպքում փեսայի տունը գնում են միայն ամենամօտ աղգականները, որոնք և մնում են այնտեղ, ճաշում և ժամանակ անցկացնում նեղ շրջանում մինչև երեկոյ: Իսկ եթէ պսակը կատարուում է երեկոյեան, իսկոյն և եթ պսակից յետոյ ամենքը գնում են հարսանիքատունը և սկսուում է խնջուքը և հարսանեաց ուրախութիւնը, որ շարունակուում է մինչև առաւօտ:

Պսակից առաջ կատարուում է «Հարսնառի» ծէսը, որ հարսանիքի զլիսաւոր արարողութիւններից մէկն է: Փեսայի կողմի հարսանիքաւորները հաւաքուում են փեսայի տունը, քահանան օրհնում է փեսայի զգեստները և բոլորեքեան գնում են կառքերով հարսի տունը «Հարսնառի»: Փեսային նորա կառքում նստած ուղեկցում են փեսայիրենները-«շաֆերները». Հարսի տանը քահանան օրհնում է պսակի զգեստները, և մինչև որ հարսը հագնուում է, ինամիները հիւրասիրուում են թէյով և թելժև ողեպահիկով: Երբ որ հարսը հագնուում, պատրաս-

տուում է, փեսաղբերներն ու հարսնեղբարները դնում են, բերում նորան գահին և կանգնեցնում փեսայի կողքին սեղանի մօտ, որի վերայ կարգով շարուած են լինում բոլոր մինչև հարսանքի օրը և նոյն իսկ հարսանքի օրը ստացուած ընծաները: Թէ փեսայի և թէ հարսի զգեստաւուելու միջոցում այժմ քաղաքում ոչ մի առանձին ծէս չի կատարուում, ոչ մի երդ չի երգուում, ինչպէս որ եղել է հնումը: Այժմ չի կատարուում և այս ծէսը, որ հին ժամանակներն անհրաժեշտ կերպով կատարուել է: Այժմ երբ հարս առնողները գալիս, բազմում են և սկսում են յարգուել, այլ ևս մէկը չի շրջում առանձին սրուակով հիւրերի մէջ և հիւրերի թաշկենակի վերայ հոտաւէտ ջուր, կամ, ինչպէս սովորութիւն է եղել ասել, «ամբը» սրսկում:

Կէս պսսկը կատարելուց և հարսի ու փեսայի ծոցը՝ նուրբ կտորի մէջ փաթաթած ու կարմիր ժապաւէնով պնդած մի մի փոքրիկ անուշի կտոր դնելուց յետով, հարս ու փեսային նըստեցնում են մի ծածկուած շքեղ կառքի մէջ, որ հենց այդ նպատակի համար մասնաւորապէս վարձուած, կամ, ինչպէս յաճախ պատահում է, այս կամ այս հարստի տանից բերուած է լինում և որի ձիերի ականջներն ու բաշերը և կառապսնի թևերն գոյնզգոյն մետաքսէ թաշկինակներով է կապած-զարդարած լինում, և բազմաթիւ կառքերով ուղեկցում են եկեղեցի: Հարս ու փեսայի կառքի առաջին նստարանի լերայ ուղիղ հարս ու փեսայի դէմ ու դէմ նստում են երկու տղայ, վառած կերոնները ձեռքներին բռնած, իսկ կառապանի կողքին առօք փառօք բազմում է «Իգիտ-Աղասին», որի թևերը և կուրծքը նոյնպէս զարդարուած է լինում գոյնզգոյն մետաքսէ թաշկինակներով: Գոյնզգոյն թաշկինակներով զարդարուած են լինում և բոլոր ուղեկցողների կառքերի ձիերի ականջներն ու բաշերը և կառապանների թևերը:

«Իգիտ-Աղասին», ինչպէս ցոյց է տալիս և բառի նշանակութիւնը, հին ժամանակներն եղել է հարսանքին մասնակցող բոլոր կտրիճների պարագլուխը, հարսանքի կառավարիչը և ընտրուում է եղել փեսային մօտ ճարպիկ կտրիճների միջից:

Բայց այժմ այդ դերը կատարում է մի վարձուած սպասաւոր, որի պարտականութիւնն է սպասաւորութիւն անել հարս ու փեսային հարսնաւոր և պսակի ժամանակ և տիրապէս հարսանեց տան սարք ու կարգի վերայ նայել: Նա է հարս ու փեսային կառուք նստեցնում, նա է կառքի զուռը փակում, բայց անում, նա է պսակի ժամանակ հարս ու փեսայի վերնաղդեստները հանում, հազցնում, նա է, վերջապէս, պահում և պրակի ժամանակ մատուցանում քահանակին այն արծաթեայ անօթը որով դինի են խմացնում թագաւորին և թագուհուն:

«Նորապսակներին հարսանեց տան դրան առաջ ընդունում և համբուրելով օրհնում ու շնորհաւորում է փեսայի մայրը գլխին քող ձգած: Այդ միջոցում էլ բրնձախառն փող են շաղ տալիս զլիներին, խունկ անում և մի զոյգ՝ վգերին կարմիր ժապաւէններ կապած՝ սպիտակափետուր աղաւնի են արձակում: Տուն մտնելով, հարս ու փեսան կանգնում են դահլիճի մէջ տեղը, մատուցանում է մեծ մատուցարանով շամպանի բաժակները, Իգիտ-Աղասին լցնում է փրփրալից գինին, երաժշտութիւնը „տուշ“ է նուագում և բոլորեքեան շնորհաւորում են նորապսակներին: Հին ժամանակները փեսայի մայրը դիան առաջ նորապսակներին ընդունելու միջոցում նոցա բերանը մի կտոր անոյց է զնելուս եղել, իսկ շնորհաւորանքն եղել է „Ակէինի“ ձայնսկցութեամբ:

Բաժինքն ուղարկուում է փեսայի տունը կամ հարսանիքից մի օր առաջ, կամ մի օր յետոյ: Առաջները սովորութիւն է եղել բաժինքն ուղարկել հէնոյ նոյն իսկ հարսանիքի օրը և հարսի շորեղէնը զնելով մատուցարանի վերայ, շրջեցնել և ցոյց տալ հանդիսականներին հարսանեց խնջոյքի ժամանակ: Սովորութիւն է եղել և հարսի օժիտի ցուցակը կազմել և հանդիսաւոր կերպով կարգալ բոլոր հրաւիրեալների առաջ հարսանիքի ժամանակ այս ձևով.

„Կամաւ կամեցողին բարեաց Տոն մերոյ Յով Քսի և օրհնելոյն յաւիտեանս ամէն Որ եղել այս շնորհաւորութեան հարսանեց գիրս ՚ի տիրապահ և յածախնամ քղքս ՚ի նոր Նախիջեան, ընդ հովանեաւ Արոյն ՚ի-

կողայոսի Հայրապետին ոքանչելագործին, և ՚ի Հայրապետուեցն Եփրեմայ Արժանընտիր Սրբնաբ կթուղիկոսին, և Առաջնորդին Նախիջևանայ և Բեսարաբիոյ Ածարեալ Կայսրընտիր և կաւալերազարդ Հովուապետին Տն Ներսիսի Սրբազն Արք Եպիսկոպոսին, և ՚ի Ժամանակս Ծգուրին ամ ոռուաց Ամենաբարեպաշտ և ինքնակալ մեծ կայսեր Նիկոլայ Պաւլովիչի, ՚ի Ժւոյն Փրկչին մերու ՚ի 1832 ամի և փետրվարի 8 ին, որ պըն Պապուկ Գրիգորեան Սուլթանշահովն էառ օրինաւոր սը ամուսնութբ զնագելի դուստրն իւր Եղիսաբէթն, վճռկն Աղայ Գաբրիէլ Խոճայովի, նախ պարգևէ Ածային օրհնութիւն և որց մշտանուէր աղօթքն որ ի միասին Ած խորին ծերուի պարգելեցէ, նաև վերագոյնդ յիշեալ Աղայ Գաբրիէլ Խոճայովն շնորհէ նազելի զստերոցն իւր զօժիտս այսինքն կանացի ոսկեղէն զարդու, ՚ի ներքոյ յայտնին և են այսոքիկ:

Նախ մէկ լաւ անդամանդեայ ծաղիկ:

1. լաւ բերզամ պաղի անդամանդեայ
1. ջուխտ օղ պոլեանտնի
1. ջուխտ ևս օղ անդամանդեայ
1. թէօքմէ խաֆէս մրգրտեայ 20 խաթէն, և 2 կղմն 30

Հաստ ոռուպիկ ոսկի

1. ջուխտ ոսկեայ գոտի և մէջն էլմասեայ
1. ջուխտ ևս ոսկեայ գոտի
1. կըշտանոց 40 եալտըզ ոսկիք և մէջն չորսնոց ոսկի
1. լաւ մատանի էլմասեայ
1. պուլաւքի էլմասեայ
- և այս ներքոյ երեք զարդու ՚ի լրտամպոլից բերելոյ ապրափեալ է որք են այսոքիկ.

1. լաւ կէրտանլըխ անդամանդեայ
1. ջուխտ գոտի ևս անդամանդեայ
1. ջուխտ ապոճան այն ևս անդամանդեայ
- և այլ ամ պղնձեղէն շորեղենն

ը նոսին ըստ կարգին:

Դիւղերում թագաւորին դգեստաւորելու Ժամանակ նորա Ընկեր-կտրիները զանազան կատակներ են անում և փող ըս-

տանում քաւորից: Նոքա ծուռ կամ ընդհակառակն են հաղոցնում նորա հալաւների զանազան մասերը և իւրաքանչիւր անդամ հարցնում են. „Կնքահար, ինչն է ժանիկիշ փեսին վրան“:

Հարսին զգեստաւորելու Ժամանակ կլոր ձեռվ կտրում են նորա „զելֆիները“ —գանգուրները, որոնք բազմաթիւ բարակ հիւսերով ծածանուում են նորա ուսերի ու մէջքի վերայ, „փերչամ“ են անում, նորա ոսկիներով զարդարած ֆէսը, „փօշի“ են կապում զլիսին, ամրացնում են փօշիի վերաից «փէրչամբաղին» ու «փէրչամբաստին», հազցնում են „խումանգամբաղիները“, մէջքին կապում են մարգարտակեռ արծաթեալ ճարմաշը, մէջքին կապում լամարե-„խուլանը“, մատերին դնում են մատանիմանգով կամարե-„շափերներ“ գալիս, պսակի Ժամանակ էլ թագաւունու զարդ բունելու սովորութիւն չկայ, դում են ոսկի շարոցը և „զերդանլըխը“ և երեսին կարմիր քողը:

Գիւղերում պսակի գնում են սովորաբար սովորվ. Հարսի մի ձեռքից բռնած է լինում փեսան, միւս ձեռքից կնքամայրը: Փեսաղերներ և խաչեղբարներ, կամ, ինչպէս քաղաքում կոշտուում են, „շափերներ“ չկան, պսակի Ժամանակ էլ թագաւունու զարդ բունելու սովորութիւն չկայ, ինչպէս քաղաքում:

Հարսի բաժինքը փեսակի տունն է ուղարկուում երկու անգամ-մի մասը կէս-պսակի միջոցում, միւսը նոյն իսկ Հարսի սահեաց Ժամանակ, երկրորդ օրը: Կէս-պսակին առաջ փեսակի տանից գալիս է մի ձիաւոր և տանում է միայն մի բարձ, յետոյ զալիս են փեսակի ծնողները և տանում են կողինքը, իսկ Հարսանեաց օրն „աղջիկ-խնամիները“ տանում են Հարսի „սնդուկը“ թանկագլին մանր իրեղէններով և „բոխչան“ Հալաւներով:

Հարսի ծնողները պսակի արարողութեան ներկայ չեն գըտնուում, ինչպէս քաղաքում. Նոքա սովորաբար գնում են փեսակի Հարսանեաց երկրորդ օրը, շրջապատուած ազգական կանանցով ու տղամարդկանցով, որովհետեւ Հարսանքի առաջին օրը տիրապէս պատկանում է երիտասարդներին և աղջիկներին և ալդ-

պատճառով էլ կոչուում է „կտրիճների-Հարսնիք“, իսկ երկրորդ օրը պատկանում է տղամարդկանց ու կանանց և այդ պատճառով էլ կոչուում է «էրիկմարդոց-Հարսնիք»:

Նորապսակ զուգի ոտքերի տակ եկեղեցուց դուրս գալու ժամանակ դնում են մի աման, որ Հարսն ու փեսան աշխատում են միմեանց առաջը տակ ու կոտրել, որովհետև այնպիսի հասկացողութիւն կայ, թէ ով որ առաջինը կանխէ կոխել ու կոտրել ամանը, նա էլ տան մէջ գլխաւորապէս իշխողը, հրամայողը կրիխի: Փեսայի տունը մտնելու ժամանակ նորապսակների գլխին միշտ աղաւնիներ չեն արձակում, ինչպէս քաղաքում, այս երբեմն և սպիտակ հաւեր: Հին ժամանակները սովորութիւն է եղել Հարս ու փեսայի ոտքերի տակ և ոչխար մորթել, որ այժմ թէ քաղաքում և թէ զիւղերում իսպառ վերացել է. ինչպէս որ վերացել է արդէն և „իորդան տանելու“, այսինքն պսակուղների մօտ ազդականների իւրեանց հետ չ'հրաւիրուած մէկին Հարսանիք տանելու սովորութիւնը: Երիտասարդներն ու աղջիկները, որոնք Հարսանքի տանը բոլոր ժամանակ շրջապատած են լինում Հարս ու փեսային, գրադեցնում ու զուարձացնում են նոյա, ոի միջի այլոց, աշխատում են և նորապսակների վերայից մի բան գողանալ, որ „տառօսը“ իրենց էլ լինի: Բացի այս բոլորից, գիւղերում մինչև ցայսօր դեռ պահպանուել է փեսային զգեստաւորելու, Հարսնառ գնալու և պսակի երթալու միջոցում «պարեր» երգելու սովորութիւնը, որոնց բառերը և ոճերը ժողովրդի բերանում ներկայումս դժբաղդաբար այնքան աղաւաղուել են, որ Համարեա թէ անկարելի է դարձել վերականգնել նոցա իմաստը, Հասկանալ նոյա բովանդակութիւնը:

Հարսնառ երթալու ժամանակ, երբ Հասնում են Հարսի տան դրան շեմքին, օրինակի Համար, երգում են Հետեւեալը, Համարեա նոյա բովանդակութիւնը:

1. Կուսն ալ լուսացաւ, բարի արև ձեզի,
Աքլորն ալ խօսեց իրեք բերան
Եւ իւր հաւ տաղով քալից հպարտ.
Ես ան ճամբաներուն ճամբորդն եմ,
Ջատ կեշթամ ու կուգամ.

Ջատ կեշթամ ու կուգամ.
Ճամբորն էրկու հատ վարդ անուշ
Ռւնկը իր ծոցին:

2. Մեր թագաւորին կապան կանանչ էր,
Մեր թագաւորն իր թուխումներուն մէջ
Մեր թագաւորն էր աշեռ պէս:
Մեր թագաւորի ձիին զարդն էր
Ճերմակ եալ հինայած.
Մեր թագաւորի ձիի ոտքի նալերն էր
Ռսկի, արծաթ գամերով.
Մեր թագաւորի ձեռքին խաչ
Ճինեց ոսկերիչ ոսկեզօծ խաչ:

Հարսնառի այս „պարեր“ միւս բոլոր „պարերի“ մէջ դեռ ամենալաւ պահ կ'սնուածն է, որովհետև եթէ ոչ ամբողջովին, գոնչ, մասամբ կարելի է վերականգնել նորա ընդհանուր իմաստը: Միւս պարերը գլխովին աղաւաղուած են և նոցանից միանդամայն բան չի կարելի հասկանալ: Փեսային զգեստաւորելու ժամանակ, օրինակի Համար, երգում են Հետեւեալը, որ աւելի բառակոյտ կարելի է կոչել, քան թէ երգ:

1. Այսօր ես նոր թագաւոր ես նոր
Պարոն մունետիկ սէր հնազանդ մունետիկ
Ամենը հնազանդ մունետիկ:
Այ պատուէր զմեզ իւր դուռն.
Եւ շար կուտար և կապեց շարը
Երանական հացոց հացրապէտը
Սուրբ Լուսաւորիչ իւր անունով
Եւ երեք խաչին անունով օրհնեց թագաւոր
Որ է մեր նոր թագաւոր օրհնեց թագաւոր
Որ զերկինս պահէր կուսացեալ կին
Զոր կային հաւասարիչ բոլոր
Զոր կային հաւասարիչ բոլոր:

2. Մայս Մարիամ, Սուրբ Աստուածամայր
Ետ երեք խաչին անունով օրհնեց թագաւոր
Որ մեր թագաւոր նոր օրհնեց թագաւոր
Որ էր Հարսն կոյս գովեալ հաւասարեց բոլոր
Հրեշտակ երկնից անցնէր ու ասէր.

Թագաւոր նա հագեալ և գովեալ:
Մունետիկը գովելով անցնէր ասելով,
Թագաւոր նա հագեալ և գովեալ: ¹⁾

Քաղաքում նորապսակների նարօտի կնիքը քանդում են, կամ, ինչպէս ասում են, թագը հանում են խկոյն եկեղեցում, իսկ զիւղերում երկու-երեք օրից յետոյ: Պատկից յետոյ պատահած առաջին կիւրակին կոչուում է „Առջի կիրակի“, որ նոյնպէս տօնուում է: Այդ օրը գալիս են հարսի ծնողները և մօտ խնամիները, բերում են ընծաներ և մեծ խնջոյք է տեղի ունիում: Առաջին կիւրակից յետոյ նորապսակներն իրաւունք են ստանում տանից դուրս դպրու և այցելութիւն անելու իւրեանց այն ազգականներին, ծանօթներին ու բարեկամներին, որոնց տները պէտք է երթան-դան: Վկուում է «Հարս տուն բերելու» կարգը: Ազգականները հերթով «զիաֆէթ»-հրաւէրք են սարքում իւրեանց տնեւում և հրավիրում են հարսին, կամ, ինչպէս ասում են, «Հարս տուն կ'բերին»:

Նախիջևանի հարսանեաց ուրախութիւնը, ըստ ամենայնի, նմանում է մեծ բէկի կամ հանդիսաւոր բէկի ուրախութեան: Նոյն երաժշտութիւնը, նոյն պարերը, խնամիների ընդունելու ու պատուելու նոյն կարգն ու «դառաթը»: Խնամիների հրաժեշտ տալու ժամանակ, երբ քէֆերը լաւ հասած է լինում, յաճախ նոյց երաժշտութեամբ են ճանապարհ ձրգում, և այդ միջոցում «իգիտ-Ազասին» զինով լի բաժակները տանում է խնամիների առաջից: Տեղ-տեղ կանգ են առնում, խմում են, պարում են և այդպէս շարունակում են, մինչեւ որ նոյց տուն են հասցնում: Առհասարակ Նախիջևանում քէֆի և ուրախութեան չափաւորութիւն չ'կայ. նոքա իւրեանց խօսքերը, բէկերը, տօն-շնորհաւորները և զիաֆէթները կամ իսպառ առանց քէֆի, միայն թուղթ խաղալով են անցկացնում, կամ չափազանց զօր են տալիս օղիին ու փունջին և փողոցներն են ընկնում: Ճատ անդամ կարելի է պատահել փողոց-

¹⁾ Այս աղաւագուած «պարերի» օրինակները մեզ հաղորդել է պ. Միքայէլ Չուբարեանը:

ներում քէֆ անողների. նոքա կամ լուռ ու մունջ գնում են փողոցով երաժշտութիւնն առաջները ձգած, կամ հարայ-հրոց են բարձրացնում, ծափ տալիս ու պարում, կամ արշաւում են կառքերով կողքերին նստացրած զուռնաչիներին:

Նախիջևանցոց զործածած երաժշտութիւնն եւրոպական նուագախումբ և հայկական դար ու զուռնան է, որ Նախիջևանցիք կոչում են «դառլ-զուռնա»: Առաջինը գլխաւորապէս զործ են ածում հարուստները, իսկ երկրորդը գիւղացիք և քաղաքի աղքատները: Սովորաբար հարուստներն էլ, երբ քէֆերը հասնում է, չեն բաւականանում միայն եւրոպական նուագախմբելով, այլ հրավիրում են և զուռնայ, թէկ տեղական նուագախումբն էլ, որ մասամբ բաղկացած է հայ երսթիշտներից, գտնուում է հայ կառավարչի զեկավարութեան ներքոյ, ազատ կերպով նուագում է տեղական ժողովրդի սիրած բոլոր եղանակները: Կան այնպիսի զուռնայ սիրողներ, որ ուշագրութիւն չ'գարձնելով այն ժողովրդական առածին, որ ասում է, թէ «Զուռնայի ձայնը հեռուէն աղէկ կուզայ», հրամայում են զուռնաչիներին իւրեանց մօտ նոտել և իւրեանց ականջի մէջ վիճել:

Նախիջևանի „Դառլ-զուռնան“ բաղկացած է մի մեծ դարից և մի կամ երկու փոքրիկ բարձրածայն, ճշացող ու շատ զիլ ձայն ունեցող զուռնալից: Այս վերջին ժամանակներս շատ զիւղերում փոքր զուռնալի վերայ աւելացել է և մի մեծ զուռնայ, որ կոչուում է „Բոռողան“: Գիւղերում էլ, բացի դառլ-զուռնալից, կայ և եւրոպական նուագախումբ, որ բաղկացած է միայն մի քանի նուսղարանից՝ գափիէ, ջութակ-«քեմենչէ», կլարնետ և կոնտրաս կամ «բոռբոռ»:

Պարում են սովորաբար և՛ տեղական և՛ եւրոպական պարերը: Քաղաքում տեղական պարերն արդէն վերջանալու վերայ են, նոյն խոկ զիւղերում հետողհետէ մտնում են և եւրոպական պարերը: Տեղական պարերը պարում են միջին արագութեամբ, հայկական և առհասարակ արևելեան պարերի սովորութեամբ, հայկական առհասարակ արևելեան պարերի սովորութեամբ, հայկական «պայերն» անելով: Պարում են կամ առանձին-առանց պարերները, կամ տղամարդ տղամարդու հետ, կամ տղամարդ կին-մարդ-

դու հետ և կամ կինմարդ կինմարդու հետ, դիմաց-դէմ կանգնած, միմեանց հետևելով, միմեանց յարձարեցնելով իւրեանց շարժմունքը և միմեանց հետ իւրեանց կանգնած տեղերը փոփոխելով: Պարերի սովորական տեսակներն են զանազան «Օլին-հաւաները»: Երաժշտական եղանակների մէջ կան, բացի «օլին-հաւաների» եղանակներից, և „Պղար-հաւաւ“, „Բուշան-հաւաւ“, «Պատին-տակը», «Ալկէլինը», մինչև իսկ «Չալձիի հաւան», և այն և այն:

ՏղԱԲԵՐՔ ԵՒ ԿԱՌԻՆՔ.

Երբոք Նախիջևանում մի կին լողանում է, սովորաբար առում են, թէ այս կինը «ծանրաւ է» կամ «տղով է», իսկ երբոք կինը ծնում է, առում են, թէ այս տանը, կամ այս ինչ մարդուն և կամ այս ինչ կնոջը «աչքի լուս է եղել»:

Նախիջևանցիք, որոնք ամեն մի ընտանեկան ոլոխառիթ և տիրապիթ երեսոյթի համար երբեւ շնորհաւորանք, կամ միխթարանք ու ցաւակցոյթիւն ստեղծել են զանազան իմաստուն ոճեր ու դարձուածներ-«բարի ահաթի ըլլայ», «բարի պլասկ առնուս», «պսակներով ծերանաք», «գալդ բարի», «դուն շատ ապրիս», «մեծ օրդ շնաւոր», և այն, տղաբերքը շնորհաւորելու համար էլ սովորաբար գործ են աճում «աչքի լուս» ոճը, որից անկասկած առաջ է եկել և այդ տղաբերք նշանակող «աչքի լուս լինել» դարձուածը: Տղաբերքի մտքով կիրարկուած այդ ոճը, որ այժմ դրս է աճուում անդիտակցաբար, շատ հետաքրքրական է, որովհետև դա ցոյց է տալիս, թէ ինչպէս են նայել հին Նախիջևանցիք զաւակաբերութեան վերայ. դա նոցա կարծիքով եղել է Աստուծոյ շնորհքը, ուրեմն և աչքի լուսի պէս սիրելու ու փայփայելու բան է եղել նոցա համար զաւակը, իբրեւ նախախնամութեան տուած պարզեր, իբրեւ ժառանգ, սերունդը շարու նակող, իբրեւ տան, ծնողներին աշակից և, վերջապէս, իբրեւ օգնական, աշխատող ոյժ:

Բացի «աչքի լուս լինել» Նախիջևանում ծնուելու, աշխարհ գալու մտքով կիրարկուում է և մի ընտիր ոճ-«ընծա-

յուել», որ սովորաբար գործ են աճում, երբ կամենում են արտայայտել մէկի այս ինչ տեղում, այս ինչ ժամանակ ծնուած լինելու իմաստը: Նախիջևանցին սովորաբար չի ասում, ես ծընուել եմ այս ինչ թուականին, կամ այս ինչ տեղում, այս անպատճառ-«ես ընծայած եմ» այս ինչ տարին, կամ այս ինչ դիւդն ու քաղաքը ֆննդկանը կոչուում է «տղոյկան», իսկ տղոյկանին ազատողը կամ, ինչպէս Նախիջևանցիք ասում են, «տղայ առնողը» կոչուում է «Գալեկ», որ, ինչպէս ամեն տեղ, այսուղի էլ լինում են պառաւ կանալք, ուստի և կոչուում են գալեկ-մաներ, այսինքն «Գալեկ-մամաներ»: Գալեկները ներկայումս մնացել են միայն զիւղերում, իսկ քաղաքում նոքա արգէն վերացել կամ վերանալու վերայ են. նոցա փոխանակել են մասնագիտական կրթութիւն ստացած մանկաբարձ կանալք կամ աղջիկներ:

Բացի գալեկներից, տղոյկունին նայելու, նորա մօտ նատելու, մաքրութեան վերայ հսկելու համար Նախիջևանում կան և առանձին պառաւ կանալք: Գոքա «Գոգ-անաներ» են, որոնք չափաւոր վարձով միշտ հրաւիրուում են ծննդականի տունը և չար աչքից աղատուում և առհասարակ ինամում են թէ տղոյկանին և թէ նորածնին, գոնէ առաջին ժամանակները:

Նախիջևանում ծննդկանը համարեած թէ երբէք լիակատար կերպով քաւասունք չի պահում. քաղաքում սովորաբար պահում են 22 կամ ամենաշատը 30 օր, որից յետոյ կամ ինքըն ծննդականն է գնում եկեղեցի փարատուում, կամ ինչպէս ասում են, «քառունքուում», կամ քահանան է տուն զալիս, փարատում: Գլւղերում ծննդկանն աւելի շուտ է վեր կենում տեղից, աւելի շուտ է քառասունքուում և գուրս զալիս տանից, որովհետեւ, ինչպէս ամեն հայաբնակ տեղ, Նախիջևանի զիւղերում էլ բոլոր տնապին տնտեսութիւնը ծանրանում է կնոջ վերայ և չի կարելի երկար ժամանակ նորան երեսի վերայ թողնել:

Երկունքի գժուարութեան դէպքերում Նախիջևանի պառաւները զանազան միջոցների են դիմում. նոքա ծննդական ցաւով բռնուածի սենեակում բոլոր փակուած, գոց տեղելը բաց

են անում — դռները, պահարանները, գղրոցները, որպէս զի հեշտութեամբ բացուի, ազատուի և ծանրածը: Կոքա եկեղեցիների — Ս. Ֆէորդի ու Ս. Նիկողայոսի „թոփողներն“ են բերել տալիս և դնում տղոցկանի վերայ, „ջէնկի թուր“ են ջրում ողողում և ջուրը տալիս խմելու, և այն և այն:

Նորածին մանուկներին աղելն այստեղ էլ անխտիր կերպով պահպանուել է, իբրև առողջարար և հայկական հնաւանդ սովորութիւն. բայց ելեխաններին յօրօրոցում կապկալու սովորութիւնը, որ ընդունուած է Հայաստանում ամեն տեղ, այստեղ քաղաքում արգէն խսպառ վերացել է, գիւղերումն էլ վերանալու վերայ է:

Երեխայի մկրտութիւնը կամ կնունքն այս կողմերում որոշեալ ժամանակ չունի. նա կատարուում է կամ 2—3 օրից յնույ, կամ աւելի ուշ, նայելով հանգամանքին: Գիւղերում կնունքի կարգը միայն բայցափիկ դէպքերում է տանը կատարուում, իսկ քաղաքում այդ դատապարտելի սովորութիւնն աւելի յաճախ է տեղի ունենում և շարժական աւագան գործածելու սովորութիւնը գնալով տարածուում ու ընդհանրանում է: Այդ, ինչպէս և մեր եկեղեցական ծէսերի ու կարգերի զեղծումներից շատերը, պէտք է վերագրել մեր քահանաների անհոգութեան և նոցա ձգտման հաճոյանալու իւրեանց հարուստ ծխականներին, որոնց, ՚իհալկէ, շատ էլ հաճելի չէ իւրեանց բամբակում պահած ու պահելիք „աչքի լուսին“ շատ անդամ ցուրտ ու անախորժ եղանակներին քաղաքի հեռաւոր տնիքից ու անկլւններից իւրեանց ծխական եկեղեցին տանելու մկրտելու համար: Կնքահօր իւր սանամօրը և սանին տարած սովորական ընծաններին միշտ դարձ է տրուում մի որ և է արծաթեղէն և սառը-շաքար, կամ, ինչպէս Նախիջևանցիք ասում են, „նէրէդ-շաքար“:

Նախիջևանի քահանաները մանուկներին սովորաբար տալիս կամ դնում են օրացոյցի մէջ զտնուած գանաղան որբերի և սրբուհիների անուններ, նայելով, թէ ինչ օր է ծնուել մանուկը և այդ օրն օրացոյցով ո՞ր սրբի կամ որբուհու տօն է կատարում եկեղեցին: Այդ է պատճառը, որ Նախիջևանում

ազգային անունները համարեա թէ չ'կան, իսկ դորա վոյխարէն կան բազմաթիւ Սարդիսներ, Յովհաննէսներ, Կարապետներ, Մկրտիչներ, Գրիգորներ, Գէորգներ, Մարկոսներ, Պուկասներ, և Քրիստինէ, Նեկտարինէ, Ակիլինէ, Հերմոնէ, Եփրոսինէ և ուրիշ այսպիսի հայի ականջին խորթ անուններ:

Կնունքը տուն է բերուում լուռ ու մունջ. սկսում են միայն երգել, երբ հասնում են ծննդկանի տանը: Հին ժամանակների եկեղեցուց մինչեւ տուն շարական ասելը և զանգակներ հնչեցնելով կնունքը տուն բերելը ներկայումս քաղաքում իսպառ վերացել է և մնացել է միայն գիւղերում, այն էլ ոչ ամեն տեղ: Մինչեւ ցայսօր դեռ կարելի է տեսնել կնունքի այդ զանգակները մեր եկեղեցու միւո նուազարանի-ծնծղաների հետ Նախիջևանի եկեղեցիներից մի քանիսի պահարաններում պահուած եկեղեցական ուրիշ անդրծածելի իրեղէնների հետ միասին:

Մկրտութեան ինչոյքի սեղանի վերայ անպատճառ զըրուում է աւանդական ձուածեղը, որ ուտելուց յետոյ, հրաւիրեալներից իւրաքանչիւրն իւր համար անհրաժեշտ պարտականութիւն է համարում փող ձղելու ձուածեղի սկուտեղի մօտ յատկապէս այդ նպատակի համար գրուած պնակի մէջ, որից հին ժամանակները հատուցուել է գայնելի կամ մանկարձի աշխատութեան վարձը: Նորկայումս գրունից հաւաքանչ գումարը դարձեալ պատկանում է դայեկին, բայց դա համարուում է ոչ նորա աշխատութեան վարձը, այլ իբրև վերագիր ընծայ, ոբովհետեւ նա իւր աշխատութեան վարձը դարձեալ ստանում է կնունքի տիրոջից:

ՄԱՅ ԵՒ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ.

Երբոր Նախիջևանում մէկը մեռնում է, սովորաբար առում են, թէ այս ինչ մարդը «Գուն շատ ապրիս է եղել», մի ոճ, որ առաջ է եկել այն հանգամանքից, որ հանգուցեալ տիրոջը միսիթարելու համար, առհասարակ ասում են,

«Դուն շատ ապրիս», ուրեմն և կազմուել է ճիշտ այնպէս, ինչպէս «Աչքի լուս է եղել» ոճը:

Քաղաքում շատ հեշտութեամբ կարելի է խմանալ, թէ ալ է մեռնողը-ալր-մարդ, թէ կին-մարդ, որովհետեւ, նախ, եթէ ոչ բոլոր մեռնողների, գոնէ, շատ շատերի համար սովորաբար քաշուում է մալր-եկեղեցու զոյգ-զանգակը, երկրորդը, ալր-մարդու համար առաջ քաշուում է մեծ զանգակը, յետոյ փոքրը, կին-մարդու համար-ընդհակառակը:

Մեռեալն իսկոյն եկեղեցի չի տարուում, ինչպէս շատ տեղեր, այլ բոլոր ժամանակ, որ տեսում է 2-3 օր, պահուում է տանը և միայն թաղման կարգը կատարելու համար տարուում է եկեղեցի, որտեղից ուղղակի յուղարկաւորում է հանգստարանը: Իսկ եթէ այնպէս է պատահում, որ տանը պէս հետու յարմարութիւն չի լինում, սովորաբար մեռեալը տարուում է հանգստարանի եկեղեցին և այնտեղ մնում է որոշեալ ժամանակը, որովհետեւ միւս եկեղեցիներում հանգուցեալ դնելով պահելը գեղեցիկ կարգադրութեամբ խոտիւ արգելուած է:

Ամբիձը կամ, ինչպէս Նախիջևանցիք ասում են, „Համբիձը“ անխախտ կերպով շարունակուում է մեռնելու օրից մինչև կիւրակնամուտը-«կիրամուտքը» ամեն երեկոյ առաջ մեռեալի վերայ, քանի որ նա թաղուած չի, յեռոյ մեռեալի տանը: Մեռեալի վերայ հին հայկական սովորութեամբ սաստիկ լացուկոծ անելն այստեղ էլ պահպանուել է, միայն վերջացել է երգախառն ողբասացութիւնը, որ այնքան տարածուած է Հայաստանում և ուրիշ հայաբնակ տեղերում: Յուդ անելու համար, քանի որ մեռեալը տանն է, դադաղի մօտ դրուում են աթոռներ ու նստարաններ, որ շարքով և հանգուցեալին ազգական մերձաւորութեան կարգով բռնում են կանայք: Հանգուցեալի ամեն մի մօտ ծանօթի ու բարեկամի գալու միջոցին սգուորները նորոգում են իւրեանց սուզը, բարձրացնելով ձայները, ձեռքերը խփելով դագաղի սեղանին և հրաւիրելով նորեկին ականատես լինելու իւրեանց և իւրեանց բարեկամի անբախտութեան: Իսկ երկուորների թիւը խիստ շատ է լինում, որովհետեւ հանգուցեալի համարեան թէ բոլոր ազգականների,

ծանօթներն ու բարեկամները, հայկական հնաւանդ գեղեցիկ սովորութեամբ, իւրեանց սեպուհ պարտականութիւնն են համարում լինել մեռելի տանը, ներկայ զտնուել ամբիջներին, սիրտ տալ, մխիթարել հանգուցեալի մերձաւորներին, որ, չըգիտեհաք ինչու համար, կոչուում է «կարամուտ տալ»:

Յուգը շարունակուում է եկեղեցում ու գերեզմանատանը թաղման կարգը կատարելու ժամանակ, որովհետեւ այս կողմերում կանայք էլ յուղարկաւորում են հանգուցեալին և ներկայ գտնուում թաղման տխուր հանդիսին: Եկեղեցում էլ հանգուցեալի կարգը կատարելու ժամանակ ամենամօտ աղգականների համար դագաղի մօտ մի առանձին նստարան է դրուում և սրգուոր կանայք ոտից ցզլուխ սևաւորուսիծ բազմում են սիդ նստարանի վերայ, անդադար լաց լինելով, հառաչելով և յաճախակի խանգարելով ժամանացութիւնը:

Յուղարկաւորութիւնը կատարուում է հայկական յուղարկաւորութիւններին յատուկ շքեղութեամբ ու փառաւորութեսումբ, նայելով հանգուցեալի հասարակական դրութեան և նիւթական կալողութեան: Հարուստները համարեած թէ միշտ փարձում են շքեղ զիակառքեր թաղման պրոցեսուններին յատուկ բոլոր պարագաներով՝ ձիաւոր և հետևակ յուղարկաւորողներով, լուցեալ դամբարներով, պսակատարներով և նուագածուներով:

Յուղարկաւորութեան ժամանակ ամեն ոք ճանապարհի վերայ գտնուած տներում պէտք է ոտքի կանգնի, մինչև իսկ մանուկների օրօրոցները պէտք է բարձր տեղ դրուեն, որովհետեւ կարող են «մեռեկոխ» լինել: Մեռելիկոխ կարող են լինել և նոքա, որոնք շատ լաց են լինում մեռեալի վերայ, ուստի և նոցա հանգստացներու, մեռեալից հովացնելու և այդպիսով մեռելիկոխ լինելուց էլ ազատելու համար, պէտք է գերեզմանի հողից մի բուռն ածել նոցա կունակն օձիքի տակից:

Հանգուցեալների թաղման կարգը կատարելու ժամանակ „զանձ“ ասելու սովորութիւնն այստեղ էլ կայ. սովորաբար ասում են „Յոյս իի“ զանձը, այն էլ, ՚ի հարկէ, զլսաւորապէս հարուստների վերայ:

„Այդը“ միշտ կատարուում է թաղման կարգի հետ միա. սին, իսկ „եօթն“-ն երբեմն միասին, երբեմն էլ, և աւելի յաճախ, առանձին: Միասին կատարելու դէպքում կարգը կատարող քահանան միշտ այդ մասին յայտնում է հանգուցեալի տիրոջ, ասելով. „Կիրամուտքն ալ եղաւ“:

Թաղումն առանց հոգեհացի կամ մեռելահացի չի լինում. նախապէս գերեղմանի վերայ քաղաքում բաժանուում է մի մի կտոր «տորթ» և մի մի գաւաթ օղի, յետոյ ամենքը հրալրուում են մեռելատունը հոգեհացի. որից յետոյ ամեն մէկին տրուում է մի մի գաթայ, որ իւրեանց հետ տուն են տանում: Թաղման գաթան, որ մի միջին մեծութեամբ հաստ կլորակ ուռուցիկ հաց է, պատրաստուում է մաստակախառն խմորից և խորախից: Եօթն և քառասունքը կատարուում են սովորաբար մասնաւոր կերպով, իսկ տարին դարձեալ ընդհանուր կերպով, ինչպէս թաղման հոգեհացը: Բացի սովորական գերեղմանօրհնէներից, ունեոր մարդիկ սովորութիւն ունին տարին մի անդամ պատարագ անել տալու իւրեանց մեռեալների հոգուն, և այդ առթիւ հաց են տալիս աղքատներին: Այդ տեսակ պատարագները կոչուում են „ժամ-պատարագ“:

Նախիջևանցիք էլ միւս չայերի պէս սիրում են շքեղ շիրեմներ կանգնեցնել իւրեանց ննջեցեալների վերայ և զանազան սրտառուչ արձակ և ոտանաւոր տապանազրեր փորագլել տալ նոցա վերալ, անպատճառ երկու լեզուով-հայերէն և ուռսերէն: Պատահում են և աշխարհաբ սռ տապանազրեր: Զուրկ չէ հետաքրքրութիւնից հետևեալ աշխարհաբառ տապանագերը, որ մենք արտադրում ենք Ս. Նիկողայոսի հանգուտարանի գերեղմաններից մէկի վերացից:

Երբեմն մարդ էի ես ձեզի պէս,
Այժմըս եղայ ես հողի պէս.
Ես չի պիտ ըլլամ ձեզի պէս,
Դուք պիտի ըլլաք ինձի պէս:

ԺԵՍԵՐ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Ա Մ Ա Ն Ո Ր

ախիջևանցիք Ամանորին, բացի «Նորտարի» ասելուց, առում են և «Կաղանդ» և միմեանց շնորհաւորելու առում են. «Ճնորհաւոր նոր տարի, ամեն տարի բարով հասնինք», կամ «Ճնորհաւոր կաղանդ, ամեն տարի բարով հասնինք»: Ամանորի սովորական ընծայաբերութիւններն էլ նոյն «կաղանդ»բառից կոչում են «կաղանչէք»:

Դեկտեմբերի Յ-ին տանտիկինները - «եանկաները» ամբողջ օրը զբաղուած են լինում կաղանդի սեղանի պատրաստութեամբ: Յատկապէս, իբրև Նոր-տարու նշան, կատարում են «Կաղանդը», «Տարին», և զանազան պասուց խմորեղէն՝ «զաթա», «Սամսա», քսակներ, մազեր, հիւսեր, իսկ զիւղերում, բացի դոցանից, և «խալաջ», կովի կուրծքեր, ցորենի հորեր և անսառւնների սմբակներ:

«Կաղանդը» պատրաստում են մեղրից և կաշին հանած և

բոլած ընկուղից: Մեղրը հում-հում այնքան հարում են — «զարնում», որ բոլորովին սպիտակում է, յետոյ ձգում են մէջը բոված և մաքրած ընկուղը և այդ բոլորը միասին խառնելով, լցնում են մի գեղեցիկ անօթի մէջ ու դնում սեղանի վերայ:

«Տարին», որ տարուայ իսկական նշանն է, մի մեծ բոլորշի և տսիփարակ հաց է, որ այնպէս է շինուած, որ վերան պարզ կերպով երևում են մի քանի մասեր կամ ճիւղաւորութիւններ: Այդ մասերի կամ ճիւղերի թիւը լինում է կամ 12 հատ տարուայ 12 ամիսների թուով, կամ տան մէջ եղած անդամների թուին համեմատ: Հին ժամանակները սովորութիւն է եղել ընկուղով, չամիչով և զանազան նկարներով զարդարելու այդ հացի երեսը և, ինչպէս Տաճկա-Հայաստանի շատ տեղերում մինչև ցայսօր էլ անում են, վերան թուականը դրելու, բ' յց այդ սովորութիւնը ներկայումս վերացել է և մնացել է միայն, այն էլ մի քանի ընտանիքների մէջ, չամչով և ընկուղով զարդարելու սովորութիւնը: Տարի-ի մասերից մէկի մէջ դրուում է մի արծաթ դրամ իբրև բաղդփորաւմ: «Տարին» կտրում ու բաժանում են ընտանեաց անդամներին կամ նոյն իսկ կաղանդի գլշերը, կամ երրորդ օրը, կամ ծննդեան ճրագալոցին և կամ, վերջապէս, յունուարի վեցին, տնօրհնէքից յետոյ: Ճատ հին ժամանակները, ինչպէս երեւում է, «Տարին» կտրելու ու բաժանելու ժամանակն եղել է միայն կաղանդի գլշերն իբր տարուայ նշան, յետոյ արդէն սովորութիւն է դարձել յետաձգել մինչև տնօրհնէքը, որովհետև նախջևանցիք սովորութիւն ունին տնօրհնէքի ժամանակ սեղանի վերայ դնել ծննդեանը ջուր և հաց, իսկ զատկին՝ կարմիր հաւկիթ և զատկահաց: Այժմ քաղաքում, որովհետև տնօրհնէքը կատարուում է ոչ միայն Յունուարի վեցին, այլ և հետևեալ օրերը ևս, այլ ևս չեն սպասում, որ առաջ «Տարին» օրհնուի, յետոյ արդէն կտրուի ու բաժանուի, այլ յաճախ ծննդեան ճրագալոցին կատարում են այդ դորձողութիւնը, իսկ օրհնելու համար սեղանի վերայ դնում են եկեղեցուց բերած օրհնած ջուր և «Տարի»-ի տեղ մի որ և է հաց: Տարին կտրելու ժամանակ ում որ դուրս է զայխ արծաթ դըրամը, նա տարուայ տէրն է համարուում և ընտանեաց մէջ

ամենաբաղդաւորը: Դրամը «բաղդաւորը» կամ ձգում է իւր քըսակը, որ ամբողջ տարին լիքը լինի փողով և կամ տանում է եկեղեցի, մոմ գնում և աղօթելով վառում սրբերի առաջ:

«Պաթան» ալիւրից ու ջրից շաղախուած ու փոքրիկ, կլորիկ, ուռուցիկ ձևով շինուած խմորեղէն է, որի մէջ դրուում է ընկուղից ու մեղրից պատրաստուած խորխոխ, իսկ «Սամսան» դարձեալ միայն ալիւրից ու ջրից շաղախուած եռանկիւնաձև կարկանդակ է, որի մէջ դրուում է սոխ ու չամիչ: «Խալաջը», որ պատրաստում են միայն դիւղացիները, կիսալուսնաձեւ, կամ կլորակ, մէջը ծակ հաց է, զարդարուած զանազան հիւսուածքով ու օրինակներով, իսկ մտղի հիւսերը, քսակները, կուրծքերը, ցորենի հորերը և սմբակները, որոնցից առաջինը և երկրորդը զլխաւորապէս պատրաւտում են քաղաքացիները, իսկ միւսները միայն դիւղացիները, նոյն առարկաների ձևով, շինուած խմորեղէններ են, որոնք արտայալում են ժողովրդի պէս-պէս բաղդանքները՝ որ տան մէջ գտնուած աղջիկների մազերն երկար լինեն, տղամարդկանց քսակները լիքը փողով, կուիրն առատ կաթ տան, անասուններն առողջ լինին և ցորենի հորերը լիքը ցորենով:

Երեկոյեան գեմ լսուում է «կալանդոս» երգող երեխանների ձայնը, որոնք խումբ-խումբ տնկցուուն են մաս գալիս, երգելով շնորհաւորում են կաղանդը և զաթա, սամսայ, խալաջ ու փող են հաւաքում: Քաղաքում «կալանդոս» երգում են դեկտեմբերի 31-ի առաւտեանից մինչև երեկոյ և, որ հետաքրքրականն է, հայ երեխաններն երգում են և՛ հայերէնը և՛ ուուսերէնը, իսկ ուուս երեխանները և՛ ուուսերէնը և՛ հայերէնը:

Դիւղերում «կալանդոս» երգում են այսպէս.

Կալանդոս, դոս, դոս,

Սմէն տարի բարով հասնինք,

Ճնորհաւոր Նոր-տարի,

Նոր եանկացի¹⁾ տուն բերի,

Ճալէ շապիկ հագուցի,

¹⁾ «Եանկա» ասում են եղբօր և հօրեղբօր կնոջը և տանտիկներին:

Քիրմէ գօտի կապեցի.

Խալաջ տուէք:

Քաղաքում երդում են այսպէս.

Կալանդոս, դոս, դոս,

Կալանդոսը՝ էկիլ է,

Դուռին տակը կայնիլ է,

Ջալէ շապիկ հագիլ է,

Կարմիր գօտի կապիլ է, ¹⁾

Մէկ աւուճին ²⁾ խայիլ է:

Դեկտեմբերի 31-ին զիշերը ճիշդ այն ըոպէին, երբ հին տարին անհետանում ու կորչում է յաւիտենականութեան մէջ և ծնում է նոր-տարին, դետերը և աղբիւրներն ոսկի են հոսում, ուստի և գիւղերում ամեն մէկն աշխատում է այդ ժամանակ ջրերի վերայ գտնուել, ջուր վերառնել, որ հարստութիւն տուն տանէ: Նոյն ժամանակ երեւում են և ահռելի «լեռնջոլողը», և «ժիվոտը» (շըւոտ) և «Առամ—թառալիմը» և սկսում են շընել մարդկանց մէջ ու զանազան փորձանքներ բերել նոյա դիմին, ուստի և ծնողները զդուշացնում են երեխաներին և չեն թողնում նոյա նոր-տարի գիշերը դուրս գալ:

Նոյն դեկտեմբերի 31 երեկոյեան մինչև որ տան ըոլոր անդամները ըրհաւաքուին, ճարագ չի վառուում տների մէջ: Երբոր տնեցիք հաւաքուում են, ըոլորեքեան մտնում են մի սենեակ և մոմը վառելով, դնում են մէջտեղը, սեղանի վերայ: Ճարագի լոյսից, ՚ի հարկէ, մարդկանց ստուերն ընկնում է սպատերի վերայ և երեւում մէկինը լուսաւոր, միւսինն աղօտ գծագրութեամբ: Դրանից զանազան գուշակութիւններ են անում, թէ ՞մվ Նոր-տարուայ ընթացքում աւելի բաղդաւոր կ'ըլինի և ՞մվ անբաղդ: Որի որ ստուերը պարզ կերպով արտացոլուի պատի վերայ, նա էլ տարին յաջողութեամբ կանցկացնէ, բաղդաւոր կ'լինի, որինը, ընդհակառակը,

¹⁾ Աւուճ=Բուռ:

²⁾ Խայիլ ըլլալ=համաձայն լինել:

խաւար ու աղօտ, նա փորձանքների կ'հանդիպէ, որոնցից գուցէ և անվտանգ չկարողանայ դուրս գալ:

Հայկական Ամանորի և Նաւասարդի մասին այս դարիթականների մէջ յիշողութիւն ամենելին չի պահպանուել:

ԾՆՈՒՆԴ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Ծննդեան ճրագալուցից ժամերգութիւնը շատ կանուխ է ըսկըսուում, համեմատաբար շատ կանուխ էլ վերջանում է: Եկեղեցում ժամաւորներից շատերը կանդնում են վառած մոմերով ոչ թէ միայն դանիէլի զրքի ժամտնակ, այլ և առհասարակ ժամերգութեան սկզբից մինչև պատարագը: Դանիէլի զիրքը, ինչպէս ամէն տեղ, այսուեղ էլ կարդում են մանուկները. բոլոր զիրքը բաժանուում է երկու մասին՝ բուն պատմութեան, որ առանձին կանդնած կարդում է երեխաներից մէկը, և Սեղակի, Միսաքի և Սբէդնակովի խօսքերի, որ արտասանում են երեք մանուկ միասին՝ նոյնպէս առանձին կանդնած: «Օրհնեցէք»-ը երգում են բոլորեքեան միասին:

Ամեն մէկի կարգալու նիւթը տպուած է առանձին-առանձին երկար լիերթերի վերայ, որ հեշտ լինի բունելու ու կարգալու, զրքակալ չ'գրուի, բերանացի էլ սովորելու հարկաւորութիւն չինի:

Ժամաւորները վերադառնում են տուն, բերելով իւրեանց կետ նոյնքան մոմ, որքան տան մէջ անդամ կայ, և վառում են ընթրքի ժամանակ ամեն մի սպասի առաջ և այդպէս վառած մոմերով էլ ընթրիք են անում:

Երեկոյեան տնօրհնէք շրջելու սովորութիւն չկայ: Քահանաները միայն այցելում ու օրհնում են իւրեանց կնքահայրերի և այն տները, որոնց մէջ հանգուցեալ է եղել, իսկ միւս տների օրհնութիւնը թողնում են միւս օրուան:

«Աւետիս» երգելու սովորութիւնը, որ այնքան ընդհանրացած է հայերի մէջ, քաղաքում արդէն վերացել է և մնացել է միայն զիւղերում: Երգում կն առհասարակ հետևեալ «Մեծ» կոչուած աւետիսը.

Աստղ մի ելաւ յարևելից, աւետիս.
Խմաստնասէրք զարհուրեցան, աւետիս.
Աստղաբաշխեր ժողովեցան, աւետիս.
Ջատ քննեցին և չիմացան, աւետիս.
Խրեանց մէջ կոյր մը գտան, աւետիս.
Թևէն մտան, առին, ելան, աւետիս.
Երբ այն աստղն նայեցաւ, աւետիս.
Եյն կուրացած աչքը բացաւ, ա. ետիս.
Եղբացը, այս մեծ աստղ է նշան, աւետիս.
Թագաւոր ծնաւ ՚ի հրէաստան, աւետիս.
Մելքոն, Գասպար և Բաղդասար, աւետիս.
Երեք թագաւորք աղնուականք, աւետիս.
Երթանք, տեսնենք հայոց արքայն, աւետիս.
Խորհուրդ արին խրեանց մէջը, աւետիս.
Ջատ հեծելօք ճամբայ մտան, աւետիս.
Աստղն ցուցնէր նոյս ճամբան, աւետիս.
Ցերելը հրեշտակ երևեցաւ, աւետիս,
Գիշերը աստղ լուսոյ մտան, աւետիս.
Թէ Յիսուս է թէ Քրիստոս, աւետիս.
Օրհնած տունիս տանուտէրին, աւետիս.
Թէ Պողոս է, թէ Պետրոս է, աւետիս.
Օրհնած տունիս տանտիկնոջը, աւետիս.
Թէ Սառա է, թէ Մարթա է, աւետիս.
Օ, հնած տունիս կրիմներուն, աւետիս.
Աստուած այս տունը շէն պահէ, աւետիս.
Մինչեւ գալուստն Փրկչին, աւետիս.

Բացի այս «աւետիսից», որ երգում են բոլոր զիւղերում,
Չալթըրում, Թոփիտիում և Փոքր-Սալայում երգում են և ու-
միշ ժողովուական աւետիսներ: Թոփիտիում և Փոքր-Սալայում
իրգում են հետևեալը.

Երանելի կոյս Մարիամ, աւետիս.
Որ կոյս էիր, կոյս ծնեցար, աւետիս.
Շնար երեր Աստուածորդին, աւետիս.
Աստուածորդին այն Սուրբ Հոգին, աւետիս.

Մարիամ առաւ իւր մէկ որդին, աւետիս.
Տարաւ Նորա աշկերտութիւն, աւետիս.
Երբ քննեցին, երբ հարցուցին, աւետիս.
Նա կ'կարդար Սաղմոսարան, աւետիս.
Սաղմոսարան երբ քննեցին, աւետիս.
Նա կ'կարդար Զարականներ, աւետիս.
Զարականներ երբ հարցուցին, աւետիս.
Նա կ'կարդար աստուածաբան, աւետիս.
Աբեղաներ իրար եկան, աւետիս:
Կոյս Մարիամին գիր խրկեցին, աւետիս.
Մարիամ արին, առ քո որդիդ, աւետիս.
Քո մէկ որդուդ, այն Սուրբ Հոգուն, աւետիս.
Նա մեզ չանէր աշկերտութիւն, աւետիս.
Մեզի կանէ վարպետութիւն, աւետիս.
Մարիամ կորոյս իւր մէկ որդին, աւետիս.
Կուլար կողբար, կաղաղակէր, աւետիս.
Ճամբորդներուն հարցունք կանէր, աւետիս.
Մարիամ, մեզի տուր բանիդ նշան, աւետիս.
Որսէս տեսանք, այնպէս պատմենք, աւետիս.
Ես իմ որդիս եմ ցանկացեալ, աւետիս.
Ճալէ շապիկ ՚ի լոյս անձին, աւետիս.
Դ զլիստան արե աղոյն, աւետիս.
Պայծառ կենար արծաթիշպէս, աւետիս.
Դեր մը տեսաւ յԵրուսաղէմ, աւետիս.
Խաչ, գաւաղան ունէր ձեռին, աւետիս
Աւետարան ունէր ՚ի՛զիրկն, աւետիս:
Զալթըրում էլ երգում են հետևեալը.
Յիսուս, Յիսուս աշակերտաց, աւետիս.
Վաթուուն և վեց հայրապետաց, աւետիս.
Հետ երթացին, հետ քարոզին, աւետիս.
Անկալ ու կոյր Լուսաւորչին, աւետիս.
Գնացին, ելանընարուած ծովուն, աւետիս.
Որտեղ նաւեր կանգնած կացին, աւետիս.
Եղբացք առէք, ելէք նաւորդիք, աւետիս.

Ես ձեզ անիմ բազում աղօթք, աւետիս.
Մեզի չէ պէտք բազում աղօթք, աւետիս.
Մեզի պէտք է դրամ բազում, աւետիս,
Խաչակնքեց, դրամ կազմեց, աւետիս.
Երեք նաւաէր ելան ՚ի վեր, աւետիս.
Շովին էլ տականց պղտորեցաւ, աւետիս.
Եղբայր, այս ինչ մարդ մեղաւոր, աւետիս.
Մարդ մեղաւոր, բաց ալեոր, աւետիս.
Ելան ՚ի վեր, ընկան էր ոտք, աւետիս.
Դուն մեր Յիսուս, դուն մեր Քրիստոս, աւետիս.
Եղբայր, պահէք, քուն մի եղէք, աւետիս.
Ես ձեզ անիմ բազում աղօթք, աւետիս.
Բազումք ելան քաղցրագիշեր, աւետիս.
Հաւն ալ խօսեց երեք բերան, աւետիս.
Եղբայրք ելէք անուշ քներէդ, աւետիս.
Օրհնած ծովիս, օրհնած նաւիս, աւետիս.
Օրհնած այս տունիս, կտրիճներ, աւետիս.
Աստուած այս տուն շէն պահէ, աւետիս.
Ջէն պահողն ալ առողջ պահէ, աւետիս.
Վմեն տարի բարով հասնինք, աւետիս.
Զեզ սիրելով հաւասար, աւետիս.¹⁾

Ճրագալուցի բնժըքի համար, բացի սովորական նաւակատեաց կերակրներից՝ ձկնախաշուից, տապակած ու խաշած ձկնեղէնից, պատրաստուում է անպատճառ և «կուբաթի», որ ուտում են ձկնախաշուի հետ միասին: «Կուբաթին» նման է թուսաց «պիրողին», բայց աւելի նուրբ է, աւելի ճաշակով է պատրաստուում, աւելի համարամ է, քան թէ սովորական պիրողները: Նախիջևանցի եանկաներն ու «ջիջաներն»²⁾ մեծ վարպետութեամբ նարանով – օխովով – «թել բանալ» գիտեն և մեծ ճարտարութեամբ պատրաստում են «թելբաց-կուբաթի», «թելբաց-սամսա» և քառասուն թել փախլաւա»:

¹⁾ Այս աւետիսները գարիանտ են: Տես Կարապետ Կոստանեանցի «Նոր ժողովածու, Ա պրակ» 1, 4 և 6 աւետիսները:

²⁾ Ջիջա ասում են մեծ բրոջը ու բան անող կանանց:

Թելբաց-կուբաթիի, ինչպէս և թելբաց-սամսալի թելերի թիւն անորոշ է՝ 14, 20 և 30, մի խօսքով որքան շատ, այնքան լաւ: Թելերի կէսն խղող օճելուց և միմեանց վերայ դարսելուց յետոյ, լցնում են վերան թեթև տապակած ձկան միս ու սոխ և այդ բոլորը ծածկելով խղով օճած և միմեանց վերան դարսած թելերի միւս կիսով ու վերան հաւկիթ քսելով, դնում են փուռը եփելու:

Մկրտութեան ժամերգութիւնը նոյնպէս սկսում է շատ շուտ և աւարտուում է առաւտօտեան շատ կանուխ, այնպէս որ առաւտօտեան վեց-եօթ ժամին արդէն ամեն բան վերջացած է լինում և քահանաները սկսում են տնօրհնէք մանդալ: Տնօրհնէքը կատարուում է հապճեպ և այդ հոգեսոր նուիրական արարողութեան ոչ վայել վսեմութեամբ: Քահանաները պատճառ բռնելով այն հանգամանքը, որ պէտք է աշխատեն հէնց առաջին օրն օրհնել իւրեանց ծխականների տների մեծ մասը, որովհետեւ իրիւ թէ ժողովուրդը նեղանում է, երբ քահանան ուշ է զնում նոյս տունը, տուն մտնելը ու գուրս զալը մէկ են անում, շարականներգում են հւալով, աւետարան չեն շըրջեցնում իւրեանց հետ, այլ ասում են բերանացի, շատ անգամ սխալներով և կակաղելով, և այն և այն:

Քրօրհնութեան համար եկեղեցիներից հանդիսով զուրս գալու, գետը դնալու և կամ եկեղեցիների բակում յորդանան շինելու ստվորութիւնը, որ այնքան շքեղութեամբ սիրում են կատարել հայերն ամեն տեղ, այս զաղթականութեան մէջ չը կալ և, ինչպէս երեսում է, վերացած է եղել գեռ Ղոխմում, գուցէ, մոլեռանդ մահմեղականների երկիւղից: Հանդէսը կատարուում է եկեղեցիներում առանձին աւաղանների մէջ և ժողովուրդը մեծ ջերմեռանգութեամբ խունուելով, ինչպէս ստվորութիւն է ամեն տեղ, օրհնած ջուրը տուն է տանում ամաններով, որովհետեւ տնօրհնէքի ժամանակ նախիջևանցու սեղանի վերայ հացի հետ միասին պէտք է անպատճառ և օրհնած ջուրը լինի:

Խաչը ջրից հանելու կամ խաչի կնքահալութեան հետ միասին այս զաղթականների մէջ կալ և մեռնի կնքահալու-

թիւն, որ կատարուում է նոյնպէս վայելուչ հանդէսով: Կնքահայր լինել ցանկացողը հազնում է շապիկ, խոկ քահանան բոնեով նորա զլիսին ո. մեռոնի աղաւնին, հանդիսաւոր թափօրով գալիս, բարձրանում է նորա հետ բեմը: Խաչի կնքահայրութիւնը, ինչպէս երեւում է, քաղաքում շուտով կ'վերանայ, ինչպէս արդէն վերացել է դռնաբացէքին աշխարհականներից մէկի ձեռքով դուռը-վարագոյրը բանալու սովորութիւնը: Գլուղելում դռնաբացէքին, վորսանակ սեղանի վարադոյրը բանալու, պատկերների երեսն են փակում ու բաց անում:

Օրհնած ջուրը պահում են առանձին սամաններով տների մէջ ամբողջ տարին և գործ են ածում իբրև զեղ ու զարման և իբրև մաքրութիւն ու փարատութիւն, երբ հարկաւոր է լինում մի որ և իցէ աղտոտած, պղծուած անօթ սրբելու, մաքրելու: Տներում պահում են նոյն նպատակով ու նոյն գործադրութեան համար և Երուսաղէմից բերած «Քետ յորդանայ», այսինքն Յորդանանի ջուր:

ՍԹԱԶԱՒՈՐՍՅ ՊԱՍ ԵՒ Ս. ՍԱՐԳԻՍ

Առաջաւորաց պասին նախիջեւանցիք էլ ո. Սարգսի պաս են ասում: Ս. Սարգիսը, որ Յուլիանոս ուրացողի բռնութիւնից փախչելով, եկել է նախ Հայոց Տիրան Բ. թաղաւորի մօտ և յնույ գնացել է պարսից Ճապուհի մօտ և նահատակուել է սորաձեռքով իւր Մարտիրոս որդու հետ միասին Յունուարի 30-ին, ինչպէս յայտնի է, միշտ գալթակղութեան քար է եղել Յանաց և Հայոց եկեղեցիների յարաբերութեան մէջ: Հայերը նորան հաւատքի համար հալածուած ու նահատակուած համարելով, ընդունել են իբրև սուրբ և նորա համար յատուկ տօն են նըշանակել, խոկ Յոյները նորան իւրեանց արքայադուստրը փախցնող արկածախնդիր մէկը համարելով, ոչ միայն նորան սուրբ չեն ընդունել, այլ և անարգել են. հիմնուելով այն հանդամանքի վերայ, որ հայ ժողովուրդը միամտութեամբ այդ սրբի

տօնը մեծաւ մասամբ Առաջաւորաց պասի շաբաթ օրը գալու համար, ո. Սարգսի պաս է կոչուում ամբողջ Առաջաւորաց պասը, միշտ և հանապաղ զբարտել և բամբասել են Հայոց եկեղեցին: Կոքա մինչև անդամ այդ մասին մի ամբողջ առասպել են հանարել ու մտցրել նորան իւրեանց ճաշոցների մէջ և դոյն առասպելի հեղինակութիւնն ընծայել են մի ոմն Սահակ-անունով կաթողիկոսի, որ իբրև թէ գոյութիւն է ունեցել Հայոց կաթողիկոսների շարքում և ապրի է ՓԲ գարում: Այդ առապելաբանական Սահակ կաթողիկոսի հեղինակութիւնը, որ մի ընդարձակ յունարէն գլուածք է, գոյութիւն ունի մինչև ցայտ սօր և կոչուում է «Ճառ ընդպէմ Հայոց», առասպելաբանում է, թէ երբեմն եղել է Հայոց մոլորութեան վարդապետ Սարգիս անունով մէկը, որ ունեցել է մի շուն «Արցիվուր» լորջործումով: Ուր որ գնալուս է եղել այդ Սարգիսն իւր մոլորութեան սերմերը ցանելու համար, նախապէս միշտ ուղարկելուս է եղել իւր շանը իբրև առաջընթաց և իւր անելիք ացելութեան սղգանշան: Ժողովուրդը տեսնելով Արցիվուրին, իմանում է եղել վարդապետի զալու մասին, պատրաստութիւն է տեսնում եղել և թափօրով ընդառաջ դուրս գալով, սիրով ու մեծարանքով ընդունելուս է եղել նորան: Մէկ օր էլ իբրև թէ գալ է պատահել շանը, երբ դա իւր սովորական պաշտօնով գնալուս է եղել զիւղերից մէկը, և պատառել նորան, ուստի և վարդապետը գալով, չի տեսել այն յարդանքն ու պատիւր, որ առհասարակ սովոր է եղել տեսնելու: Մտնելով գիւղը և իմանալով, որ Արցիվուրը չի եղել, մարդիկ է ուղարկել որոնելու, և գտած ոսկորներից գուշակելով նորա զլիսին եկածը, շատ ցաւել է, և հրամայել է Հայերին նորա մահուան համար սուզանել, ծոյն պահել և սահմանած պասը կոչել է շան անունը «Արցիվուրց պահէք»:

Ահա Հայերի և յոյների մէջ այդ տօնի առթիւ առաջ եկած խոսք ու զրոյցի, հակածառութեան և զորանից ծագած փոխաղարձ ատելութեան հետեւանքը կամ արգուսիքը պէտք է համարել այն համոզմունքը կամ կալծիքը որ զոյացել և մինչև ցայսօր դեռ պահանուել է նախիջեւանցոց մէջ, թէ ո.

Սարգիսը միշտ վրէժինդիր է լինում յոյներից, իւր տօնի շաբաթը բքախեղդ անելով յոյն ճանապարհորդներին։ Նախիջևանցիք, երբ ո. Սարգսի տօնի օրը կամ նոյն իսկ ամբողջ Առաջաւորաց պատի շաբաթն քամիներ են բարձրանում և բուք է լինում, սովորութիւն ունին ասելու. «ո. Սարգիսը հոռոմ պիտ խըղդէ», «ո. Սարգիսը հոռոմ չ'խըղդած չիլալ» և կամ թէ «ո. Սարգիսը հոռոմ պիտ փատցունէ», «ո. Սարգիսը հոռոմ չը փատցրած չիլալ»։

Այս գաղթականների կարծիքով ո. Սարգիսը մի դօրաւոր և արագահաս սուրբ է, որ ձի հեծած անդադար ոլանում է ամպերի և ծովերի վերայ, աղջիկների բաղձանքները և երիտասարդների-«կտրիճների» «մուրատն» է կատարում, ճանապարհորդներին և առհասարակ նեղութեան մէջ զտնուողներին շուտափոյթ օգնութիւն է հաւցնում և ազատում: «Սուփ Սարգիս, տուն նեղիս հասնիս», բացագանչում և երեք անդամ խաչակնքում է երեսին նախիջևանցի զիւզացին, երլ նա կամենում է շուտով մի բանի հասնել, երբ նա մի որ և իցէ նեղութեան մէջ է լինում¹⁾։

Թէ ի՞նչ տեսակ են համկանում ո. Սարգսին նախիջևանցիք և ի՞նչպէս են երեակայում նորան,—կարելի է տեսնել հետեւեալ աղօթքաձեւ հին ասացուածքից, որ մինչեւ ցայսօր դեռ պահուել է և երբեմն-երբեմն կարելի է լսել ծերերի բերանից։

Քիշեր ասի տուս էլլայ,
Մէկ զօրաւոր սուփ տեսայ,
Ասի, յացի, ոթքն ինկայ,
Ասի, հայր սուպր, անունդ ի՞նչ է.
Իմ անունս սուփ Սարգիս,
Օթուս անունը՝ սուփ Մայտիրոս,
Ռիս կըքալէ ամպին վըրան,
Անթաթար ծովին վըրան,

¹⁾ Տես Ռափայել Պատկանեանցի «Զախու» գրուածքը «Մատերիալы для изучения армянскихъ нарѣчій», выпускъ I. Говоръ Нахичеванскій».

Գնա, ասա քերիներուն

Ազատ անէ իր արևուն¹⁾:

Հասած աղջիկներն իւրեանց բաղձանքներին և կտրիճներն իւրեանց «մուրատին» հասնելու համար այդ պատի շաբաթը սովորաբար երեք օր ծոմ են պահուում և ճաշակուում են: Այդ ծոմապահութեան առթիւ էլ երրորդ օրը փեսացուների տներից հարսնացուների տները «ծումչէքը» է զալիս: «Ծումչէքը» բաղկացած է լինում մի որ և իցէ կնոջ ընծալից, անուշեղէնլից՝ «խաթմուխի հալուա», «իվլիկ հալուա», և այն և մի տեսակ պղպեղախառն եփած մեղրաջուր ըմպելիքից, որ կոչուում է «հալրա»: Հարսնացուների տներում «ծումչէքը» վայելելու համար «Աղջիկ-ժողոտանք» է լինում: Նշանած աղջիկները հրաւիրում են իւրեանց ընկերուհիներին և բարեկամ աղջիկներին և նոցա հետ միասին ուտում, խմում, պարում և ամբողջ օրը ուրախանում են: Այդ դէպքից օգուտ են քաղում նշանուած և նշանելու կտրիճները. նոքա հաւաքուում են «ժողովտանքի» տան պատուհանների տակ և աշխատում են նայել, տեսնել՝ որն իւր նշանածին, որն էլ իւր հաւանածին: Նոցա, այդ կտրիճներին ոչ մի կերպով հեռացնել, վարել պատուհանների տակից չի կարելի, որովհետեւ, նախ, ինչպէս ասում են նախիջևանցիք, «նշանուած կտրիճները հաստերես կըլլան», երկրորդ, ինքեանք աղջիկներն էլ փոխադարձաբար ցանկանում են իւրեանց փեսացուներին ու հաւանածներին տեսնել:

ԴԼՐԸՆԴԻԶ ԵՒ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Նախիջևանցիք Դլրընդէղին ասում են «Տերինտաղ» և զիւղերում կատարում են համարեած թէ այնպէս, ինչպէս ուրիշ տեղերում, փողոցներում, հրապարակներում և տների բակերում խոտի խուրձերից դէզեր կազմելով, եկեղեցուց բերած վառած մոմերով վառելով նոցա և չորս բոլորը պտտելով և

¹⁾ Այս աղօթքը առաջին անգամ տպագրուած է Քերովի: Պատկանեանի «Говоръ Нахичеванскій» ի մէջ:

վերալից թուշելով: Քաղաքում չայոց այդ կռապաշտական հետաքրքրական հին սովորութիւնն արդէն վերանալու վերայ է. ճիշդ է, այդ օրը երեկոյեան և կեզեցիները լցուած են լինում աղօթողներով, որոնք կանդնած են լինում վառած մոմերով և ժամերգութիւնից լետոյ ամենքն էլ շտապում են և աշխատում այդ մոմերը չ'հանդրած տուն հասցնել և նոցա հալուածքից խրեանց գոտիների և զիսարկների մէջ կաթեցնել, բայց արդէն «դըրնդէղներ» չեն շինում: Տեղ-տեղ միայն կարելի է տեսնել խանութների առաջ ձգուած վոքրիկ խոտի կրտեր, որ խանութների տղայքը վառում են, կամ, լաւ է առել, այրում, ծխեցնում են իբրև լիշտակ Դըրնդէղի:

Գլուղացիք կարծում են, որ զըրէնդէղի ծխով ու կրակով այրում ու վերջացնում են «Ժիվոտներին», որոնք երեսում են Նոր-տարուն: Թոփոլի զիւզում կայ մի վոքրիկ ձորակ, որի եզերքում գտնուած կրաքարի ժայռերի տակը և ճեղքերում գոյացել են այրաձև փոսեր: Ահա այդ ժայռերից մէկը, որ կրչում է «Բշգրւողաչեա», մասնաւրապէս ծառայում է իբրև «Ժիվոտ» այրելու տեղ: Գըրընդէղին զիւղի տղայքը հաւաքուում են վերջիշեալ ձորակը, խոտ են ձգում «Բշգրւողաչեայի» տակ գոյացած փոսի մէջ և այրելով երկար ծխեցնում են: Եթէ այդ ժամանակ մէկը նոցա հարցնէ, թէ «Տղայք, ինչ կանք», նոքա կ'պատասխանեն. «Ժիվոտ կերինք»: Նոյն կարծիքը դըրընդէղի մասին ունին և քսողաքացիք, միայն որ նոքա այստեղ «Տերինտագի» կրտի ու ծխի մէջ այրում, ոչնչացնում են ոչ թէ «Ժիվոտներին», այլ «Խոնջոլողներին», որոնք նոյնպէս երեսում են նոր տարուն:

Բարեկենդանին նախիջևանցիք ասում են «Բարիկենանք» և անց են կայնում նորան, ամբողջ շաբաթը, նամանաւանդ վերջին երեք օրը միմեանց մօտ հաւաքուելով-«բարիկենանք նատելով», կեր ու խոմ ամելով, քաղաքի հարեաններն ընտիր սահնակներով, խոկ հասարակ ժողովուրդն ու զիւղացիք «Ճուկի չանաներով»¹⁾ փողոցէ փողոց շրջելով ու զուարձանալով:

¹⁾ Չանա=սահնակ:

Նախիջևանցւոց յատուկ սովորութիւնն է այդ ուրախութեան օրերում գիմալաւորուելու-«Ճամալ¹⁾ ըլլալու» և զիշերներն իւրեանց ցանկացած տներն այցելելու: Երիտասարդներն ու աղջիկները դորանով միջոց են ստանում իւրեանց հաւանածների տները դնալ և ծպտեալ պարել ու զուարձանալ նոցա հետ: «Ճամալները» շրջում են խումբ-խումբ, խմբերը բաղկացած են լինում միմեանց աղջական, ծանօթ ու բարեկամ աղջիկներից ու երիտասարդներից, որոնք զանազան զիմակներ ու զգեստներ են հաղած լինում: Մի խումբը ներկայացնում է հարս ու փեսայ լիրեանց մերձաւորներով, միւսը-հոգեօրականներ՝ կոյս, քահանայ, աբեղայ, երրորդը՝ բոշաներ, չորրորդը զօրականներ, և այն և այն:

«Ճամալները» սովորաբար չեն խօսում, որովհետեւ վախենում են, որ ձայնից ու խօսելու ձեւից ճանաչուեն: Նոքա մի տուն մտնելուս, կամ երգում են, կամ գաշնամուր նուազել տալիս ու պալում, կամ, վերջապէս, ինքեանք են նուազում և ձեռների շարժուածքով ու փոխած ձայնով զանազան սրաբանութիւններ, կատակներ անում, զուարձանում ու զուարձացնում տնեցւոց:

Բուն բարիկենդանի, կամ, ինչպէս նախիջևանցիք ասում են, Մեծ-բարիկենանքի վերջին երկու օրը ցերեկով էլ փառցներում երեսում են «Ճամալների» խմբեր, որոնք կամ ձիառըրուած, կամ սալերի վերայ նստած դար ու զուռնայով կամ երգեհոնով, հարայ-հրոցավ, պարելով ու ձիարշաւ լինելով շրջում են փողոցէ փողոց, կանգնում են խանութների առաջ, մտնում են տների բակերը ու փող են հաւաքում: Դա նախիջևանի հակական կառնաւալի պրոցիսիոններն են, որոնք զիւղերում սովորաբար ներկայացնում են հարս ու փեսայի հանդիսաւոր ընթացքը, խոկ քաղաքում, բացի հարս ու փեսայի ընթացքից, և ուլիշ պատկերներ:

Բացի այս բոլորից, նախիջևանի զիւղերում մնացել է ուրիշ շատ հայարնակ տեղերին յատուկ բարեկենդանին ընդհա-

¹⁾ Ճամալ=դիմակաւոր:

նուր ձիարշաւ սարքելու սովորութիւնը: Գիւղայի կտրիմները դուրս են դալիս դաշտը և «խոչի» են դալիս, այսինքն ձիարշաւ են լինում, աշխատելով իրար առաջը տալ և շուտ հասնել նշանակուած տեղը:

Տուն բարեկենդանի վերջին օրը-կիւրակի երեկոյեան նախիջևանի պառաւները-«Մեծաները» կամենալով իւրեանց թուներին, կամ առհասարակ տան մէջ եղած մանուկներին ժամ առաջ քնած տեսնել, սովորաբար ասում են նոցա, «Հայտա, տղաք, ասօր կանուխ պառկէք, որ առաւոտն ալ կանուխ էլլիք տեղերէդ ու տեսնիք «Մըռմըռասը», որ քիշերը տէրտէրը պիտ բերէ ու կախէ»:

Մ Ե Թ - Պ Ա Յ

Մեծ-պասին նախիջևանցիք ասում են «Ախացք», այսինքն աղուհաց, և միմեանց շնորհաւորելուս ասում են. «Ճնաւոր ախացք»: Պաս բոնելու սովորութիւնը զիւղերում պահպանուել է բոլոր մաքրութեամբ, իսկ քաղաքում վերացել, կամ լաւ է ասել, վերանալու վերալ է: Չորեքշաբթի և Ուրբաթ իսպառչեն պահում. պահում են միայն շաբաթապասերը և Քառասնորդաց պատը, այն էլ միայն ծերերը և հաղորդուողները:

Ամբողջ Մեծ-պասը պահողների թիւը շատ սակաւ է, առհասարակ պահում են մի կամ երկու շաբաթ հաղորդուելուց առաջ: Պասի վերանալու հանգամանքն առաջ եկած պէտք է համարել երկու զիխաւոր պատճառից՝ ընդհանրապէս պասի այս զաղթական հայերի աչքին իւր նշանակութիւնը կորցնելուց և տնտիսական հանդամանքներից: Պասուց կերակուրներն աւելի թանգ են նստում, քան թէ ուտուցը, որովհետեւ պասուց կերակուրների զիխաւոր նիւթերից մէկը՝ բանջարեղէնը այս կողմերում պակասում է: Մեծ-պասին այս կողմերում դաշտերը դեռ ձիւնով ու սառուցով են պատած լինում, ուրեմն և խօսք չի կարող լինել թարմ կանաչեղէնի մատին, զանազան բանջարեղէնի բռնուացքներ էլ շատ քիչ է լինում, որովհետեւ այս

կողմերում, նախ ուտելու կանաչեղէնի տեսակների թիւը շատ սահմանափակ է, եղածներն էլ վատ տեսակից են, կամ բերովի ու թանգ են, երկրորդ ժողովուրդն էլ սովորութիւն չունի առանձին կերպով կանաչեղէն ու բանջարեղէն գործածելու կամ իբրև առանձին կերակուր, կամ ուրիշ կերակուրների հետ իբրև համեմունք:

«Բանջար», որ այս դաղթականների լեզուով ընդհանուր անուն չէ, այլ բանջարեղէնի միայն մի տեսակի, «թաթրանչ», «շուշան», «կարդմա», և «ծեթրին»—ահա սոցանով սահմանափակուում է այն վայրի բանջարների թիւը, որոնք գործ են ածում այս կողմերի հայերի մէջ իբրև առանձին ուտելիք, կամ բռնուածքի նիւթ և կամ իբրև համեմունք: Բանջարը կամ տապակում են, կամ նորան սամսալի մէջ են դնում, թաթրը բանջանը ուտում են հում-հում, վերացից կաշին հանելով, կարգաման ուտում են հացով նոյնպէս հում-հում, շուշանը բռնում են աղաջրով և պահում ձմեռուայ համար, իսկ ծեթրինը կամ ծթրինը մաքրում, ծեծում, մանրացնում և պահում են իբրև համեմունք «թաթրար բեօրէկի» և «խաշըլի բեօրէկի» կոչուած կերակուրների համար, որոնք նախիջևանցոց ամենասիրելի խորտիկներն են:

Չնայելով բանջարեղէնի և ընդհանրապէս գործածելիք կանաչեղէնի այսպիսի սղութեան, այնուամենայնիւ նախիջևանցիք իւրեանց սեղանը պատրաստում են շատ վայելուչ կերպով: Կոքա սեղանի վերայ սովորաբար գնում են, բացի զանազան սնկի ջրից պատրաստած պասուց ապրուներից, «սխեռիթօվից» արեւածաղկի կամ, մանանեխի իւղով տապակած կարտոֆիլից և ալիւրաշղախ արած ու տապակած սնկից, և ձիթապտուղ, խաշած ու մանրած սունկ, կապառ, խաշած, տըրորած ու պաղեցրած «բակլայ, բոհրած կաղին», չոր մրգեղէն, «հալուայ» և անտշահամ «սարացը»:

Պասի երկուշաբթին կոչուում է «բակլայ-խորան, այսինքն բակլայ ուտելու օր, կամ պասուց կերակուրների ուտելու օրերի սկիզբը: «Բակլայ-խորան» կատարելու և առհասարակ միմեանց այցելելու ու «ախացքը» շնորհաւորելու սովորու-

թիւնը քաղաքում արդէն վերացել է, իսկ զիւղերում գեռ կատարուում է բոլոր ճշգութեամբ: Գիւղացիք այդ օրը հաւաքուում են միմեանց տուն, շնորհաւորում են միմեանց «ախացքը», ուտում, խմում են, քէֆ են անում, պասը սկսելով ու «Լուացարուք-սրբացարուքի» հանդէսը կատարելով: «Բակլայիսորան» գիւղերում տնէց տուն շրջում են ցիղանները և ժողովում են ուտուաց կերակուրների մնացորդը, կամ, ինչպէս գիւղացիք ասում են, «խալխան-խալխանը», պասի երկուշաբթին էլ կախում են առաստաղներից ու սենեակի անկիւններից աւանդական Սովուն եօթը փետուրով, որ այս գաղթականները կոչում են «Մըռմըռաս», որով վախեցնում են երեխաններին, սաստում են պասը լուծողներին:

Մըռմըռասի փետուրները սովորութիւն կալ զարդարելու գոյնգույն ժապաւէններով: Ամեն մի շաբաթուայ վրցնելու փետուրն ունի խրեան յատուկ գոյնի ժապաւէնը. Զատկինը կարմիր է, ծաղկազարդինը կանաչ, լուսաւորչինը սպիտակ, իսկ միւս շաբաթներինը սև: «Մէջինքին», որ զալիս է շաբաթուայ մէջտեղը, ուրեմն և փետուր վրցնելու օր չէ, սովորաբար կտրում են այդ շաբաթը վրցնելու հերթական վիետուրի կէսը, որով, ՚ի հարկէ, ուզում են ցոյց տալ, թէ պասը կէս է եղել: Նոյն «մըջինքին» սովորութիւն կալ մի առանձին տեսակ հաց պատրաստելու և աղքատներին բաժանելու: Այդ հացը, որ կլորակ, մէջը ուռուցիկ ձև ունի և որի երեսը մեղրաջուր է քսուում, կոչուում է «պալից»: կան այնպիսին երն էլ, որոնք «պալիցի» տեղ պատրաստում են «Չորակ», որ նոյն պալիցի ձևն ունի, միայն որ երեսը մեղրաջուր չի քսուած:

ԾԱՂԿԱՋԱՐԻ ԱԽԱԳ-ՌԻՐԲԱԹ ԵՒ ԶԱՏԻԿ

Ծաղկազարդին նախիջևանցիք ասում են «Զառզարդար» և «Ծառկոտրունք»: Առաջինը նոյն՝ ծառզարդար, բառն է որ սովորաբար գործ են ածում շատ տեղերում հայերը, երկորդն առաջ է եկել ուռ կոտրատելու ու բաժանելու գործածութիւնից:

ԱՅրհնած ճիւղերը, ինչպէս ամեն տեղ, այստեղ էլ հիւում, փաթաթում են միմեանց հետ, կազմում են մի մեծ օղբունելու տեղով և պահում են ամբողջ տարին: Գիւղացիք այդ օղերի միջով անց են կացնում վառեակներին և առհասարակ հաւ ու ճիւը, որ նոքա գէր լինին, որ «թուլլու գոշլու» լինին, ինչպէս ասում են նոքա: Երբ որ սաստիկ քամի է բարձրանում և փոթորիկ է լինում, նախիջևանցիք նոյն օրհնած ճիւղերը խաչաձեւ միմեանց վերայ գնելով ու համբուրելով, ձգում են կրակը և այրում, հաւատացած լինելով, որ դորանով փոթորիկը կ'դադարի, կ'վերջանայ: Սովորութիւն կալ օրհնած ճիւղերով միմեանց մէջքի զարնելու և ասելու, «մէջքը տեղը-կամքը տեղը»: Աւագ-հինգշաբթի լոյս Աւագ-ուրբաթ գիշերը, որ ուրիշ տեղերում կոչուում է «Զարչարանաց գիշեր» կամ «Սղի գիշեր», նախիջևանում կոչուում է «Տէր-Մեղայի գիշեր»: Նախիջևանի բոլոր եկեղեցիներն էլ մեծագին, ուկեզօծ, զարդարուն դաղաղներ ունին, որ Աւագ-ուրբաթ օրը դնում են եկեղեցու մէջտեղը և նոյց վերայ յարդարում Քրիստոսի գերեզմանը: Գադաղների վերայ ձգուած է լինում ուկեթել և արծաթաթել ոււուցիլ հիւսուածքով խաչելութեան պատկերը, որ առանձին պատուանդանի վերայ գնելով, շքեղ թափօրով ուրբաթ երեկոյ հանում են եկեղեցուց և ահազին ամբոխով շրջապատուած շրջեցնում են եկեղեցու չորս կողմը: Ճատ հետաքրքրական տեսարան են ներկայացնում այդ թափօրները: Եկեղեցու զանգակները, որ այստեղ հնչեցնում են ոչ զոյդ, հայկական եղանակով, այլ ուռսական ձևով ու եղանակով, զողանջում են, քըշոցները զնդզնդում են, ահազին զամբարները, որ երկու մարդ տանում են թափօրի առաջից, փայլիկում են և աղօտ լոյս են տարածում խաչ ու խաչվառի և հոգեորսկանների շքեղ ըգդեստների վերաց, իսկ աղօթողները շերմեռանդութեամբ խառնուում են խաչելութեան պատկերի չորս կողմը, աշխատելով, զոնէ, մի մատի ծալքով էլ է կպչել պատկերի պատուանդանին:

Վ Զատկի պատրաստութիւնը սկսում են տեսնել վերջին շաբաթուայ հէնց սկզբից, և այդ շաբաթուայ ամեն մի օրը համարեաւ ունի իրան յատուկ պատրաստութեան առարկան կամ

զբաղմունքը։ Երկուշաբթի սրբում մաքրում են տները—«տուն դու կ'ձգեն», Երեքշաբթի և Չորեքշաբթի «Փամթիր» են պատրաստում, Հինգշաբթի հաւկիթ են ներկում, Ուրբաթ զատկահաց—«պատքա» են թխում և ջաբաթ օրը Ճրագալոցի՝ ընթրիքը պատրաստութեամբ զբաղուում։ Ճրագալոցի ընթրիքը յարդարում են ըստ ամենայնի յար և նման ծննդեան Ճրագալոցի ընթրիքին։

«Փամթիրն» ուստաց քաղցր խմորից պատրաստուած մի տեսակ թխուածք է, որ պատկի ձև ունի և ներկայացնում է Քրիստոսի փշեալ պատկի լիշտակը. ժողովուրդ չ'հասկանալով բառի նշանակութիւնը և թխուածքի խորհուրդը, աղաւաղել է նորան և, փոխանակ «Պատկիր» ասելու, ասում է «Փամթիր»։

Հաւկիթը սովորաբար շատ է ներկուում, որովհետեւ նա հարկաւորում է ոչ թէ Ճրագալոցին թաթախելու համար և զատկի սեղանը զարդարելու համար, այլ և զատկին յաջորդող առաջին երկու շաբաթը հիւրերին այցելութիւն անողներին հիւրասիրելու համար։ Նախիջևանցոց մէջ կարծիք է տարածուած, թէ զատկական հաւկիթը շատ ու շատ երկար է դիմանում, չի փչացնուում։ Հաւկիթ խաղալու կամ կոռուցնելու սովորութիւնն այս գաղթականների մէջ համարեալ թէ իսպառ վերացել է, կամ, գուցէ, հենց սկզբից էլ չի եղել։

Զատկի «Ախառի» սովորութիւն չկայ։ Ճիշդ է, նախիջևանցիք էլ մատաղը սիրում են և յաճախակի եկեղեցիների ու վանքերի գռներում մատաղ են բաժանում, բայց ուրիշ տեղերում այնքան ընդունուած ընդհանուր մատաղ մօրթելու, եփելու և եկեղեցիների բակում «ազապի» կամ սիրոյ սեղան պատրաստելու ու ուտելու սովորութիւնն իսպառ վերացել է։

Զատկին, երբ ձիւները հալուում եմ, գետինը տաքանում է, կանաչները ծլում են և երեւում է «զատիկ» կաչուած կարմիր միջատը, նախիջևանցիք առնում են նորան, դնում իւրեանց ափի մէջ և հարցնում։ «Խուիմի ճանբան որն է», և ՚ի հարկէ, պատասխանը չեն ստանում, որովհետեւ զատիկը խոճապելով գէսուղէն է փախչում։ Այս սովորութիւնը պատմական հիմք ունի և շատ գեղեցիկ բնորոշում է այն անելանելի դը-

րութիւնը, որի մէջ ընկել են գաղթականներն իւրեանց գաղթելու առաջին տարին, երբ դեռ ոչ արտօնութիւնների հրովարտակն է ստացուած եղել, ոչ էլ նոյց բնակութեան համար մի որոշ տեղ է սահմանուած եղել։ Փախչել, վերադառնալ կարելի չի եղել, որովհետեւ խիստ հսկողութիւն է եղել, մի հաստատուն բնակութեան տեղ էլ չեն ունեցել. նոքա խուճապել են, ինչպէս զատիկը ձեռքի ափի վերայ շուտարած դէս ու դէն է փախչում ու ճանապարհ չի գտնում ազատուելու։

Առհայարակ «Խուիմ-աղասիի»¹⁾ մասին գաղթականների մէջ շատ լիշտութիւն չի պահպանուել։ Բայցի Ղումի ճանապարհը դատկից հարց ու փորձ անելու սովորութիւնից և մի քանի մանդր-մունքը լիշտութիւնից, պահպանուել է և հետեւեալ փոքրիկ երգը, որ անկասկած գաղթականներն իւրեանց հետ Ղումից են բերել Նախիջևան, որովհետեւ երդի բովանդակութեան հիմքը կաղմող գործողութիւնը հէնց կատարուում է Ղումում։

Հենդելով ինկայ, սանդր գտաց,

Սանդրը տարի, չոբնին տուի,

Զոբանը ինձի զալ ձի տուեց,

Գալ ձին հեծայ, Ղարասու դնացի.

Ղարասու թաթաւ կուզար,

Թաթաւ կուզար, սէլ կուվազէր,

Երկու աղջիկ սէլը կանէին—

Մէկը մեծ էր, մէկալը պատիկ.

Մեծին անցայ, բարե տուի,

Պղտկին ալ մացի էղայ,

Առանց ստրկի խացի էղայ.²⁾

ԿԱՆԱԶ ԿԻՒՐԱԿԻ ԵՒ 208

Զատկից յետոյ, կանաչ կիւրակէին Նախիջևանցիք սովորութիւն ունին դաշտ գաշտ գուրս զալու և զբոսանք կատարելու։ Փաղա-

¹⁾ Խուիմ-աղասի=Ղումի թերակղի։

²⁾ Այս երդը հաղորդել է մեզ օր. Թագուհի Զոբարեանը։

քայլիք սովորաբար դնում են զբօսանքի «Ախսալի-Գերէ» կրչուած ձորակը, որ գտնուում է քաղաքի հիւսիս-արևելեան կողմը և որի միջով հոսում է մի սառնորակ առուակ և գնում, թափուում է Գօն զետը: «Ախսալի-Գերէ» անունը լիշեալ ձորակը ստացել է առուակից, որ, ինչպէս երևում է, հին ժամանակ-ները կրչուել է տաճկերէն «Ակ-Սու», իսկ յետոյ թուրքաց լի-դուխն անտեղեակ ժողովուրդի բերանում աղաւաղուել, դառել է «Ախսայ: Գիւղացիք էլ նոյն զբօսանքը կատարելու համար դուրս են զալիս իւրեանց գիւղերը շրջապատող արտերն ու դաշտերը: Այդ զբօսանքի օրն է, որ աղջիները և կանաչը սովորաբար քաղում են «Տեթրինը», բերում տուն, մաքրում և պահում ձմեռուայ համար: Ֆեթրինը զաղթականները շաղ են տալիս վերոյիշեալ «Խաշըս-բեօրէհին» և «Ժաթար-բեօրէհի» կերակրների վերայ, որոնք, ինչպէս ասել ենք, նախիջևանցոց սիրելի խորտիկներն են:

«Խաշըս-բեօրէհին», որին Բեսսարացիք «Ականջապուր» հայերէն անունն են տալիս, մի տեսակ ապուր է, որ պատրաստում է մածնախառն մոխ արգանակից և ականջի ձեռով շինած «բեօրէհիներից», այսինքն մոտի խճողած խմորիկներից, իսկ «Ժաթար-բեօրէհին» բաղկացած է միայն մածնախառն և խղախառն բեօրէհիներից, առանց արգանակի: Այդ բեօրէհիներով սովորութիւն կայ բազդ փորձելու: Աշանջիկներից մէկի մէջ դնում են մի միխակի հատիկ, և ում որ ուտելու ժամանակ դուրս է գալիս այդ միխակը, նա տան մէջ բաղդատորն է համարում: Կախիջևանում ձմեռը շատ երկար է տեսում, և թէև ձիւն շատ շի գալիս և եկածն էլ շուտով հալուում է, բայց ցուրտը խիստ երկար է շարունակուում: Փարուն, կարիի է ասել, որ համարեա թէ չկայ, այնքան աննկատելի է անցնում տարուայ այդ գեղեցիկ եղանակը Գօնի և Ազով ծո-վի ափերում: Տաքերն այնպէս անսակնկալ կերպով են սկսուում, յանկարծակի այնպիսի երաշտութիւն է լինում, որ կարճ մի-ջոցում զիջացած հողը ցամաքում է, նոր ծլած ու կանաչած արօտը թօշնում, զետինը ճագճգում և հացահատիկների ար-մատները բացուում ու ալրուում են: Ահա հէնց այս պատճ-

ռով սովորութիւն է դարձել թէ զիւղերում և թէ քաղաքում ամեն տարի անդաստան անելու, օրհնելու հողն ու ջուրը և Աստուծոյ զթութիւնը ինդրելու երկիր զովացնելու համար: Այդ հասարակաց մաղթանքն է ահա, որ ծնկաչոք կատարուելու պատճառով ժողովուրդը կոչում է «չոք» և որ նամանաւանդ քաղաքում կատարուում է շատ հանդիսաւոր կերպով: «Չոքի» նախընթաց օրը, որ սովորաբար լինում է շաբաթ, երեկոյեան հանդիսով և խուռն բազմութեամբ բոլոր եկեղեցիների մա-սունքները բերում են Ս. Լուսաւորիչ մայր-եկեղեցին, և բագ-մեցնում սեղանի վերան և հոկումն կատարուում — «Եկեսցէ» ասում: Միւս օրը — Կիւրակէ — քաղաքի բոլոր հոգևորականութիւնը հաւաքուում է մայր-եկեղեցին և հանդիսաւոր պատարագ մա-տուցանելուց յետոյ, խաչ ու խաչվառով, մասունքներով զուրս են գալիս եկեղեցուց և չորս կողմը ծնկաչոք մաղթանք կա-տարում: Կոյնը կատարում են և զիւղացիք, իւրեանց զիւղե-րում գտնուած ջրերը օրհնելով, դաշտ զուրս զալով, օրհնած ջուրը շախ տալով և «Ժաթափի մատաղ» անելով: Զալթը-ը այդ ժամանակ օրհնում են իւրեանց սուրբ համարուած «Սալըս-Սու» ջրհօրը, իսկ Թոփտեցիք իւրեանց զիւղի մեծ աղբիւրը-«չոլիրախը»:

Վ Ի Ճ Ա Կ

Կախիջևանցիք էլ, ինչպէս պատմում են ծերունիները, հին ժամանակները սովորութիւն են ունեցել ամեն տեղ ըն-դունուած կերպով վիճակ ձգելու և զորանով իւրեանց բաղեց փորձելու:

Համբարձման տօնի նախընթաց օրն եօթ աղջիկ լուռ ու անտես գնում են եղել ջու հանելու եօթը ջրհօրից և ծաղկէ-փնջերով զարդարելով ու մետաքսէ կտօրով ծածկելով ջրամանը, տանում են եղել նորան մի ծառի տակ և պահում պարտիզում: Միւս օրը պատարագից յետոյ հաւաքուում են եղել սղջիկներ և կանաչը և նստելով պարտիզում կանաչի վերայ և սափորը

մէջ բերելով, մէջը ներկայ գտնուողներից ամեն մէկը մի որ և է իր է ձգում եղել: Այսուհետև կանանցից մէկն իրը նախերգանք ասում է եղել.

«Վիճակ, վիճակ,
Վիճակի չիչակ,
Վարդ, մանուշակ,
«Օսկի կօճակ».

Խօսքերը, և սկսում է եղել վիճակհանութեան կարգը: Ամեն մէկը մի մի տուն վիճակի երդ է ասելուս եղել և հանել սափորից մի լիր. որի ձգած իրը դուրս է զալիս եղեւ նորան էլ յարմարեցնում են եղել երդի իմաստը:

Այժմ այդ հին, գեղեցիկ սպարութիւնը քաղաքում խռառ վերացել է, վիճակի երդերն էլ մոռացուել են և պահպանուել է, այն էլ միայն մասամբ, զիւղերում: Մինչև յարսօր դեռ զիւղացի կանանց և աղջիկների բերանում պահուել են վիճակի այդ վաղեմի երդերից մի քսնի տուն բան, որ մեզ յաջողուեց մի պառաւի ասել տալ և զրի անցնել:

1

Կանանչ զումզան ¹⁾ բռնէի,
Կանանչ պաղչաց ջրէի,
Բիլիթի ձի հեծունէին,
Զուտ մուրատիս հասցունէին:

2

Ես ձագ էի ճըտվոտացի,
Օսկի սինի կըտկըտացի,
Մարդարիտէ թել շարէի,
Ալեմին ²⁾ Սուլթան ըլլացի:

3

Մանուկն էր մօրին գնաց.
Օսկի կացինը ձեռքը.
Քանի քամին քարին կ'զարէի,
Կ'լսաղար լուսինկան ծոցը:

4

Հերու ունէի մէկ գօտի,
Սո տարի ունեցաց երկու գօտի
Երկուսն ալ տատու խուշ, ³⁾:
Տուշմանիս աչքը փուշ:

5

Օսկի կթիչք բռնէի,
Երծաթ մակաթ զարնէի
Արնոց տանէի,
Բարնոց բերէի:

6

Վերէն ինկաւ մէքամ բալիք,
Եկաւ, սեղանիս գուռը կայնեցաւ,
Սուրբ սեղանիս գուռը բացուեցաւ
Տամարիս դուրը բացուեցաւ

7

Մինտար մինտարին վըրան,
Հրամէ, նստի վըրան.

Զուտ առ ու շուտ խապուլ արան,
Չիզաց չոր քամին վըրան:

8

Վարի տունը գնացի,—
Բամբակ զրած, զրած.

Վերի տունը գնացի,—
Հաց էփած, զրած:

9

Էլլաց, նայեցաց աշխրքիս վրան,
Տասուերկու լուծ լծուած էր.

Ան ալ իմիս՝ նախալիպիս՝ ¹⁾ վըրան,
Իմիս պաղգաւորութինիս վրան:

10

Բոյը էրկան է, էրկան է,
Հալաւս տահա էրկան է.

Խանէ խանէ քալէի, ²⁾
Թօզը էրկինք հանէի: ³⁾

Քաղաքում այժմ նոյն խոլ չամբարձման հինգշարթի օրը միմեանց տուն են հաւաքում աղջիկներն ու երիտասարդները և թերթիկների վերաց զրում են զանազան սրբերի ու սրբուհիների անունները: Եյսուհետև վիճակհանութեան պէս հանում են թերթիկները. ում ինչ սրբի անուն զրած թերթիկ է զուրս զալիս, նա էլ զնում է ո. չամբարձման եկեղեցին և նոյն սրբի պատկերի առաջ մոմ է վառում ու աղօթում, որ իւր «մուրատը» կատարուի: Ալղիսի վիճակհանութեան ժամանակ յաճախակի այնպէս է պատահում, որ ներկայ զտնուող և վիճակհանութեան մասնակցող երկտասարդներին զուրս է զալիս ներկայ զտնուող և վիճակհանութեան մասնակցող աղջիկների անունով սրբուհու անուն և ընդհակառակը: Թորանից զուշակում են, թէ ում է վիճակուած, որին հարսնանալ ու փեսայանալ: Վիճակի այս երկրորդ տեսակը, որ այնքան քիչ է կատարուում, որ կարելի է նոյնպէս արդէն վերացած համարել, կոչուում է «Փոքր վիճակ», հակառակ առաջին տեսակին, որ կոչուում է Մեծ-վիճակ:

¹⁾ Նասիպ=բաղդ. ²⁾ Խանէ խանէ քալել=փողոցէ փողոց շրջել: ³⁾ Վիճակի այս երդերի մի վարիանտն էլ տապարուած է «Հախչևանսի Շօրութում».

¹⁾ Վրւմզան=ջրաման: ²⁾ Ալիմ=աշխարհ: ³⁾ Տուտուխուշ=դրախտահաւ:

ՎԱՐԴԱՎԱՐ Ս. ՅԱԿՈՎԸ ԵՒ ՌԻԽՏԱԴՆԱՑՈՒԹԻՒՆ

Վարդավառին նախիջևանցիք էլ «Վարժէվոր» են ասում: Միմեանց վերայ ջուր սրսկելու «վարժէվոր անելու» կամ «վարժէվոր խաղալու» սովորութիւնը քաղաքում բոլորովին վերացել է և պահպանուել է միայն զիւղերում: Վարդավառին կատարուում է նախիջևանցւոց տեղական ամենամեծ ու խտագնացութիւնը դէպի Ա. Խաչ վանքը: Առհասարակ նախիջևանցիք, ինչպէս և ուրիշ տեղերի հայերը, շատ են սիրում ուխտազնացութիւն և կատարում են նորան ամեն տեղ ընդունուած կերպով: Նոքա օրերով մնում են ուխտի տեղերում, մատադներ են մորթում, ուտում, խմում, պարում են և քէփ ու ուրախութիւն անում:

Բացի սովորական մատաղացույց-ոչխարից, նախիջևանցիք սովորութիւն ունին մատաղ անելու և աքաղաղներ և այդ մասնաւորապէս ս. Յակովբայ տօնի օրը: Առհասարակ ս. Յակովբայ տօնի նախընթաց օրն ամեն տուն գնում է այնքան աքաղաղ, որքան տանն արու անդամ կայ, ոկսած զիսոցիկ մանուկներից և վերջացած մեծ մարդկանցով ու ծերունիներով: Հետաքրքրական մատկեր է ներկայացնում այդ օրը քաղաքի շուկան. աքաղաղ է, որ ամեն կողմից բերում են քաղաք ծախելու, որովհետեւ, բացի հայկական զիւղերից, շրջակայ բոլոր զիւղերում էլ յայտնի է լինում, որ այդ օրը հայերն աքաղաղ են գնում մատաղ անելու, ուրեմն և մեծ պահանջ կայ նախիջևանի շուկայում: Աքաղաղների կուռոյը, «մաթուապաղների»¹⁾ լուրեանց «խորոգներին» տուած զավասանքը, գնողների սակարկութեան ձայները մարգու ականջ են խլացնում: Ամեն տեղ միայն աքաղաղ է երևում—սալերի վերայ, «տոերի վերայ առեւտուր անողների» ձեռքին, գետնի վերայ թափած, կողովների մէջ—ամեն տեղ միայն աքաղաղի մասին է խօսքը, ամեն կողմից միայն «խորոգ» խօսքն է, մարգու ականջին հասնում:

Միւս օրը-տօնի օրը մատաղացու աքաղաղներին տանում

¹⁾ Մաթուապաղ կոչուում են այն մանրապաճառները, որոնք զիւղացիներից ապրանք էժան գնով առնում են ու ձեռաց թանգ գնով վաճառում:

են եկեղեցիների բակը, մորթել և տալիս, կամ ինքեանք են մորթում և տուն բերելով ու խաշելով, մաս-մաս են անում ու սովորական մատաղի պէս հայ վերայ դրած բաժանում դրացիներին:

Թէ ինչից է առաջ եկել աքաղաղ մատաղ անելու այդ սովորութիւնը յատկապէս ո. Յակովբայ տօնին,—նախիջևանցիք ինքեանք էլ չ'զիտեն: Նոքա այդպէս իւրեանց հայութից տեսել են, այդպէս էլ աւանդաբար կատարում են: Ճիշդ է, ծերերից ոմանք այդ մասին պէս-պէս պատմութիւններ են անում, բայց, մեր կարծիքով, դոցանից և ոչ մէկը չի բացատրում այդ սովորութիւնը. դոքա—այդ պատմութիւնները բոլորը ևս յետոյ գտած—հնարած բաներ են և ցոյց են տալիս աւելի ձգտումն մեկնելու այդ սովորութիւնը, քան թէ իսկապէս մեկնում են: Ոմանք, օրինակի համար, պատմում են, թէ երբ որ ս. Յակովբ, Մծբնայ հայրապետը վախճանել է, նորագերեցմանի վերայ այնքան ոչխար են մատաղ արել, որ ձգուած փորոտքի և աւելորդ մասերի նեխելուց և գարշահոտութիւնից ժանտախտի պէս մի վարակիչ հիւանդութիւն է առաջ եկել և սկսել կոտորել ժողովուրդը: Հասկացող և իմաստուն մարդիկ յաւը վերջացնելու նպատակով ժողովրդին խորհուրդ են տուել, ոչխարի փոխարէն, աքաղաղ մատաղ անելու, հասկացնելով, թէ սուրբը ոչխարի մատաղ չի ընդունում: Ոմանք էլ պատմում են, թէ մէկ անգամ ս. Յակովբը զնում է մի տեղ և տեսնում է, որ այդ տեղի ժողովուրդը տանջուում է մի տեսակ հիւանդութիւնից: Սուրբը պատուիրում է աքաղաղի միս ուտել, և բոլորեքեան առողջանում են, ուստի և երբ վախճանում է նա, սովորութիւն է զառնում՝ ի պատիւ նորա աքաղաղ մատաղ անելու, և այն և այն:

Բացի Ա. Խաչ վանքի մեծ ուխտազնացութիւնից, նախիջևանցիք ունին այլ ևս բաղմաթիւ սրբատեղեր, որոնց ուխտերը նոքա կատարում են մեծ ջերմեռանդութեամբ: Համարեա ամեն մի եկեղեցի, թէ քաղաքում և թէ զիւղերում ունի իւր առանձին ուխտի օրը: Ա. Խաչ վանքը, բայց Վարդավառից, ունի այլ ևս ուրիշ ուխտի օրեր: Թովմտի զիւղի «Սալըխ-Սու» կոչուած աղբւրը, որի ջուրը բուժիչ զօրութիւն ու-

նի, որովհետև գիւղացիներից մէկի տեսիլքով լոյս է իշել նորա վերայ, և որի վերայ մատուռ է շինուած, ունի իւր ուխտի օրը. Ս. Խաչի մօտ զտնուած «Սալըս-Սու» տղբիւրը, որի վերայ նոյնպէս մի մատուածէ շինութիւն կայ, դարձեալ ուխտեղի է և վանք ուխտ զնացողներն այցելում են և այդ աղրիւրը: Մեծ հռչակ է վայելում իրեւ ուխտատեղի նամանաւանդ Նիսութիւն դիւդի ս. Կարապետ եկեղեցին, որի ուխտաւորը և մատաղը թէ քաղաքից և թէ զիւղերից տարին տառներկու ամիս անգակաս են լինում. մեծ հռչակ է վայելում իրեւ ուխտատեղի և քաղաքի ս. Գէորգ եկեղեցին, որի ուխտը կոչուում է «Խըտրելիդ», կատարուում է ուխտադնացութեան բոլոր պարագաներով և տեսում է երեք օր: Այդ ուխտատեղիները, բացի նորանից, որ նոքա բաւականութիւն են տալիս ժողովրդի ջերմեռ անգութեան, այլ և ծառայում են իրեւ աղջիկտեսի տեղեր նախիջևանցի երիտասարդների համար. նամանաւանդ այդ նպատակին ծառայեցնում են «վարթէ վորը» և «Խըտրելիկը»:

Նախիջևանցիք հեռաւոր ուխտադնացութիւն կատարում են, զնալով Երոսադէմ, Մշոյ ս. Կարապետը և ս. Խջմիածին: Նոքա շատ են սիրում «Հաջի» գառնալ, ուստի և իւրաքանչիւր նախիջևանցու մեծ բաղձանքն է, երբ նա հասակն առնում է, զնալ ս. քաղաքը, տեսնել ս. գիրեզմանը, ս. զլխազիրը և արժանանալ ս. լոյսի տեսութեան: Սովորաբար զնում են բարեկենդանին, մնում են ս. Յակովլում ամրողջ Մեծ-պասը, տեսում են զատկական հանդէսները և վերադառնում են տուն, բերելով իւրեանց հետ «Քետ տրդանայ» և ուրիշ սովորական բաներ: Ս. Խջմիածին նոքա զնում են առհասարակ մեռնօրհնէն, քին չայաստանեաց եկեղեցու այդ նորիական հանդիսին ներկայ զտնուելու, ս. մեռնի կաթսան համբուրելու և աչքով ս. մեռնի եփ եկածը տեսնելու, իսկ ս. Կարապետ զնում են նշանուածները, որովհետև նախիջևանցի կտրիճներն իւրեանց «մուրազին» հասնելու համար համարեալ թէ միշտ ուխտած են լինում ս. Կարապետի զերեզմանը համբուրելու: Մինչեւ ցալոր դեռ մարդկանց բերանից կարելի է լոել «խարիպ Մելքոն».

կոչուած կտրճի երգը, որ ուխտած լինելով ս. Կարապ' տ ուխտ դնալու և հիւանդութեան պատճառով չ'կարողանալով կատարել իւր ուխտը, տանջուում ու հալումաշ է լինում: Վերջապէս չ'կարողանալով դիմանալ, նա հիւանդ-հիւանդ ճանապարհ է ընկնում դէպի չայաստան իւր կտրիճ ընկերների հետ, բայց չը հասնելով իւր «մուրատին», նա հոգին աւանդում է Թիֆլիսում, կտակելով, որ իւր կտրիճ ընկերները, զոնէ, «մուրատը», այսինքն իւր ձին տանեն ս. Կարապետի զրանը կապէն:

Օխտի տարի ցաւ քաշիլ էր խարիպ' Մելքոնը,

Ս. Կարապետ ուխտ արիլ էր խարիպ Մելքոնը:

Ճիերս հեծանք ճամփըլքցանք, գեղէն չէթ²⁾ էլլանք:

«Չիմլալ, աղա, չիմլալ, աղա, ինքդ երթացիր»:

«Գնա, Մելքոն, զնա, Մելքոն, ուխտդ կատարէ՛»:

«Կոխէ գէնկուդ, ³⁾ կուպուր խամչիդ, ⁴⁾ մի՛ մնալ հալիբէն»:

Կալսեցի գէնկու, կուպուցի խամչիս, հասաց նախշըվան:

Ճայիփըլքցանք, ճամփըլքցանք խամչիսը մինչեւ թամպը⁵⁾ խաղալ-խնդալով:

Թամպէն էլլանք, Քափքայ հասանք, ոտքերս ուռեցաւ,

Քափքայն էլլանք, սարը հասենք, սիրտս ուռեցաւ,

Սարէն էլլանք, Թիֆլիզ հասանք, մէկ բան չիմացայ:

Հայ աղաներ, հայ աղաներ, ճարիս ճար գտիք:

Երկու տղաք խօսը մէկ էղանք, բօշտա բռնեցինք,

Մինչ որքի բօշտան ալ էկաւ, Մելքոնը լմնցաւ:

Յիսուն չորս առխատաշներս ⁶⁾ լաց-գուռում էղանք,

Մենք փորեցինք, մենք թաղեցինք մէկ հայ տէրտէրով,

Յիսուն չորս առխատաշներս չորս դին փաթթաց:

Յիսուն չորս առխատաշներս էլլանք, գնացինք:

«Մուրատս տարէք, ս. Կարապետին դուռը կապեցէք»:

«Բարե կանիք Խաչիկ ախրօրս և բաբաչիս»,

«Բարե կանիք Խաչիկ ախրօրս և մամաչիս»: ⁷⁾

¹⁾ Խարիպ=աղքատ, ²⁾ Չէթ=դաշտ, ³⁾ Ջէնկու=ասպանդակո

) Խարիպ=հտրա՛լ, ⁵⁾ Թիֆլիզ=Ճամպահ, ⁶⁾ Առխատաշներ=ընկեր:

⁷⁾ Այս երգը մեզ հաղորդել է պ. Մելքոն Չափքլքաշներ Սա, ինչպէս երկում է, մտքից, խանդակառած և պակասաւոր է:

Ս. Կարապետի ուխտուոր կտրիճներից է Մ. Նալբանդյանի «Մինին խօսք, մինին հարս» վեպի զլիսաւոր հերոսը, որ նշանուած լինելով և իւր «մուրատին» հասնելու համար ու. Կարապետին ուխտ արած ու գնացած լինելով, մինչև որ վերադառնում է ուխտից իւր նշանաձին արդէն ուրիշին հարս եղած է գտնում: Նոյն վեպի մէջ հանդուցեալ հրապարակախոսը նկարագրել է, ՚ի մէջի այլոց, և նախիջևանցոց Ս. Խաչի «Սալլիս-Սուլին», ուխտ գնալու և սուրբ աղբիւրի մօտ զըտնուած ծառերի վերայ հնոտիներ փաթաթելու, իբրև իւրեանց յաւերն այնտեղ թողնելու նշան, սովորութիւնը:

Բացի այս ուխտագնացութիւններից, նախիջևանցիք կատարում են և մի ուրիշ ուտագնացութիւն. նոքա երբեմն ուխտ են դնում և Ազովի ափին գտնուած Մարինուալ յունաբնակ քաղաքի Տիրամօր հրաշագործ պատկերին: Այս վերջին ուխտագնացութեան սովորութիւնը նախիջևանցիք բերել են իւրեանց հետ Պրիմից: Մարինուալ քաղաքը, ինչպէս յայտնի է, հիմնարկուել է Նախիջևանի հետ միասին յոյների ձեռքով, որոնք հայերի հետ միաժամանակ նոյն պայմաններով և նոյն հանդամանքերի մէջ գուրս են եկել Պրիմից և զաղթել Ռուսաստան, բերելով իւրեանց հետ իւրեանց ամենամեծ սրբութիւնը՝ Տիրամօր հրաշագործ պատկերը: Պրիմի յունաց ս. Աստուածածին վանքը, սուտեղից հանուած է այդ պատկերը, մինչև ցախօղ ևս գոյսութիւն ունի և գտնուում է Բախչիսարայից $1\frac{1}{2}$ վերստ հեռաւորութեան վերայ «Քըհուդ-կալէ» կոչուած Կարայիմ հրէաների աւերակ քաղաքի մօտ: Վանքը փորուած է միապաղաղ ապաւաժի մէջ մի լեռնացքում, որ վանքի հետ միասին տեղացիները կոչում են «Մարիում»: Վանքի հիմնարկութեան մասին պատմում են հետևեալը: ԺԵ դարի կիսում թաթարների մայրաքաղաքը Բախչիսարայ տեղափոխուելու ժամանակները լեռների վերայ յանկարծ յայտնուում է մի վիշապ, որ սկսում է լափել շրջակայ յոյների բոլոր անառունները և մեծ սարսափ է ձգում բոլորի վերայ: Միամիտ ժողովուրդը միջոց չունենալով յաղթել վիշապին, սկսում է ջերմեռանդութեամբ աղօթել և Աստուածամօր բարեխօսութիւնը խնդրել

այդ չար զազանի դէմ: Մէկ օր յանկարծ մի զօրեղ լոյս է երեսում այժմ «Մարիում» կոչուած լեռնացքի գժուարամատոյց ապաւաժներից մէկի վերայ և սպանութիւնները ու կոտորածները դադարում են: Քրիստոնեաներն աշխատում են բարձրանալ, լոյսի տեղը հասնել, բայց չեն կարողանում, որովհետև ապաւաժը բարձր էր և միապաղաղ: Նոքա ձեռնալկում են աստիճաններ փորելու և մեծ աշխատանք ու չանք գույն դնելոց յետոյ, բարձրանում են ապաւաժի դադարը: Ազտեղ նոքա տեսնում են լոյսի տեղում մի սուրբ պատկեր և վիշապի դիմակը: Պատկերն իսկոյն տեղափոխում են ականաւոր քրիստոնեաներից մէկի տունը, բայց նա քանից անդամ նորից վերադառնում է իւր նախիջևան տեղը: Այն ժամանակ ժողովուրդը սկսում է փորել ապաւաժը և մի փոքրիկ մատուռ շինելով, զետեղում է նորա մէջ սուրբ պատկերը և եկեղեցին կոչում է «Ա. Աստուածածին», որովհետև պատկերի յայտնութիւնն եղել էր օգոստոսի 15-ին:

Նախիջևանցիք, որոնք դեռ Ղրիմում բնակուելու ժամանակ սովորութիւն են ունեցել ուխտ գնալու յոնաց սուրբ Աստուածածինը, Նախիջևան տեղափոխուելոց յետոյ էլ չեն մոռացեցել նոյն սովորութիւնը և շարունակել են և մինչև ցախօր ևս արունակ ում են «Մարիում» ուխտ գնալ:

Ուխտագնացութիւններին նախիջևանցի դիւղացիների զըլիաւոր զուսարձութիւններից մէկն է զօտեմարտութիւնը, որ կոչուում է «գուռաշ»: Գուռաշը կատարում են զիւղացի կըտրիճն'ը և գորանով քաջութեան համբաւ են ձեռք բերում թէ իւրեանց համազիւղացիների, թէ բոլոր հայ զիւղացիների և թէ իւրեանց հարսնացուների ու հաւանած աղջիկների ազքին: Հանդիսատես ուխտաւորներից, զլխաւորապէս զիւղացիներից մի ընդարձակ կրկէսի ձեռվ շրջան է կազմուում, որի մէջտեղը զըլուում է զոմշի զլուխ: Ասպարէզ են դուրս զալիս գուռաշ եկողները և պտույտ գալով զլխի չորս կողմը, աշխատուաշ եկողները ու պտույտ գալով զլխի չորս կողմը, աշխատում են յարմարութեամբ մէկզմէկի բռնել և զօտեմարտելով վայր զլորել ու չոքել հակառակորդի կրծքին, որ յաղթութեան նշանն է: Յաղթողը ստանում է շրջապատղների խրախուսանքը ու զովասանքը և իբրև յաղթութեան նշան տէր է դառնում

գոմշի գլխին, որ ոյժի ու քաջութեան է մրեմն է։ Հին ժամանակները, երբ այդ օրերին սովորութիւն է եղել և զոմշշ մորթել, ասպարէղ է հանուել և գոմշի թարմ զլուխը և յաղթողն էւր յաղթանակն եփել, կերել է իւր համագիւղացինել, կամ, լաւ է ասել, իւր թաղեցիների հետ, և զուարձացել ու ուրախութիւն արել։ Իսկ այժմ, երբ արդէն զոմշշ չի մորթուում, ասպարէղի մէջտեղը սովորաբար դրուում է զոմշի զանգը և յաղթողը քէֆ է անում իւր թաղեցի կտրիճների հետ, որոնք մեծ պարձանք են համարում իւրեանց համար, որ իւրեանց թաղն է յաղթող զուրս ելել, և հպարտանում են միւս թաղեցիների առաջ։ Այդ քէֆերի ժամանակ յաճախակի կուր է պատահում յաղթող կտրիճի թաղեցիների հետ, որոնք, ի հարկէ, նախանձում են չեն կարողանում դիմանալ և չպատասխանել իւրեանց հակառակորդների կծու ակնարկութիւններին ու սրաբանութիւններին։

Առհասարակ Նախկիջւանի գլուղերում թաւականութիւնը շատ զարգացած է և «մահլայական կուներ», որոնք յաճախ վերջանում են տուր ու դժբացով, վիրաւորանքով և մինչեւ անդամ մարդասպանութեամբ, դիւղական կեանքի սովորական երեւոյթներից են։ Համարեամ ոչ մի քէֆ ու ուրախութիւն առանց կոռու չի վերջանում։ Մի «մահլայից» պատկ է դնում եկեղեցի, միւս «մահլայի» երիտասարդները հաւաքուում են և կուր են սարքում պատկին մասնակցող երիտասարդների հետ։ մի թաղում քէֆով, ուրախութեամբ «բարեկենանք են նստում», միւս «մահլայի», տղայքն այնպէս են վերջաբերում, այնպէս են իւրեանց պահում, որ անպատճառ կուր է ծագում նոյս մէջ։ մէկ մահլայում «բարեկենանք» են կատարում, միւս մահլայեցիք անպատճառ առիթ են որոնում խանգարելու ուրախութիւնը, որից, վերջ ՚ի վերջով, հոյնպէս կուր է գուրս գալիօ։

Յաղթանակը տանող և անյաղթ մնացող «գուռաշ» եկողների անունները երկար ժամանակ մնում են ժողովրդի բերանում և խօսք ու զրոյցի առարկայ դառնում։ Հին ժամանակներից, օրինակի համար, պահուել է մի «կարճուկ Մառթին» անունով կտրճի անուն, որ միշտ յաղթող է եղել և որի մէջ-

քը, ինչպէս ասում են, երբէք զետնին չի կպել։ Պորա-այդ Մառթինի մասին մինչեւ անդամ երդ էլ է կապաւել, որի մէջ «կարճուկին» շռացած զովասանքների հետ միասին կտյ և «գուռաշի» նկարագրութիւնը։

1

Հէյ, մէդի, գայցէք մէցտան,
Ի՞նչ այդպէս առաջե կուգան.
Զարկ լսամշին, տուն մի նայիր,
Հոնէն ալ կըլնայ սէիր, ¹⁾
Թող էլին կտրիճւերի։

2

Ո՞ւր է գոմշշին կրոխը,
Թող մէցտան ²⁾ գայ ուգեցողը,
Տի, հածէ, տէվէ-լսալտրան, ³⁾
Ալժլուլախ, ⁴⁾ ացու երխան. ⁵⁾
Հապա տուն, կտրճուկ Մառթին,
Ի՞նչու կը նայս հալիսին։ ⁶⁾

3

Իշտէ կարճուկ Մառթինը
Կայնեց Ակոբին առջեւ,
Էկան գօղի գօղիի,
Առնուեցան ձեռք ձեռքի
Թընդաց տակը գետինը,
Հավա էլլան ⁷⁾ թօղերը,

4

Տաքցան, ասլան կրտրեցան,
Չորս քովը պըտքու եցան.
Ակոբը փաթթը լվեցաւ,

Ռւ մէջքէն խափմէշ արաւ. ⁸⁾

Մառթինը մէկէն բըռնից,
Ճըկից, վերուց թապլից։

5

Էլլան տահա կըտրիճներ,
Ան Մառթինին հիչ բան չէր,
Նորա գալ էր պատուածը,
Գիտէ ալայ ⁹⁾ աշխարքը,
Կա օմուզին ¹⁰⁾ վրայէն,
Օպտ թապլած կըտրիճ է։

6

Կարճուկ Մառթինին ուժին
Ռւժ չի հաւնի հիչ մէկին.
Ափֆիկիմ, կարճուկ Մառթին,
Նամ ¹¹⁾ իս տուն գեղացիին.
Տուն առիր ան կըլովսը,
Քրտինքիտ հելալ հախը։

7

Ռօ՛, Մառթին, մէյնակ չուտիս,
Մեր փայն-ալ քիչ մը պահիս,
Կոլիսուն համը մենք-ալ տեսնունք,
Քու ուժէդ մենք ալ առնունք,
Քեզի պէս ասլան կտրինք,
Գալ պատուինք, օպա ¹²⁾ զըրչինք. ¹³⁾

¹⁾ Սէիր=հանդիսատեսութիւն։ ²⁾ Մէցտան=հրապարակ, ասպարէղ։
³⁾ Տէվէ-լսալտրան=ուխտ բարձրացնող։ ⁴⁾ Աթխուլախ=ձիու ականչ։ ⁵⁾ Այու-երխան=արջ գլորող։ ⁶⁾ Հալիս=ժողովուրդ։ ⁷⁾ Հավա բլւտլ=բարձրանալ։
⁸⁾ Խափմիշ սնել=բռնել։ ⁹⁾ Ալայ=բոլոր։ ¹⁰⁾ Օմուզ=ուս։ ¹¹⁾ Նամ-սանուն, հոչակ։ ¹²⁾ Օպտ=սար։

¹³⁾ Այս երգն առաջին անգամ հրատարակուել է Ռափայէլ Պատկանեանցի Պոսկուայում տպագրած երգարանի երկրորդ տետրակում։

ՏՕՆ-ՂՆՈՐՀԱԿՈՐԾ

Ոչ մի հայաբնակ տեղում, կարելի է ասել, այնպէս ընգունուած չէ տօնախմբութիւն կատարելը, ինչպէս Նախիջևանում: Ամեն տեղ էլ տօնախմբութիւն կայ, ամեն տեղ էլ քահանան տօնախմբութեան նախընթաց օրուայ երեկոյեան դնում է տօնատիբոջ տունը, մոմ է տալիս տօնատիբոջ ձեռքը, պահպանիչ ասում ու շնորհաւորում, ամեն տեղ էլ հանդիսաւոր կերպով իւրեանց տօնախմբութիւնը կատարողներ են լինում, բայց մի այդպիսի ընդհանուր սովորութիւն կամ կարգ, որից շատ քչերն են համարձակում շեղուել, որ մի տեսակ պարտականացուցիչ, պաշտօնական ընաւորութիւն ունի, ոչ մի տեղ չկ կարելի տեսնել:

Տօնախմբութիւններ էլ խիստ յաճախ են պատահում, որովհետեւ նախիջևանցիք սովորութիւն չունին իւրեանց զաւահներին ազգային անուններ տալու, որոնք մեծամասնութեամբ տօն չունին, այլ սովորաբար օրացոյցի անուններ են տալիս: Բայց սուրանից, նոքա տօնում են և աղջիկների ու կանանց տօնները, թէև ոչ այնպէս հանդիսաւոր կերպով, ինչպէս տըղամարդկանցը: Յաճախակի դիտմամբ այս կամ այն անունն են դնում, որ այս ինչ կամ այն ինչ օրն էլ կատարեն տօնախմբութիւնը, կամ, ինչպէս ասում են, «Տօշնաւորը»: Այդ պատճառաւ էլ մի հազրագիւտ երևոյթ չէ մի տան մէջ միևնոցն օրն երկու կամ երեք տօն-շնորհաւոր պատահելը, ինչպէս, օրինակի համար, Յովհաննու Մկրտչի, ս. Սարգսի ու Մարտիրոսի, Մարկոս-Ղուկասի, Յովակիմ և Աննավի և միւս այդպիսի տօններին: Երբ որ միեւնոյն բարեկամների, ազգականների և ծանօթների և առհասարակ միմեանց հետ դնալ-զալ ունեցողների շրջանում մի և նոյն անուններն են պատահում, ուրեմն և մի և նոյն օրերն են գալիս տօն-շնորհաւորները, այնպիսի կարգ է պահպանուում, որ հնարաւոր լինի ամենին էլ միմեանց տօն-շնորհաւորի պատահել, մէկ օրը մէկն է կատարում, միւս օրը միւսը, երբորդ օրը մի ուրիշը և այսպէս բոլորեքեան: Մեծ վիրաւորանք է համարուում մէկի տօն-շնորհաւորին շերթալը, եթէ այդ մէկը քո տունդ քո տօն-շնորհաւորին եկել է:

Ճատերը գորանից շոլորովին կտրուտմ են միմեանց տուն գնալ-գալուց, որովհետեւ յաճախ կարելի է պատահել, տեսնել այնպիսի ընտանիքներ, որոնք մինչև անգամ իւրեանց ոչ հեռի ազգականների տունը յաճախում են միայն տօն-շնորհաւորից տօն-շնորհաւոր: Այդ պատճառով էլ մեծ ճշգութեամբ հետեւում են օրացոյցին, մեծ ճշգութեամբ ծանօթների, բարեկամների և ազգականների տօնների ցուցակն են պահում, ճշգութեամբ էլ միտներն են պահում, թէ իւրեանց տունը տօն-շնորհաւորին ովկ է եկել, ով չի եկել, որ եկողին անպատճառ փոխագարձ այցելութեամբ պատուեն, չեկողի մօտ էլ անպատճառ չերթան: Դրանից է առաջ զալիս այն հանդամանքը, որ մեծ տօն-շնորհաւորներին քաղաքի փողոցները, որոնք առհասարակ շատ խաղաղ ու հանգիստ են, մի առանձին կենդանութիւն են ստանում: Գեղեցիկ կառքերը սրբնթաց արշաւում են, ոտքով այցելութիւն անողները խունուում են փողոցներում, տների գլխաւոր դռները, որոնք սովորաբար փակ են լինում, կրնկի վերայ բացուում են, մէկը մտնում, է միւսը դուրս է գալիս:

Մինչև անգամ նոքա, որոնց անուններն այն տեսակից են, որ տօն ունենալ չեն կարսղ, ինչպէս Լոյսպարսնները, Խաչերեսները, Պարոնները, Վարդերեսները, Լուսիկները, Լուսպեքանները, Թուշիկները, Գեղեցիկները, Սրբուհինները, Տիրուհինները, Երանուհինները, Քրիստոսուսուրները, Խաչեղբայրները և միւսները աշխատում են յարմարեցնել իւրեանց անունները մի որ և իցէ սրբի կամ սրբուհու տօնի, որ կարողանան տօն-շնորհաւոր կատարել: Վարդերեսները, օրինակի համար, կատարում են իւրեանց տօնը Վարդավառին, Լոյսպարոնները և Պարոնները – Լուսաւորչի տօներից մէկին, Սրբուհինները, Տիրուհինները, Փագուհինները – Աստուածածնայ տօներից մէկին, Խաչերեսները, Քրիստոսուսուրները և Խաչեղբայրները – Խաչի տօներից մէկին, որովհետեւ առաջին անուան մէջ «Վարդ» բառը կայ, երկրորդի մէջ «Լոյս» բառը, երրորդի մէջ «Խաչ» բառը և վերջապէս, միւսներն Աստուածածնայ մակղիրներն են: «Տօշնաւոր քաղաքները» մտնելով տօն-շնորհաւորի տունը,

նախապէս համբուրում են տօնատիրոջ հետ, ասելով. «Մեծ օրդ շնաւոր», յետով կարգով մօտենում են տօնատիրոջ ընտանիքի միւս անդամներին՝ մօրը, հօրը, եղբօրը և միւսներին, եթէ դոքա ներկայ են լինում, և ձեռք առնելով, նոցա ևս շնորհաւորում են, կրկնելով նոյն փորմուլան—«Մեծ օրերդ շնաւոր»: Այնուհետև հիւրը հրաւիրուում է սեղանին, եթէ սեղան է պատրաստուած լինում, իսկ եթէ սեղան չ'կայ, մատուցուում է սուրճ, թէյ կամ շոկոլադ, ըստ կամաց, որը ցանկանայ հիւրը: Չատերի մտնելն ու դուրս գալը մէկ է լինում, որովհետև յաճախ այցելելու այնքան շատ տեղ է լինում, որ այցելողները չեն ժամանում ամեն տեղ հասնել, ուստի և շատ շտապում են: Չատերն էլ մնում են, լաւ ուտում-լիմում, յետոյ դնում: Յամենայն գէպս ամենքն էլ պարտական են, գոնէ, մի բաժակ զինի, կամ մի գաւաթ ողի անուշ անել և մի կտոր բան բերանը դնել շնորհաւորելու համար: Այդ գէպքում, 'ի հարկէ, գարձեալ կրկնուում ու երեքինուում են «Մեծ օրդ շնաւոր» բառերը, որոնց վերայ շատ անգամ աւելացնում են և «Մեծ ըլլաս» բառերը:

Սեղանները սարքուում են ճաշակով և զարդարուում են թանկագին և համագամ ուտելիքներով՝ սովորական բռնտածքներով, թթուեղէնով, ձկնեղէնով, պանիրներով, երիշիկներով, ապուխտներով, տապակածով ու խորովածով, մեղք ու կարագով և հաստ սերով-«խայմախով» ու մատղաշ «խուզիի» «փորլիցով», որ խաշած ամբողջ մեծ թարթ ձկան հետ միասին հարուստ տօն-շնորհաւորի սեղանի առաջին զարդն ու ու բնորոշ կերակուրն է: 12 ժամին, երբ արդէն բաւականին բազմութիւն է հաւաքուած լինում, մատուցուում է կասկարայ-կասկարայ համեղ թելրաց-կուբաթին ձկնով, մսով, կամ հաւեղէնով, որ «բագէմով մեղէ» և «խուրաբիա» կոչուած անուշ թխուածքների հետ միասին, նոյնպէս տօն շնորհաւորների սեղանի յատկանիշ համագամներից է:

«Խուզիի փորլիցը» մատղաշ գառն է, փորն եղինձով խընդողած և փուռը դրած, իսկ «բագէմով մեղէն» ու «խուրաբիան» մի տեսակ անուշեղէն են—առաջինն ամբողջապէս

ձուի սպիտակուցից, նուշից ու շաքարից շաղախուած, երկրորդն անուշ խմորից, իւղից և կոտորած նշից:

Հիւրերին ճանապարհ ձգելու ժամանակ տօնատէրը նոցա, որոնց հետ ընտանիքով դնալ-դալ չունի, ճանապարհ է դնում, շնորհակալութիւն յայտնելով, որ նոքա եկել էին պատուելու նորան, իսկ նոցա, որոնց հետ ընտանիքով «երթալ-դալ» ունի, հրաւիրում է երեկոյեան ընտանիքով դալու, եթէ մեծ հրաւէրք ունի, ասելով. «Իրիկունն էլ հրամեցէք ընտանիքով», իսկ եթէ առանձին հրաւէրք չունի, ասելով, «թէւ հրամեցէքով բան չունինք, բայց մօտ մաշդիկը պիտ լան, արեցէք դուք ալ, անպէս, նատելու»:

Երեկոյեան և գիշերը քաղաքուում շարունակուում է ցերեկուայ կենդանութիւնը: Տօն-շնորհաւորների տները լուսաւորուած են ացիօռո-լապտերները վառած, ջահերը լուսաւորած, ամեն տեղ, ամեն սենեակում ճրագ է վառուում, մինչև անգամ պատուհանների վերայ էլ մոմակալներ են դրուած լինում: Փողոցներում երեւում են խումբ-խումբ տօն-շնորհաւոր գնացողներ, ցերեկուայ պէս ոլանում են կառքերը, տօնատէրերի տների դիխաւոր մուտքի դռները և բակերի դարպանները բացուած են, ամեն տեղ հիւրերի են սպասում:

Տօնատէրը և նորա ընտանիքը հրաւիրեալներին ընդունում են մեծ սիրով և առաջնորդելով զահլիճն ու հիւրասենեակները, բազմեցնում են նոցա պատերի երկարութեամբ, կամ, ինչպէս առում են, «պատն են նըստեցնում», տղամարդկանց առանձին, կանանց առանձին: Գիւղերում այդ գէպքում մի առանձին կարգ է պահպանուում. պատուաւորներին նստեցնում են առաջին տեղը, կամ, ինչպէս ասում են, «վերի թուն են նստեցնում», իսկ միւսներին նոցա մօտ կարգով, ըստ հասակի, վիճակի և ըստ հասարակական դրութեան:

Գահլմի մէջտեղը դրուած է լինում մի երկար սեղան, սպիտակ սփոռոցի ծածկուած և լսւաւորուած աշտանակներով, նորա վերայ շարուած են լինում զանազան տեսակ քաղցրսւենիներ, խուրաբիա, բագէմով-մեղէ, տանու պատրաստած ընտիր պաքսիմատ—«պեսմէտ» և թէլի հետ վայելելու համար

աղղի-աղգի շաքարահացեր ու անոյշ թխուածքներ; Միւս սենեակն՝ ըստմ էլ զրուած են լինում փոքրիկ սեղաններ, դարձեալ սփռոցներով ծածկուած և չորս անկիւնում մի մի մոմակալ դրած: Ոմանք թէ լիմելու ժամանակ նստում են սեղանների մօտ, ոմանք էլ մնում են բազմած լուրեանց տեղերում: Աերջիններին առանձին կերպով թէ, քաղցրաւենիք և պաքսիմատ է մատուցում «Հրամեցէքներով»: Թէ է մատուցում պարտականացուցիչ կերպով և բոլոր նոր եկողներին, մինչև անդամ երբ հրաւիրուածները շատ ուշանում են:

Ընդհանուր զուարձութիւն ու ուրախութիւն այդ տօնշնորհաւորներին սովորաբար չի լինում: Բոլորքեքան նստում են ուռած, փքուած, և տօնատիրոջ հողին զուրս է զալիս, մինչև որ մի տեսակ կարողանում է հիւրերին զրազեցնել թէ իլ ժամանակ և թուղթ խաղալու ժամանակը հասցնել: Ընդհանրապէս բոլոր հիւրերին միմեանց հետ ծանօթացներու սովորութիւն չ'կալ, ով որ ծանօթ է, ծանօթ է, ով որ էլ ծանօթ չէ, այնպէս էլ չ'ծանօթացած մնում է: Այդ պատճառով էլ ընդհանուր խօսակցութիւն զրոյց չի լինում: Տղամարդիկ կամ լուռմ են, կամ փոքրիկ շրջանների բաժանուած լուրեանց առօրեայ գործերի մասին են խօսում, կանալք էլ լուրեանց ծանօթներին ձեռք առնելով, կամ զլխով բարեկելով, դարձեալ կամ լուռմ են, կամ միմեանց հետ լուրեանց առօրեայ «գալաջին» անում, բոլորեքեան միասին խօսելով, միմեանց չ'լսելով և մեծ աղմուկ հանելով: Հետաքրքրական է կանանց միմեանց բարեկելու ձեր: Ծանօթը, եթէ մօտ է նուռած ծանօթին, անպատճառ ձեռք է առնում և հարցնում, «ինչ կանիս», և պատասխան է ստանում. «ինչ անիմ»: Մինչև անդամ ծանօթները հեռուից էլ միմեանց բարեկելով, լուրեանց զլխի և երեսի զծագրութեան այնպիսի ձև են տալիս, որ պարզ կերպով զուրս է զալիս այդ հարց ու պատասխանը - «ինչ կանիս, — ինչ անիմ»: Աերջապէս, թէ անուշ անելը վերջանում է և հասնում է թղթախաղի ժամանակը: Ամեն տեղ բացուում են կանաչ սեղաններն եւրեանց թղթախաղի պարագաներով, և տանուտէրն ամենին հրաւիրում է թղթի նստել, աշխատելով գործն այնպէս տա-

նել, որ միմեանց յարմարուող անձինք միմեանց հետ նստեն և, որ զլխաւորն է, որ բոլորեքեան նստեն, բոլորեքեան խաղան, որովհետեւ այդպիսով նա աղատուում է հիւրերին զրազեցնելու ծանր պարտականութիւնից: Այդ դէպքում վայն է եկել այն մարդուն տարել, ով որ թաղթ չի խաղում, որովհետեւ թղթախաղը շատ երկարում է և թուղթ չ'խաղացողը տիպուած է լինում կամ մենակ թափառել սենեակից սենեակ, կամ այս ու այն թղթախաղի սեղանին մօտենալ ու նայել և կամ մի անկիւնում կուճ գալ, յօրանջել ու ննջել:

Գիշերուայ 11—12 ժամին բացուում է նախընթրքի սեղանը դինիներով, կոնեակով և օղիով: Նախապէս գաւաթիկներով մատուցուում է փունջ, որ ալսուել պատրաստուում է տաք ջրից, շաքարից, կիտրոնից և ուօմից: Տանուտէրն առաջ ընկած, շրջեցնել է տալիս մատուցարանով փունջը թղթախաղի սեղանների մօտ, ամենքի առաջ մի բաժակ դնելով և ինսդրելով ու ստիպելով, որ անուշ անեն, և այդ գործողութիւնը մի քանի անգամ կրկնելով, հրաւիրում է հիւրերին վերկենալ և նախընթրք անել: Հիւրերը սովորաբար չեն թողնում, որ փունջը սառի, որովհետեւ փունջի միայն տաքն է յարգի: Նոքա հրաւիրում են տօնատիրոջը, շնորհաւորում են նորա մեծ օրը և անդագար կրկնելով սովորական բանաձեր, խմում են: Փունջի թիւը և քանակը սահմանափակուած չէ, մատուցուում է այնքան, որքան ցանկացող կայ: Ճատ անգամ այնքան փունջ են խմում, որ սեղանի դիխին ալես ոչ գինի և ոչ օղի են կարողանում խմել: Առաջ տղամարդիկն են նախընթրքի անում, յետոյ կանալք ու աղջիկները: Կուշտ ուտելուց ու խմելուց յետոյ և բերանները խուրաբիալով ու մեղեսի քաղցրացնելուց յետոյ, նորից բոլորեքեան շարուում են սեղանների չորսը և շարունակում են ընդհատած թղթախաղը մինչև ընթրիքը, որ լինում է գիշերուայ 2—3 ժամին, որովհետեւ տօն-շնորհաւորն որքան որ երկար տևի, այնքան աւելի պատիւ է տօնատիրոջ համար:

Ընթրքի սեղանը, որ, ինչպէս ասացինք, շատ ուշ է պատրաստուում, համարեալ թէ բանի տեղ չի անցնում, որով-

հետեւ, նաև, այդպէս նախընթրքի ժամանակ շատերը բոլորովին կշտացած են լինում, երկրորդ, թղթախաղ ց զլուխները տաքացած լինելով, ոչ ժամանակ և ոչ ախորժակ են ունենում բան ուտելու, և, վերջապէս, ժամանակն ուշ լինելու պատճառով, բոլորի քունը տանում է, և ամենքն աշխատում են շուտով տուն վերադառնալ: Ընթրքին սովորաբար մատուցուում է տապակած կամ խաշած հնդկակաւ ու բաղ և կամ հնդկակաւ ու բաղ խառն, խաշած ձուկ, մբղեղէն, պաղպաղակ կամ կրնմ կամ պլոմբիր:

Ընթրքից խորյ անմիջապէս ամենքն էլ աշխատում են փութով մնաս բարեւ ասել ու մեկնել, ուստի և ամենքն էլ իրար դիմով են կպչում, իրար խառնուում, այնպէս որ յաճախ մոռանում են մօտ ծանօթներին անգամ մնաս բարեւ ասելու: Սակայն մի բան երբէք չեն մոռանում անել — այդ տօնատիրոջը և նորա ընտանիքը փոխադարձաբար խրեանց տներն հրաւիրելն է, հրաւէրք, որի խօսքերը նոյնպէս մի տեսակ ֆորմուլայի ձեւ են ստացել: Սովորաբար ասում են. «Մեղի ալ, ջանըս, հրամեցէք»:

Լինում են երբեմն և շատ հանդիսաւոր — «դառաթլու» տօն-շնորհաւոր երաժշտութեամբ, վարձուած խոհարարներով ու սպասաւորներով, կամ, ինչպէս, լինքեանք ասում են, «Մուզիկով, պովզրներով ու լաքէյներով տօշնաւոր». պատահում են և «շէնութիւն» անող ընկերութիւններ, բայց տօն-շնորհաւորը գորանով խը ընդհանուր բնաւորութիւնն երբէք չի փոխում: Առաջին դէպքում մեր նկարագրածի վերայ աւելանում են միայն սպարերը, երկրորդ դէպքում «շէնութիւն» են անում, շատ օդի կոնծելով, պարելով ու խառնակ կերպով հարայ-հրոցացնելով:

ՄՆՈՒՑԻՇՊԱՇԾՈՒԹԻՒՆՆԵՐ, ՀԵԻՇԸԼԻՔՆԵՐ ԵԻ ՆԲԽԵ- ՊԱՇԵՐՄՈՒՆՔՆԵՐ

Նախիջևանցիք չնայելով, որ դարեր են անցել այն օրից, երբ հեռացել են խրեանց մար հայրենիքից, բաժանուել, կտրուել են խրեանց հայրենակիցներից և ստիպուած են եղել ապրել առանձնացած, օտարների մէջ և միշտ-հանապաղ ենթարկուել են օտարների սովորութիւններին, վարք ու բարքին, այնուամենայնիւ դեռ պահպանել են խրեանց մէջ շատ ծէսեր, սնոտիապաշտութիւններ, հաւատալիքներ ու նախապաշարմունքներ, որոնք յար և նման են բուն հայրենիքում ապրող հայերի մէջ պահպանուածներին: Կոքս մինչև անգամ պահպանել են նոյն աշխարհահայեցողութիւնը կեանքի զանազան երեսյների մասին և շարունակել են խրեանց առօրեայ կեանքում ևս զեկավարուել նոյն սկզբունքներով, նոյն գաղափարներով, նոյն նպատակներով, որոնք ընդհանուր են բովանդակ հայութեան:

Երկուշաբթի օրը մի նոր բան չ'պէտք է բռնել, ճանապարհի չ'պէտք է դուրս գալ, որովհետեւ ծանր օր է, բռնած զործդ չի լաջողիլ, ճանապարհորդութիւնդ վտանգաւոր կ'լինի:

Երկուշաբթին բարի օր է, բայց այդ օրը լուսացք անելը լաւ չէ, որովհետեւ այդ օրուայ լուսացած շատիկիդ «սրտի մաշուցքով» կադուուես:

Չորեքշաբթին բարի չէ, որովհետեւ այդ օրը ամեն կախարդութիւն լաջողում է:

Հինգշաբթին բարի օր է. այդ օրուայ բռնած բոլոր դորերը լաջողութեամբ կ'վերջանան:

Ուրբաթը «գէշէ», որովհետեւ Քրիստոսի չարչարանքի օրն է:

Ճարաթը օրը նոր դորձ պէտք չէ սկսել, որովհետեւ երկար կ'քաշի. այդ օրը երեկոյեան էլ մածոն չ'պէտք է դնել, որովհետեւ կ'շագառի:

Նահանջ տարին ամուսնանայը լաւ չէ, որովհետեւ ամռանութիւնը բաղդաւոր չի լինիլ, ամռախները սիրով չեն ապրիլ միմեանց հետ, ամռախներից մէկը կընեռնի:

Մարտ ամսին, կամ, ինչպէս գիւղացիք ասում են, «Քիւզուկ» ամսին բան չի կարելի կտրել, ոչչար և առևասարակ անսառն չի կարելի մորթել, ուստի և պէտք է, իրեւ նշան, այդ ամսի ընթացքում շարունակ դռների շէմքի մի անկիւնում մի «չաթալ» — պատառաքաղ տնկել, որ մտնող-դուրս եկողները տեսնեն ու զգոյշ լինին:

«Միջինքին» — Միջինքին բան անել չի կարելի, որովհետեւ «մուկը կ'լրծէ» — Մկան տօն է:

Ս. Գէորգի երկուշաբթին (Ապ. 23) «Քաշուցք» է, այսինքն ով որ այդ օրը «բան բանէ», ձեռքն ու ոտքը կ'քաշուեն:

Հինունքի ամեն հինգշաբթի բան չի կարելի բանել, որովհետեւ «կայծակը կ'զարնէ» — կայծակի տօն է:

Հինունքի ամեն երեկոյ, արել մայր մտնելուց լինոյ, բան բանել չի կարելի, որովհետեւ հաւկուր կ'լինեն:

Կիւրակի օրերը թէ ալիւր մաղես, սիրական՝ որդուդ կը թաղես:

Որ կինն որ երեքշաբթի օրը շատիկը փոխէ, «էրիկը», — մարդը կ'մեռնի:

Անձրեսոտ, ցեխ ձմեռը վնասակար է դաշտերին ու ճանապարհներին. պէտք է տան անդրանկին զարնել տալ «սոփաներին» — հնոցներին, որ ցուրտ լինի, ձևն դայ, որ արտերը, դաշտերը ծածկուեն ու ճանապարհները ամբանան:

«Ծառկառուկից» — Ծաղկագարդից պահուած օրհնած ուռը պէտք է խաչաձև միմեանց վերայ գնելով համբուրել, ձգել կրակը, արել, որ քամին դադարի, փոթսրիկն ու մըրիկը հանգստանան:

«Սատանալի հարսնքի» — օդապոտութիւն մէջ պէտք է մի զմելին ձգել, որ չար քամին բարձրացնող սատանալի մատը կտրուի ու օդապոտը հանգստանալ:

Մեռեալ յուղարկաւորելու ժամանակ ով չվեր կենայ տեղից, չկանգնի, «մեռելկոխ» կ'լինի, ուստի և ննջեցեալ տառ-

նելու ժամանակ պէտք է քնածներին զարթեցնել, մինչեւ անգամ երեխաների օրօրոցներն էլ պէտք է վերցնել, բարձր տեղ դնել: Կանանց երկունքի ժամանակ պէտք է սենհակում զբանուած բոլոր փակուած տեղերն ու առարկաները՝ դռները, պահարանները, արկղները, զգրոցները բանալ, որ երեխայ բերելը հեշտ լինի, երկունքի ցաւը թեթև լինի:

Տղոցկանի վերայ պէտք է «ջէնկի թուր» — պատերազմի սուր դնել, որ թեթև բերէ, կամ նոյն նպատակով նոյն սրի վերայ ջուր ածել ու ջուրը խմեցնել տղոցկանին:

»Ալբաստի» կամ «ծովի մար» տեսնող մարդկանց թուրը կամ գոտին պէտք է դնել տղոցկանի վերայ, որ երեխան շուտ թեթև աշխարհ գայ:

«Բուհուն» — բուն որ տան վերայ որ նստի ու բուայ, նշան է, թէ այն տանից մարդ պիտի մեռնի:

Եթէ բուի սիրտն ու աջ ոտքն առնես, քնած մարդու վերայ դնես, խկոյն նա կ'սկսի իւր արած բանները պատմել:

Եթէ բուի սիրտն ու ոտքը թևերիդ տակը պահես, շները չեն հաջիլ վերադ:

Նոր լուսին տեսնողը պէտք է մաղերի ծալից մկրասով մի փոքր կտրէ, որ մազը աճի:

Կարճ մազ ունեցողի մազը կաճի, եթէ նա բաղնիքի ժամանակ երկար մազ ունեցողի մազից թափուող ջրից երեք ափ առնէ ու խմէ:

Եթէ երեք շաբաթ օր իրար վերայ, արել դեռ չ'ծաղած, մազերիդ ծալից մի փոքր կտրես, մազերդ շատ կ'երկարեն:

«Մազերկան» կեր, որ մազդ երկարի:

Կանալը եթէ չեն ուղարմ, որ նոցա մազերը թափեն, տըղամարդու գլխարկ չպէտք է ծածկեն:

Խուղած մազդ պէտք է կրակի մէջ ձգես, թէ չէ դիսացաւ կունենաս:

Պազը աղբի հետ դուրս չ'պէտք է ձգել, որովհետեւ աղբի մէջ քուջաւծ անող թռչունի ոտքին կարող է փաթաթուել, թռչունն էլ կանիծէ մազի տիրոջը ու նորա դլխի ցաւը անպակաս կ'լինի:

Պաղ կուլ տուողի փորի մէջ մաղը օձ կ'դառնայ:

Եթէ հիւանդ կնոջ մազերը դարնան ոկզբին արգաւանդ հողի մէջ թաղես, այդ մազերը արեգակի տաքութիւնից օձ կ'դառնան:

Դեղին մաղը վատ բնութեան նշան է:

Բարեկամիդ տահր մազերդ խուզիր, չարակամիդ տանը եղունդդ կորիր:

Եղունդ կրծողը բարակացաւ կ'ստանայ:

Եղնգի վերայ կոխող-անցնող աղջկայ բազդը եօթ տարի կ'փակուի:

Կորած եղունգը պէտք է պատի տակը թաղել:

Եղնգի վերայ «Նորեկ» ունենալը նոր հագուստ հաղնելու նշան է:

Եղունդ այլելը լաւ չէ, որովհետև եղունդ այլող մարդու եղունգերը այն աշխարհում կ'պահանջնեն, ու թէ որ չ'դանուի, եղնգի տիրոջը կայրեն:

Որ մարդու եղունգն որ մսին մօտիկ կսկած լինի, նորա ազգականների սէրը նորա վերայ շատ կ'լինի:

Դրան շէմքի վերայ կանգնած միմեանց ձեռք տակը-բարեւելը լաւ չէ, որովհետև բարեկամները միմեանց կ'թշնաման, կ'խոռովին միմեանցից:

Աչքի պաղելը ճանապարհ է ցոյց տալիս, «Հեռաւոր» դալու նշան է:

Կերակրի սեղանի վերայից բան ընկնելը, կոտրուելը, թափուելը հիւր գալու նշան է:

Առաջին անդամ երբ ամպի որոտումն լսես, պէտք է մի քար առնես ձեռքդ ու երեք անդամ մէջքեդ դարնես, որ մէջքը ամբանայ:

Նոր լուսին տեսնողը եթէ մի երկաթի կտոր դնէ ատամների տակ, ատամները կամրանսն, և այն և այն:

Տղոցկանին, երեխաններին և տոհառարակ ամեն մի լաւ բան, մինչև իսկ խմորեղէնը պէտք է պահպանել չար աչքից, թէ չէ կարող են «նազար դնել» — աչքով տալ; Չար աչքից, լամ ինչպէս ասում են, «չար նազարից» բռնուածներին կա-

բելի է զանազան աղօթքներով -ազատել, բժշկել, աչքի գորութիւնը նոցա վերայից հանել:

Տղոցկանին չար աչքից բժշկելու համար պէտք է այսպէս աղօթել.

Տուն ունիմ երկաթէ,

Գատերը ամենը կպղակէ,

Սուրբ կոյսը մէջը քուն է,

Սուրբ Կրիզորը զարթուն է:

Երեք-երեք պոյ ձիաւոր,

Երեքն ալ կանանչ կսպաւոր՝ —

Մէկը Յիսուս, մէկը Քրիստոս,

մէկը մեր Տէրը:

Ելանք բարձր սարերով,

Իջանք խոր-խոր ձորերով,

Հարիւր հազար հրեշտակով,

Առջի Տէր, նոր կերթաս.

Միւս աչքով տուածներին պէտք է հետեւալ կերպով աղօթել:

Աղօթիմ ութը մատով,

Աստուածամօր քաղցր կաթով,

Կողմացին, Թամէանսին,

Անարծաթ բժշկին բժշկարանով,

Սև օձը կթեցին,

Առանց մակարդ մակարդեցին,

Մարը կերաւ ճաթեցաւ,

Երթամ դուռը հըւըն դին,

Էլիմ էրդիկը տղոցկանին,

Բալնիք ձգիմ վիրապաշտին,

Սուրբ ունիմ, սուրբ գօտի ունիմ,

Սուրբ գօտի կապած ունիմ:

Պօլոս, Պետրոս, Անդիանոս,

Գերեզմանին Տէրն Յիսուս:

Հայր Յովսէփ, կոյս Մարիամ,

Քուն եղաւ, երազ տեսաւ,

Բերդէ քաղաք ընծայեցաւ,

Ի խանձարուրս պատեցաւ :

Չար աչքից ախտացածներին կարելի է ազատել հետեւալ աղօթքով.

Աղօթիմ կաթն է կուսին,

Գաւազանն է Մովսիսին,

Քնարը Գաւթին,

Մատն է Սողոմոնին,

Զեռն է Յոսուսի Քրիստոսն,

Նախիջևանցիք, բացի տղոցկանի հիւանդութիւններից,

շատ ուրիշ ցաւեր էլ բուժում ևն զանազան աղօթքներով,

որովհետև կարծում են, թէ Հիւանդութիւնների մեծ մասն առաջ է գալիս պէս-պէս չար պատահմունքներից, չար աչքերից, վախից: Դլիսացաւը, առամնացաւը, մարմնի զանազան մասերում պատահած ծակոցքները - «խոստուկը», փայծաղի - «դալախի» Հիւանդութիւնները, մէջքացաւը, պորտացաւը - «կռնան», գաղտուկ ջերմը, գորտնուկը, «դիմքելին» - մինատամբը, մինչեւ խոկ կարճի, օձի և ազդի-ազդի թունաւոր միջատների խայթուածքը բոլորը, բոլորը ունին էլքեանց աղօթքները: Եւ այդ աղօթքները հասարակ բաներ չեն, այլ «սրբունակ» են, առինքն ուրբ աղօթքների զօրութիւն ունին:

Պինատամը — «դեմքելին» բժշկելու համար, օրինակի համար, ասում են հետևեալ «աղօթքանման ասացուածքը».

Պրօտէռը սաբան կանէք.

Գրիատոս եկաւ, վրան նայեցաւ, զարմացաւ.

Թիւֆ, թիւֆ, թիւֆ վրան, որպաղաւ.

«Կոնան» կամ պորտադաւն ազօթում են ալսպէս.

Վրիստոս մեր դուռը դէմ առաւ, Ան ողորմելի էրկանը

Ваша гашдь шашь.

Зан. в озерах мори.

ՕՇԱ ՃԱՆԱԿԻ ԱՎԵՐ

Բացի ազօլութքներից, սալիցևասցը պահանջմանը կառավա-
հիւանդութիւններ, տկարութիւններ ու ցաւեր բժշկել ու բժշ-
կում են, կամ ինչպէս ինքեանք ասում են, «ճար են անում»
զանազան «ճարերով», որոնց բաղզի հիմքը ևս կազմում են պէս-
պէս սնոտիապաշտութիւններ, նախապաշարմունքներ և հաւա-
տայիքներ:

Հաւկուր եղածների աչքերը, օլինակի համար, զջիկի արիւն են կաթեցնում, երևի, հիմնուելով այն հանգամանքի վերակ, որ ցցիկները միայն գլշերն են լոյս տեսնում:

1) Եյս աղօթքների օրինակներն իւր ծերունի մօր բերանից առնելով, հաղորդել է մեզ Տէր.Գէորգ.Քէլլէշահինեանը:

Առաջնաբարին տանում են զերեզմանոց, կանգնեց-
նում են այն մեռեալի զերեզմանի վերայ, որից կարծում են,
թէ մեռելկոլս է եղել հիւանդը, և ոտքերին ու ձեռքերին
ջուր են ածում, այնպէս յարմարացնելով կամ կանգնեցնելով,
որ հիւանդի ոտքերը մեռեալի ոտքերի, ձեռքերն էլ ձեռքե-
րի տեղը գտն:

Մեռելիս լինում են կամ մեռեալից վաշնեսալով, կամ սուսալ յուղարկաւորելու ժամանակ չ'վերկենալով, տեղից չ'կանգնելով և կամ թաղման ժամանակ շատ լաց լինելուց ու տանջուելուց: Մեռելիս լինելու առաջն առնելու համար, երբ որ տեսնում են, որ մէկը շատ է լաց լինում, չարչարուում ու տանջուում, առնում են զերեղմանի հողից մի բուռը հող ու լցնում են սուդ անողի կուսակն օձիքի տակից: Մեռելիսներին բժշկում են և «Քցելանքով»: «Քցելանքը» մի սնստիապաշտական դարման կամ ճար է, որ պատրաստում են և դործ են դնում երեք տեսակ: Կամ հիւանդի ոտքն ու ձեռքը լուանում են, յետոյ լուացքաջրի մէջ ձգում են կորեկ ու շաքար, հիւանդին թքել են տալիս ջրի մէջը, մազերը կտրում, ձգում են ջուրը, ջրամանի վերայ փռում են հիւանդի մի նշանից (շորից), գիշերը դնում են լուսնի տակ և առաւօտեան այդ բոլորը տանում, թափում են «խաչ-ճամբալի» վերայ. կամ հիւանդի ոտքն ու ձեռքը լուանում են և թափում են խաչ ճանապարհի վերայ, յետոյ շինում են մի պաճուճապատանք — «խումաջիկ», աւնում են հիւանդի շորից մի անպէտք կտոր ու մէջը դնում են կորեկ, սոխ, եօթ տեսակ միրգ, տալիս են հիւանդին շաքար, որ նա երեք անգամ խածնէ ու թքէ և ապա գիշերը այդ բոլորը դնենով հիւանդի անկողնի տակ, երկրորդ գիշերը տանում են, ձգում են խաչ-ճանապարհի վերայ. կամ առնում են եօթ տեսակ անուշեղէն (միրգ), մի սոխ, մի կտոր շաքար, մի քանի փոքրիկ «խումաջիկ-ներ» և այս բոլորը կապելով փոքրիկ կապոցիկների մէջ, մի մազի մէջ են լցնում և դնում հիւանդի բարձի տակ, որ մնայ ամբողջ դիշերը: Միւս օրն առնում են մաղը և անխօս տանում, թափիշերը: Միւս օրն առնում են մաղը և անխօս տանում, թափում են նորա պարունակութիւնը խաչ-ճանապարհի վերայ ու անխօս վերադառնում տուն: Հիւանդի այն հարցին, թէ «ինչ

բերիր», պատասխանում են. «թեթևութիւն ու տուղջութիւն»: «Քցելանքը», որ, ինչպէս երևում է, առաջ է եկել ձգել-քցել բառից, որովհետև նա ձգուում կամ թափուում է ճանապարհի վերայ, դործ է ածուում և «Հանդէպքի» դէմ: «Հանդէպք» ասելով, նախիջևսնցիք հասկանում են ամեն մի հիւանդութիւն, որ առաջ եկած են համարում չար պատահմունքից-հանդիպելուց, սաստիկ վախենալուց, սաստիկ ամաչելուց — «առ առնելուց», և այն և այն:

Որպէսզի իմանան, թէ «Հանդէպքը» ընչից է առաջ եկել և կարողանան թեթևացնել ու բժշկել նորան, նախիջևսնցիք սովորաբար «թեթև են թափում»: Նոքա նախապէս հարց ու փորձ անելով և իմանալով, թէ հիւանդի ո՞ր տեղն է ցաւում, մէջ ջրով լիքն ամուն են բռնում ցաւած տեղի վերայ ու հալում, թափում են նորա մէջ կամ արճիճ կամ մեղրամոմ: Այնուհետև նոքա քննում են ջուրը և արճճի կամ մեղրամոմի ջրի մէջ ստացած զանազան ձևերից գուշակում հն, թէ հանդէպք առաջ է եկել, պատահել է այս ինչ առարկայից, կամ այս ինչ դէպքից: Թէ ընչից է առաջ եկել «Հանդէպքը» —, իմանում են և դիւթիւններ կամ հմայութիւններ անելով — «Փալ բանալով»: Հմայում են սովորաբար կամ խաղաթղթերով, կամ տէրողորմեալով և կամ, որ շատ ընդունուած է, բակլայ կամ 30 կամ 41: Բակլաների մէջ խաւանում են հայտ կտոր, ձգելով, կամ, ինչպէս ասում են, «բակլայ բանալով»: Բակլայ նետող դիւթերի — «Փալքիների» բակլաների թիւը լինում է աղի կտոր և մի փալուն քար կամ ապակու կտոր: Բակլաները երկու ափով իրաբ լաւ խաւանելուց յետով, դիւթերը փրուում են նոցա գետնի կամ սեղանի վերայ և նոցա շարուածքից, միմեանցից հեռու կամ մօտ լինելուց զանազան գուշակութիւններ են անում:

Նախիջևանի հին մարդկանց և տիրապէս գիւղացւոց երեակայութիւնն էլ լցուած ու պաշարուած է զանազան գերբնական արաբածներով ու հողիներով՝ «Խոնջողոզներով», «մեղմէնաղէկներով», «բողոջներով», «ժիվոտներով», «ծովի-մարերով», «լուալիմ-թառալիմներով», մանդրներով» և աղջի-աղջի

«խորթլախներով», «ջիներով», սատանաներով ու գլեերով: Նախիջևանցւոց երեակայութեամբ այդ արաբածները միշտ ներկայ են: միշտ խառնուում են մարդկանց գործերին, միշտ աշխատում են պէս-պէս փորձանքներ բերել մարդկանց գլխին, ուստի և պէտք է հանապաղ զգուշ լինել նոցանից, ընկածտեղը միշտ աղօթքներ ասելով ու չորս կողմը խաչակնքելով:

Խոնջողոզներն ապրում են տների չարգախներում — «թաւաններում», մէջմէն աղէկները — քանդուած տներում, ամայիքնակարաններում, բողոջները — տների մէջ գտնուած գոց տեղնակարաններում, մութ անկիւններում, պատերի ճեղքերում, ծովի-մարերում — ջրերում, մանդրները — լեռներում, անտառներում; Խորթը լախները — գերեզմանոցներում, իսկ միւսներն ամեն տեղ:

Խոնջողոզները սովորաբար երեւում են նոր-տարու գիշերը. Նոքա հաղած են լինում փսխաթէ պատուոտուն հալաւներ, որոնց ցնցոտիներից ու ծուէններից երկաթէ գունտեր են կախուած լինում. Նոքա, երբ յաջողում է նոցա մէկին բռնել, նստում են նորա վերայ և ճնշում իւրեանց ծանրութեան տակ: Փիգոտներն անիւ են դառնում ու վազում մարդկանց լետևից: Խորթլախները մեռեալների ուրուականներն են, որոնք յաճախակի երեւում են մարդկանց ու սարսափահար անում նոցա: Առայի իմ-թառալիմները նոյնպէս երեւում են նոր-տարու գիշերը, մտնելով տները հնոցների ծինելուզներից և գուրս գալով վառարանի գունից. Նոքա երկար երկաթէ մագիլներ ունին, սպիտակակեր են և մօրուեղ: Ծովի-մարերն երկարամաղ կանանց նման են. Նոցա ոչիք նոցա մագերի մէջ է: Եթէ նոցա մազերը կտրես, նոքա քեզ գերի կ'լինին և զանազան ծառայութիւններ կանեն: Մեղմէնաղէկների կրունկները «թեռու» են — ընդհակառակներն են. Նոքա գիշերները լուսաւորում են իւրեանց ընդհակառակները, «խաղ են կանչում» — երգում են, պարում են ըստող գիշերը խաղ ու հարսանիքի մէջ են անցկացնում: Եթէ նոցա յաջողում է մէկին բռնել, նոքա նորան էլ տառում են իւրեանց ընակարանները, նոքա էլ ստիպում են իւրեանց հետ պարել, և այնքան չարչարում ու տանջում են, իւրեանց հետ պարել համարեած թէ ուշաթափուում ու նուազում է: Որ բռնուածը համարեած թէ ուշաթափուում ու նուազում է:

Այն ժամանակ նոքա դուրս են հանում նորան, տանում են մի անձանօթ տեղ և արձակում: Մանդրները կամ մանդր-մարդիկը անձունի թզուկներ են, որոնք զանազան խաղեր են խաղում մարդկանց զլիւն: Հաւանական է կարծել, որ նոքա գերմանական առասպելների ու հեքիաթների մէջ մեծ գեր խաղաղող «գնումների» պէս բաներ են, որոնք, ինչպէս յախնի է, նոյնպէս ապրում են լեռներում: Բողոջները կամ պատի - բողոջները նմանում են Ռուսաց «բուկա» կոչուած արարածին կամ հրէշին: Նախիջևանցիք փոխարերական մտքով «պատի - բողոջ» կոչում են այն մարդկանց, որոնք չեն սիրում մարդամէջ խառնուել:

Դոցա, այդ արարածներին տեսնողներ են եղել, նոցա փորձանքներին ենթարկուողներ են եղել: Պատմում են, որ մէկ անգամ «Զերքեղին Յարութինը զնացել է եալին¹⁾ և բռնիլ է «Ալբաստի», ալվինքն ծովի-մար, ու ուզեցիլ է մազերը կտրիլ: «Աման, ասիլ է Ալբաստին, մի կտրիլ մազերս, կ'խոստանամ մինչև օխտը պորտիդ հոն չերևնալ, վրտել քու նշանդ ըլլայ»: Յարութիւնը Ալաբաստիին էրդում անիլ տուիլ է ու անպէս ապուլ տուիլ է, չէնէ էկէր մազերը կտրէր նը, Ալբաստին նարա դուռը եսիր պիտ ըլլար»:

Գիւղացի պառաւներից մէկը պատմում է. «Իմիս մեծաս դայեկ էր. նա շատ գաբրա մեղի կ'պատմէր իրեն կլոխը եկածը: Մէկ գիշեր, կասէր նա, ըսհալժ²⁾ պառկիլ իմ, քուն իմ: Անկամիս տուսէն մէկ ձան կուգայ, քի «Դայեակ մա, դայեակ մա, շուտ ել, քեզի տղոցկանի պիտ տանինք»: Ես այիմ-բէյիմ³⁾ կելիմ տեղէս դուս, կնալիմ, որ իմիս ճանցած մաշդիկս ինձի պիտ տանին իմիս գիտցած մաշդոց մէկին տունը: Կելիմ այդ մաշդոց կեշտամ: Քիչ կեշտամ, շատ կեշտամ, կ'հասնինք մէքամ տունի պէս բանի: Նես կ'մուտնում ու ինչ տեսնում, կ'նալիմ, որ ադտեղ էզող մաշդոց կըրունկները ալալինը թեռս է, ու ես նոր կիմանամ ինչ օյինի էկածս —

¹⁾ Եալին=եղերք, ափ ²⁾ Ըռահաթ=հանգիստ; ³⁾ Այիմ-բէյիմ=մէկէն, իրեն հաշիւ չ'տուած:

մեծիմէն աղէկներուն մէջը է ղածս: Եյ ինչ ալ լանը: Դաքա ինձի պատիւ կուտան, ես ալ տղոցկանի տղան կառնում ու վերջը կերակուրի կ'նատինք: Տրապեզին¹⁾ վրան չէշիտ-չէշիտ²⁾ կերակուրներ կ'դնին ու վիրա³⁾ զու կանին ինձի ուտելու: Ես ալ աս կառնում, կ'նալիմ թեղաքի⁴⁾ կտոր, ան կառնում — կէնէ աղպէս: Սուտ ուտողս կ'լամ, համա ինչ քաշածս ալ ինքս դիտիմ, մէալ վէրի Տէրս գիտէ: Կերակուրէն ետքը դաքա ինձի տուն կ'ճամբէին ու իմիս աշխատանքս կուտան, փէշս մէկ թօփ սոխի կճեպ ուլելով, ու ինձի մինչանքը մեր տունին մօտիկները ճամբելէն ետքը, իրենք կ'զառնան: Դաքա հեռացածներովը, ես ալ ալղը⁵⁾ սոխի կպեճները կ'փօթիմ ու երեսս խաչ հանելէն կ'վազիմ դէպի տուն: Սաբախտան⁶⁾ կելիմ տեղէս, կնալիմ, որ փեշտմալիս կապի արալընը⁷⁾ էրկու հատօնի կեցիլ է: Նոր խելքի կիննիմ, որ նացա տուածը ալախալ օսկի էղիլ է, համա իմ աչքիս սոխի կճեպ ցուցուցիլ ին: Կը վազիմ, թարլած տեղս կ'նալիմ, ինչ կճեպ, ինչ բարի կճեպ: Ան սահաթը նաքա էկիլ են էտևէս ու առիլ ին»: Փորքշէյեան ծերօնը պատմում է իրեն պատահած հետևեալ անցքը. «իրիկուն էր. աշտխ⁸⁾ մութը զետինը կոխել էր. Հաւան խաթի շամուռ⁹⁾ էր: Կուշովկաէին¹⁰⁾ դրւ էլլայ, պիտի էշտամ մէկ ուրիշ խութուռ: Թալայ¹¹⁾ հեռանալէս էտև, մէմալ կնալիմ իմիս բարեկամներէս մէկը՝ Փեօթր Վասիլեվիչը էկիլ է, նատիլ է դռովի էտևը ու կասէ ինձի. «Հայտա, բարեկամ, էշտամք իմիս տունս»: Ես արմնցած կ'հացունում դարա. Քուկուդ տունդ հօս է ինչ, զերէ ես զիտէի նարա վտեխի մաշդ էղածը: Հապա ինչ է, կասէ դա, նոր գնիլ եմ ու, չիտիս ինչ»: Է՛ էշտամքնը էշտամք կասիմ ու կ'քշիմ ձիերուն. ամա իտա մաշդը նստելէն էտև ձիերը տառհալաթ¹²⁾ կ'քաշին տուովը:

¹⁾ Տրապեզ=սեղան: ²⁾ Չէշիտ-չէշիտ=զանազան: ³⁾ Վիրա=միշտ, անդադար: ⁴⁾ Թեղաք=քակոր: ⁵⁾ Սլղը կամ ալղը=այն: ⁶⁾ Սաբախտան=առաւօտեան: ⁷⁾ Արալըն=ճեղք: ⁸⁾ Աշտխ=արդէն: ⁹⁾ Խամթի շամուռ=սաստիկ ցեխ: ¹⁰⁾ Կուշովկա=զիտի անուն (Կյոցօւկա): ¹¹⁾ Թալայ=շատ: ¹²⁾ Տառհալաթ=հազիւ հազ:

Գնացինք հասանք մէքամ Պալապան¹⁾ տունի. կնայիմ
մէջնալ իլինք չէշիտ-չէշիտ մաշդիկ, որը կելէ, որը կ'մուտնու:
Զիեւ առին—տարին, ինձի ալ առին— մտցուցին նես, զոռ-խը-
շիմով²⁾ հալաւս հանելու տուին, մէքամ կինամաշդու էրկան
շապիկ հագուցին ու պաշլայեցին³⁾ չալելու⁴⁾ ու խաղց-
նելու. ճոմպող տալու⁵⁾ տուին, չաթալիսայց կայնեցուցին⁶⁾ ու
աղպէս չէշիտ-չէշիտ օյիններ բերին կրօխս ու իրանք ալ խըն-
դալէն ջարդուեցան: Անկից էտև հանեցին դուս, համա աշտին
անպէս յոդնիլ իմ, որ ճորով-մորով կ'քաշիմ: Աղպէս հանեցին
մէքամ եառի⁷⁾ վրայ ու յոտէն կտեցին-ձգեցին մէքամ փոսի
մէջ. շինըն⁸⁾ ասքով կեշտամ, անքով կեշտամ էլելու հնարը
չիքայ, ու աղպէս սախ գիշերը կ'չարչկուիմ:

Սաբախտան ըլլալէն էտև, նոր խելքս կլոխս կ'ժողվիմ,
կ'նայիմ, որ մէքամ քուզնիի⁹⁾ մէջ իմ: Ադ քուզնիին տէրը է-
կաւ, բացից դուռը ու ինձի բանին որպիսութինը ասաց: Եղիլ
է աղլը եառին թեփէն¹⁰⁾ էլլածս, քուզնիին թեփէն էղիլ է,
վտիխէն ես ընկիլ եմ մէջը: Քուզնիէն ալ քիչ մը հեռու կեշ-
տամ, ձիերուս կ'գտնում՝ քրտինք-ջուր կտրած: Հայվաննե-
րուն անխտակ վազցուցիլ ին, որ նեֆիսները կոխելու չին լալ-
ուշափխան կտրած կայնիլ ին: Աս հալեքէթներէն¹¹⁾ էտև
կիմանամ կլոխս ինչ էկածը մեծմէնաղէկներուն ձեռքէն, ու
կելլիմ տուն կուգամ»:

Պատմում են, որ առայիմ-թառալիմը նոր տարու գիշերը
յայտնուել է չաջի Ստեփաննենց տանը. նա մտել է ծխնալոյզից
և դուրս է եկել վառարանի բերանից: Այդ հանդամանքը,
որի մանրամասն պատմութիւնը իսկոյն տարածուել է քաղսու-
քում, այնպիսի սարսափ է ձգել բոլորի վերայ, որ այնուհետև
ամենքը, նամանաւանդ մանուկները ահով-դողով են անցնե-

¹⁾ Պալապան=մեծ: ²⁾ Զոռ. խըշինով=ստիպելով: ³⁾ Պաշլայել=
սկսել: ⁴⁾ Չալել=նուագել: ⁵⁾ Ճոմպող տալ=գլխակոնձի տալ:
⁶⁾ Չաթալիսայց կայնեցունել=զլիսի վերայ կանդնեցնել: ⁷⁾ Եառ=
բլուր: ⁸⁾ Շինըն=այժմ: ⁹⁾ Քուզնի=դարբնոց: ¹⁰⁾ Թեփէ=գագաթ:
¹¹⁾ Հալեքէթ=աղմուկ:

լուս եղել չաջի-Ստեփաննենց տան մօտով: Մինչև անգամ նոյն
իսկ այդ տան մէջ ապրողներից են սկսել վախենալ երեխա-
ները և սովորութիւն են արել Առամ-Թառալիմ յորջորջում
տալու նոցա: Առամ-Թառալիմը եղել է ահարկու դէմքով, եր-
կար ու սպիտակ մաղերով ու մորուքով և երկաթէ երկար
եղունգներով:

Պատմում են նոյնպէս, որ մէկ անգամ Պալին Մելքոնը
գնացել է Թոփտիլց Զալթըր իւր ծերունի աղգականների տունը
«ձեռք պագնելու» ու նոցա օրհնութիւնը ստանալու, որով-
հետև նշանուած է եղել և պատրաստուում է եղել կարգուե-
լու: Վերադարձին, երբ նա հասել է երկու գիւղի մէջ գտնուած
«զեօլ» կոչուած տեղը, նորա յետեկց ընկել է ժիվոտը, «կոպ-
չակի»—անուի ձև ընդունելով և շատ արագ գլորուելով: Հաս-
նելով նորան, նա նստել է նորա վերայ, ճնշել է իւր ծան-
րութեան տակ և ամբողջ գիշերը չարչարել ու ման է ածել
նորան, այնպէս որ խեղճը հաղիւ հաղ կարողացել է միւս
առաւօտ լեղապատառ եղած տուն վերադառնալ:

**ՆՈՐ-ՆԱՌԻ ՖԵԽԱԾՆՑԻՑԻՑԻ ԸՐԳԻ ԿԱՑՑՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՌԹՑՆԻՆ
ԿԵԸՆՔԸ**

Մենք մեր պատմական տեսութեան հինգերորդ գլխում մէջ բերած աղիւսակից տեսանք, որ բոլոր հայ գաղթականների թիւն եղել է 12,598 հոգի արական և իգական սեռի: Այդ թուից 11,418 հոգին եղել են քաղաքացի, իսկ 1,180-ը զիւղացի:

Քաղաքացիների հետ միասին երկար ժամանակ բնակուել են քաղաքում և գիւղացիներից 15 տուն, կամենալով թողնել երկրագործութիւնը և քաղաքացի դառնալ: Սակայն այդ նոյսա չի յաջողել: Ճիշդ է, նոքա մոռացել են երկրագործութիւնն ու գիւղական միւս պարապմունքները, ընտելացել են քաղաքի կեանքին, նիստ ու կացին և սկսել են քաղաքացիների պէս արհեստներով ու վաճառականութեամբ պարապել, բայց չեն կալողացել ձուլուել քաղաքացիների հետ և քաղաքացի կոչուել, այլ քաղաքի մէջ կազմել են մի փոքրիկ համայնք, որ կրել է «Սաբանչի» անունը և պաշտօնական ցուցակների մէջ էլ միշտ մի ուրոյն տեղ է բռնել: 1880 թուին այդ սաբանչիները, որոնք իւրեանց քաղաքում ապրելու այդքան երկար ժամանակամիջոցի ընթացքում չեն կարողացած լինում կեանքի բաւարար բարեկեցութիւն ձեռք բերել, մտածում են թողնել քաղաքը, երթալ ապրել իւրեանց հողերի վերայ և մի առանձին գիւղ կազմել: Ահա այդ նպատակով նոքա դատ են բաց անում միւս հայ գիւղացիների դէմ, որոնք օգտուելով հանգամանքից, տիրապետել էին նոյս հողերին, և տանելով զործը, իւրեանց ընտանիքներով քաշուում են քաղաքից Սամբէկ գետի ափը, որտեղ գտնուում են նոյս հողերը, և հիմնարկում են «Սամբէկ», կամ, ինչպէս պաշտօնապէս կոչուում է, հայերէն—«Կատարինաւան» և ուստեղէն «Եկատերենովկա» հայկական վեցերորդ գիւղը:

Թէ Բրուսաստանի սահմանները մտած գաղթականների ընդհանուր թուից քանի հոգի են հասել իւրեանց բնակութեան համար նշանակուած տեղերը,—մենք չենք կարող ասել, որովհետեւ մեզ յայտնի չէ, թէ որքան է եղել կաթոլիկ հայերի թիւը, որոնք նորից վերադարձել են Ղըմ, և, որ գլխաւորն է, մեզ յայտնի չէ, թէ գաղթականներից որքան է ճանապարհին մեռել եւ փճացել: Եւ որովհետեւ մենք չ'գիտենք մըշտապէս բնակութիւն հաստատած գաղթականների սկզբնական թիւը, բնականապէս դժուարանում ենք որոշել, թէ որքան և ինչպէս է եղել և նոյա աճելութեան աստիճանն այս 120 տարուայ ընթացքում: Մենք միայն կարող ենք ասել, այս էլ հիմք բռնելով միայն Բրուսաստանի սահմանները մտած գաղթականների վերոյիշեալ քանակութիւնը—12,598 հոգի, թէ գաղթականների թիւն անցեալ 1780 թուից մինչև ներկայ 1900 թուականը մօտաւորապէս կրկնապակուել է ու եռապատկուել է:

Այդ պարզ կերպով կարելի է տեսնել ներկայումս Նոր-Նախիջևանում և նորա գիւղերում ապրող հայերի թիւը ցոյց տուող հետևեալ աղիւսակից, ՚ի նկատի չառնելով քաղաքից գուրս եկած և ուրիշ տեղերում բնակութիւն հաստատած նախիջևանցիներին:

Ա Զ Ի Ւ Ս Ա Կ

Բնակութեան տեղերի անունները.	Բնակիչների թիւը.			
	Երական	Իգական	տուն	ընդհանուր.
1. Մեծ Սալա	1,592	1,563	470	3,155
2. Սուլթան-Սալա	611	552	165	1,163
3. Թոփտի	2,516	5,250	718	4,766
4. Զալթիր	3,095	2,809	720	5,904
5. Նիսութայ	551	567	187	1,118
6. Կատարինաւան			287	1,50
7. Նոր Նախիջևան			12,370	7000

28676

Քաղաքացւոց նոցա Ղրիմում թողած անշարժ կալուածների փոխարէն 1779 թուականի հրովարտակով տրուել է առաջ 12 հազար օրավար հող, յնտոյ Յովսէփ արքեպիսկոպոսի միջնորդութեամբ շնորհուել է այլ ևս 8 հազար օրավար, ուրեմն ընդամենը—20 հազար օրավար, իսկ գիւղացւոց իւրաքանչիւրին 1781 թուին կատարուած ընդհանուր երկրաչափութեամբ չափուած, տրուած է 30 օրավար:

Նախիջևանցւոց շնորհուած հողերը պատկանում են Պուտսական մեծ հարթութեան դաշտային գօտուն (степное пространство), որ իւր հողի յատկութեամբ և գետնի ընդհանուր բնաւորութեամբ բաժանուում է երկու առանձին մասի՝ Պոնտիականի և Կասպիականի: Առաջինը, որ այդպէս է կոչուում, որովհետեւ բռնում է Աւ ծովի հիւսիսային ափը, ծածկուած է $\frac{1}{4}$ -ից մինչև $\frac{1}{2}$ գազ հաստութիւն ունեցող սևահողի շերտով, իսկ երկրորդը, որ այդպէս է կոչուում, որովհետեւ բռնում է Կասպից ծովի հիւսիսային ափը, բաղկացած է կաւահողից, որի վերայ գտնուած մեծաքանակ աւազը հողմերն այս ու այն կողմը տանելով, կամ ահագին աւազակոյտեր են գոյացնում, կամ սփռում, տարածում են ամեն տեղ: Պոնտիականի սևահողի տակ Բեսսարաբիայում և Քերսոնի նահանգի հարաւային մասերում գտնուում են աւազաքար և կրաքար, Կատարինասլաւի և Տաւրիկեան ու Քերտոնի նահանգների հիւսիսային մասերում—որձաքար և գնէյս, իսկ Գոնեցից մինչև Վոլգա գետը—կաւիճ:

Դաշտային գօտու հողի այդպիսի կազմութեան ու յատկութեան շնորհիւ է, որ բոլոր այդ երկիրը զրկուած է միայն-գամայն անտառից, որովհետեւ մի կողմից ծառերը չեն կարողանում խոր արմատ բռնել, միւս կողմից էլ անձրեւի ջրերը չեն կարողանում ծծուել զետնի մէջ: Դեռ հիւսիսային մասում, որի տակ գտնուում է որձաքար, բանում են, եթէ ոչ անտառներ, գոնէ, փոքրիկ պուրակներ ու ծմակներ, իսկ հարաւային մասում, որին պատկանում են և Նախիջևանի հողերը, այդ էլ չկայ, միայն տեղ-տեղ ձորակներում երեւում են թփեր, մացառներ ու կարճաբուն ծառեր: Չորս կողմը, որքան մարդու

աչք բռնում է, տարածուում է լայն, ընդարձակ հարթութիւնը, որ գարնանը ու աշնանը ծածկուած է լինում կանաչով, իսկ ամառն արուում, չորանում ու սևանում է:

Հողերը տրուել են նախիջևանցւոց, կամ խօսելով հրովարտակի խօսքերով, «շնորհուել են ամենից հասարակութեանց ամենաողորմածաբար յափտենականաբար ՚ի շարդիւնս և ՚ի շահաւետութիւնս թարց ամենայնի պահանջողութեան զհարկս ՚ի գանձարանս»:

Հրովարտակի այդ խօսքերը թէ գաղթականները և թէ ինքեանք հրովարտակը գործ գնող տեղական իշխանաւորները բնականապէս այնպէս են հասկացել, թէ հողերը տրուած են իրեւ սեփականութիւն մշտնչենաւորապէս, որ, ՚ի հարկէ, ուրիշ պէս չէր էլ կարող լինել, որովհետեւ, ինչպէս վերը նկատեցինք, հողերը տրուած էլն գաղթականներին նոցա Ղրիմում թողած կալուածների փոխարէն: Եւ այդ այդպէս էլ եղել ու անշարժ կալուածների փոխարէն: Եւ այդ այդպէս էլ եղել ու ընդունուել է մինչև 1887 թուականը, երբ նոր կարգադրութիւն է եղել, որի զօրութեամբ գիւղացիք հողերին լիազօր թիւն է եղել, որի զօրութեամբ գիւղացիք հողերին լիազօր թէր կամ սեփականատէր դառնալու համար, պարտական էին գնել (վակուպատ): Նոցա տէրութիւնից:

Որոշուել է 40 տարի ժամանակամիջոց, որի ընթացքում գիւղացիք պէտք է վճարեն իրեանց ձեռքին գտնուած բոլոր հողերի գիւնը (վակուպ), հատուցանելով տարին ամեն մի օրագարին մի ռուբլի տասնեւեօթ կոպէկ:

Գաղաքացիք պարապում են առեւտրով և գործարանական արդիւնաբերութեամբ: Նոքա վաճառում են գլխաւորապէս հացարիկներ՝ ցորեան, գարի, վարսակ, վշահատիկ—«հունդ», կրոհակ—«դուգու», որոնց ամբարելու համար շինել են քաղաքում մեծամեծ շտեմարաններ, վաճառում են բուրդ, մորթի, քում մեծամեծ շտեմարաններ, վաճառում են բազմաթիւ «օթառներ»—ոչխառի հօտեր, վաճառում են, վերջապէս, կաշի, բամբակ և այն: Ռի հօտեր, վաճառում են ճարպի, կաշուի, օճառի, բուրդ լուանա-չայերը բանեցնում են ճարպի, կաշուի, օճառի, բուրդ լուանա-լու ու մաքրելու, բամբակի, դղմաճի, աղիւսի և կրի գործարները: Հին արհեստները՝ պայտառութիւնը, դարբնութիւնը, զգակաղործութիւնը, թաղիքադործութիւնը, գգակաղործութիւնը,

թիւնը, ատաղձագործութիւնը, դերձակութիւնը, ոսկերչութիւնը, արծաթպանութիւնը, կլայելագործութիւնը. կղմինտրագործութիւնը, հացագործութիւնը, համետագործութիւնը և միւսները համարեա թէ վերացել կամ վերանալու վերայ են, այնպէս որ կարելի է համարձակապէս ասել, թէ նախիջևանցւոց մէջ ներկայումս ոչ արհեստներ և ոչ արհեստաւորներ կան:

Գիւղացիք պարապում են զլսաւորապէս երկրագործութեամբ, կամ, ինչպէս ինքեանք ասում են, «Փողագործութեամբ»: Նոքա իւրեանց վարուցանքն անում են հողագործութեան երկդաշտեան եղանակով, այսինքն իւրեանց ձեռքին գտնուած հողերը նոքա բաժանում են երկու մասի՝ մէկը ցանում են, միւսը թողնում են հանգստանալու միւս տարուայ համար: Նոքա ունին և այնպիսի հողեր, որ ամեն տարի ցանում են. դոքա գիւղերի մօտ գտնուած դաշտերն են, որոնք աւելի պարարտ են, որովհետև գիւղի անասունները միշտ ման են գալիս, արածում են նոցա վերայ և իւրեանց աղբով պարարտացնում են նոցա:

Գիւղացւոց հողերը համայնական են և 2—3 տարին մի անգամ բաժանուում են տների թէ արական և թէ իգական շնչերի վերայ. չ'բաժանուած մնում են միայն արօտատեղիները, որտեղ ամենքն էլ հաւասարապէս իրաւունք ունին քշել իւրեանց անասունները և արածեցնել, և եղեգնուալր—«դայմացը», որտեղից եղեգն են քաղում վառելիքի համար: Հողաբաժանութեան ժամանակ տան իգական անդամները ստանում են արական անդամների ստացածների կէսը:

Հայ գիւղացիք այստեղ էլ, ինչպէս ամեն տեղ, ունին աշնանցան և գարնանացան – «Քիւզուան և Բահերուան»: Աշնանը նոքա ցանում են կարմրահատ ցորեան «օղիմկա» և հաճար – «ալիշ», իսկ գարնանը ցանում են սպիտակահատ ցորեան – «հառնովկա», գարի, վարսակ և վշահատիկ: Հայերը թէ արդէն թողել են հարկական ծանր գութանը, կամ, ինչպէս ասում են ինքեանք գիւղացիները, «Հայր - Արրահամի գութանը» և վարում են թեթև արօրով, բայց նոքա դեռ յա-

մառում են ընդունելու եւրոպական կատարելագործուած բոլոր գործիքները, նոքա դեռ մինչև ցայսօր հնձում են նահապետական մանդաղներով ու դերանդիներով:

Գիւղացիների գաշտացին պարապմունքներին շատ վնասում ու արգելք է լինում այս կողմերի կլիման իւր խստութեամբ ու փոփոխականութեամբ: Զմեռը նոյեմբերից մինչև յունուարի վերջը ցուրտն երբեմն այնքան սաստիկ է լինում, որ հասնում է 30 աստիճանի, իսկ ամառը Յուլիսին մինչև 40 աստիճան արեւում և 30 աստիճան շուաքում տաքութիւն է անում: Զիւն շատ քիչ է զալիս, բայց յաճախակի բուք է անում և ձիւնախառն ցրտաշունչ քամի է փշում: Փետրուարի վերջին լ Պարտի սկզբին ձմեռը վերջանում է. ձիւն արագ հալեւ Պարտի սկզբին ձմեռը վերջանում է. ձիւն արագ հալեւ ուում է և սեահողը փափկում ու հեղուկանման կակուղ ցեխ է դառնում, որ կտրում է ճանապարհների հաղորդակցութիւնը: Դառնում է միայն երեւում է Սպրիլի սկզբին, այնպէս բուսականութիւնը միայն երեւում է Սպրիլի սկզբին, այնպէս որ համարեա թէ գարուն չի լինում. բայց բաւական է մի քառանում իւր տաք ու պայծառ օր, որ գաշտերը կենդանան, զարթնեն և ամեն տեղ ծածկուի դալար արօտավ: Որձաքարեայ ներքին շերտ անեցող գաշտերը ծածկուում են կարճ, բայց հիւթաւէտ արօտով, իսկ կրաքարեայ և կաւճախին շերտ ունեցողները սաժէնաչափ բարձր բոյսերով, ինչպէս եղէզն է, որ գործ է ածէնաչափ կառելիքի համար: Մայիսի 15-ից սկսուում է երաշտ ամառն իւր տաք, անտանելի փոշի բարձրացնող քամիներով, իւր գաշտացին մկներով – «ըլթըլթներով». գետինը չորանում, ճաղճգում է, մատղաշ բոյսերի արմատները բայցուում են և խորշակի տաքութիւնից այրուում: Ոշունը Սեպտեմբերից մինչև նոյեմբերը, ըստ ամենայնի, բարեխառն է. անձրևներ են գալիս, գաշտերը նորից կանաչում են, օդը մաքրուում ու գարնան օդի բնաւորութիւն է ստանում, այնպէս որ կարելի ասել, թէ այս կողմերի աշունն աւելի է նմանում զարնան, է ասել, թէ այս կողմերի աշունն աւելի է նմանում զարնան, քան թէ բուն գարունը: Թէ հայ գիւղերից իւրաքանչիւրն որքան հող ունի և ունեցած հողի ընդհանուր քանակութիւնից որքան հայր արածար է և որքան անյարմար, այդ կարելի է տեսնել հետևեալ աղիւսակից.

Ա Ղ Ի Ւ Ա Կ

Գիւղերի անուն-ները.	Հողի քանակութիւնն օրավարի հաշուով.				
	Ցարմար.	Անցարմար.	Զայլ-	բնդհանուր.	
1. Մեծ- Սալա	7,776		402		303
2. Սուլթան-Սալա	6,389	440 ք. ս.	210		36
3. Թուխտի	15,778		272		610
4. Զալթիր	15,482		865		16,660
5. Նիսուիթայ	5,839	720 ք. ս.	447	2027 ք. ս.	660
6. Կատարինաւան					140 ք. 787-347 ք. ս.
					500 6,500

Նախիջևանի գիւղերի պարտականացուցիչ ծախքերի քառակութիւնը տարբուալ ընթացքում բաւականին մեծ է, որպէս հետեւ սովորական հարկերի հետ միասին նոքա հատուցանում են և վերոցիշեալ հողերի վճարը — «ՎԱՐԿՈՒ»-ը: Թոփտին, օրինակի համար, միայն հողավճար հատուցանում է տարին 18,355 ռուբլի, իսկ գլւողի բոլոր տարեկան ծախքերի համադումարը հասնում է 25,632 ռուբլի խոշոր գումարին, ասել է թէ իւրաքանչիւր թոփտեցի թէ արական և թէ իգական սեռի անհատ հատուցանում, է տարին ռիւռաց համար:

Գիւղերի պարտականաշուցիչ ծախքերը, բացի հողավճարից, են համայնական ծախքերը—«ВОЛОСТНЫХЪ», հասարակական—«семскихъ», շինական—«сельскихъ» և ապահովագրական—«страховыхъ»:

Այդ ծախքերը լրացնում են, տուրք հաւաքելով գիւղացիների տնատեղերից, խոշոր ու մասր անասուններից, լուծքից, տների արական և իգական անդամներից և հասարակական հողերի կապալաղբամից: Հատուցանելիք հարկերի քանակութիւնը, բացի տնատեղերի տուրքից, որ ամեն տեղ ստացուում է «շուպաղայի» ամեն մի քառակուսի սաժենից $\frac{1}{2}$ կոպէկ, բոլոր գիւղերում միատեսակ ու հաւասար չէ: Մի գիւղում խոշոր անասունների՝ եղների, ձիերի և կովերի ամեն մի գլխից ստացուում է 50 կոպէկ, միւս գիւղում — 60 կոպէկ. մի գիւղում մասր անասունների՝ ալծերի և ոչխարների ամեն մի գլ-

լինց ստացւում է 20 կ. միւսում 25 կ. կամ 40 կ. մի գիւղում
լուծքից ստացուում է 32 ռուբլի, միւսում—16։ Այնպիսի
զիւղ էլ կայ, ինչպէս Զալթիրը, որ լուծքից հարկ չի հա-
տուցանում, այլ տների արական և իգական անդամներից,
հաշուելով արական անդամի վերայ 3 ռուբլի, իգականի
վերայ 1,50։ Փոքր կամ Սուլթան-Սալա գիւղը լուծքի հաս-
տատուն հարկ չունի, այլ հարկերի մեծ մասը հատուցա-
նում է հասարակութեան պատկանած հողերի կապալադրամից, և
միայն պակասորդը լրացնում է, լուծքի վերայ հարկ դնելով
1—5 ռուբլի կամ աւելի։ Նախիջևանցւոց Ղըխմից բերած հա-
գուստի տարադը քաղաքում արդէն իսպառ վերացել է, տեղի
տալով եւրոպական տարագին, իսկ գիւղերում թէ և մինչև
ցայսօր դեռ պահպանուել է, բայց արդէն արագապէս սկսել է
վերանալ, տեղի տալով շըջապատող ռուս գիւղացիների հագ-
նուելու ու կապուելու ձեին։

Գիւղերում տղամարդկանց սովորական զգեստն է «զավաս», որ ձմեռը լինում է «բամբկուն», իսկ ամառն առանց բամբակի, մորթի գդակ, շալ գօտի, պաճոյնաձև գուրպաներ և հայկական տրեխներ: Կանալք սովորաբար հագնում են գոյն-զգոյն պարզ ձևի շրջագեստ-«վարի-քով», վերնազգեստ-«վերի-

Քով» և դողնոց, զլխներին կապում են կամ փօշի կամ թաշկի-նակ, իսկ մէջքները պլոդում են «խուլաններով»: Աղջիկները հագնուում են կանանց պէս, միայն այն զանազանութեամբ, որ նոքա փօշի չեն դնում զլխներին, այլ ոսկլներով զարդարած ֆէսեր, որոնց տակից ընկնում, ծածանում են ուսերի վերայ հայկական ձևով մանրաթել հիւսած մազերը, և վզներին ձգում են ու-լունքների և մանր ու խոշոր ոսկիների շարողքներ:

Հալաւների տարագի հետ միասին փոխուել ու փոխուելու վերայ է և նախիջևանցոց «Խորհիմի վարքով» ապրելու եղանակը: Այլ ևս չկայ գաղթականների նախկին կեանքի նահապետական պարզութիւնը, պակասել է հայկական հիւրասիրութիւնը, սէրն ու «մուհաբետը», որ տոիպում էր հայերին ոչ թէ միայն իւրեանց մերձաւոր ու հեռաւոր ազգականների, խրնամիների, այլ և դրացիների, տես ու ճանաչի և մինչև իսկ «օխտն—օտար» մարդկանց հետ մօտ բարեկամութիւն ու գնալգալ անելու: Ներկայումս նախիջևանցոց մէջ ամեն բան կրում է քաշուելու հեռանալու, իւր մէջ կենդրոնանալու ձգտումն, ամեն բան ներկուում ու կնքուում է եսականութեան դրոշմով:

Համեմատաբար դիմացկուն է եղել, անսարատութեամբ է պահպանուել նախիջեանցոց ընտանեկան կեանքն իւր ներքին կազմակերպութեամբ, իւր վարք ու բարքով, թէ և այդ վարք ու բարքի գծերից շատերն իսպառ կորցնելով իւրեանց ներքին խորհուրդը, այժմ լոկ անբովանդակ ծիսակատարութեան ու անդիտակցաբար կատարուող սովորութեան բնաւորութիւն են ստոացել: Մեծ տօների ժամանակ նախիջեանցիք մինչև ցայսօր դեռ իւրեանց ծեր ու տարէց ազգականներին յարգանք մատուցանելու համար, նոցա տները «ծեռք պագնելու» են գնում. նոքա մինչև ցայսօր դեռ մի որ և իցէ տեղ իւրեանց ազգական ու ծանօթ ծերերին պատահելիս կամ տեսնելիս, անհրաժեշտ պարտականութիւն են համարում իւրեանց համար նոցա ողջունելու, նոցա ձեռքերը համբուրելով: Պատիւ ու յարգանք մատուցանելու մտքով նախիջեանցիք իւրեանց ընտանեաց անդամներին զանազան պատուանուներ են տալիս. նոքա իւրեանց մեծ եղբօրը «աղա» են ասում, մեծ քրոջր—«ցիցա», տալին—

«փքէչ», տազլոջը — «չէչքրի», աներոջ և դռքանչի քրոջը — «խաթնա», եղբօր ու հօրեղբօր կնոջը և առհասարակ տան-
տիկիններին — «եանկա», ծեր-հօրեղբօրը — «էմջե-բա», ծեր լը-
նամիններին — «ինսամի-մա», «խնամի-բա», ծեր եանկալին —
«իանկա-մա» և այլն:

«Աասպառառ» և այլ գործածութեան տեղից ու «Ազա» բառը, բացի իւր բուն գործածութեան մեջից ու նշանակութիւնից, Նախիջևանում զործ է դրուում և ընդհանրապէս իւրևե պատուանուն բոլոր ծերերի համար, լինին զոքա պատուանոր մարդիկ, հարուստ թէ աղքատ: Այդ, ի հարկէ, նախիջևանցոց նախկին նահապետական կեանքի մնացորդներից է, երբ ծերերի խօսքը օրէնք էր հասարակութեան համար, երբ ամեն մի ծեր մարդ առանձին պատիւ ու յարգանք էր վայելում իւր շրջապատողներից, և երբ, վերջապէս, ծերերի խորհրդով, տնօրինութեամբ էլին կառավարուում ամբողջ Հայաստան գործերը:

Ճատ հետաքրքրական է այդ «աղա» բառի գործածութեան
ձևը նախիջեանցւոց բարբառում. նախիջեանցիք սովորաբար
ամբողջապէս նորան երբէ ք չեն արտասանում, այլ միշտ հա-
մարեա կրծատուած ձևով: Նոքա, օրինակի համար, չեն ասում
Գրիգոր աղա, կամ Սարգիս աղա, այլ—Գրիգորա, Սարգիսա,
և այլն և այլն: Գոյն կրծատման ձևին ենթարկուում են և
շատ գործածական «անա», «մամա» և «բաբա» բառերը.
առաջինից, ինչպէս «աղա» բառը, մնում է միայն ա տառը,
որ կայցնում են գործածուած բառի վերջից, երկրորդից ու եր-
րորդից—միայն առաջին մա և քո վանկերը, ինչպէս, օրի-
նակի համար, Մեծա, այսինքն մեծ—անա, խաթնա, այս-
ինքն խաթուն—անա, Տէր-բա, այսինքն տէր-բաբա, Հաճի-
մա, այսինքն հաճի—մամա, և այն և այլն: Համեմատաբար
աւելի անարատութեամբ է պահպանուել և նախիջեանցւոց
Վրիմից բերած ուտել—խմելու ճաշակը, կերակուքների տեսակ-
ները և ընդհանրապէս սէրը դէպի խմորեղէնը և իւզոտ կե-
ռեկրեղէնը, որ ընդհանուր է բոլոր հայութեան:

Արժանի են ուշադրութեան հետևեալ հայանուն զբար-
կուրսերը, որոնք իւրաքանչիւր նախիջևանցու խորտկացուցակի

մէջ անհրաժեշտ տեղ են բւնում, «Հաց—տապակ»—կաթի մէջ թրջած և իւղով, ձուզ տապակած հաց, «Միս-տապակ»—տապակած միս, «փողլից»—փորը բրնձով խճողած և փուռը դրած դառն, «Ֆալծուլ»—թել բաց արած, մէջը ձիթով տապակած սոխ դրած և ծալծուած ու հիւսուած խմորեղէն, «Կլորակապուր»—մսի կլորակներով ապուր, «Գունդապուր»—խմորի գնդիկներով ապուր, «Կոթկոթապուր»—իւղով տապակած և չորացրած խմորիկներով ապուր, «Կաթնապուր»—ջրալի կաթնով, «Փշուկ-տապուր», «Երշկիք», «Ապուխտ» և այլն:

Սոցանից էլ նամանաւանդ արժանի են ուշադրութեան վերջին երկուսը—երշկիքը և ապուխտը, որոնք պատրաստուում են իբրև ձմեռուայ պաշար աշնանը, երբ սկսում են բանել ճարպի գործարանները և բազմաթիւ «օթառներ» են մորթում ու ճարպահան արած միսը շատ էժանանում է: Երշկիքի կամ երշկիկի համար նախապէս պատրաստուում է աղիքը, այսինքն առնուում է կովի աղիքը և այնքան քերուում ու մաքրուում է, որ մնում է միայն բարակ, թափանցիկ մաշկը. յետոյ ճարպահան արած ոչխարի միսը մանրուում, ծեծուում է, մաքրուում է ջղերից ու մաշկերից, աղուում և համեմուում է չամանով, կինամոնով, միխակով, ու պղպեղով ու սխտորով, խճողուում է աղիքի մէջ և կախուում է չորանալու օդի մէջ: Ամեն երեկոյ բոլորածե, ծալրերը միմեանց կապած երշիկներն առնուում են, գուտնակուում և միմեանց վերայ մի ծանըր բանի տակ են դրուում, որ տափակուեն: Եւ այս այսպէս. շարունակուում է, մինչև որ աղիքի մէջ խճողած միսը օդի մէջ եփուում պատրաստուում է: Ապուխտը պատրաստում են ոչխարի սուլիիներից, թիակներից և լեզուից: Ապխտելի կտորները սովորաբար առաջ լուանում, մաքրում են, յետոյ աղում, որին տոր ու չաման անում վերան ու կախում օդի մէջ չորանալու: Նախիջևանցոց ընտանեկան վարք ու բարքի մի քանի գծերի յաջող նկարագրութիւնը կարելի է տեսնել և հետեւեալ երգիծաբանական ոտանաւորածե գրուածքում, որ շատ անդամ է իբրև «զիվերտիսմենտ» արտասանուել նախիջևանի հայկական բեմից և որ հաւանականաբար շարադրուած է յախոնի Փա-

սուլեմեանի խմբից, որ 69—70 թուականներին Պօլսից նախիջևան հրաւիրուած լինելով, թատրոնի է վերածել իվան Մարկովիչ Պօպովի ցորենի ամբարը և մի ամբողջ սեզօն կանոնաւոր հայկական ներկայացումներ է տուել այդտեղ:

Մեր գուան քովը ժողովիլին չորս-հինգ եանկա,

Կուտին բոհրուն կուտ ու թստան խուրմա.—

Մէկը տիբոնչի, մէկալը ֆալչի,

Մէկալներն ալ—դալաջի, գալաջի,

Անվերջ անհատնում սալթը գալաջի:

Զարխատա տղաք վարժատուն կեշթան,

Համրանք չեն սովենալ, վիրա կ'խաղան.

Մէկը—թութոի, մէկալը—կոճի,

Մէկալներն ալ—դալաջի, գալաջի.

Անվերջ անհատնում սալթը գալաջի:

Ձի-առապացով Ռասթով կեշթանք.

Գալու ատեն էգէր եօռուխով գտանք

Մէկի բօշ-բօղազ հայ առաբաջի,—

Աշթըիս ճամբան - գալաջի, գալաջի,

Անվերջ անհատնում սալթը գալաջի:

Մենք այդ ոտանաւորը լսել ենք պ. Տիրան Գալֆայեանից, որ Փասուլեմեանի խմբից էր և խմբի հեռանալուց յետոյ էլ մնացել Ռուսաստանում և ուսուցչութեամբ էր պարապում: Յառում ենք, որ մենք զորա չորրորդ տունը, որի մէջ նկարագրուած էր նախիջևանի կանանց ջերմեռանդութեամբ եկեղեցի յաճախելը, բայց ժամասացութիւն լսելու ու աղօթելու փոխարէն նոցա «անկաջ անկաջի գալաջի անելու» դատապարտելի սովորութիւնը, չենք կարող մէջ բերել, որովհետեւ մոռացել ենք, չենք մտաբերում: Նոր-նախիջևանցոց նիստ ու կացի, կամ, ինչպէս ասում են ինքեանք նախիջևանցիք «Զանցան»-ի աւելինդարձակ նկարագրութիւնը կարելի է գտնել Ու. Պատուի ընդարձակ կարագրութիւնը կարելի է գտնել Ու. Պատուաքրական նախիջևանի բարբառով գրուած հետաքրքրական երկերի մէջ:

Թէ քաղաքացիք և թէ զիւղացիք՝ ՚ի սկզբանէ անտի եղել են վերին աստիճանի հասարակ, պարզ նահապեանութիւնում կարող է գտնել անհապանութիւնը:

տական կեանքով ապրող մարդիկ, աշխատասէր, խաղաղ և չափաւոր, բայց և նոյն ժամանակ վերին աստիճանի տղէտ ու գուեհիկ: Գրագէտ մարդկանց թիւը մատներով է հաշուռամ եղել, ազնուականների և աստիճանաւորների թիւը շատ սահմանափակ, նոյն իսկ հոգեսոր դասը խարիսխում է եղել խորին տղիտութեան ու խաւարի մէջ, թէւ, ՚ի հարկէ, այդ գէպքում քաղաքացւոց և գիւղացւոց մէջ մեծ զանազանութիւն է եղել: Քաղաքացիք ապրած լինելով քաղաքներում, շփուած լինելով զանազան ազգերի հետ և լրեանց առևտրական գործերով այս ու այն կողմը զնացած լինելով, ՚ի հարկէ, համեմատաբար աւելի զարդացած, աւելի աշխարհ տեսած են եղել, քան թէ գիւղացիք, որոնք իրեանց կեանքի պայմաններով իսպառ մեկուսացած լինելով, միջոց ու հնարաւորութիւն չեն ունեցել փոքր ՚ի շատէ իրեանց մտաւոր կրթութեան հորիզոնն ընդլայնելու, զարգացնելու:

Մեր պատմական տեսութեան զլխում լիշուած նկատիթավի ձեռագիր հաւաքածուի մէջ մենք գտնում ենք մի ստանաւորածէ գրուածք Թէկողոսիոյ հոգեսոր դասի մասին, որ գրել է Տէր-Ստեփանոս թոխաթեցի երէցը նոյն իսկ զաղթականութեան ժամանակները կամ դորանից մի փոքր առաջ: Թէւ արժանայիշատակ երէցը, ինչպէս երեսում է, աշխատել է լիշել «Հայոց տան» հոգեւորականների միայն լաւ կողմերը, աշխատել է գրուատել ու գովաբանել նոցա և իւր գրուածքն հէնց այդպէս էլ կոչել է «Գովասանութիւն Կաֆայու քահանայի վերայ», բայց նորա տողերի մէջ կարելի է կարդալ, տեսնել այն խորին տղիտութիւնը, որի մէջ ընկղմուած է եղել զաղթականների ամենայառաջադէմ, . ամենակրթուած դասակարգը նոցա Ռուսաստան տեղափոխուելուց առաջ: Եւ եթէ այդպէս է եղել այն դասակարգը, որ պէտք է գէպի լոյս ու ճշմարտութիւն առաջնորդէր իւր հօտը, կարելի է դիւրեաւ գուշակել, թէ ինչ են եղել զաղթականների միւս դասակարգերը: Բաւական է այսքանը միայն ասել, որ Թօխաթեց Թէկողոսիա եկած և տեղական քահանայական դասից սիրով հիւրընկալուած երէցը չի կարողացել իւր «Գովասանութեան» մէջ չ'լիշել, թէ քա-

հանաներից ոմանք չափաղանց երկրպագու են եղել «ըրախուն և զինոյն», ոմանք «խխստ պանպաւակ», ծեր ու մասխարայ» են եղել, ոմանք էլ, փոխանակ իւրեանց տուրք կոչման ծառայելու, պարապելու են եղել «դույումնութեամբ» – ոսկերչութեամբ և ուրիշ արհեստներով: Բայց արժէ կարդալ բոլոր «Գովասանութիւնը»:

Տէր-Խաչատուր եպիսկոպոսն,
Որպէս Անտոն թաքաղիթի,
Պահող, հսկող ճգնաւորի,
Սուրբ Տերունի, մաքուր հոգի:
Իսկ տէր Թովմէսն Ղրմեցի,
Եպիսկոպոսն գերպանձալի,
Խոնարհամիտ, հեղաշոգի,
Հըլու, հընազանդ յամենայնի:
Եւ տէր Թորոս եպիսկոպոսն,
Որ զվանքն ունի Աստուածածնի.
Խոնարհ հոգով, սուրբ և արհի
Եւ սիրեցեալ աչըս ամենի:
Տէր-Խաչատուր եպիսկոպոսն,
Որպէս եղբացը տէր-Թորոսին.
Քրիստոս իւրեանց մէջըն յայտնի,
Խաղաղ կենան յայս աշխարհի:
Տէր-Խաչատուրն սբ. Սարգիսին,
Խելօք, խիկար, նըման ծովին,
Զերինից շրջանին դիտովի, —
Հայոց տումարն և Հըլունի:
Իսկ տէր-Յակոբն բարձրակաց,
Որ մականուածքն է ալաճաւ.
Յորժամ գոռաց, զբերանն բանաց,
Ջատ ոք վագեն, թէ կուլ կուտաց:
Ո՞վ տէր-Թորոս Պարթև ազգին
Նըման Սահակ հայրապետին,
Բարձրը բոլոր մէջ ամենի,
Աւագ երէց Կաֆայ քաղքի:

Տէր Ավաննէս գու շնորհալի,
Ուրախցընող ժողովրդի,
Քաղցը և անուշ ձայնդ գովելի,
Նըման փողոյ Գաբրիէլի:
Տէր-Մըկըրտիչ գու անուանի,
՚ի մէջ ամէն կարգաւորի,
Գըրոց հմուտ ամէն բանի,
Փէննէհէսի ես նըմանի:
Ո՞վ Տէր-Պետրոս գու գովելի,
Զայնդ համեղ, փառքըդ բարի,
Քաջ երաժիշտ, գեղ գովելի,
Նախաշ, ոսկող, քարտուղարի:
Տէր-Ծբրահամ առատ հացի,
Թող քո սեղանըդ շէն լինի.
Դու ես սիրուն ամէն ազգի,
Տաճկի, հոռմի և ֆրանկի:
Աստուածատուր սբ. քահանաց,
Խիստ պանպառակ, ծեր, մասխարաց.
Եւ էլ անունդ է հակալայ,
Հիւսն ես նըման հաց Յովսէփաց:
Տէր-Օգունտն էր փափաքելի,
Սբ. և մաքուրք քան զաղաւնի.
Պօյ ու պօսուն ծեր ցանկալի,
Անսատասայ էք նըմանի:
Տէր-մղեսի Աստուածատուր,
Սբ. Յակոբաց ես սպասաւոր.
Անունդ ահեղ և զօրաւոր,
Զարմանալի և փառաւոր:

Տէր Ստեփանոս դու նորընծայ,
Եւ սբ. խաչին կարգեալ ծառայ,
Հրախուն, գինոյն տէր հան
մեր տայ,
Աստուած քո մուրատն տայ:
Տէր-Խաչատուր դու նորընծայ,
Որդիդ լինի քո քահանայ.
Սբ. Սարգիսին դու ես ծառայ,
Զտաճարն և զգեստն մաքուր
պահեան:

Փոքը Տէր-Աբրահամ, իմ սկրելի,
Նըման ես դու սուրբ տարրակի.
Սաղմոսասաց, սերտում արի,
Պատարագօղ սուրբ խորհրդի:
Քըոնաղի Տէր-Մաղաքեայ,
Մատղաշ մանուկ դու քահանայ,
Տետր ալէլուք անձն քեզ կայ,
Սանբէթրօին դու ծառայեան:
Տէր-Յհաննէս ծեր պատուական,
Անձամբըդ մեծ թօրախալան,
Սպիտակ ալեօք, որպէս օհան,
Որ գըրեաց աւետարան:
Ո՞վ Տէր-Թումայ հեզ և բարի,
Եկար շինող և զուզումնի,
Պօյովդ երկան աննըմանի,
Աստուած ՚ի քո հոգիդ հանգչի:
Ո՞վ Տէր-Մարդիս դու գրագիր,
Կարճ ու բոյոր, լաւ և ընտիր,
Ըուախին, գինին ՚ի կուլ տայիր,
Հանգչի հոգիդ, փառաւորիր:
Ո՞վ իմ եղբայր Տէր-Աւետիք,
Փափկամարմին և կակըդիկ,
Կաշուն առնուլն ես գեղեցիկ,
Իւրեանց նոր հայրենիքում էլ գաթականները դեռ շատ

Տկմիկ, փոքրիկ և սըպըրկիկ:
Ո՞վ Տէր-Ներսէս չուստ և արի,
Որդի դու ծեր քահանայի,
Տըղայ գալով եղիր այրի,
Մի համբեր տայ Աստուած քեզի:
Ով Տէր-Գրիգոր սուրբ ծերունի,
Քաղցրաբարբառ ըմպօղ գօթի.
Անուանակցի քո նըմանի,
Հրեշտակապետն է քո տեղի:
Գրիգոր գալիր հմուտ գրի,
Հնոց նորոց կտակարանի,
Ատենախօս մէջ ամենի,
Որ մականուամբ Մախմուր կոչի:
Քաջ Պարխուտար սեբաստացի,
Ճոխ է պայծառ մէջ ամենի.
Դու ժամասէր հեղահոգի,
Մեղք և անցանք քո ջընջի:
Հձեր այսմաւուրքն ետաք ընձի,
Որ զօրինակն գրեցի.
Լոյս ծագեսցի մեր տաճարի,
Լուսով մտնունք յառագաստի:
Տէր-Ստեփանոսը թօխատցի,
Եկի, հանգեաց ձեր քաղաքի,
Առ ոտն սուրբ կուսաւորչի,
Մովահայեաց սուրբ տաճարի:
Տունըն ձեր նըման Աբրահամի,
Սուրբ Սահակայ և Ակորի,
Պանդխտասէր հանգիստ հիւրի,
Նժդեհ, զարիս և օտարի:
Ես մեղաւորս և եղիկելի
Լոկ Ստեփանոս թօխաթեցի,
Հպարտ և լիրբ և փառասէր,
Ազ ամենայն այպով ելի:

Երկար ժամանակ մնում են նոյն տգիտութեան մէջ, որովհետեւ
ոչ նոցա նոր բնակութեան տեղը, ոչ էլ հանգամանքնիրն են
նպաստում նոցա շուտով լուսաւորուելու, կրթուելու: Նախի-
ջևանի շրջակալքը հին ժամանակները շրջապատուած էր ըն-
դարձակ ամայի դաշտերով և կամ զագախների գիւղերով, ո-
րոնք ինքեանք էլ վերին աստիճանի գուելիկ լինելով, ՚ի հարկէ,
չէին կարող կրթիչ աղդեցութիւն ունենալ հայերի վերայ: Նա-
խիջեանում էլ չի կարելի լինում խոկոյն դպրոցներ հաստատել
և գաղթականների մէջ կրթութիւն տարածել, որովհետև մի
կողմից նիւթական միջոցների խիստ սղութիւն է լինում, միւս
կողմից էլ կրթուած, դաստիարակուած մարդկանց պակասու-
թիւն: Ճիշդ է, քաղաքի և գիւղերի հիմնադիր Յովսէփ արք-
եալսկոպոս Արդութեանը մտածում է այդ բանի մասին և
աշխատում է մի մեծ դպրոց—«Համալսարան» բանալ, բայց
չի յաջողում: Նա թէև կարողանում է քաղաքում մի փոքրիկ
դպրոց բանալ հայերէն և ուուսերէն գրադիտութիւն սովորեց-
նելու համար և վանքում մի փոքրիկ վանական դպրոց է հաս-
տատում հոգեորակացուներ և եկեղեցական պաշտօնեաններ
համար, բայց դոքա էլ, նորա հեռանալուց յե-
պատրաստելու համար, բայց դոքա էլ, նորա հեռանալուց յե-
տոյ, շուտով փակուում են և ժողովրդի կրթութեան գործը
մնում է երկար ժամանակ տգէտ քահանաների և տիրացու-
ների ձեռքին, որոնք միայն պարզ հայերէն գրագիտութիւն
և եկեղեցական փոխասացութիւն են սովորեցնում խալֆայա-
կան եղանակով:

Առաջին հայոց կանոնաւոր դպրոցները Նախիջեանում հաս-
տատուում են 1868 թուին, երբ երջանկալիշատակ Գէորգ կա-
թուղիկոսը իւր դէպի Պետերբուրգ արած ճանապարհորդութեան
ժամանակ մտնում է Նախիջեան և մի քանի օր մնում է այդ-
տեղ: Ուսումնասէր կաթուղիկոսի հրամանուլ առաջին անգամ
բացուում են քաղաքի ծխական դպրոցները, Ս. Խաչի ժա-
րացուում գաղաքի ծխական դպրոցները: Այսու-
հետև 1875 թուին հիմնարկուում է Նախիջեանի հոգեոր
դպրոցը, որ 1881 թուին վերածուում է թեմական դպրանո-
ւում:

ցի. 1881 թուին բացուում է Արհեստաւորաց դպրոցը քաղաքի հարիւրածմակը յաւերֆաշանելու համար. նոյն 1881 թուին բացուում են Գոգոյեան և Հռիփսիմեան օրիորդաց դպրոցները: Պակայն՝ ՚ի նկատի առնելով, որ գեռ շատ ժամանակ է անց-նում, մինչև որ այդ բոլոր դպրոցները կանոնաւորուում են, ՚ի նկատի առնելով, որ գոքա կանոնաւորուելուց յետոյ էլ գեռ շատ անդամ փոփոխական բաղդի են հանդիպում, գոքա չեն կարողանում հարկաւոր ազդեցութիւնն անել գաղթականների վերայ և հանել նոցա տգիտութեան այն թանձր խաւարից, որի մէջ նոքա ալնքան երկար ժամանակ մնացել էին: Ահա հէնց այդ իսկ պատճառով էլ մինչև ցայսօր գեռ բոլոր գիւղացիները և քաղաքի աղքատ դասակարգը յարատեւում են տգիտութեան մէջ, զլկուած մնալով ժամանակիս հոգուն և հանդամանքներին համապատասխան կրթութիւնից:

Ճիշդ է, քաղաքում ներկայումս գոլութիւն ունի արքու-
նի միջնակարգ և բարձրագոյն դպրոցներից աւարտած ու
դուրս եկած մի ստուար դասակարգ, բայց դա բաղկացած է
մեծամասնութեամբ առանց իդէալի, առանց մի որոշ սկզբուն-
քի մարդկանցից, որոնք, բացի իւրեանց սեպհական շահե-
րից, ոչինչ չեն հասկանում, ոչինչ չեն ուզում իմանալ, որոնք
իւրեանց քթից հեռու չեն տեսնում... իսկ զործելու, անելու
շատ բան կայ, որովհետեւ քաղաքում հայկական կեանքը մա-
րելու վերայ, գիւղերին էլ ապագայում նոյն վիճակն է սպասում:
Ժողովուրդն աղքատացել է և հէնց այդ պատճառով էլ քաղա-
քացիների մի ստուար մասը թողել, շրջուել է շրջակայ գիւղերն
ու քաղաքները և շատ հեռու չէ այն ժամանակը, որ քա-
ղաքը բոլորավին դատարկուի իւր հայ տարբից. գիւղերին էլ,
Դի հարկէ, աւելի հեռու ապագայում, նոյն վիճակն է պատ-
րաստուում: Վարքի ու բարքի ապականութիւնը բոյն է գրել
քաղաքի հայ Հասարակութեան զանազան խաւերում, մերձա-
ւոր ամուսնութիւնները յաճախակի են տեղի ունենում, տա-
րէցտարի աւելանում է խառն ամուսնութիւնների թիւը և
ժողովրդի մանրանալուց, թուլամիտների, խենթերի, թլուատ-
ների թուի բազմանալոց, կամքի կոր վի և բարոյական ոյժե-

թիւլանալուց կարելի է ակներև գուշակել, որ գաղթական-ներն արագօրէն այլասեռուում են: Գիւղերում նահապետականութիւնը հետզհետէ վերանում է և Թոստովի փողոցներից «փողոցախն կուլտուրան» լայն հոսանքներով տարածուում է գիւղերը և մտնում, բոյն դնում գիւղացիների համեստ տնակ-ներում ու խըճիթներում:

Նախիջևանցոց խօսակցութեան լեզուն, որ Տաճկահայոց
մեծ բարբառի ճիւղաւորութիւններից մէկն է և ունի չայոց
բարբառներին յատուկ բոլոր առաւելութիւններն ու պակասու-
թիւնները, քաղաքում արդէն վերանալու վերայ է, որովհետև
մատաղ սերունդն արդէն համարեա թէ չի խօսում հայերէն,
իսկ հին սերնդի բերանում նա կորցրել է անկախ, ինքնուրոյն
լեզուի բոլոր յատկութիւնները և դարձել է մի կոպիտ փողո-
ցային «ժառգոն», որով ոչ մի կապակցական խօսակցութիւն
չի կարող լինել, ոչ մի ընդարձակ վերացական միտք չի կա-
չելի յայտնել: Կորա մէջ աւելի շատ թաթար և ուս բառ-
կալ, քան թէ հայերէն, նորա մէջ շատ ոճեր և մինչև ան-
գամ ամբողջ նախադասութիւններ ուսւ լեզուով են արտայա-
տուում, այնպէս որ օտար, անծանօթ և առհասարակ այդ
ժառգոնին անընտել մարդիկ առաջին նուագ շատ անդամ
կ'դժուարանան հասկանալ, թէ իսկապէս ինչ լեզուով է կա-
տարուում երկու նախիջևանցու մէջ եղած զրոյցը՝ ռուսերէն,
թէ հայերէն: Ճատ հեռու գնացած չենք լինել ճշմարտու-
թիւնից շատ չափազանցացրած չենք լինել, եթէ ասենք, թէ
այժմուայ նախիջևանցոց խօսակցութեան լեզուն մի թաթար
և ուսւ լեզուներից առնուած ու աղճատուած բառերի, ոճերի
ու նախադասութիւնների խառնորդ է կապուած հայ շաղկապնե-
րով և օժանդակ բայերով, համեմուած սակաւաթիւ հայ բայե-
րով և գոյականներով: Գիւղացւոց լեզուն շնորհիւ նոցա մեկու-
սացած կեանքին և անխառն բնականութեան տեղերին համե-
մատաբար աւելի անարատ է մնացել, բայց գիւղերում ևս ար-
դէն սկսել է խրամատուել լեզուի ինքնուրոյնութեան ցանկը և
հետզետէ քաղաքի ժառգոնի բնաւորութիւնն ընդունել:
Նախիջևանի բարբառի առանձնայատկութիւններից ար-

ժամի են առանձին ուշադրութեան ը տառի հնչինաբանութիւնը և յ տառի յաճախ գործածութիւնը: Նախիջևանցու բերանում ը տառը երեք չի հնչուում իրեւ մաքուր ո, այլ մերթ իրեւ ժ, մերթ իրեւ շ: Նախիջևանցին, օրինակի համար, չի ասում «երեք, այլ անպատճառ «իմեք», չի ասում «մարդ», այլ անպատճառ «մաշթ»: Յ տառը, բացի իւր սովորական գործածութեան տեղերից, գործ է ածուում և առ երեմն և օ ձայնաւորներից յետոյ, լինին գոքա դրուած բառի սկզբում, միջում և թէ վերջում: Նախիջևանցիք չեն գրում «վաճառայլական», այլ «վաճառայլական», չեն ասում «հօր», «մօր», այլ անպատճառ «հօրը» և այն:

Մեր ձեռքին գտնուում է պաշտօնական թղթի վերայ հայերէն գրուած մի հին պարտամուրհակ, որի մէջ պարզ կերպով աչքի է ընկնում յ տառի յաճախ գործածութիւնը: «Ինը այմիս համարելով, գրուած է դորա մէջ, յայս թւովն հազար օւթըն հարուր տասն մէկէն այմիսեանըն սէկտէնրէրի քան իմեքէն այս իմոյ հատուկ վէքսելայզրօփս պարտայկան եմ ես հատուցանէլ նախիչէվանցի վայճառայլական Ազդին Պարօնօվին ևս կամ ՚ի նմանէ օւմ որ հրամանեալ ելի տալ նմայ ռուստի քալայկան բող հազար ռուսլի վէքսիլ տուլողս եմ նախիջեւվանցի Լուսեղէն հաճիօվ պարտիմ»:

Բաղաձայների տառադարձութեան կանոնները ճիշդ համաձայն են արևեմտեան հայերի արտաքերութեան: Նախիջևանցու լսելիքը չի զանազանում հայոց երեք տեսակ բաղաձայների հնչւնաբանութեան նրբութիւնների տարբերութիւնը. նորա համար պ, բ, փ բաղաձայները մի տեսակ ձայն ունին, ինչպէս և մի տեսակ ձայն են հանում նորա տկանցին և կ, գ և ք, տ, դ, և թ, ծ, ց և ձ, ն, չ և ջ բաղաձայները և միւնները: Նախիջևանի բարբառը միատեսակութիւն չունի. նորա քերականական կանոնները զանազան գերգաստաններ զանազան տեսակ են գործ ածում: Մի ընտանիք, օրինակի համար, ասում է «տուրից», միւսը՝ «տուլից», մինը՝ «սալով», միւսը՝ «սորամով», մինը՝ ասուիկը, աղուիկը, անուիկը, միւսը՝ աս, ադ, ան, մինը՝ սվոր, դվոր, նվոր, միւսը՝ ասոր, ադոր,

անոր, և այն և այն: Այդ վերջին հանդամանքը մեկնուում է նորանով, որ Ղրիմի գաղթականութեան մէջ եղել են Հայաստանի զանազան նախանդների, գաւառների, քաղաքների և առհասարակ զանազան տեղերի գաղթականներ: Մինչեւ ցայսօր դեռ նախիջևանում յիշուում են Տրավիզոնցեան, Բայրուրդեան, Իզմայլոցեան, Օրբեան, Ակսայցեան, Փիրմանցեան, Թամանցեան և այլն ազգանուններով ընտանիքներ, որոնք, ՚ի հարկէ, իւրեանց ազգանունները ստացել են իւրեանց բնակութեան նախկին տեղերից: Նախիջևանի ժառագոնի տպագրուած օրինակներ չ'կան, որովհետեւ ով որ նախիջևանցիներից միտք է լրանում մի որ և իցէ բան գրելու նախիջևանի բարբառով, նա անպատճառ գրում է, նախսավէս մաքրելով նորան եկամուտ և օտար ոճերից և բառերից: Իրեւ նախիջևանի հին, մաքուր բարբառի օրինակ կարող են ծառայել հանգուցեալ Ռափայէլ Պատկանեանցի բարբառով գրուածները, նամանաւանդ նորա հին Քերովիք Պատկանեանցի հայոց բարբառների հաւաքածուների առաջին հատորում տպագրուածները — «Չախու», «Արէվ—Մանուկին հէքիաթը» «Էրէվան» «Պաց ազպար»:

Նախիջևանցիք ՚ի սկզբանէ անտի կառավարուել են հոգեւոր դատարանով և հայկական Մագիստրատով, որոնք հիմնուած են եղել այն արտօնութեան հրովարտակի հիման վերայ, որ շնորհել է նոցա երջանկայիշատակ Եկատարինէ կայսերուհին 1779 թուին: Հոգեւոր դատարանով կառավարուել են գաղթականների հոգեւոր գործերը, Մագիստրատով — նոցա աշխարհական գործերը: Հոգեւոր դատարանը իւր առանձին կազմակերպութեամբ գոյութիւն է ունեցել մինչեւ 1836 թուականը, իսկ Մագիստրատը գործել է մինչեւ 1859—60 թուականները: Առաջինը, որ կազմակերպուած է եղել Յովսէփ Արդութեանի մշակած կանոնադրութեան հիման վերայ, վերածուել է ներկայումս նախիջևանում գոյութիւն ունեցող «նախիջևանի հայոց հոգեւոր կառավարութեան», երբ հրատարակուել է հայոց եկեղեցու գործերը կառավարելու համար մշակուած կայսերականական, Պատիկացանիքին կառավարուած է եղել Հայոց գործեամբական կառավարութեան կամար, աղուիկը, անուիկը, միւսը՝ հաստատ «Պօլօժենիա»-ն, իսկ երկրորդը, որ բաղկացած է եղել Հաստատ «Պօլօժենիա»-ն, իսկ երկրորդը, որ բաղկացած է եղել Պատիկացանիքին կառավարու-

թեան կամ «Գումի» մասերից, վերածուել է «ընդհանուր զբութեան» հետզհետէ և աստիճանաբար: Առաջ առնուել է գաղթականներից նոցա իւրեանց համար առանձին տեղական ոստիկանութիւն ունենալու արտօնութիւնը, յետոյ առանձին հայկական դատարան և «քաղաքալին դում» ունենալու իրաւունքը: Քաղաքն ենթակուել է Պատուի ոստիկանութեան իրաւասութեան, համարուելով նորա հինգերորդ և վեցերորդ ոստիկանական մասերը, իսկ գիւղերն ենթարկուել են նահանգական ընդհանուր ոստիկանութեան հսկողութեան, կառավարուելով «Զասեդատեներով» և «Ատամաններով»: Հայկական դատարանն տեղի է տուել Աղէքսանդր երկրորդի հաստատած նոր դատարաններին, իսկ՝ հայկական քաղաքալին դումին փոխանակել է ներկայումս գոյութիւն ունեցող «դումա»-ն:

Նախիջևանն իւր գիւղերով սկզբից համարուել է Ազովի նահանգի առաջ Տագանրոդի գաւառի, յետոյ Աղեքսանդրովսկի գաւառի քաղաքը. յետոյ նա 1834 թուին իւր գիւղերով կազմել է մի առանձին հայկական շրջան և համարուել է Կառարինոսլաւ նահանգի Պատուի գաւառի քաղաքներից մէկը և, վերջապէս, 1887 թուին նա մտել է «Գօնի զօրաց երկիր» կոչուած նահանգի մէջ:

Թէև ՚ի սկզբանէ անտի ունեցած և վայելած արտօնութիւններից զրկուելն ընդհանրապէս ազգել է գաղթականների վերայ և նոքա այս ու այն միջոցին են գիմել պահպանելու համար իւրեանց կայսերաշնորհ իրաւունքները, բայց այդ արտօնութիւնների և ոչ մէկից զրկուելն այնպէս զգալի չի եղել նոցա համար, ինչպէս զինուորագրութիւնից ազատ լինելու արտօնութիւնից զրկուելը: Գաղթականներն այդ վերջին արտօնութիւնը պահպանելու համար չ'շատանալով սովորական պաշտօնական գրագրութեամբ և խնդրագրերով, մինչև անգամ պատգամաւորութիւն են ուղարկել Պետքերբուրգ և լիշեցրել իրենց շնորհած Եկատարինէ կայսերուհու 1779 թուի հրովարտակի մասին, բայց, ՚ի հարկէ, ոչինչ չեն շահել, որովհետեւ օրէնքն ընդհանուր էր և բացառութիւն չէր կարող լինել մի-այն Նախիջևանի հայերի համար:

«Սալտաթ սունելու» ազդեցութիւնը ժողովրդի վերայ այնքան զօրեղ է եղել, որ գաղթականները, որոնք վաղուց արդէն մուտքել են իւրեանց ուրախութիւններն ու վշտերն իւրեանց սեփական երգերով արտայատել, մասնաւորապէս զիւուրագրութեան մասին մի երգ են յօրինել, որի մէջ հետևեալ կերպով են արտայատում իւրեանց զգացմունքը զինուորակոչին ենթակուած նախիջևանցի հայ կտրիճները.

Քսան մէկս կոխեցին.

Հօյրս, մօյրս լացուցի.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Զի կար մեծի ազատում:

Տուարի պէս քշեցին,

Օյսարի պէս բարնեցին.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Քսան մէկ էր տարիիքս:

Տարին, ստանօք խոթեցին,

Լանքերս, պօցերս չափեցին.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Քսան մէկ էր տարիիքս:

Հայի չէքմանս հանեցին,

Սալտաթի շինել հագուցին.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Քսան մէկ էր տարիիքս:

Հոսի կօշիկս հանեցին,

Սալտաթի կօշիկ հագուցին.

Հոսի գառդուզս հանեցին,

Սալտաթի գառդուզս հագուցին.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Քսան մէկ էր տարիիքս:

Թութու պուռչով ուրիշ հաց,

Եփ պիտ' մոռնամ ճերմակ հաց.

Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, մարիկս,

Հայի չէքմանս հանեցին,

Քաղաքացւոց և գիւղացւոց յարաբերութիւնը, ինչպէս ամեն հայաբնակ տեղ, Նախիջևանում էլ սկզբից սովորական բնաւորութիւնն է կրել, այսինքն քաղաքացիք գիւղացիներին իրենցից ստոր արարած համարելով, միշտ մի տեսակ արհամարհանքը են տածել իւրեանց սրտում գէպի նոցա: Սակայն այդ արհամարհանքը, որ ուրիշ տեղերում միշտ միւնոյն չափով է եղել, միւնոյն սահմանի մէջ է պահուել և շատ տեղ էլ արդէն ժամանակի ընթացքում աւելի մեղմացել ու փափկացել է և համարեալ թէ սիրու և բարեկամութեան ու իրաւունքների կութեան, թշնամութեան և ատելութեան: Գորան նպաստել հաւասարութեան աստիճանին է հասել, Նախիջևանում, ընդհաւասարութեան աստիճանի գնալով աւելի սուր ընաւորութիւն է ստացել և հակառակ, կալելի է ասել, փոխուել է բացարձակ հակառակ կետզհետէ, կալելի է ասել, փոխուել է բացարձակ հակառակ կութեան, թշնամութեան և ատելութեան: Գորան նպաստել է և Նախիջևանի ներքին կառավարութեան ձեր, որ ընդ-

Հանրապէս աղայական լինելով, չի ճանաչել ոչ թէ միայն գիւղացւոց իրաւունքները, այլ և յաճախ արհամարհել է մինչեւ անդամ և քաղաքի ստորին դասակարգի — աղքատների իրաւունքները: 1779 թուի հրովարտակի հիման վերայ հաստատուած Մագիստրատն իւր վարչական անձանց ընտրել է քաղաքացիների միջից, ընտրողական իրաւունքը տալով միայն պատուաւոր, նիւթականապէս անկախ մարդկանց, որ ասել է թէ ընտրողական իրաւունքը յատկացրել է աղաներին, որովհետեւ դոքա են եղել միայն նիւթականապէս ապահովուած անկախ մարդիկը: Հետզհետէ բանն այնտեղ է հաօել, որ ընտրողական ժողովներին, որոնց մասնակցելու իրաւունք են ունեցել հաւասարապէս և՝ քաղաքացիք և՝ գիւղացիք, յաճախ գիւղացիք չեն էլ հրաւիրուել և նոցա այդ «Մոքոցների» և՝ «եղու գլուխների», ինչպէս կոչում են նոցա քաղաքացիք, ձայնը և քուէն բանի տեղ էլ ամենւին չի դրուել, շատ անզամ նոցա շահերն էլ ՚ի նկատի չեն առնուել: Թորա հետևանքն էլ այն է եղել, որ գաղթականների մէջ ժամանս կի ընթացքում կազմուել է երկու միմեանց հակառակ բանակ — քաղաքացւոց և գիւղացւոց, որոնք ձգտելով միմեանց վնասել, միմեանցից վրէժինդիր լինել, դորանով անդիտակցաբար վնասել են և ընդհանուր շահերին: Առաջ է եկել, օրինակի համար, «Զեմեստվօների» խնդիրը և յոյս է եղել իրաւունք ստանալու նախիջևանից և նորա հայ գիւղերից նահանգական զեմստվօլի մի առանձին ճիւղ հաստատելու — , գիւղացիք հակումն չեն ցոյց տուել և նախիջևանցիք ստիպուած են եղել միանալու Թոստովի զեմստվօլին: Հրատարակուել է ընդհանուր զինուորագրութեան կանոնադրութիւնը և նախիջևանից և նորա հայ գիւղերից իշխանութեան կարգադրութեամբ կազմուել է մի զինուորագրական շրջան, բայց գիւղացիք դորանից անբաւական են մնացել և միշտ ձգտումն են ցոյց տուել բաժանուելու նախիջևանից և միանալու Թոստովի շըրջանին, որովհետեւ կարծել և կարծում են, թէ քաղաքացիք այս կամ այն միջոցներով աշխատում են իւրեանց որդոց աղատել զինուոր գնալուց և գիւղացիներին զինուոր դրել տալ, և այլն և այլն:

Քաղաքացւոց և գիւղացւոց այս թշնամական յարաբերութեան արտայատութիւնն, այս անհաշտութեան հոգին կրում է իւր մէջ հետևեալ երգը, որ յօրինել են գիւղացիք, ձգտելով նորա մէջ նկարագրել իւրեանց — գիւղացւոց և քաղաքացւոց կեանքի հակապատկերը:

Աֆֆէրիմ նիսվիթացիք,
Թօփտեցիք, Չալթըրցիք,
Սուլթան ու Մեծ-Սալահիք,
Ի՞նչ են նոր-նախիջևանցիք:
Հայտա, տըղաք, հայտա, տըղաք,
Քէֆ անինք մենք, քէֆ անինք:
Խամիշ է մեր տուները՝
Սարացի մենք չենք տար.
Նացանը փակ դուռերը,
Մերը հէս փակ չի լար:
Հայտա, տըղաք, հայտա, տըղաք,
Քէֆանինք մենք, քէֆ անինք:
և այն:


Ծենք չի կտինք ան ֆէնտէրը,
Սիրտերը պաց. դուռերը պաց,
Անհոգս է մեր օրերը,
Նացանը տէրտ ու լաց:
Հայտա, տըղաք, հայտա, տըղաք,
Քէֆանինք մենք, քէֆ անինք:¹⁾
և այն:

Ներկայումս թէ և նախկին ատելութիւնն այլ ևս չի երևում երկու հասարակութեան մէջ և մնացել է միայն քաղաքացիների արտաքին ծաղրական և արհամարական յարաբերութիւնը բռնել է անտարբերութիւնը, ամեն բան ոչնչացնող մեռելային անտարբերութիւնը դէպի միմեանց շահերը: Կարելի է համարեան առանց սխալուելու ասել, որ գժուար է գտնել մի ուրիշ հայ գիւղական և քաղաքացին հասարակութիւն, որ այնպէս անտարբեր լինին դէպի միմեանց բարոյական և նիւթական շահերը, որքան նախիջևանի քաղաքի և գիւղերի հասարակութիւններն են: Կան շատ մարդիկ, որոնք իւրեանց ամբողջ կեանքն անցկացնելով քաղաքում, ոչ մի անգամ նեղութիւն չեն կրել անցկացնելու իւրեանց քաղաքի շըրջակայքում դտնուած հայ գիւղերելու իւրեանց քաղաքի շըրջակայքում դտնուած հայ գիւղերը, կան շատերը, որոնք այնքան հետաքրքիր չեն եղել իւրեանց գիւղացիներին զինուոր դրել տալ, և

¹⁾ Այս երգն առաջին անգամ տպագրուել է Ռ. պատկանեանցի երգարանի Բ. տետրակում:

բեանց համարիւն գիւղացիների վիճակին ու դրութեան, որ ոչ
մի տեղեկութիւն չունին. հայ գիւղերի մասին: Նախիջևանի Բա-
րեգործական ընկերութիւնները հոգում են միայն իւրեանց կա-
րուուելների մասին և այդպէս էլ հէնց կազմել են իւրեանց
կանոնադրութիւնները, հարուստները կտակ են անում միայն
քաղաքացւոց համար, դպրոցներում թոշակներ են հաստատում
միայն քաղաքացւոց համար, և այն և այն: Եւ եթէ քա-
ղաքն իւր հարուստ անհատներով, իւր թեմական դպրանոցով,
իւր հարուստ Եկեղեցական հոգաբարձութեամբ, իւր հարուստ
բարեգործական հաստատութիւններով, իւր ինտելիգենտ ստուար
դասակարգով այդպէս է, ՚ի հարկէ, ի՞նչ կարելի է սպասել ու
պահանջել խեղճ, տգէտ, կոշտ ու կոպիտ, հեռաւտեսութեան
պայմանները չհասկացող, շրջապատող հանգամանքներին
անտեղեակ գիւղացիներից... գիւղացի աղքատը, կարօտեալը,
որբն ու այրին, հեւանդն ու անկեալը մնում են անխնամ, նո-
ցա մտաւոր յառաջադիմութեան վերայ մտածող չկայ, նոցա
առաջնորդող, բարի խորհուրդ, խրատ տուող չկայ: Մահլայա-
կան կուիւները, քահանայական խոռովութիւնները, եկեղեցու կամ
դպրոցի այս կամ այն թաղում շինուելու անընդհատ վիճարա-
նութիւնները, անհաշտ կուսակցութիւնների մրցողութիւնները
գրգռելով ռամիկ ամբոխի միայն վատ բնագդումները, ջլատում
են գիւղացիների ամենալաւ, ամենաթարմ ոյժերը, սպառում
են նոցա մտաւոր ու բարոյական կորովը և քայլքայում նոցա
համայնական կեանքը:





ՀՀ Ազգային գրադարան



NL0239257

55.350